ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ա. Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ
«ՏՆՏԵՍԱԳԵՏ»
2020

ՀՏԴ 330.8(075.8)
ԳՄԴ 65.02g73
Ս 259

Հրատարակվում է ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիրներ՝
Հ. Աղաջանյան,
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Ս. Հայրապետյան,
փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ

Գրախոսներ՝
Ս. Օհանյան,
փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ
Ս. Գրիգորյան,
ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ

Սարգսյան Ա. Հ.
Ս 259 Տնտեսագիտության փիլիսոփայություն/ Ա. Հ. Սարգսյան.- Եր.: Տնտեսագետ, 2020.- 168 էջ:

Ուսումնական ձեռնարկում քննարկվում են տնտեսագիտության փիլիսոփայության ուսունասիրության առարկայի, կառուցվածքի, գործառույթների, «տնտեսական մարդու» մոդելների, հիմնային հասկացությունների, տնտեսագիտության մեջ փիլիսոփայության օրենքների և կատեգորիաների մեթոդաբանական նշանակության, տնտեսական կեցության և տնտեսական գիտակցության փոխհարաբերության, փողի, շուկայի, գործարարության բարոյականության, տնտեսության և բնապահպանության, հասարակության և պատմության մշակութապատմաքաղաքակրթական և տնտեսագիտական պարբերացումների, գլոբալացվող տնտեսության հետ կապված առանցքային հիմնախնդիրները:

Դասընթացը պատրաստված է մագիստրոսների համար, բայց կարող է օգտակար լինել տեսական տնտեսագիտության աշխարհայացքային-արժեքային, մշակութաբանական և մեթոդաբանական հարցերով հետաքրքրվողներին, ինչպես նաև «Գիտության պատմություն և փիլիսոփայություն» որակավորման քննություն հանձնող ասպիրանտներին:

ՀՏԴ 330.8(075.8)
ԳՄԴ 65.02g73

ISBN 978-9939-61-208-9

© ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն *5*

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
Տնտեսագիտության փիլիսոփայության առարկան, կառուցվածքը և գործառույթները *7*
1.1. Տնտեսագիտության և փիլիսոփայության շփման եզրերը 7
1.2. Տնտեսագիտության փիլիսոփայության առարկան, կառուցվածքը և գործառույթները 20

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
Մարդը տնտեսական հարաբերությունների համակարգում: «Տնտեսական մարդու» մոդելի փիլիսոփայական իմաստավորումը *24*
2.1. Մարդու փիլիսոփայական և տնտեսագիտական ըմբռնումների առանձնահատկությունները: «Տնտեսական մարդու» հատկանիշները 24
2.2. «Տնտեսական մարդու» մոդելը ըստ տնտեսական փուլերի և տնտեսագիտական դպրոցների 32

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
Փիլիսոփայական օրենքների և կատեգորիաների մեթոդաբանական գործառույթները տնտեսագիտության մեջ: Փիլիսոփայատնտեսագիտական հիմնարար կատեգորիաների վերլուծությունը *42*
3.1. Փիլիսոփայական օրենքների և կատեգորիաների մեթոդաբանական նշանակությունը տնտեսագիտության մեջ 42
3.2. Տնտեսափիլիսոփայական հիմնարար կատեգորիաները 49

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
Տնտեսական կեցության և տնտեսական գիտակցության փոխհարաբերության փիլիսոփայական վերլուծությունը: Տնտեսություն, քաղաքականություն և գաղափարախոսություն *68*
4.1. «Տնտեսական կեցություն» հասկացությունը 68
4.2. «Տնտեսական գիտակցություն» հասկացությունը 75
4.3. Տնտեսական կեցության և տնտեսական գիտակցության փոխհարաբերությունը: Տնտեսություն, քաղաքականություն, գաղափարախոսություն 79
4.4. Պետություն և տնտեսություն 85

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
Փողը և շուկան մշակութափիլիսոփայական և տնտեսագիտական գնահատումների տիրույթում *90*
5.1. Փողի արժեքաբանական վերլուծություն 90
5.2. Շուկայի տնտեսագիտական և մշակութափիլիսոփայական վերլուծություն 99

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
Տնտեսություն, գործարարություն, բարոյականություն *106*
6.1. Հիմնային հասկացությունների հստակեցում 108
6.2. Գործարարության առաջացման նախադրյալները 113
6.3. Գործարարություն և բարոյականություն 122

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ
Տնտեսությունը, տնտեսավարումը և ժամանակակից էկոլոգիական հիմնախնդիրները *128*
7.1. Ժամանակակից էկոլոգիական հիմնախնդիրները 128
7.2. Տնտեսություն և բնապահպանություն 130

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ
Պատմության և հասարակության պարբերացման փիլիսոփայական, տնտեսագիտական և մշակութապատմաքաղաքակրթական հայեցակարգերը: Գլոբալացվող տնտեսության փիլիսոփայական իմաստավորումը *137*
8.1. Պատմության, հասարակության և տնտեսության պարբերացման հայեցակարգերը 137
8.2. Գլոբալացվող տնտեսության արդի հիմնախնդիրները 158

Վերջաբան *163*

Գրականություն *164*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տնտեսագիտության փիլիսոփայությունը մեր բուհում (ՀՊՏՀ) ներդրվեց 2005/2006 ուս. տարում, երբ որպես ուսումնական դասընթաց նոր-նոր էր մուտք գործում նաև Ռուսաստանի Դաշնության բուհեր, իսկ գոյություն ունեցող միակ դասագիրքը Ա. Ի. Սամսինի հեղինակածն էր[1]: Ի պատիվ մեր երկու ռեկտորների (պրոֆ. Գ. Ե. Կիրակոսյանը հրաժեշտ էր տալիս ռեկտորական աթոռին, իսկ պրոֆ. Յու. Սուվարյանը զբաղեցնում էր այն) առարկայի մուտքը բուհ որևէ դժվարություն չունեցավ: Դասընթացի պատրաստման և դասավանդման առաջին մի քանի տարիների բոլոր դժվարություններն իր վրա կրեց դոցենտ Սարգիս Հայրապետյանը, մինչև նրան միացավ դոցենտ Սոֆյա Օհանյանը: Ժամանակի ընթացքում ավելացան գիտելիքը, կարողությունն ու հմտությունները, աստիճանաբար ստեղծվեց գիտական գրականություն, դասընթացը ամուր տեղ գրավեց փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի կողմից դասավանդվող առարկաների շարքում[2]:

2019 թ. բուհում իրականացված փոփոխությունների արդյունքում տնտեսագիտության փիլիսոփայության դասավանդումը բաժին հասավ ինձ: Դասախոսությունները կարդում եմ հաճույքով, առանց մեծ դժվարությունների, որովհետև թեմաների մեծ մասն ինձ ծանոթ է՝ դրանք կարդացել եմ փիլիսոփայության, գործարարության բարոյագիտության դասընթացներում և հրատարակել համապատասխան ձեռնարկներում[3]: Մնացած նյութերը հավաքել եմ տարիների ընթացքում (գիտակցաբար պատրաստվել եմ դասընթացին), դասավանդումը առիթ հանդիսացավ, որ այդ ամենը ի մի բերվի, պատրաստվի և ընթերցողի, ուսանողի սեղանին դրվի տնտեսագիտության փիլիսոփայության այս ուսումնական ձեռնարկը, որն առաջինն է ՀՀ բուհական համակարգում:

Ուսումնական ձեռնարկում առանձին հիմնախնդիրների ձևավորման և կայացման էվոլյուցիայի վերլուծության միջոցով ձգտել եմ ներկայացնել

---

[1] Տե՛ս ***Самсин А. И.***, Основы философии экономики. М., 2003:

[2] ***Ա. Սարգսյան***, Տնտեսության փիլիսոփայության մի քանի հարցեր, Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի, Եր., 2004, թիվ 1, ***Ս. Սարգսյան***, Տնտեսագիտական կրթության փիլիսոփայական-մշակութաբանական հիմնախնդիրները, Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի, Եր., 2004, թիվ 3, ***Ս. Օհանյան***, Փողի փիլիսոփայություն և հոգեբանություն, Եր., 2013 և այլն:

[3] Տե՛ս ***Ա. Սարգսյան***, Փիլիսոփայության դասընթաց, Եր., 2016, էջ 202-212, 414-419, 430-434, 444-449 և այլն, ***նույնի*** Գործարարության բարոյագիտություն, Եր., 2019, էջ 14-30, 45-48, 68-90, 96-110,134-146 (նշված էջերի նյութերը, որոշ փոփոխություններով, տեղ են գտել սույն ուսումնական ձեռնարկում որպեսզի այն դառնա առավել ամբողջական):

երեքհազարամյա պատմություն ունեցող այն կապն ու փոխազդեցությունը, որ գոյություն է ունեցել տնտեսագիտության և փիլիսոփայության միջև, որն էլ հիմք է հանդիսացել տնտեսագիտության փիլիսոփայության՝ որպես ինքնուրույն գիտակարգի, գիտելիքի ինքնատիպ բնագավառի, ձևավորման համար: Վերլուծության ու քննարկման օբյեկտ են ընտրվել ոչ թե նեղ գիտական-մասնագիտական, այլ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող՝ մարդու տնտեսական մոդելի, մեթոդի ու մեթոդաբանության, կատեգորիաների (նաև տնտեսագիտական և փիլիսոփայական ընդհանրական հենք ունեցող), տնտեսական կեցության, տնտեսական գիտակցության, փողի, շուկայի, գործարարության (բիզնեսի) ու բարոյականության, տնտեսության ու բնապահպանության, պատմության և հասարակության պարբերացման և այլ հարցեր, որոնք ունեն ոչ միայն տեսական, այլև լայն մարդաբանական (հումանիստական), արժեքային-աշխարհայացքային նշանակություն և կողմնորոշվածություն:

Բովանդակային առումով ձեռնարկը փորձել եմ պատրաստել այնպես, որ ընթերցելիս տնտեսագետն այնտեղ փիլիսոփայություն տեսնի, փիլիսոփան՝ տնտեսագիտություն, իսկ մագիստրոսը՝ տնտեսագիտության փիլիսոփայություն, այսինքն՝ պահպանել համամասնությունը, ստեղծել երկու ընդհանրական գիտությունների շփման եզրերում ձևավորված ներդաշնակ գիտությանը արժանի ձեռնարկ (և ոչ թե փիլիսոփայությունից և տնտեսագիտությունից հավաքած նյութերի խառնուրդ): Ինչքան է հաջողվել, դատողը ընթերցողն է:

Եվ վերջինը: Շնորհակալությունս եմ հայտնում տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հովսեփ Աղաջանյանին, ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ Սամվել Գրիգորյանին, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտներ Սարգիս Հայրապետյանին և Սոֆյա Օհանյանին՝ համակարգչային շարվածքով տեքստը կարդալու և արժեքավոր լրացումներ ու դիտողություններ կատարելու համար:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1.1. ***Տնտեսագիտություն և փիլիսոփայություն. շփման եզրերը***

Ռուսերեն «***экономика***» հասկացությունը հայերենում, բովանդակային առումով նվազագույնը երեք իմաստ ունի.

1. *Տնտեսություն, որը ձևավորվում է* ***Մարդ-Բնություն*** փոխհարաբերության և փոխազդեցության ընթացքում:
2. *Հասարակական հարաբերությունների որոշակի (տնտեսական) ոլորտ:*
3. *Գիտելիքի բնագավառ՝ տնտեսագիտություն*, որը սկզբնապես գործել է փիլիսոփայության համակարգում, իսկ XVII-XIX դարերի ընթացքում դարձել ինքնուրույն գիտություն: Դասընթացում գործ ունենք երրորդ ըմբռնման՝ տնտեսագիտության՝ որպես գիտության, փիլիսոփայական կողմնորոշման հետ, որում ներառվում են նաև 1-ին և 2-րդ ըմբռնումները:

Ռուսական գրականության մեջ «экономика»-ից բացի շրջանառվում է նաև «хозяйство» բառը, որը հայերենում թարգմանվում է «տնտեսություն», որը փիլիսոփայական դիտանկյունից ստեղծում է հասկացությունների շփոթ, որովհետև նույն գիտակարգը բնութագրելու համար օգտագործվում է երկու բառակապակցություն՝ «տնտեսագիտության փիլիսոփայություն» («философия экономики») և «տնտեսության փիլիսոփայություն» («философия хозяйства»): Ռուսական գրականության մեջ «Философия хозяйства»-ն օգտագործվում է երեք իմաստով.

1. Որպես «տնտեսագիտության փիլիսոփայության» (философия экономики) հոմանիշ:
2. Որպես տնտեսագիտության փիլիսոփայության արժեքաբանական ուղղվածություն և միաժամանակ տնտեսական արժեք-

ների ներդրում տնտեսական պրակտիկայում: Այս տեսանկյունից պետք է գնահատել ռուս հեղինակ Ա. Վ. Սավկայի գիրքը, որի զգալի հատվածը նվիրված է մշակութապատմաքաղաքակրթական տարբեր տարածքներում (լայն իմաստով՝ արևմտյան, արաբա-մուսուլմանական, հնդկա-բուդդայական, չինա-կոնֆուցիոսական աշխարհներ) տնտեսության ձևավորման, կայացման և զարգացման գործում արժեքային գործոնների, մասնավորապես կրոնների ունեցած դերի վերհանմանը[4]:

3. Որպես պատմատնտեսագիտական ուսմունք, որը սկիզբ է առնում ռուս նշանավոր աստվածաբան-փիլիսոփա ***Ս. Բուլգակովի*** (1871-1944) 1912 թ. հրատարակած «Философия хозяйства» գրքից, որում տնտեսությունը քննարկվում է գիտության, աստվածաբանության, փիլիսոփայության, բարոյականության դիրքերից, իսկ նպատակը տնտեսական մատերիալիզմը՝ «էկոնոմիզմը» (մարքսյան-մարքսիստական տնտեսագիտական փիլիսոփայությունը) քննադատելն է, մերժելը[5]:

Վերջին շրջանում նմանաբնույթ վերնագրերով («Философия хозяйства», «Курс философии хозяйства») և գրեթե նույն ուղղվածության «գիտություն» ստեղծելու փորձեր են կատարվում, որին Ա. Օրեխովը անվանում է կեղծ գիտություն[6]: Այդ հեղինակներից է Յու. Մ. Օսիպովը, որն ընտրելով բավականին տարօրինակ լեզվաոճ (այն ո՛չ գիտական է, ո՛չ փիլիսոփայական, ո՛չ կրոնական, ո՛չ գեղարվեստական, այլ թվարկածները միասին վերցրած ու դրած աֆորիզմների, կարճասացությունների, պատկերավոր արտահայտությունների պարտադրված կաղապարի մեջ) ստեղծում է տիեզերական-միստիկական համընդգրկուն համակարգ՝ մետատեսություն, որի կենտրոնում դնում է տնտեսավարող-արարիչ մարդուն, որը արարում է իրեն, կյանքը, կեցությունը: Բայց, քանի որ գոյություն ունի Աստված, որն արդեն արարել է աշխարհն ու մարդուն, այդ պատճառով մարդը դառնում է վերարարող: Վերարտադրելով աշխարհը, մարդը վերարտադրում է նաև իրեն: Այստեղ տնտեսության փիլիսոփայությունը

---

[4] Տե՛ս ***Савка А. В.***, Основы философии хозяйства. М., 2010:

[5] Այս ամենի մանրամասն վերլուծությունը տե՛ս ***Орехов А. М.***, Философия экономики в России: рождение традиции. М., 2019, էջ 59-70:

[6] Տե՛ս նույն տեղում:

դուրս է գալիս դեպի տնտեսության աստվածաբանություն և, հեղինակի պնդմամբ, տնտեսության փիլիսոփայությունը, ըստ էության, դառնում է տնտեսության աստվածաբանություն[7]: Իր տեսության հիմքում դնելով «սեր», «իմաստություն», «տնտեսություն» հասկացությունները, հեղինակը պնդում է, որ տնտեսական իմաստությունից է ծնվում տնտեսության փիլիսոփայությունը: Օսիպովի կարծիքով, զարգացման որոշակի փուլում տնտեսական (կամ հակատնտեսական) մարդը հայտնվում է շփոթված վիճակում: Նա անցնում է ողջ արարվածի ահավոր վերաիմաստավորման կամ տնտեսական ապաշխարության տառապալից փուլ «…եթե ցանկանում եք, նաև տնտեսական փրկության փուլ»[8]: Ընդհանուր հետևությունն այն է, որ «տնտեսական փիլիսոփայությունը ունակ է և պետք է մարդուն տա ինքնատիպ տնտեսական ավետարան, մարդուն այդքան անհրաժեշտ բարի լուրը՝ ավետումը»[9]: Իսկ ի՞նչ է տնտեսությունը («хозяйство»). Շրջագայություն, թափառում, բայց ստեղծագործական, մտքի թափառում, որի միջոցով արարվում, կազմակերպվում է կյանքը, կեցությունը, ողջ գոյավորը: Հենց այդ պատճառով տնտեսության փիլիսոփայությունը ճանաչողական, տարածական, հայեցակարգային սահմաններ չունի, այն տիեզերական գիտություն է, նաև տրանսցենդենտալ գիտություն, սակրալ (կրոնական, ոչ աշխարհիկ) առարկա, որը ոչ թե պետք է ճանաչել, այլ խոնարհվել, հույս դնել գթասրտության վրա: Այս ամենից է բխում Օսիպովի տնտեսության «софийность»-ը, բայց նաև «антисофийность»-ը[10]:

Քանի որ «Философия хозяйства»-ն ուսումնասիրում է ոչ այնքան բարիքների արտադրությունը, որքան կյանք-տնտեսության մետաիմաստները, կյանքի և մարդու արտադրությունն ընդհանրապես, այդ պատճառով էլ այն ընդգրկման շատ ավելի լայն ոլորտներ (շրջանակներ) ունի, քան «Философия экономики»-ն[11]:

Դժվար է ասել, թե այդ ամենը ինչ կապ ունի, կամ ինչքանով է կապվում բուհերի տնտեսագիտական մասնագիտություններում կամ

---

[7] Տե՛ս ***Осипов Ю. М.***, Курс философии хозяйства. М., 2005, էջ 228:

[8] ***Осипов Ю. М.***, Курс философии хозяйства, с. 230.

[9] Там же, с. 247:

[10] Տե՛ս նույն տեղում, էջ 226:

[11] Այս երկուսի փոխհարաբերության մասին տե՛ս Филисофия и методология экономики. Учебное пособие, под ред. ***Л. А.Тутова.*** М., 2019, էջ 100-114:

տնտեսագիտական բուհերում «Տնտեսագիտության փիլիսոփայություն» դասընթացի՝ որպես աշխարհիկ գիտակարգի, ներդրման ու դասավանդման հետ:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող ուսումնական ձեռնարկը գրված է ռուսական «Философия экономики»-ի լավագույն ավանդույթների և նվաճումների ոգուն համապատասխան: Դասընթացը տնտեսագիտության (և ոչ թե տնտեսության) փիլիսոփայություն է, որովհետև տնտեսությունը փոխազդեցություն է, որն ընթանում է որոշակի մեխանիզմով, փուլերով, բաղկացած է առանձին տարրերից: Մինչդեռ տնտեսագիտությունը գիտություն է տնտեսական մեխանիզմների բնույթի, տնտեսությունը վարելու կերպի, փուլերի, տարրերի գործունեության առանձնահատկությունների մասին, որոնց մի մասը բարձրանում է օրենքի և օրինաչափության աստիճանի: Փիլիսոփայության անհրաժեշտությունն էլ առաջանում է այնտեղ և այն ժամանակ, երբ զգացվում է օրենք և օրինաչափություն առաջացնող երևույթների խորքային և ընդհանրական հիմքերը բացահայտելու և բացատրելու պահանջ, դրանց սոցիալական, արժեքային-աշխարհայացքային, մարդաբանական նշանակությունը վերհանելու ցանկություն:

Այժմ (այս նախնական բացատրություններից հետո) ըստ էության: Որոշ մտածողներ եվրոպական քաղաքակրթության ակունքում երեք աղբյուր են տեսնում. ***Աստվածաշունչը***, ***հին հունական փիլիսոփայությունը*** *և* ***հին հռոմեական իրավունքը***: Մենք էլ սկսենք Աստվածաշնչից, բայց ոչ թե որպես գիտական փաստ, այլ դասընթացի մուտքն ապահովող հարմար և հետաքրքիր միջոց: Ամեն ինչ սկսում է սկզբնական մեղքից, որի արդյունքում Եվան և Ադամը վռնդվեցին դրախտից, եկան այս աշխարհ, իրենց և հետո եկողներին զրկելով անթիվ-անհամար դրախտային բարիքներից (բարիքը բնության պարգևած կամ մարդու ստեղծած նյութական և հոգևոր միջոցների ամբողջությունն է, որոնք բավարարում են մարդու պահանջմունքները: Նյութականի մեջ մտնում են բնության տվածը կամ մարդու ստեղծած կենսապահովման միջոցները: Ոչ նյութական բարիքներ են հոգևոր մշակույթը, կրթությունը, առողջապահությունը և այլն): Այս աշխարհում մարդը ստիպված սկսեց արտադրել բարիքներ (երբ

սպառեց սնվելու համար պիտանի այն ամենը, ինչ ստեղծել էր բնությունը), բայց շատ սահմանափակ (յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջանում մարդն արտադրել է այնքան, որքան հնարավորություն են տվել նրա ֆիզիկական և հոգևոր ուժերը, էներգիան, տեխնիկան և տեխնոլոգիան), ուստի որպեսզի մեզ համար անհրաժեշտ բարիք ընտրենք, ստիպված հրաժարվում ենք մեկ ուրիշ բարիքից, որից այլ պայմաններում հաստատ չէինք հրաժարվի: Մարդու վարքագծի կարևոր բաղադրիչ է դառնում հիմնավորված-տրամաբանված (ռացիոնալ) ընտրությունը՝ սահմանափակ ռեսուրսների պայմաններում: Այդ վարքագծի առանձնահատկությունները, արդյունավետությունը, նրբություններն ու նրբերանգները բացահայտելու ձգտումը ծնեց տնտեսագիտական գիտելիքը, որը հետագայում դարձավ տնտեսագիտություն՝ բազմաթիվ ոլորտներով, ենթաոլորտներով, բաղադրիչներով: Ժամանակի ընթացքում ընդլայնելով մտահորիզոնը, գործունեության շրջանակները, խորացնելով իմացությունը, մարդը ձգտեց հասկանալ տիեզերքը, աշխարհակառույցը և իր տեղն ու անելիքն այնտեղ: Այդ ձգտումը ծնեց փիլիսոփայությունը: Գիտելիքի այս ձևերի շփման ընթացքում և արդյունքում ձևավորվեց տնտեսագիտության փիլիսոփայությունը: Ինչպե՞ս:

Ողջ տնտեսագիտական միտքը ***Արիստոտելից*** (մ.թ.ա. 384-322) սկսած, կարծում եմ, փորձում է տալ հետևյալ հարցերի պատասխանը.

1. *Ի՞նչ է հարստությունը, ի՞նչպես է ստեղծվում և ովքե՞ր են ստեղծում այն:*
2. *Ինչպես ապահովել արդյունավետ տնտեսություն, որո՞նք են արդյունավետության չափանիշները:*
3. *Ինչպե՞ս ապահովել հարստության արդարացի բաշխումը:*
4. *Ի՞նչն է ապահովում ապրանքների արդար փոխանակումը:*

Տնտեսափիլիսոփայական գրականության մեջ թվարկած հարցերի պարզաբանման էվոլյուցիային կծանոթանանք համապատասխան բաժիններում, այժմ անդրադառնանք 4-րդ կետին, որպեսզի տնտեսական հարաբերությունների միայն մեկ հարցադրման պարզաբանումից մուտք գործենք տնտեսագիտության փիլիսոփայություն: Հիշենք հարցը. ինչպե՞ս ապահովել ապրանքների արդար փոխանակումը: Որպեսզի դա իրականանա, ըստ Արիստոտելի, անհրաժեշտ

է, որ փոխանակվող ապրանքները լինեն համեմատելի, համադրելի, համարժեք և չափելի: Թվարկած գործոնները կարող են ապահովել.

- առարկայի մեջ մարմնավորված արժեքը,
- օգտակարությունը,
- գինը,
- փոխանակման մեջ մտած մարդկանց արժեքային համակարգը:

Թվարկածներից ակնհայտ է դառնում, որ.

ա) Արիստոտելը, հաշվի առնելով իր նախորդներ ***Քսենոփոն Աթենացու*** (430-355 մ.թ.ա.) և ***Պլատոնի*** (427-347 մ.թ.ա.) հայացքները, սաղմնային վիճակում առանձնացնում է այնպիսի գործոններ, որոնք քննարկման առարկա են դառնում տնտեսագիտական մտքի հետագա ողջ ընթացքում,

բ) Արիստոտելը տնտեսությունը վարելու կերպը բարոյականից դուրս չէր պատկերացնում:

Արիստոտելը դասակարգելով անտիկ փիլիսոփայությունը, առանձնացրեց գիտելիքների երեք բնագավառ՝ ***տեսական*** (մաթեմատիկա, ֆիզիկա, մետաֆիզիկա), ***գործնական*** (բարոյագիտություն, տնտեսագիտություն, քաղաքագիտություն), ***գեղարվեստական*** (պոետիկա, արվեստ, ճարտասանություն): Ըստ Արիստոտելի (ինչպես նաև նրան հետևող Դավիթ Անհաղթի) փիլիսոփայության տեսական բաժինը զբաղվում է ոգու ճանաչողական հատկությունների բացահայտմամբ, գործնականը կատարելագործում է բարքերը, քաղաքականությունը կարգավորում է քաղաքային կյանքը: Տնտեսագիտությունը Արիստոտելի մոտ ոչ միայն տան գործերի կարգավորում էր (ամուսինների համերաշխություն, երեխաների նկատմամբ սեր, ծառաներին երկյուղ ներշնչել, եկամուտների և ծախսերի համաչափություն), այլև ուսմունք, հայեցակետ, ըստ որի «տուն» կոչվածը, բացի ընտանիք լինելուց, տնտեսական գործունեությունն էր՝ տան ղեկավարի միանձնյա իշխանությամբ: Տնտեսության այս ձևի հիմքում ընկած էր փակ բնատնտեսությունը և թույլ կախվածությունը շուկայից: Տնտեսավարման նման ձևին Արիստոտելը անվանեց «ավտարկիա» (ինքնաբավություն), որը դուրս բերելով առանձին ընտանիքի շրջանակներից դարձրեց պոլիսի, նույնիսկ տիեզերքի բնութագիր՝ որոշակի նվիրապետական կարգով, ըստ որի՝ տունը պոլիսի

մեջ է, պոլիսը՝ տիեզերքի: Տիեզերքը աստծո «օյկոսն» է՝ ներդաշնակորեն կարգավորված, բարի ու գեղեցիկ: Փակ բնատնտեսության մեջ Արիստոտելը չժխտեց առևտրի անհրաժեշտությունը, բայց մերժեց տընտեսության շուկայական ձևը, որովհետև, ի տարբերություն տնակառույցի (ըստ V դարում ստեղծված հայ հունաբան դպրոցի ներկայացուցիչների թարգմանության՝ «տնօրինականի»), վերջինս ոչ թե պահանջմունքներ է բավարարում, այլ ծնում շահույթի մոլուցք, ինչը մարդկանց դարձնում է ընչաքաղց, խախտում տնտեսության կենտրոնացված կարգը և դրա կարևոր սկզբունքը՝ չափավորությունը: Տնտեսության շուկայական ձևը, որի նպատակը փող կուտակելն էր, Արիստոտելը անվանեց «խրեմատիստիկա», որը դեմ է պոլիսի ինքնաբավությանը, խախտում է ներդաշնակությունը տնային տնտեսության, հասարակության, պոլիսի և տիեզերքի միջև[12]: Նման մոտեցումը պայմանավորված էր նաև հին աշխարհի տիեզերակենտրոն հարացույցով: Փակ «օյկոսին» համապատասխանում է փակ «օյկոնոմիան», որի հիմքը տնտեսության հողագործական ձևն էր:

Արիստոտելի գիծը միջնադարում շարունակեց ***Թովմա Աքվինացին*** (1225-1274), որը հարստությունը բաժանում է բնականի՝ փակ բնատնտեսության և արհեստականի (ոսկու և արծաթի): Ըստ Աքվինացու՝ հարստության երկրորդ ձևը մարդկանց երջանկություն չի պարգևում, նման հարստություն ձեռք բերելը նպատակ չպետք է դառնա, որովհետև մարդու նպատակը բարոյական կատարելությունն է, հոգու փրկությունը: Քրիստոսը դեմ էր հարստություն դիզելուն:

Ողջ միջնադարում տնտեսագիտությունը ամուր կապերով կապված էր բարոյականության հետ:

XVII-XIX դդ. ընթացքում տնտեսագիտությունը աստիճանաբար դուրս եկավ փիլիսոփայության կազմից (տիրույթից), կտրվեց բարոյականությունից և դարձավ գիտելիքի ինքնուրույն բնագավառ, բայց դրանով փոխազդեցությունն ու համագործակցությունը նրանց միջև չընդհատվեց: Հակառակը, հարաբերությունների բոլորովին նոր դաշտ ձևավորվեց, ինչպես տեսության մեջ, այնպես էլ գործնական կյանքում: Տեսության մեջ դրվեցին տնտեսագիտության փիլիսոփա-

[12] Տե՛ս ***Аристотель***, Политика. Соч. в 4 т., т. 4, М., 1984. Էջ 395-402:

յության հիմքերը, որում մեծ էր նաև նշված ժամանակաշրջանի փիլիսոփաներ ***Ջ. Լոկի*** (1632-1704), ***Գ. Հեգելի*** (1770-1831) և այլոց ներդրումը: Ըստ Լոկի մինչպետական (մինչև պետության ստեղծումը) վիճակում իշխել է բնական իրավունքը՝ կյանքի, ազատության և աշխատանքի միջոցով ստեղծված սեփականության պաշտպանության նկատմամբ, որն իրականացրել են բոլորը և յուրաքանչյուրն առանձին վերցված: Բայց պահպանության անհատական միջոցները բավարար չեն եղել հանգիստ ու խաղաղ կյանքով ապրելու համար: Զգացվել է անձնական անձեռնմխելիության կայուն երաշխիքների ստեղծման անհրաժեշտություն: Նման երաշխիք է համարվել հասարակական դաշինքի միջոցով պետության ստեղծումը, որի խնդիրը մարդու կյանքը, ազատությունը և սեփականությունը պահպանելն է: Լոկի կարծիքով, պետությունը պետք է պաշտպանի քաղաքացիների իրավունքները, մասնավոր սեփականությունը և վարի հովանավորչական քաղաքականություն՝ պաշտպանի իր երկրի շահերը արտաքին (այլ երկրների) մրցակցությունից: Պետությունը չպետք է ղեկավարի առևտուրն ու արտադրությունը, զբաղվի սոցիալական քաղաքականությամբ, այլ կատարի «գիշերային պահակի» և «հսկող աչքի» գործառույթներ: Այստեղից մինչև Սմիթի «անտեսանելի ձեռքը» մեկ քայլ է:

Հեգելը հասարակական կյանքի տնտեսական ոլորտի վերլուծությունը կատարում է Ոգու փիլիսոփայության օբյեկտիվ ոգու մակարդակում, երբ քննարկում է ընտանիքի, հասարակության և պետության խնդիրները: Վերլուծությունը իրականացնում է հիմնականում «Իրավունքի փիլիսոփայություն» գրքում: Ըստ Հեգելի տնտեսությունը քաղաքացիական հասարակության հիմքն է, իսկ մասնավոր սեփականությունը՝ բանական հասարակության բարձրագույն դրսևորումը: Հասարակության մեջ գործող սուբյեկտների ձևավորման հիմքն ու պայմանը աշխատանքն է, որի միջոցով էլ ինքնիրականացվում և ինքնահաստատվում է անհատը: Աշխատանքը շարժման մեջ դնողը մարդկանց պահանջմունքներն են: Բայց, ըստ Հեգելի, պահանջմունքները, շահերը, կրքերը շարժման մեջ են դնում ոչ միայն աշխատանքը, այլև հասարակական-պատմական մեծ իրադարձությունները: Մարդը ծավալում է գործունեություն որպեսզի.

- բավարարի իր պահանջմունքները,

- փոխի առարկայական աշխարհը:

Ի տարբերություն բազմաթիվ տնտեսագետների, որոնք փողը համարում էին սովորական ապրանք, Հեգելը այն համարեց համընդհանուր ապրանք: Փողի էության մասին Հեգելի հայացքները տնտեսագիտության փիլիսոփայության կարևոր տեսական նվաճումներից են[13]:

Հեգելի փիլիսոփայությանը դեռ կանդրադառնանք, այժմ տեսնենք, թե ի՞նչ փոփոխություններ են կատարվում գործնական կյանքում.

1. Ձևավորվում է տնտեսագիտությունը որպես գիտելիքի ինքնուրույն բնագավառ:
2. Դրվում են տնտեսագիտության փիլիսոփայության հիմքերը:
3. XVII-XIX դարերում են ձևավորվում և կայանում նոր հասարակական-տնտեսական հարաբերությունները, որին անվանում են «կապիտալիստական», «բուրժուական», «շուկայական»:
4. XVII դարից է Եվրոպայի պատմության մեջ ավանդական հասարակությունից անցում կատարվում արդյունաբերական կամ տեխնոլոգիական հասարակությանը, որոնց իմաստավորումը դառնում է ինչպես տնտեսագիտության, այնպես էլ փիլիսոփայության կարևորագույն խնդիրը:

Տնտեսագիտության առանձնացումը փիլիսոփայությունից ձևավորեց հարաբերությունների նոր մակարդակ, ստեղծեց փոխադարձ շփումների նոր հնարավորություններ: Տնտեսագիտությունը հարըստացնում է սոցիալական փիլիսոփայությունը, փիլիսոփայության օրենքներն ու կատեգորիաները մեթոդաբանական դեր են կատարում տնտեսագիտական օրենքների և կատեգորիաների, տնտեսագիտական տեսությունների, հարացույցների հիմնավորման և ձևակերպման համար: Բացի այդ, տնտեսագիտության մեջ ձևավորվեցին կատեգորիաներ, որոնք իրենց բնույթով փիլիսոփայատնտեսագիտական են, որոնց հետ ծանոթանալով ընդհանուր պատկերացում ենք կազմում տնտեսական գործունեության բնույթի, մարդու կյանքում դրանց ունեցած դերի ու նշանակության մասին, որոնք լինելով տնտեսագիտական, միևնույն ժամանակ ձեռք են բերում աշխարհայացքային, կենսիմաստային նշանակություն (այս ամենի մասին կնշվի համապատասխան բաժնում):

---

[13] Տե՛ս ***Самсин А. И.***, Основы философии экономики, էջ 46:

Տնտեսագիտությունը ընդհանուր փիլիսոփայությանը կապող ոլորտներից է հասարակության փիլիսոփայական վերլուծությունը՝ սոցիալական փիլիսոփայությունը: Հասարակությունը մշտապես փոխազդեցության մեջ է գտնվում շրջակա միջավայրի հետ, որի արդյունքում ձևավորվում են մարդկանց կենսագործունեության **նյութական**, **քաղաքական**, **սոցիալական**, **մշակութային** ձևերը:

Հասարակական կյանքի տարբեր ոլորտներով զբաղվում են կոնկրետ գիտությունները: Օրինակ՝ տնտեսական ոլորտով զբաղվում է տնտեսագիտությունը, իսկ հասարակության էության, գործունեության և գործառնության ընդհանուր օրինաչափություններով՝ սոցիալական փիլիսոփայությունը, որի ձևակերպած ընդհանուր դրույթները, մեթոդաբանական մոտեցումները կողմնորոշիչ են նաև տնտեսագիտության համար: Այս ամենը ընդհանուր շրջագծի մեջ մտցնողը և իմաստավորողը դառնում է տնտեսագիտության փիլիսոփայությունը:

Այժմ խիստ համառոտ այն մասին, թե՛ ի՞նչ են ուսումնասիրում փիլիսոփայությունն ու տնտեսագիտությունը և թե՛ նրանց ինչպես է միավորում տնտեսագիտության փիլիսոփայությունը:

Փիլիսոփայությունը հոգևոր գործունեության մշակութային ձև է, որը զբաղվում է աշխարհի և նրանում ապրող մարդու մասին ամբողջական հայացքների բանական-քննական վերլուծությամբ, աշխարհայացքային առավել ընդհանուր հիմնադրույթների ուսումնասիրությամբ: ***Փիլիսոփայությունը կեցության սահմանային հիմքերը ճանաչելու ձգտումն է՝ ռացիոնալ-բանական միջոցներով***: Բայց փիլիսոփայության ուսումնասիրության առարկան ոչ թե առանձին մարդն ու աշխարհն են, այլ աշխարհի նկատմամբ մարդու ճանաչողական, արժեքային ու գործնական հարաբերությունները:

Կառուցվածքային առումով փիլիսոփայության մեջ մտնում են.

1. ***Գոյաբանությունը*** (ուսմունք կեցության, սկզբնապատճառի, ոգու, աստծո, աշխարհի, մատերիայի, շարժման, զարգացման, ժամանակի և տարածության մասին): Գոյաբանական մակարդակում քննարկվում են կեցության ընդհանուր հիմքերն ինքնին վերցրած: Մարդն այստեղ կեցության տարր է: Ժամանակակից փիլիսոփայության և գիտության մեջ «գոյաբանություն» հասկացությունն օգտագործվում է երկու իմաստով.

ա) սուբստանցիոնալ՝ նախագոյի, նախահիմքի (ուղղահայաց մոտեցում),

բ) սուբյեկտային-լեզվաբանական (կառուցվածքաբանական, կոնստրուկցիոնիստական մոտեցում), որում գոյաբանությունը մեկնաբանվում է որպես ուսումնասիրվող իրականության տեսական կառուցվածք (կոնստրուկցիա):

2. ***Իմացաբանությունը-իմաստաբանությունը*** (ուսմունք աշխարհի ճանաչողության և գիտելիքի ձեռք բերման ուղիների և հնարավորությունների մասին), որում մարդը հակադրվում է աշխարհին, դառնում իմացության սուբյեկտ և ձգտում ճանաչել որպես օբյեկտ հանդես եկող աշխարհը, ձևավորել գիտելիք աշխարհի և իր մասին (ինքնաճանաչողություն): Իմաստաբանական (էպիստեմոլոգիական) առումով ուսումնասիրվում են տարբեր առարկաների, երևույթների մասին գիտելիքի ձեռք բերման մեխանիզմները, դրանց հիմնավորվածության աստիճանը և այլն: Այդ պատճառով առանձնացվում են իմաստաբանության փորձնական-փորձառական և տեսական մակարդակները:
3. ***Արժեքաբանությունը*** (ուսմունք արժեքների մասին): Արժեքաբանությունը ոչ միայն փիլիսոփայության կառուցվածքային տարր է, մակարդակ, այլև, և ամենից առաջ, փիլիսոփայական գիտելիքի բնութագիր, որով փիլիսոփայությունը ոչ միայն գնահատում է աշխարհն ու նրանում ապրող մարդուն, այլև իմացությունը լրացնում բարոյականությամբ, բանականությունը՝ բարձրագույն բարոյական նպատակով:
4. ***Գործնական-գործունեականը*** (ուսմունք, որով գոյը լրացվում է պիտոյով, գոյություն ունեցողը՝ ցանկալիով): Փիլիսոփայությունը ցույց է տալիս ցանկալի իրականությանը հասնելու (աշխարհը վերափոխելու) ուղիները, բայց դրանց տարբերակների ընտրությունը թողնում է մարդուն:

Թվարկածներից բացի փիլիսոփայության բաժիններ են նաև գիտելիքի որոշակի ոլորտներ հանդիսացող մշակույթը (մշակույթի փիլիսոփայություն), գիտությունը (գիտության փիլիսոփայություն), կրո-

նը (կրոնի փիլիսոփայություն), իրավունքը (իրավունքի փիլիսոփայություն), տնտեսագիտությունը (տնտեսագիտության փիլիսոփայություն) և այլն[14]:

Տնտեսագիտությունը գիտելիքների համակարգ է այն մասին, թե ինչպես ***սահմանափակ ռեսուրսների*** (արտադրական նշանակության միջոցներ, որոնք տրվում են բնության կողմից կամ ստեղծում է մարդը) ***պայմաններում գտնել դրանց օգտագործման առավել արդյունավետ միջոցներ՝ մարդկանց պահանջմունքները բավարարելու համար***: Տնտեսագիտությունը ուսումնասիրում է նաև այն կապերն ու հարաբերությունները, որոնք ձևավորվում են մարդկանց միջև նյութական բարիքների և ծառայությունների արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման ընթացքում: Ընդհանրական բնութագրման դեպքում՝ ***տնտեսագիտությունը գիտելիքների համակարգ է, որը սովորեցնում է մարդկանց, թե կենսական պահանջները բավարարելու համար արդյունավետ ի՞նչ միջոցներ պետք է գործադրել:*** Նմանատիպ սահմանումներ են տրվում նաև տնտեսագիտության տեսությանը: Օրինակ՝ ըստ սահմանումներից մեկի՝ տնտեսագիտության տեսությունը գիտություն է, որն ուսումնասիրում է սահմանափակ ռեսուրսների ընտրության, բաշխման և օգտագործման ոլորտներում մարդու տնտեսական վարքագիծը [15] : Տնտեսագիտությունը նաև տնտեսական արժեքների համակարգ է, որը իմաստ է տալիս մարդկանց վարքագծին[16]: Այսպես է արիստոտելյան «տնօրինականը» ***Մոնկրետիենի*** (1575-1621) մոտ դառնում «քաղաքատնտեսություն», իսկ ***Ալֆրեդ Մարշալի***՝ (1842-1924) «economics»՝ «տնտեսագիտություն»[17]: Ահա՛ այն ուղին, որով անցնելով տնտեսության մասին գիտելիքը դառնում է սոցիալ-հումանիտար

---

[14] Փիլիսոփայական գիտելիքի առանձնահատկությունների մասին մանրամասն տե՛ս ***Ա. Սարգսյան***, Փիլիսոփայության դասընթաց, էջ 8-57:

[15] Տնտեսագիտության՝ որպես գիտության, առանձնահատկությունների մասին տե՛ս Философия и методология экономики. Учебное пособие. Под ред. ***Л. А. Тутова,*** էջ 10-21:

[16] Տե՛ս ***Канке В. А.,*** Философия экономической науки. М., 2009, էջ 59:

[17] Մեկ այլ կարծիքի համաձայն ***Ա. Մ. դը Վատկիլն*** է (1575-1621) առաջինն օգտագործել «քաղաքատնտեսություն» հասկացությունը (տե՛ս ***Самсин А. И.***, Основы философии экономики, էջ 41):

ինքնուրույն գիտություն: («Տնտեսագետ» («էկոնոմիստ») հասկացությունը շրջանառվել է XVIII դարի կեսերին: Իրենց այդպես են անվանել մի խումբ ֆրանսիացի տնտեսագետներ, որոնցից հայտնի են Վ. Միրաբոն, Դյուպոն դը Նեմուրը, Վ. Գուրնեն, Թյուրգոն):

Ըստ մակարդակների առանձնացվում են տնտեսագիտության միկրո, մեզո, մակրո և մեգա մակարդակները: Տնտեսագիտության տեսական հատվածը՝ տնտեսագիտության տեսությունը (կամ տեսական տնտեսագիտությունը), սերտ կապի մեջ է փիլիսոփայության հետ: Մասնագետները տնտեսագիտության տեսության երկու ըմբռնում են առանձնացնում՝ նեղ և լայն: Նեղ ըմբռնմամբ տնտեսագիտության տեսությունը տնտեսագիտության մեթոդաբանական հիմքն է, բազան, որը ընդհանուր պատկերացում է տալիս տնտեսության մասին: Լայն ըմբռնմամբ՝ զանազան մակարդակների տնտեսագիտական տեսությունների հավաքածու[18]:

Տնտեսագիտության մեջ են մտնում նաև տնտեսագիտական ուսմունքների պատմությունը, մարքեթինգը, աշխատանքի տնտեսագիտությունը, տնտեսագիտական մարդաբանությունը, հոգեբանությունը, սոցիոլոգիան, բնօգտագործման տնտեսագիտությունը և այլն:

Տնտեսագիտությունն ու փիլիսոփայությունը կապված են նաև մարդու հիմնախնդրով, որովհետև երկուսի ուշադրության կենտրոնում էլ մարդն է՝ իր ռացիոնալ վարքագծով (ըստ տնտեսագիտության դասական դպրոցի ներկայացուցիչների և նրանց հետևորդների), համընդհանուր բարիք ստեղծելու ձգտմամբ: Հետևաբար՝ երկուսի համար էլ շարունակում է արդիական մնալ «***ի՞նչ է մարդը***» կանտյան հարցադրումը[19]:

---

[18] Տե՛ս Философия и методология экономики. Учебное пособие. Под ред. ***Л. А. Тутова.*** М., 2019, էջ 168-169:

[19] Ռուս հեղինակ ***Ռ. Կապելյուշնիկովը*** վերլուծելով տնտեսագիտության զարգացման նորագույն միտումները (վարքագծային-մարդաբանական գործոնի մեծացում, տեսական կողմի նվազում, ռացիոնալ վաքագծի ուսումնասիրություն և այլն) այն տեսակետն է հայտնում, որ տնտեսագիտության ներկա վիճակը ո՛չ հաղթանակ է, ո՛չ ճգնաժամ, այլ՝ աշխատանքային, թեև ոչ այնքան ոգևորող, եթե հաշվի առնենք, որ հիմնարար տնտեսագիտական գաղափարների ժամանակն այդ գիտության համար անցել է և սկսել է ապատեսականացման գործընթաց, մուտք է գործել իրավիճակային վերլուծությունների դարաշրջան, գաղափարների փոխարեն կրում է գաղա-

1.2. ***Տնտեսագիտության փիլիսոփայության առարկան, կառուցվածքը և գործառույթները***

Տնտեսագիտության փիլիսոփայությունը, միաժամանակ և՛ տնտեսագիտական, և՛ փիլիսոփայական գիտակարգ է, այսինքն ունի միջառարկայական բնույթ, որն ուսումնասիրում է ***տնտեսության կազմակերպման, գործունեության, գործառնության և զարգացման առավել ընդհանուր, հիմնարար, հիմնային օրինաչափությունները***: Տնտեսագիտության փիլիսոփայությունը ուսումնասիրում է տընտեսական կեցության հիմքերը, տնտեսական գիտակցությունը և տեսական տնտեսագիտական գիտելիքը[20]: Տնտեսագիտության փիլիսոփայությունը.

- գիտական հետազոտական ոլորտ է,
- միջառարկայական ուղղություն է,
- փիլիսոփայության բաժին է, որն ուսումնասիրում է տնտեսագիտության փիլիսոփայական կողմերը, տնտեսության ու կյանքի կապը, աշխատանքի, հարստության, սեփականության, փողի, շուկայի սոցիալ-մշակութային, արժեքային-աշխարհայացքային նշանակություն ունեցող հիմնախնդիրները, տնտեսության վարման սոցիալական, աշխարհայացքային-արժեքային, բարոյական ու մշակութային կողմերը:

Եթե տնտեսագիտությունը ձգտում է հասկանալ տնտեսական հարաբերությունների կոնկրետ ձևերը, տնտեսության կառուցվածքային բաղադրիչները, ապա տնտեսագիտության փիլիսոփայությունը՝ տնտեսական աշխարհում գործող առավել ընդհանուր օրինաչափությունները: Տնտեսագիտության փիլիսոփայությունը հանդես է գալիս որպես տնտեսական հարաբերությունների քննության տեսական հիմք:

Տնտեսագիտության փիլիսոփայությունը ուսումնասիրում է տնտեսական հարաբերությունների ու գործունեության գոյաբանական,

---

փարախոսության ազդեցությունը (տե՛ս ***Капелюшников Р. И.***, О современном состоянии экономической науки: полусоциологические наблюдения, Вопросы экономики. М., 2018, № 5, էջ 110:

[20] Տե՛ս ***Тяпин И. Н.***, Философия экономики. М., 2015, էջ 105:

իմացաբանական, մեթոդաբանական, արժեքաբանական ու մարդաբանական կողմերը, ինչպես նաև տնտեսագիտության օրենքներն ու կատեգորիաները՝ փիլիսոփայական օրենքների ու կատեգորիաների համատեքստում:

1. ***Գոյաբանական*** առումով ուսումնասիրում է տնտեսական կեցության տեղն ու դերը մարդու և հասարակության կեցության մեջ ընդհանրապես: Մարդը դառնում է տնտեսական կեցության բաղադրիչ: Այս բաժնում են քննարկվում տնտեսական իրականության, տնտեսական դետերմինիզմի, տնտեսական տարածության և ժամանակի հարցերը: Տնտեսական իրականությունը գործունեության ոլորտ է, որտեղ իրականացվում է մարդկանց պահանջմունքները բավարարող բարիքների արտադրություն: Տնտեսական տարածությունը զանազան տնտեսական համակարգերի կազմակերպման և կառուցվածքի ձևերն են, դրանց ներքին և արտաքին դրսևորումները: Տնտեսական ժամանակը տնտեսական հարաբերությունների և համակարգերի շարժման կոորդինացիան է, վիճակների հերթականությունը, զարգացման տևողությունը և արագությունը՝ անցյալի, ներկայի և ապագայի չափումներում:

2. ***Իմացաբանական-իմաստաբանական*** առումով մարդը հակադրվում է տնտեսական կեցությանը՝ արտադրության, բաշխման, փոխանակության, սպառման և այլ ոլորտներում, ձգտում ճանաչել դրանք, գիտելիք ձեռք բերել՝ համապատասխան գործունեություն ծավալելու համար: Այս բաժնում են քննարկվում տնտեսագիտական գիտելիքի առանձնահատկությունները, մակարդակները, մոտեցումները[21]:

3. ***Մեթոդաբանական*** առումով տնտեսագիտության փիլիսոփայությունը փիլիսոփայության օրենքների ու կատեգորիաների միջոցով փորձում է բացահայտել տնտեսական հարաբերություններն արտացոլող երևույթների խորքային կողմերը, տնտեսական իրողությունների առանձնահատկությունները, homo economicus-ի վարքագիծը: Տնտեսագիտության փիլիսոփայությունը հանդես է գալիս որպես տնտեսության մեջ **տնտեսական ճանաչողության ընդհանուր մեթոդաբանություն**:

---

[21] Այդ մասին տե՛ս Философия и методология экономики. Учебное пособие. Под ред. ***Л. А. Тутова***, էջ 166-173:

4. ***Արժեքային-աշխարհայացքային*** առումով տնտեսագիտության մեջ նույնպես կարևորվում են ինչպե՞ս ապրել, ինչպե՞ս ապահովել բարեկեցությունը, մարդը որպես տնտեսական արժեք ի՞նչ դեր է կատարում տնտեսական հարաբերություններում, տնտեսական կյանքի առողջացման գործում որքանով են կարևորվում բարոյական գործոնները: Հնարավոր է արդյոք առանց խղճի խայթի, ամոթի, պարտքի, պատասխանատվության, ազնվության, արդարության ապրումների, մարդու նկատմամբ հարգանքի, առանց հստակ բարոյական չափանիշների իրականացնել սոցիալ-տնտեսական բարեփոխումներ կամ ինչպես մեզանում է ասվում՝ «տնտեսական հեղափոխություն»: Տնտեսագիտության մեջ, այս խնդիրների լուծման ջանքերում փիլիսոփայության օգնականը նորմատիվ տնտեսագիտությունն է (որի մասին քիչ հետո):

5. ***Մարդաբանական*** առումով մարդն ամուր կապերով կապում է տնտեսագիտությունն (այս պարագայում նաև տնտեսությունը) ու փիլիսոփայությունը, որովհետև երկուսի նպատակն էլ նույնն է՝ ցույց տալ բարիք ստեղծելու առավել արդյունավետ ուղիկները, մարդու կյանքն ավելի լավը դարձնելը (մարդու փիլիսոփայական և տնտեսագիտական ըմբռնումնեդրի մասին կխոսվի հաջորդ բաժնում):

Տնտեսագիտության փիլիսոփայությունը իրականացնում է հետևյալ գործառույթները.

1. *Աշխարհայացքային*, որը էական դեր է կատարում տնտեսագետների, տնտեսությամբ զբաղվորների, ինչպես նաև տնտեսագիտություն սովորողների մասնագիտական աշխարհայացքի ձևավորման գործում:
2. *Մեթոդաբանական*, որում տնտեսագիտության փիլիսոփայությունը հանդես է գալիս որպես ընդհանուր մեթոդաբանություն տնտեսագիտական գիտությունների համար: Մեթոդաբանության հիմնական սկզբունքները (պարզություն, պատճառակցություն, զարգացում, խնայողություն, համակարգայնություն, հիմնավորվածություն և այլն) հիմնական են նաև տնտեսագիտության մեջ[22]:

---

[22] Այդ մասին մանրամասն տե՛ս ***Орехов А. М.***, Методы экономических исследований. Учебнов пособие. М., 2009:

3. *Մշակութաբանական*, որը մեծ դեր է կատարում տնտեսական մշակույթի, արժեքների և իդեալների ձևավորման գործում:
4. *Քննադատական*, որը մշտական կասկածն է (բայց ոչ կասկածամտությունը) տնտեսագիտական գիտելիքի ճշմարտության նկատմամբ՝ տնտեսագիտության փիլիսոփայության իրականացրած ռացիոնալ քննադատության շրջանակներում:
5. *Կանխատեսող,* երբ իրականացնում է տնտեսական կյանքի, հարաբերությունների զարգացման հեռանկարի գիտական վերլուծություն:
6. *Ինտեգրացնող*, երբ տնտեսագիտության փիլիսոփայությունը՝ որպես միջառարկայական գիտություն, կապող օղակ է դառնում տնտեսագիտության և բազմաթիվ այլ սոցիալ-հումանիտար գիտությունների միջև[23]:

Տնտեսագիտության փիլիսոփայությունը սերտորեն կապված է իրեն ծնող և սնող տնտեսագիտության, փիլիսոփայության, ինչպես նաև բարոյագիտության, մշակութաբանության, սոցիոլոգիայի, հոգեբանության, մարդաբանության, մարքեթինգի, մենեջմենթի և այլ գիտությունների հետ:

Հարցեր կրկնության համար

1. *Թվարկեք այն հարցերը, որոնց պատասխանների որոնմամբ էր զբաղված տնտեսափիլիսոփայական միտքը Արիստոտելից սկսած:*
2. *Փիլիսոփայական գիտելիքների դասակարգման մեջ ի՞նչ տեղ է Արիստոտելը հատկացնում տնտեսագիտությանը:*
3. *Որո՞նք են տնտեսագիտության և փիլիսոփայության շփման ոլորտները:*
4. *Ի՞նչ է ուսումնասիրում տնտեսագիտության փիլիսոփայությունը:*
5. *Ի՞նչ դիտանկյունից է տնտեսագիտության փիլիսոփայությունն ուսումնասիրում տնտեսական հարաբերություններն ու գործունեությունը:*
6. *Որո՞նք են տնտեսագիտության փիլիսոփայության գործառույթները:*

---

[23] Տնտեսագիտության փիլիսոփայության առարկայի, կառուցվածքի և իրականացրած գործառույթների մասին տե՛ս **Орехов А. М.**, Философия экономики в России: рождение традиции. էջ 4-54, ***Самсин А. И.***, Основы философий экономики, էջ 7-23:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՄԱՐԴԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ: «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐԴՈՒ» ՄՈԴԵԼԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ

*2.1. **Մարդու փիլիսոփայական և տնտեսագիտական ըմբռնումների առանձնահատկությունները: «Տնտեսական մարդու» հատկանիշները***

Հույն նշանավոր փիլիսոփա ***Սոկրատեսը*** (մ.թ.ա. 469-399) փիլիսոփայության մեջ կատարեց *մարդաբանական* շրջադարձ՝ ուսումնասիրության առարկան տիեզերքից տեղափոխելով դեպի մարդը:

Գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր ***Ի. Կանտը*** (1724-1804) իր փիլիսոփայության քննադատական փուլում փորձեց տալ հետևյալ հարցերի պատասխանը.

1. Ի՞նչ կարող եմ ես իմանալ: Հարցին պատասխանելու համար գրեց «Զուտ բանականության քննադատություն» աշխատությունը, իրականացրել կոպեռնիկոսյան հեղափոխություն իմացության տեսության մեջ:
2. Ի՞նչ պետք է անեմ, որ իմանամ: Հարցին պատասխանելու համար գրեց «Գործնական բանականության քննադատություն» աշխատությունը և մշակեց ինքնավար բարոյականության տեսությունը, որում բարձրացված հարցերը պակաս հեղափոխական չեն:
3. Ո՞րն է հույսս (ինչի վրա եմ հույս դնում): Հարցին պատասխանելու համար գրեց «Կրոնը միայն բանականության սահմաններում» աշխատությունը և մշակել կրոնի իր փիլիսոփայությունը:
4. Ի՞նչ է մարդը: Հարցին պատասխանելու համար գրեց «Մարդաբանություն գործնական տեսանկյունից» աշխատությունը և ներկայացրել իր մարդաբանական հայացքները: Կանտը գրում է, որ թեև դասակարգման մեջ մարդու հիմնախնդիրը նշված է վերջում, բայց իր նշանակությամբ առաջինն է, որովհետև.

ա) նախորդ երեքը անիմաստ են դառնում առանց մարդու,

բ) դրանց վերլուծությունը կատարվում է հանուն մարդու:

Ըստ մեկ այլ գերմանացի նշանավոր փիլիսոփա ***Մարտին Հայդեգերի*** (1889-1976)՝ ո՛չ մի դարաշրջան այդքան գիտելիք չի ունեցել մարդու մասին, որքան ներկայիս: Ո՛չ մի դարաշրջանում այդքան արագ և հեշտ չի ստացել այդ գիտելիքը, որքան ներկայիս: Բայց ո՛չ մի դարաշրջան այդքան քիչ չի իմացել, թե ինչ է մարդը, որքան ներկայիս:

Փիլիսոփայության մեջ մարդը դիտվում է որպես կենսաբանական, սոցիալական և հոգևոր-բարոյական կողմերի միասնություն: *Կենսաբանորեն* մարդը կենդանական աշխարհի էվոլյուցիայի արդյունք է և իր ֆիզիոլոգիական, բնախոսական կողմերով, վարքագծի շարժառիթների առանձին կողմերով բազմաթիվ ընդհանրություններ և նմանություններ ունի կենդանական աշխարհի այլ ներկայացուցիչների հետ (Անգլիացի գիտնական Արթուր Քեզը 1929 թ. մարդու մոտ առանձնացրեց 1065 հատկանիշ, որոնցից միայն մարդուն է բնորոշ 312-ը: Մնացած հատկանիշները կրկնվում են մարդու և շիմպանզեի, գորիլայի, օրանգուտանի, գիբոնի մոտ): Թեև յուրաքանչյուր դարաշրջանի մշակույթ համապատասխան քաղաքակրթական ձևերի մեջ է դրել վարքագծի բնախոսական կողմերը, այնուամենայնիվ մարդու կենդանական ծագումը իրեն զգացնել է տվել միշտ:

Մարդը նաև *սոցիալական էակ* է՝ ընտանիքի, միջավայրի դաստիարակության արդյունք, անցյալի սոցիալական փորձի կրող, պատմական պրակտիկայի արդյունք, հասարակության, որոշակի ազգի, ընտանիքի ներկայացուցիչ, դրանց շահերով առաջնորդվող և այդ շահերը պաշտպանող, ակտիվ հասարակական-քաղաքական գործունեություն ծավալող անհատ: Այդ պատճառով, Արիստոտելի պնդմամբ, այն մարդը, որը ակտիվ հասարակական-քաղաքական կյանքով չի ապրում ոչ թե հանգամանքների բերումով (բանակում է, բանտում, հիվանդանոցում.- Ա. Ս.), այլ սեփական կամքով, կա՛մ հանճար է, կա՛մ հիմար:

Մարդը նաև *հոգևոր-մշակութային էակ* է, արժեքներ ստեղծող և արժեքների կրող: Արժեքների ստեղծման, յուրացման ընթացքում և արդյունքում մարդը դառնում է որոշակի արժեհամակարգի տեր, որում էական դեր են կատարում աշխարհայացքային, բարոյական,

գեղագիտական, կրոնական, հոգեբանական անհատական ու էթնիկական պատկերացումներն ու ապրումները: Մարդը, ինչպես նշեցինք, այս երեք կողմերի միասնությունն է, որով էլ առանձնանում է կենդանական աշխարհի մյուս ներկայացուցիչներից, դառնում բոլորովին նոր տեսակ և իր գործունեությամբ իմաստ հաղորդում տիեզերքին (այդ մասին իր ժամանակին նշել է Դավիթ Անհաղթը):

Ողջ ասվածը հաշվի առնելով փորձենք տալ հետևյալ հարցի պատասխանը. ո՞վ է «տնտեսական մարդը», նա՝ որը դուրս է հասարակական կապերից, մշակութից, ընտանեկան կյանքից, ազգային առանձնահատկություններից, հոգեբանությունից, սոցիալ-մշակութային միջավայրից և ֆիզիկական գոյությունը պահպանելու համար զբաղվում է միմիայն տնտեսական գործունեությամբ (ինքնատիպ տնտեսական Ռոբինզոն), թէ՞ մարդն այդ ամենի կրողն ու ամբողջությունն է, որը կյանքի որոշակի ժամանակահատվածում ապրում և ծավալում է տնտեսական գործունեություն՝ տնտեսական հարաբերություններում, տնտեսական պրակտիկայում:

Այս հարցերի քննարկումը տնտեսագիտության փիլիսոփայության կարևորագույն խնդիրներից է: Մարդը ոչ միայն ողջ իրականության, այլև տնտեսական իրականության անբաժանելի մասն է: Մարդը տնտեսական ճանաչողության օբյեկտն է, սուբյեկտը, տնտեսական գործունեություն ծավալողը, բարիք ստեղծողը, բաշխողը, փոխանակողը, սպառողը, նաև տնտեսական գործունեության միջոցը, նպատակը, առանցքը, հիմնական ռեսուրսը: Ինչպես սոցիալական իրականության ցանկացած բնագավառում, տնտեսության մեջ, նույնպես, առանց մարդու ոչինչ չի լինում: Գործունեության յուրաքանչյուր ասպարեզի համար, հաշվի առնելով որոշակի ընդհանրական չափանիշներ, ստեղծվում են մարդու գործունեության, վարքագծի մոդելներ: Մարդու տնտեսական մոդելը նրա տնտեսական վարքագծի պատկերային տարբերական է:

Տնտեսական մարդու («homo economicus»-ի) գործունեության բնույթը բացահայտելու համար առաջադրվում է գործոնների երեք խումբ.

1. Գործունեություն ծավալելիս ի՞նչ նպատակ է հետապնդում:
2. Նպատակին հասնելու համար ի՞նչ միջոցներ է գործադրում:
3. Տեղեկատվության (գիտելիքի) ի՞նչ պաշարի է տիրապետում:

Տնտեսական մարդու բնորոշ գծերը, ըստ մասնագետների, հետևյալն են.

1. *Homo economicus-**ը ընտրություն կատարող մարդն է**,* որովհետև գտնվում է այնպիսի պայմաններում (իրավիճակում), երբ իր ու ընտանիքի բոլոր պահանջները միանգամից բավարարել չի կարող: Հետևաբար կանգնում է ընտրության անհրաժեշտության (հարկադրանքի, պարտադրանքի) առջև.

2. Ընտրություն իրականացնելու համար մարդը պետք է ծավալի **երկու կարգի գործողություն**.

ա) *նախընտրելի*, այսինքն՝ ինչն է իրեն ավելի անհրաժեշտ, ինչ է ցանկանում գնել, որը համապատասխանում է տվյալ պահի իր պահանջների հրատապ լուծմանը և ֆինանսական հնարավորություններին,

բ) *սահմանափակելի,* ապրանքներ, որոնց կարիքը նույնպես ունի, բայց տվյալ պահին գնել չի կարող՝ քանակի կամ գնի պատճառով (քանակը շատ է, գինը բարձր, կա՛մ այդ պահի իր ֆինանսական հնարավորությունները թույլ չեն տալիս, կա՛մ ապրանքը տվյալ պահին իրեն խիստ անհրաժեշտ չէ և այլն): Դրանց գնումը կարող է ժամանակավորապես հետաձգել:

3. Տնտեսական մարդը ***գնահատող է***, իսկ գնահատումը տատանվում է նախընտրելի և սահմանափակելի ապրանքների ընտրության միջև:

4. Տնտեսական մարդը ***եսակենտրոն է***, ***եսասեր***, ***օգտապաշտ***: Այս մոտեցումը հավանաբար պայմանավորված էր լուսավորական գաղափարախոսության ընդհանուր մտայնությամբ, որի հիմնական կարգախոսներից էին. «ապրիր և թույլ տուր, որ մյուսներն էլ ապրեն», «տուր ինձ, ինչ-որ ինձ է պետք և կստանաս այն, ինչ քեզ է պետք»: Սա **բանական էգոիզմի** մոտեցումն է, որն իշխել է նաև դասական տնտեսագիտության մեջ և որը մեծապես օգտվել է ***Երեմիա Բենթամի*** (1748-1832) և ***Ջոն Սթյուարդ Միլի*** (1806-1873) հայացքներից: Բենտամը առաջադրում է «օգտակարության սկզբունք» հասկացությունը և գտնում, որ մարդու գործունեության հիմնական դրդապատճառը օգտակարությունն է, իսկ նպատակը՝ օգուտի, շահի, հաճույքի, երջանկության ձեռքբերումը: Ցանկացած արարքի գնահատականը պայմանավորված է բերած օգուտով կամ վնասով: Միլը (որն էլ գրել

է «Ուտիլիտարիզմ» աշխատությունը) կարծում էր, որ մարդու բնույթն այնպիսին է, որ եթե՛ չլիներ հարստություն և աղքատություն, և եթե՛ հարուստը չօգտվեր իշխանությունից, ապա ոչ ոք չէ՛ր ձգտի հարըստության և չէ՛ր փորձի վնասել դիմացինին: Միլի կարծիքով գոյություն ունեն նաև ոչ շահադիտական նպատակներ, որոնք նույնպես կարող են օգտակար լինել մարդկանց:

Այս ընդհանուր համապատկերում է հասկանալի դառնում Ա. Սմիթի այն պնդումը, թե մենք մսավաճառի, գարեջրավաճառի, հացթուխի բարի կամեցողությունից չէ, որ ստանում ենք մեր սնունդը, այլ իրենց սեփական շահերի: Մենք դիմում ենք ոչ թե նրանց մարդասիրությանը, այլ եսասիրությանը, երբեք չենք խոսում մեր կարիքների, այլ նրանց շահերի մասին: Դ. Ռիկարդոն հասարակության մեջ առանձնացնում է երեք դասակարգ՝ կապիտալիստներ, վարձու բանվորներ, հողատերեր, որոնց շահերի արդյունքում է զարգանում տնտեսությունը՝ շահույթի, ռենտայի և աշխատավարձի ավելացումների ձևերով: Տնտեսական մարդն այսօր էլ իր շահն իմացողն է:

5. Տնտեսական մարդը շուկայի մասին ***սահմանափակ գիտելիք, տեղեկատվություն ունեցողն է*** (ինչպես քիչ հետո կտեսնենք հակադրվում է Սմիթի տեսակետին), որովհետև շուկայում իրավիճակի փոփոխության, ոլորտների բազմազանության պատճառով, անընդհատ թարմ տեղեկատվության անհրաժեշտություն է զգացվում, որը ժամանակ ու ծախսեր է պահանջում, ուստի տնտեսական մարդը երբեմն ճարահատյալ կարող է հետաձգել իր ընտրությունը:

6. Տնտեսական մարդու վարքագիծն ու ընտրությունը ***ռացիոնալ է***, որովհետև ընտրում է այն, ինչը համապատասխանում է իր նախասիրություններին և միշտ կատարում է նախընտրելիի ընտրություն: Ընտրության մեջ նա կարող է սխալվել, բայց դա ավելի շուտ պատահականություն է, քան անհրաժեշտություն[24]:

Հակիրճ անդրադառնանք ռացիոնալիզմի, ռացիոնալ վարքագծի փիլիսոփայական և տնտեսագիտական ըմբռնումներին, դրանց միջև

---

[24] Տնտեսական մարդու մոդելի մանրամասն վերլուծությունը տե՛ս ***Հ. Աղաջանյան***, Տնտեսագիտության տեսություն: Ուսումնական ձեռնարկ, մաս 1, Եր., 2008, էջ 33-40, ***Автономов В. С.,*** Модель человека в экономической науке. Санкт-Петебург. 1998, ինչպես նաև **Орехов А. М.**, Философия экономики: рождение традиции, էջ 43-44, ***նույնի,*** Методы экономических исследований. М., 2009, էջ 17-29:

գոյություն ունեցող նմանություններին և տարբերություններին: «Ռացիոնալիզմ» է կոչվում բանականությանը, տրամաբանությանը, մտքին նախապատվություն տվող ուսմունքը, աշխարհայացքը, հայեցակարգը, իմացաբանությունը, ի տարբերություն դիցաբանականի, կրոնականի, գեղարվեստականի և այլն: Ռացիոնալիզմի առաջին ընդհանրական հայեցակարգը մշակել են հին հույները, որի շատ տարրեր պահպանվել են առայսօր, ըստ որի ողջ տիեզերքը կառուցված է բանական, ներդաշնակ և գեղեցիկ: Տիեզերական բանականությունն ու ներդաշնակությունը (Նուսը, Լոգոսը) մարմնավորվում են կեցության մեջ, որը կառուցված է նախասահմանված ներդաշնակության սկզբունքով (ըստ Լայբնիցի) և դառնում է հասարակության ապահով ապագայի երաշխավոր: Աշխարհում իշխողը կարգն է, կարգավորվածությունը, օրինաչափությունը: Բանականությամբ առաջնորդվող մարդը՝ զինվելով գիտական իմացության մեթոդներով, կարող է ճանաչել այդ օրինաչափությունները: Աշխարհը կայուն, վերարտադրելի և միմյանց հետ կապված բաղադրատարրերի միասնություն է: Սա *աշխարհայացքային-փիլիսոփայական* ռացիոնալիզմն է, որը լրացվելով XVII-XVIII դարերում ստեղծված բնագիտության նվաճումներով ու պատկերացումներով դառնում է *գիտական ռացիոնալության* պատմականորեն առաջին ձևը, որի կայացման գործում մեծ դեր են կատարում Կոպեռնիկոսը, Գալիլեյը, Նյուտոնը, փիլիսոփաներից Բեկոնն ու Դեկարտը: Ըստ աշխարհի գիտական (ռացիոնալ) պատկերի տիեզերքը մեքենա է, որն աշխատում է ճշգրիտ և անհրաժեշտորեն գործող մեխանիկայի օրենքներով: Տիեզերքը մաքրվում է արժեքներից, դառնում անդեմ, անկիրք: Թեիստական աստված (աշխարհն ստեղծելուց հետո աստված շարունակում է հետևել, հսկել և տնօրինել) փոխարինվում է դեիստականով (ստեղծելուց հետո աստված այլևս չի միջամտում աշխարհի գործերին) և նույնպես ենթարկվում մեխանիկայի օրենքներին: Աշխարհում պատահականություն գոյություն չունի: Տիեզերքը կառուցված է բանականորեն, մարդը բանական էակ է, նա կարող է ճանաչել բնությունը, ենթարկել իրեն, ռացիոնալ վարքագիծ ծավալել հասարակական գործունեության բոլոր ասպարեզներում, այդ թվում և տնտեսության մեջ:

Դասական (աշխարհայացքային-փիլիսոփայական) ռացիոնալիզմի տարատեսակ է ֆրանսիական լուսավորական ռացիոնալիզմը, որի ներկայացուցիչները բանականության հաղթանակի հետ էին կապում հասարակության վերափոխումն ու նոր հասարակության ստեղծումը: Դասական ռացիոնալիզմի հիմքի վրա Կանտը ստեղծեց ռացիոնալ տիեզերաբանությունը, ռացիոնալ աստվածաբանությունը, ռացիոնալ հոգեբանությունը: Այդ ռացիոնալիզմի գագաթը հավանաբար հեգելյան ամենակուլ համատրամաբանականությունն է, որի ճիրաններում ճզմվեց անհատը: Դասական ռացիոնալիզմում իշխում է ռացիոնալ (բացարձակ) սուբյեկտի գաղափարը, որի գործունեության արդյունքում է ձևավորվում ռացիոնալ հասարակությունը և նրա բաղադրիչ՝ ռացիոնալ տնտեսությունը:

Գոյություն ունի նաև *իմացաբանական ռացիոնալիզմ*, երբ փիլիսոփայության մեջ անցում է կատարվում գոյաբանությունից իմացաբանություն: Այս ուղղության մեջ իշխողը իմացաբանական լավատեսությունն է ըստ որի աշխարհը ճանաչելի է: Եվրոպական և հատկապես հայ փիլիսոփայության մեջ իշխել է իմացաբանական լավատեսությունը:

Գոյություն ունի նաև *նեղ իմաստով ըմբռնված իմացաբանական* ռացիոնալիզմ, ըստ որի բանականությունը կարող է ճանաչողության ինքնուրույն աղբյուր հանդիսանալ՝ առանց զգայություններին դիմելու: Այս ուղղության ամենանշանավոր ներկայացուցիչը ֆրանսիացի փիլիսոփա ***Ռընե Դեկարտն*** է (1596-1650):

Զուտ գիտական իմաստով ***ռացիոնալությունը որոշակի նորմերի, իդեալների, կանոնների, չափանմուշների համախմբություն է՝ որոշակի տեսական կամ գործնական նպատակներ իրականացնելու և խնդիրներ լուծելու համար***:

Մարդու վարքագծում ռացիոնալությունն արտահայտվում է բանականությամբ, տրամաբանական մտածողությամբ, քայլերի հաջորդականության հիմնավորվածությամբ, նպատակի հստակ գիտակցմամբ և այլն: Թվարկած հատկանիշները բնորոշ են նաև տնտեսական ռացիոնալիզմին: Տնտեսագիտության մեջ նույնպես փորձում են ստեղծել տնտեսական իրականության ռացիոնալ պատկերը՝ տնտե-

սական կյանքի առկա վիճակը և զարգացման միտումները, տնտեսական օրինաչափությունների դրսևորման առանձնահատկությունները և այլն:

Մեզ հետաքրքրող խնդրի տեսանկյունից տնտեսագիտության մեջ ռացիոնալիզմը աղերսվում է տնտեսական գործունեություն ծավալող մարդու վարքագծի հետ: Այն հանդես է գալիս որպես նախընտրելի ապրանքներ գնելու համար տրամաբանորեն հիմնավորված քայլերի հաջորդականություն և ամբողջություն՝ առավելագույն եկամուտ և օգուտ, շահ ստանալու ակնկալիքով:

Ռացիոնալ վարքագծի տնտեսագիտության դասական դպրոցի առաջադրած տեսակետը (որի մասին կնշվի քիչ հետո) XIX-XX դարերի ոչդասական դպրոցներում և ուղղություններում վերանայվեցին: Հետդասական ռացիոնալիզմը հրաժարվեց բացարձակ սուբյեկտի գաղափարից և առաջադրեց բազմաթիվ լոկալ (տեղային) սուբյեկտների գաղափարը, որոնք միմյանց հետ կապված են հասարակական կապերով և ունեն սահմանափակ հնարավորություններ: Օգտագործվեցին ռացիոնալիզմի «հարկադրական» (երբ բազմաթիվ այլընտրանքների մեջ մարդը տեսնում է միայն մի քանիսը, կանխատեսում սահմանափակ քանակությամբ հետևանքներ և սխալվում), «ինստրումենտալ» (մարդու գործունեությունը ուղղված է այն միջոցների ընտրությանը, որոնք լավագույնս են համապատասխանում նպատակի իրականացմանը), «անհատական» (տնտեսական մարդը՝ գործակալը, առավելագույնս է իրականացնում իր առջև դրված նպատակը՝ որոշակի այլընտրանքների շրջագծում), «սոցիալական» (երբ մարդն իրականացնում է ընտրություն սոցիալական ծրագրերի միջև), «սահմանափակ» (գոյություն ունի ռացիոնալ գործունեության սահման: Մարդը չի կարող հաշվի առնել բոլոր գործոնները, որոնք ազդում են որոշում կայացնելու վրա), «էքսպրեսիվ» (ըստ որի մարդը սկզբնապես պետք է հստակ որոշի նպատակը, հետո միայն դրանք իրականացնելու միջոցները: Նպատակադրումը դառնում է մարդու վարքի մոդելի անբաժան մասը) և այլ հասկացություններ, որոնց մի մասին կանդրադառնանք քիչ անց[25]:

---

[25] Այդ ամենի մասին տե՛ս Философия и методология экономики. Учебное пособие. Под ред. ***Л. А.*** **Тутова**, էջ 210-302, ***Калинин Э.***, Концепция постклассической экономической рациональности, Вопросы экономики, 1998, № 5, էջ 68-78, ***Шаститко А.***

Գոյություն ունի նաև «տնտեսական ատոմիզմի» տեսություն, որը լավագույնս ներկայացնում է Հերբերտ Սայմոնը: Նրա կարծիքով տնտեսության մեջ ռացիոնալ մարդը առավելապաշտն է, առավելագույնին ձգտողը (մաքսիմիզատոր), որը համաձայն է միայն լավագույն տարբերակներին, նրա սպասելիքներն էլ են ռացիոնալ: Նման ռացիոնալությունը տղամարդուն կարող է նույնիսկ կնոջ «ննջասենյակից» հեռացնել: Նա գիշերը գեղարվեստական գիրք կարդալը կգերադասի կնոջ անկողնուց միայն այն դեպքում, երբ գրքից ստացածը (գիտելիքը, հաճույքը, բավարարվածությունը) կգերազանցի կնոջ հետ գիշերն անցկացնելու հաճույքին[26]: Սա ինքնատիպ, մի մարդու ռացիոնալություն է, որը ձգտում է հասնել առավելագույն օգտակարության:

Նոր դասական որոշ ուղղություններում մարդը համեմատվում է «սև արկղի» հետ, ըստ որի մուտքը տվյալների ամբողջությունն է, ելքը՝ ընդունած որոշումների, իսկ թե ինչ պրոցեսներ են տեղի ունենում արկղի ներսում, կարևոր չէ: Դա նշանակում է, որ մարդը պետք է ընտրություն կատարի ոչ թե տարաբնույթ բարիքների, այլ սեփական նախասիրությունների տարբեր ձևերի միջև[27]: Նշված տեսակետներին ոչ բոլոր տնտեսագետներն են համաձայն, որում կհամոզվենք տնտեսագիտական դպրոցները վերլուծելիս:

2.2. «*Տնտեսական մարդու*» *մոդելը ըստ տնտեսական փուլերի և տնտեսագիտական դպրոցների*

Տնտեսական մարդու («homo economicus»-ի) մոդելի էվոլյուցիայի երեք փուլ է առանձնացվում.

1. Դասական (XVII դար), ըստ որի տնտեսական մարդը եսասեր է (էգոիստ):

Е., Модели рационального экономического поведения человека. Вопросы экономики, 1998, № 5, էջ 53-68, ***Букин К.***, ***Левин М.***, ***Шилова Н.***, Выбор аддиктивного поведения, Вопросы экономики, 2016, № 12, էջ 104-128:

[26] Տե՛ս այդ մասին Философия и методология экономики. Учебное пособие. Под ред. ***Л. А. Тутова***, էջ 211:

[27] Տե՛ս ***Шаститко А. Е.***, Модели рационального экономического поведения человека, Вопросы экономики, 1998, № 5, էջ 59:

2. Ոչդասական (XVIII-XIX դարեր), ըստ որի տնտեսական մարդը այլասեր է (ալտրուիստ):
3. Հետոչդասական (XX դարի կեսերից մինչև XXI դարի 20-ական թթ.), ըստ որի եսասիրությունը, այլասիրությունը, ավելացնենք՝ նախանձը և այլ հոգեբանական գործոններ, ոչ թե հակադիր երևույթներ են, այլ մարդու գործունեության և վարքագծի դրսևորումներ տարբեր իրավիճակներում, այլ կերպ՝ նույն շղթայի օղերը: Այժմ ներկայացնենք այդ մոդելները որոշակի լրացումներով և ճշգրտումներով:

Տնտեսական մարդու առաջին տնտեսագիտական մոդելը ձևակերպել է ***Ադամ Սմիթն*** (1723-1790) իր «Բարոյական զգացմունքների տեսություն» և հատկապես «Ժողովուրդների հարստության պատճառների և բնույթի մասին» գրքերում: Ըստ Սմիթի, տնտեսական մարդը (տվյալ դեպքում՝ գործարարը).

- հակված է փոխանակությանը,
- առաջնորդվում է սեփական շահերով (ըստ նրա՝ բոլորին է հատուկ սեփական տնտեսական դրությունը բարելավելու ձգտումը),
- սեփական շահերը չի հակադրում մյուսների շահերին,
- օժտված է եկամուտների և ծախսերի ռացիոնալ հաշվարկի ունակությամբ,
- ունի ռիսկը նվազագույնի հասցնելու ձգտում,
- կարողանում է ազատ գործել շուկայում,
- լրիվ տեղեկացված է շուկայում տիրող իրավիճակին և այլն:

Բայց, ըստ Սմիթի, անհատական տնտեսական հետաքրքրությունից բացի գոյություն ունի նաև օբյեկտիվորեն գործող գործոն, որը բազմաթիվ անհատական շահերը՝ անկախ դրանց կրողների հետապնդած նպատակներից, ուղղորդում է հասարակական շահը կամ նպատակը: Այդ գործոնը շուկան է, որին Սմիթը անվանում է «անտեսանելի ձեռք», ըստ որի՝ շուկայում ազատ մրցակցության պայմաններում գործող գործակալները (գործարարները) շուկա են մտնում սեփական շահերից ելնելով, սակայն արդյունքում հասարակությանն ավելի մեծ օգուտ են տալիս, քան եթե նախօրոք որոշեին գործել միայն հասարակության օգուտի համար: Կարծում եմ այստեղից է

բարձրանում Հեգելի «բանականության խորամանկության» տեսությունը, որի պարզ իմաստը հետևյալն է. հասարակությունը ձևավորվում է առանձին մարդկանց գործողություններից, որոնցից յուրաքանչյուրը ձգտում է իրականացնել իր շահերն ու նպատակները: Բայց արդյունքում ձևավորվում է բոլորովին նոր բան, որը տարբերվում է նախնական մտադրություններից, և որի հետ մարդիկ ստիպված հաշվի են նստում իրենց հետագա գործողություններում՝ որպես օբյեկտիվ նախադրյալ: Բայց այն հարցին, թե ի՞նչ հիմքի վրա է իրականանում մարդկանց գործունեությունը տնտեսության ոլորտում, Հեգելի պատասխանը հակադրվում է Սմիթի տեսակետին: Սմիթը գտնում էր, որ տնտեսության ոլորտում մարդկանց հարաբերությունները կարգավորում է «անտեսանելի ձեռքը»: Մարդը ոչ թե սեփական պատմության ստեղծողն է, այլ սոցիալական մեխանիզմի մասնիկ (պտուտակ): Այլ է Հեգելի կարծիքը, նա գտնում էր, որ տնտեսական օրենքները ոչ թե տնտեսական կյանք են ներմուծվում դրսից, այլ բխեցվում են դրանից:

XVIII-XIX դարերի տնտեսագիտական տեսություններում տնտեսական մարդը միայն եսասերը չէ, այլ օգտակարության, կյանքի, աշխատանքի, արտադրության ռացիոնալ մաքսիմիզատորը, այսինքն՝ շահերի առավելագույն իրականացնողը, իսկ թե ինչպե՞ս տեղի ունեցավ այդ փոխակերպումը, բացատրում է ***Մ. Վեբերը*** (1864-1920) «Բողոքականության բարոյականությունը և կապիտալիզմի ոգին» աշխատության մեջ: Նրա կարծիքով եվրոպական կապիտալիզմը կապված է գործարարության (բիզնեսի) առաջացման հետ, որի նպատակը առավելագույն շահույթ ապահովելն էր, իսկ միջոցը՝ առևտրի խելամիտ կազմակերպումը: Դրան նպաստեցին բորոքականության երկու խոշոր առաջնորդ-բարեփոխիչներ ***Մ. Լյութերը*** (1483-1546) և ***Ժ. Կալվինը*** (1509-1564), որոնք «կոչում» կրոնական ըմբռնմանը աշխարհիկ իմաստ տվեցին: Եթե նախկինում կոչումն իրականացնելու համար հոգևորական էին դառնում, ապա նոր մոտեցմամբ դա կարող էին իրականացնել աշխարհիկ կյանքում՝ իրենց գործերում: Ըստ Կալվինի քարոզչության, մարդը չի կարող իմանալ, թե մահվանից հետո աստված ի՞նչ է իր համար նախատեսել՝ դրախտ, թե դժոխք, բայց տնտեսության, գործարարության մեջ ունեցած հաջողությունները հաշվի առնելով կարող է հաճելի հետևություններ կատարել

(դժոխքի համար նախատեսած մարդու նկատմամբ աստված դժվար թե բարեգութ և բարեհաճ գտնվեր): Աշխատանքը, աշխատասիրությունը, մաքրակենցաղությունը, չափավորությունը, տնտեսական հաջողությունը ձևավորում են գործարարին:

Կ.Մարքսի (1818-1883) մոտ զուտ տնտեսական մարդու հայեցակարգ, բուն իմաստով, գոյություն չունի, որովհետև նրա ուսմունքում մարդը սոցիալական հարաբերությունների ամբողջություն է, որոշակի դասակարգի պատկանող և այդ դասակարգի շահերը պաշտպանող: Ըստ Մարքսի, մարդու տնտեսական գործունեությունը ընդհանուր սոցիալ-դասակարգային գործունեության բաղադրիչ է (Մարքսի տնտեսափիլիսոփայական հայացքների վերլուծությանը դեռ անդրադառնալու ենք, այն էլ մի քանի անգամ):

Մարգինալականության (ֆրանս.- marginal-սահմանին, լուսանցքում գտնվողը) կամ սահմանային օգտակարության տեսության ներկայացուցիչներ ***Կ. Մենգերը*** (1840-1921), ***Ֆրիդրիխ ֆոն Վիզերը*** (1851-1926), ***Օյգեն ֆոն Բեմ-Բավերկը*** (1881-1914) գտնում էին, որ մարդու գործունեության նպատակը հաճույք ստանալն է (դեռ Էպիկուրից եկող տեսակետ) կամ պահանջմունքների առավել բավարարումը: Ըստ նրանց՝ տնտեսական մարդը իր գործունեության մեջ առաջին պլան է մղում ոչ թե սեփական շահը, այլ տնտեսական ու անհատական ռացիոնալությունը (կրկնում են Մ. Վեբերին), որով անհատի դերն ավելի է կարևորվում: Այս ուղղության մեջ տնտեսական մարդը դիտվում է որպես գնահատող, իմաստավորող, հաշվարկող և սպառող էակ:

Ինստրումենտալիզմի խոշորագույն ներկայացուցիչ ***Տ. Վեբլենը*** (1857-1929) վիճարկեց տնտեսական մարդու դասական դպրոցի սպառողի ինքնավարության, նրա վարքագծի ռացիոնալության դրույթները:

Վեբլենը գտնում էր, որ շուկայում գնորդ-սպառողը գտնվում է տարաբնույթ ճնշումների ներքո, որոնք դուրս են տնտեսական հարաբերությունների ոլորտից, ունեն սոցիալ-հոգեբանական բնույթ և երբեմն խանգարում են նրան բանական որոշումներ կայացնել: Վեբլենը շրջանառության մեջ դրեց «ցուցադրական վատնողականություն» հասկացությունը, որը գրականության մեջ մտավ «Վեբլենի էֆեկտ» անվամբ, ըստ որի հարուստ դասի (մեզանում օլիգարխների)

ինքնարտահայտման ձևերից մեկը դառնում է ցուցադրական սպառումը, որտեղ ապրանքները գնահատվում են ոչ թե որակով, գեղագիտական ճաշակով, դրանց նկատմամբ ունեցած պահանջարկով, այլ բարձր գնով, նրանով, թե այդ ապրանքը որքանով է համապատասխանում հասարակության մեջ իր անվանն ու հեղինակությանը: Հարուստ դասի կանանց միջավայրում տարածում ստացած ցուցադրական վատնողականությունը արտահայտվում է որոշակի գեղագիտությամբ, ըստ որի կնոջ արտաքինը պետք է արտահայտի դալկություն և փխրունություն, դրան համապատասխան հագուստ, արդուզարդ, միջավայր, կենցաղ: Այս ամենը շատ է հիշեցնում նկարչության մեջ ռոկոկոյի հիմնադիր ***Ա. Վատտոյի*** (1684-1721) «նրբակիրթ զվարճանքի» տեսությանը (որին կարելի է անվանել նաև «նրբակիրթ պարապության» տեսություն: Նկարներում ներկայացվում են երազկոտ և ինքնամփոփ մարդիկ, ովքեր կտրված են աշխարհից, ստեղծել են ներփակ հասարակություն և զբաղված են ոչինչ չանելով): Ապրանքը գնահատվում է ոչ թե իր օգտակարությամբ, այլ նրանով, թե գնելով այն, որքանով է գնորդը տարբերվելու մյուսներից (այս երևութը հատկապես իշխող է դառնում վերջին 50-60 տարվա սպառողական հասարակության մեջ): Նա համաձայն չէ դասականների նաև այն պնդմանը, թե մարդու վարքագիծը շարժման մեջ դնողը շահի ձգտումն է, առավելագույն շահը: Վարքագծի մոտիվ կարող են դառնալ սոցիալական բնազդների բավարարումը, օրինակ՝ «վարպետության բնազդը» (ստեղծագործական հետաքրքրությունը), հոգսը մերձավորի նկատմամբ, որոնք էլ ձևավորում են տնտեսական մարդու դիմագիծը: Մարդը մեկուսացած, զուտ տնտեսական էակ չէ, այլ մշակութային ռացիոնալ էակ, մշակույթի անբաժանելի մասնիկ:

Ալֆրեդ Մարշալի (քեմբրիջյան դպրոցի, երբեմն համարում են մարգինալականության տեսության վերջին ներկայացուցիչ) վերլուծությունները ոչ այնքան տնտեսագիտական, որքան հոգեբանական են ու գործնական: Նրա կարծիքով գործնական կյանքում մարդը բազմաբևեռ է՝ եսասեր, այլասեր, ռացիոնալ, իռացիոնալ, կրքերով առաջնորդվող, չկառավարվող և այլն:

Դասականների հետ ունեցած բանավեճի և համեմատությունների ընթացքում, ինչպես նաև պոզիտիվիզմի ազդեցության արդյունքում, տնտեսական մարդուց առանձնացվեց սոցիոլոգիական մարդը

(homo sociologicus): Սոցիոլոգիական մարդը, ի տարբերություն տնտեսականի, որն առաջնորդվում է սեփական «Ես»-ի դիրքերից, իր պահանջմունքները համապատասխանեցնում է հասարակության պահանջներին և շահերին, որոնք ամրագրված են սոցիալական, իրավական, բարոյական, կրոնական նորմերում: Դրանից բացի, այդ երկու մոդելները հենվում են տարբեր տեսական-մեթոդաբանական հիմքերի վրա: Homo economicus-ի հիմքը մեթոդաբանական անհատականությունն է, homo sociolicus-ինը՝ մեթոդաբանական ամբողջականությունը: Տնտեսական մարդու մոդելն ուսումնասիրում է անհատի վարքագիծը տնտեսական ոլորտում, սոցիոլոգիականը՝ մյուս մարդկանց հետ ունեցած հարաբերություններում և շփումներում:

Ըստ ***Ջ. Քեյնսի*** (1883-1946) տնտեսական մարդը գաղտնիացված է, թաքնված, ոչ լրիվ տեղեկացված, ուստի որոշակի իրավիճակում կարող է դրսևորել ոչ ռացիոնալ վարքագիծ և տեղ ազատել սպասումների, պատրանքների և այլ հոգեբանական գործոնների համար (Քեյնսի հայացքների վերլուծությանը դեռ անդրադառնալու ենք):

Հետոչդասական փուլում են գործում ***նորդասականների***, ***նորազատականների*** և ***նորինստրումենտալիստների*** դպրոցները, որոնց ներկայացուցիչների (Լ. Միզես, Ֆ. Հայեկ, Վ. Օյքեն, Գ. Բեկկեր, Ռ. Քոուզ և այլք) կարծիքով, մարդը ռացիոնալ, նպատակահարմար, զանազան շահերով առաջնորդվող բազմաբևեռ, փոփոխական էակ է և փոխվում է իրավիճակին համապատասխան: Նրանց պնդմամբ մարդը տնտեսական Ռոբինզոն չէ, այլ սոցիալական էակ, կոլեկտիվի անդամ, որի մոտ ռացիոնալն ու իռացիոնալը հանդես են գալիս միասնաբար: Եվ քանի որ մարդու մոտ կարևոր դեր է կատարում նաև հոգևոր պահանջների բավարարումը, ուստի մարդը ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական ու մշակութային էակ է, որը պահանջում է ժողովրդավարության և բազմակարծության վրա հենված հասարակություն: Հայացքների տարբերություն գոլություն ունի նաև հին և նոր ինստրումենտալիստների միջև: Հները տնտեսությունից էին գնում իրավունք և քաղաքականություն, նորերը՝ հակառակը, հասարակական կյանքի բազմազանությունից՝ տնտեսություն: Չմոռանամ ավելացնել նաև, որ ինստրումենտալիզմը (հին և նոր) ռացիո-

նալիզմն օգտագործում էր իր փիլիսոփայական իմաստով, մասնավորապես՝ մարդը որպես մշակութային էակ, որպես մշակույթի անբաժանելի մաս:

Տնտեսական մարդու ժամանակակից մոդելի վերաբերյալ կարծիքները միանշանակ չեն: Տեսակետներից մեկի համաձայն տնտեսական մարդը շարունակում է գործել նաև այսօր և թվարկվում են «homo economicus»-ի բոլոր այն հատկանիշները, որոնք մենք ներկայացրեցինք որպես տնտեսական մարդու հատկանիշներ ընդհանրապես: Այս տեսակետի կողմնակիցներն են XX դարի երկրորդ կեսում ձևավորված այն տնտեսագիտական դպրոցները, որոնց ներկայացուցիչների հայացքների համառոտ բովանդակությունը շարադրվեց վերևում: Երկրորդ խումբը գտնում է, որ տնտեսական մարդն անցել է պատմության գիրկը, որովհետև ասպարեզ է եկել սպառող մարդը՝ ցանկությունների մեքենան (այդ մասին մենք մանրամասն կխոսենք նախավերջին թեմայում)[28]:

Այժմ անդրադառնանք մեր ձևակերպած «Ինչպե՞ս ապահովել արդյունավետ տնտեսություն, որո՞նք են արդյունավետության չափանիշները» հարցադրման ***Կարեն Ճշմարիտյանի*** «Ազգային պետություն: Ազգային տնտեսություն կամ՝ Ինչու չենք կարող ամբողջությամբ կրկնօրինակել այս կամ այն երկրի մոդելը» ֆեսբուկյան օգտաշատ վերլուծությանը (19.07.2019), որում բարձրացված հարցերը քննարկվում են Արիստոտելից սկսած: Այդ հոդվածում Կ. Ճշմարիտյանը թեև քննարկում է արտադրության արդյունավետության խնդիրը, բայց հստակ երևում է, որ նա դրա լուծումը տեսնում է տնտեսական մարդու նոր մոդելի, ժամանակակից տնտեսական մարդու գործունեության մեջ: Հեղինակը իր տեսակետը փորձում է ներկայացնել լայն մշակութապատմաքաղաքակրթական հենքի վրա: Նրա կարծիքով մարդկության պատմությունը նվազագույն ծախսումներով առավել մեծ արդյունք ապահովելու, արդյունավետ տնտեսության մոդելի ստեղծման որոնումների պատմություն է: Մարդու էվոլյուցիայի ընթացքում տեղի ունեցած բոլոր տեխնիկա-տեխնոլոգիական նվաճումները, տնտեսության (տնտեսավարման) ձևերի փոփոխությունը ար-

[28] Տնտեսական մարդու մոդելների մանրամասն վերլուծությունը տե՛ս Философия и методология экономики. Учебное пособие. Под ред. ***Л. А. Тутова***, էջ 250-336:

դյունավետության բարձրացման միջոցների տարբերակների որոնումներ են: Ինչպե՞ս վարել արդյունավետ տնտեսություն, որո՞նք են արդյունավետության չափանիշները: Պատասխանը վաղուց է հայտնի՝ քիչ ծախսումների միջոցով հասնել առավել մեծ արդյունքների: Այս հարցերը բարձրացվել են XVII դարից ձևավորված գրեթե բոլոր տնտեսագիտական դպրոցներում: Առավել հետաքրքիր են ինստրումենտալիստների մոտեցումները, որոնք փորձել են ուշադրություն դարձնել մարդու գործունեության ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական, հոգեբանական, մշակութային կողմերին: Բայց այդ քննարկումների մեջ, ըստ Կ. Ճշմարիտյանի, բացակայել է ամենակարևորը՝ մարդու բուն էությունը, նրա ազգությունը, պատմությունը, մշակույթը, կրոնը, ազգային առանձնահատկությունները, էթնիկ հոգեբանությունը և դրանցից բխող գործողությունների ինքնատիպությունը վերհանելու ձգտումը: Վերլուծելով երևույթների բազմաթիվ կողմեր, Կ. Ճշմարիտյանը հարց է բարձրացնում՝ ի՞նչ անել. ստեղծել գերմա՞րդ (ի դեպ այս ուղղությամ զգալի գործ է կատարում ժամանակակից գիտությունը)՝ առանց ազգային պատկանելության, մշակույթի, հոգեբանության, թե՞ հաշվի առնել թվարկածները (ազգային առանձնահատկությունները, ավանդույթները, էթնիկ հոգեբանությունը) թեկուզ մեկ ազգի շրջանակներում: Ըստ հոդվածագրի հնարավոր է երկու մոդել.

1. Ստեղծել ունիվերսալ մարդ՝ մարդ ռոբոտ, գերմարդ (գիտությունը կարծես հասնում է նման մարդու ստեղծմանը): Այս դեպքում երկրներն ու ժողովուրդները հրաժարվում են իրենց պատմությունից, լեզվից, մշակույթից, կրոնից, էթնիկ հոգեբանությունից:
2. Պահպանել ազգային արժեքները, հոգեկերտվածքի առանձնահատկությունները և ընտրել զարգացման ուրույն ուղի և դրանով ապահովել արդյունավետություն: Նրանք, ովքեր նախընտրում են առաջին ուղին, հնարավոր համարու՞մ են ազգային պետություն ունեցող առանձին վերցրած մեկ երկրում կազմակեպել այնպիսի տնտեսություն, որի վրա որևէ ազդեցություն չեն ունենա ազգային մշակույթը, էթնիկ հոգեբանությունը, հարցնում է Կ. Ճշմարիտյանը: Կարո՞ղ են մեքսիկացին,

ճապոնացին, սինգապուրցին, հայը նույն աշխատանքը կատարելիս դրսևորել նույն վարքագիծը: Մի՞թե վերցնելով որևէ երկրի մոդելը և փորձելով կիրառել մեզանում հնարավոր է ապահովել այն արդյունավետությունը, ինչ՝ տվյալ երկրում (Սինգապուրում, Ճապոնիայում), առանց հաշվի առնելու, որ մենք.

- ելք չունենք դեպի ծով,
- հարևանների հետ խնդիրներ ունենք,
- սահմանի որոշ հատվածներում պատերազմական իրավիճակում ենք,
- ունենք սփյուռք, որտեղ ավելի շատ հայ է ապրում քան հայրենիքում:

Ահա՛ խնդիրների համալիրը, որոնց լուծմամբ է մեծապես պայմանավորված արդյունաբերության արդյունավետության բարձրացումը, պնդում է Կարեն Ճշմարիտյանը:

Ամփոփենք: Անշուշտ «տնտեսական մարդ» հասկացությունը վերացարկում է, իրական կյանքում մարդը բազմագործոն, բազմապլան, բազմազբաղ էակ է, որի միայն մի ոլորտն է վերաբերում տնտեսական գործունեությանը, որում նա, ժամանակի որոշակի հատվածում, դառնում է առաջատար: Ինչպիսի՞ն է մարդու վարգագիծը այդ ոլորտում: Դասական տնտեսագիտությունը կանգնած էր մարդու զուտ ռացիոնալ վարքագծի տեսակետին: Այս տեսակետի ներկայիս կողմնակիցների կարծիքով, եթե տնտեսական գործունեության ոլորտում մարդու վարքագծում դիտվում են նաև իռացիոնալ ձևեր, նշանակում է այն զուտ տնտեսական չէ: Ժամանակակից աշխարհում տնտեսական հարաբերությունները սոցիալական կյանքի բոլոր ոլորտների վրա է ազդում: Բայց դրանից չի բխում, թե տնտեսական մոտեցումը նկարագրում է մարդու սոցիալական վարքագծի այլնտրանքային ձևերի ողջ բազմազանությունը կամ իրենով է փոխարինում դրանք, կարծում են դասական դպրոցի կողմնակիցները[29]:

XIX-XX դարերի ոչդասական տնտեսագիտական դպրոցները և ուղղությունները գտնում են, որ մարդու վարքում, տնտեսական ոլոր-

---

[29] Տե՛ս ***Калинин Э., Чирков Е.***, Концепция посткласической экономической рациональности. Вопросы экономики, 1998, № 5, էջ 78:

տում, զուտ տնտեսական ու արտատնտեսական գործոնները (հոգեբանական, բարոյական, մշակութային, սոցիալական, կրոնական և այլն) հանես են գալիս միասնաբար, ուստի տնտեսական մարդու արարքներում կարող են դիտվել ոչ միայն ռացիոնալ այլև իռացիոնալ ձևեր[30]:

Դասական դպրոցի ներկայացուցիչները գտնում էին, որ տնտեսական մարդը եսասեր է, ոչդասական և հետոչդասական դպրոցների ներկայացուցիչները պնդում էին, որ մարդը նաև այլասեր է, կրքերով, պահի ազդեցությամբ, անգիտակից մղումներով շարժվող էակ և այլն: Այսինքն՝ որքան բարդ է «Ի՞նչ է մարդը» կանտյան հարցադրման փիլիսոփայական կողմի պատասխանը, գուցեև նույնքան բարդ է «Ի՞նչ է տնտեսական մարդը» հարցման փիլիսոփայատնտեսագիտական պատասխանը, որովհետև նա նույն մարդն է:

Հարցեր կրկնության համար

1. *Ո՞վ է տնտեսական մարդը:*
2. *Որո՞նք են տնտեսական մարդու հատկանիշները:*
3. *Որո՞նք են տնտեսական մարդու ըմբռնումները նոր և նորագույն ժամանակների տնտեսագիտական ուսմունքներում և դպրոցներում (դասական, մարգինալիստական, ինստրումենտալիզմի, քեյնսյան, նորդասական, նորազատական և այլն):*
4. *Ո՞րն է տնտեսական մարդու մոդելը ըստ Կարեն Ճշմարիտյանի:*

[30] Տե՛ս ***Букин К.***, ***Левин М., Шилова Н.***, Выбор аддиктивного поведения: соблазны, риски и самоконтроль. Вопросы экономики, 2016, № 12, էջ 104-128:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ: ՓԻԼԻՍՈՓԱՅԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Փիլիսոփայական օրենքների և կատեգորիաների մեթոդաբանական նշանակությունը տնտեսագիտության մեջ

Մինչև բուն նյութին անցնելը կատարենք «տեսություն», «գիտության արտացոլման օբյեկտ», «գիտության ուսումնասիրության առարկա», «մեթոդ», «մեթոդաբանություն» հասկացությունների վերլուծություն: Տեսությունը իմացական գործունեության ընթացքում և արդյունքում ձևավորված գիտելիքների համակարգ է, որը տալիս է իրականության կամ նրա մի հատվածի հավաստի պատկերը: Գիտության մեջ տեսությունը ուսումնասիրվող առարկայի արտացոլումն է էության մակարդակում: Առանձնացվում են *փորձնական-նկարագրական*, *մաթեմատիկական*, *կոնկրետ գիտական*, *սոցիալ-քաղաքական*, *փիլիսոփայական*, *տնտեսագիտական* և այլ տեսություններ:

Իմացության (գիտական իմացության) օբյեկտը այն ամենն է, ինչը ներառված է իմացաբանական իրավիճակի մեջ (օբյեկտը, սուբյեկտը և օբյեկտից սուբյեկտ գնացող տեղեկատվության հոսքը միասին վերցրած կոչվում է իմացաբանական իրավիճակ) և հանդես է գալիս որպես տեղեկատվության աղբյուր: Ավելի պարզ՝ օբյեկտն այն ամենն է, ինչը ձգտում են ճանաչել (ճանաչողը սուբյեկտն է): Որպես իմացության (գիտական իմացության) օբյեկտ կարող են հանդես գալ ողջ բնությունը, նրա մի հատվածը, հասարակությունը, անհատը, տնտեսությունը, մի խոսքով այն ամենը ինչը ներառված է ճանաչողական գործընթացի մեջ և դառնում է հոգևոր յուրացման առարկա: Օբյեկտ կարող է լինել ինչպես իրականում գոյություն ունեցողը, այնպես էլ

մտային մոդելը: Գիտության ուսումնասիրության առարկան երբեմն նույնացնում են օբյեկտի հետ, որը խիստ մոտեցման դեպքում ճիշտ չէ, որովհետև գիտության մեջ «օբյեկտ» հասկացությունն ավելի լայն է, քան «առարկա»-ն, որովհետև նույն օբյեկտը կարող է մի քանի գիտության ուսումնասիրության առարկա դառնալ: Օրինակ՝ բնությունը որպես օբյեկտ ուսումնասիրության առարկա է ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, կենդանաբանության, բուսաբանության, աստղագիտության և այլ բնագիտական գիտությունների համար, որոնցից յուրաքանչյուրը զբաղվում է բնության իրեն հետաքրքրող հատվածով (առարկայով): Սոցիալ-հումանիտար ոլորտում հասարակությունը որպես օբյեկտ ուսումնասիրության առարկա է փիլիսոփայության, տնտեսագիտության, սոցիոլոգիայի, վիճակագրության, շուկայագիտության և այլ հասարակական (նախկին դասակարգմամբ) գիտությունների համար:

Մեթոդը (հունարեն՝ methedos) կանոնների, միջոցների, սկզբունքների, պահանջների ամբողջություն է, որով մարդիկ կողմնորոշվում են կոնկրետ, այդ թվում գիտական խնդիրներ լուծելիս: Ըստ Հեգելի մեթոդը բովանդակության ներքին ինքնաշարժման ձևի գիտակցումն է: Ցանկացած գիտության մեջ օբյեկտի և մեթոդի ճիշտ ընտրությունը կարևոր է, որովհետև դրանցից որևէ մեկի ոչ ճիշտ ընտրության դեպքում հաջողության հասնել հնարավոր չէ: Առանձնացվում են *փիլիսոփայական*, *համագիտական*, *կոնկրետ գիտական*, *միջառարկայական* մեթոդներ: Քիչ այլ մոտեցմամբ առանձնացվում են ***փորձնական***, ***տեսական*** և ***գիտատեսական*** մեթոդներ:

Գիտական մեթոդի հատկանիշներ են.

- ուսումնասիրության օբյեկտիվությունը,
- համակողմանիությունը,
- պարզությունը,
- խնայողությունը,
- առավել էականի, հիմնականի առանձնացումը,
- կոնկրետությունը,
- տեսության և պրակտիկայի միասնությունը և այլն:

Այստեղ հարկ եմ համարում ավելացնել ֆրանսիացի փիլիսոփա ***Ռընե Դեկարտի*** (1596-1650) արդյունավետ մեթոդին վերագրվող

չորս պահանջ-կանոնները, որոնք, համոզված եմ, աշխատող են նա՛և այսօր, նա՛և տնտեսագիտության մեջ.

ա) ոչ մի առարկա չհամարել ճշմարիտ, եթե չես ճանաչել այն ակնհայտորեն ճշմարիտ,

բ) ուսումնասիրվող յուրաքանչյուր հարց բաժանել այնքան մասերի, որքան անհրաժեշտ է, որպեսզի ավելի լավ լուծվի,

գ) գաղափարները շարադրել պարզից դեպի բարդը գնացող սկզբունքով,

դ) կատարել լրիվ հաշվարկ և ուսումնասիրություն, որպեսզի վստահ լինես, որ ոչինչ բաց չես թողել:

«Մեթոդաբանություն» հասկացությունն օգտագործվում է երկու իմաստով.

ա) միջոցների և եղանակների համակարգ՝ գործունեության որոշակի ոլորտում օգտագործելու համար,

բ) մեթոդների ընդհանուր տեսություն, տեսություն գործունեության մեջ: Հաշվի առնելով ասվածը մեթոդաբանությունը կարելի է սահմանել որպես ***տեսական և գործնական գործունեության կազմակերպման սկզբունքների և միջոցների համակարգ և ուսմունք այդ համակարգի մասին***: Առանձնացվում են *ընդհանուր* և *մասնակի* մեթոդաբանություններ: Ավանդաբար փիլիսոփայությունն է համարվել իմացության և ողջ գիտական ճանաչողության ընդհանուր մեթոդաբանություն (ավելին՝ մեթոդաբանությունը փիլիսոփայական ուսմունք է, փիլիսոփայական գիտելիքի բնութագրական կողմ): Մեթոդաբանությունն է նշում այն մասին, թե ինչպես պետք է կիրառել փիլիսոփայության օրենքներն ու կատեգորիաները իմացության գործընթացում, կոնկրետ գիտություններում և պրակտիկայում: Նաև այս ոլորտում են սերտորեն կապվում տնտեսագիտությունը և փիլիսոփայությունը[31]:

---

[31] Տեսության, մեթոդի, մեթոդաբանության մասին մանրամասն տե՛ս ***Ա. Սարգսյան***, Փիլիսոփայության դասընթաց, էջ 382-393, ***Յու. Հովականյան***, Գիտության և տեխնիկայի փիլիսոփայություն և պատմություն, Եր., 2017, էջ 178-298, ***Орехов А. М.***, Методы экономических исследований. Учебное пособие, ***Баскаков А. Я.***, Методология научного исследования. 2-е изд., Киев, 2004, ***Новиков А, М., Новиков Д. А.,*** Методология научного исследования. М., 2010:

Գիտությունը բացահայտում է օրենքներ և ձևակերպում կատեգորիաներ: Օրենքն անհրաժեշտ, կայուն, կրկնվող, ներքին և էական կապն ու հարաբերությունն է: ***Օրենքը համընդհանուր կապի ձև է, որին բնորոշ են կայունությունը, կրկնելիությունը, անհրաժեշտությունը:*** Ընդգրկման շրջանակները հաշվի առնելով՝ առանձնացնում են կոնկրետ (մասնակի), ընդհանուր և համընդհանուր օրենքներ: Կոնկրետ օրենքները բացահայտում են մեկ կապ, շարժման մեկ ձև, հասարակության մեկ տիպ, այդ տիպի առանձին ոլորտները (տնտեսական, քաղաքական, մշակութային և այլն): Այդ օրենքների ուսումնասիրությամբ զբաղվում են կոնկրետ գիտությունները: Ընդհանուր օրենքները բացահայտում են մի քանի կապ, ընդգրկում են համեմատաբար ավելի լայն ոլորտներ: Այդ օրենքների ուսումնասիրությամբ զբաղվում են ընդհանուր գիտությունները (հատկապես շարժման երկու ձևերի, հարևան գիտություններից ձևավորված միջառարկայական գիտության շփման եզրերում գտնվողները): Համընդհանուր օրենքները վերաբերում են բնությանը, հասարակությանը և մտածողությանը միաժամանակ, որոնցով զբաղվում է դիալեկտիկան, փիլիսոփայությունը՝ ընդհանրական իմաստով:

Դիալեկտիկայի (փիլիսոփայության) օրենքները երեքն են, որոնք ձևակերպել է Հեգելը: Դրանցից առաջինը հակադրությունների միասնության և պայքարի օրենքն է, երկրորդը՝ քանակական փոփոխություններից որակականի և հակադարձն անցման, երրորդը՝ բացասման բացասումի:

Տնտեսագիտության օրենքները նույնպես ***կայուն, կրկնվող, ներքին, անհրաժեշտ, պատճառահետևանքային կապերն ու հարաբերություններն են***: Ըստ տնտեսական կապերի և հարաբերությունների ընդհանրության աստիճանի առանձնացվում են.

1. ***Համընդհանուր տնտեսագիտական օրենքներ***, որոնք վերաբերում են բոլոր հասարակություններին:
2. ***Ընդհանուր տնտեսագիտական օրենքներ***, որոնք բացահայտում են պակաս ընդհանրություն ունեցող կապերն ու հարաբերությունները
3. ***Մասնակի (կոնկրետ) տնտեսագիտական օրենքներ***, որոնք արտահայտում են մեկ տնտեսավարման կապերն ու հարաբե-

րությունները[32]:

Կատեգորիաները ցանկացած գիտության (նաև փիլիսոփայության ու տնտեսագիտության) հիմնարար հասկացություններն են: ***Կատեգորիաները օրենքների արտացոլումն են կոնկրետ ձևերի մեջ***: Կատեգորիաների համախմբությունը ստեղծում է ցանկացած գիտության տեսական հիմնակմախքը (կարկասը): Կատեգորիաները դառնում են յուրաքանչյուր գիտության կողմից իրականության որոշակի հատվածի, կողմի ուսումնասիրության հիմնական միջոցներ:

Գոյություն ունեն կոնկրետ գիտական, համագիտական և փիլիսոփայական կատեգորիաներ: Կոնկրետ գիտական կատեգորիաները արձանագրում են որևէ կոնկրետ գիտության արտացոլման օբյեկտի էական հատկանիշները:

Համագիտական կատեգորիաներն ընդգրկման ավելի մեծ շրջանակ ունեն: Փիլիսոփայական (դիալեկտիկայի) կատեգորիաները վերաբերում են ողջ կեցությանը:

Փիլիսոփայության զույգային կատեգորիաները ձևակերպել է Հեգելը: Խիստ համառոտ ներկայացնենք այդ զույգերից մի քանիսը, որոնց տնտեսական, տնտեսագիտական հագուստ հագցնելը թողնում ենք մագիստրոսներին.

ա) Պատճառ և հետևանք: Ըստ Հեգելի՝ երբ մի երևույթ որոշակի պայմաններում ձևավորում, առաջացնում է մեկ ուրիշ երևույթ, ապա առաջինը պատճառն է, երկրորդը՝ հետևանքը: Զույգային այս կատեգորիան գործում է ամենուր, այդ թվում տնտեսագիտության մեջ:

Պատճառը հետևանքի նկատմամբ ակտիվ է և առաջնային: Բայց պետք է նկատի ունենալ, որ միշտ չէ և բոլոր դեպքերում չէ, որ «դրանից հետո» նշանակում է «դրա պատճառով»: Ցերեկն ու գիշերը, տարվա եղանակները հերթափոխում են միմյանց, բայց գիշերվա առաջացման պատճառը ցերեկը չէ, և ոչ էլ ձմռան պատճառը՝ աշունը:

Պատճառից բացի գոյություն ունի պայման: Պայմանը այն է, ինչն անհրաժեշտ է տվյալ երևութի, իրադարձության հանդես գալու համար, բայց որի արարողը, ծնողը ինքը չէ: Առանձնացվում են բարենպաստ և ոչ բարենպաստ պայմաններ, իսկ պատճառը այդպիսին

---

[32] Տնտեսագիտական օրենքների մասին տե՛ս Տնտեսագիտության տեսություն, ուսումնական ձեռնարկ, խմբ. տ.գ.դ., պրոֆ. ***Գ.Ե. Կիրակոսյան***, տ.գ.թ., պրոֆ. ***Ի. Ե. Խլղաթյան***, Եր., 2009, էջ 53-61:

լինել չի կարող: Պետք է առանձնացնել նաև առիթը, որը նպաստում է պատճառի հանդես գալուն:

բ) ***Անհրաժեշտություն և պատահականություն***: ***Անհրաժեշտությունը երևույթների, պրոցեսների կայուն, կրկնվող, էական կապն է, որը պայմանավորվում է դրանց նախորդ զարգացմամբ: Պատահականն այն է, ինչը տվյալ պարագայում կարող է լինել, բայց կարող է և չլինել:*** Անհրաժեշտությունը հանդես և գալիս էական գործոններով, պատահականը՝ ոչ էական: Ըստ Հեգելի պատահականությունը հադես է գալիս որպես անհրաժեշտության դրսևորման ձև ու լրացում: Պատահականությունը կարող է վերածվել անհրաժեշտության: Անհրաժեշտությունը պայմանավորված է երևութների տվյալ շղթայակցությամբ, պատահականը դուրս է այդ շղթայակցությունից, նրա պատճառը այլ շղթայակցության մեջ պետք է որոնել:

գ) **Հնարավորություն և իրականություն**: **Նորի կեցությունն իր պոտենցիալ վիճակում հնարավորությունն է**: **Իրականությունը առկա կեցությունն է**, **այն ամենը**, **ինչն արդեն գոյություն ունի**: Հնարավորությունը պոտենցիալ իրականությունն է, իսկ վերջինս արդեն իրողություն դարձածն է: Առաջատարը իրականությունն է: Հնարավորությունը կարող է լինել իրական և ձևական: Իրական է այն հնարավորությունը, որն արտահայտում է օբյեկտի զարգացման օրինաչափ, էական միտումը և գոյություն ունեն նրա իրականացման անհրաժեշտ պայմանները: Ձևականն արտահայտում է օբյեկտի զարգացման ոչ էական միտումը, իրականության մեջ բացակայում են նրա իրականացման պայմանները:

Ձևական հնարավորությունը պետք է տարբերել անհնարինությունից: Ձևականը երբեմն կարող է փոխարկվել իրականության, իսկ անհնարինությունը՝ երբեք (թեև այս պնդմանը մագիստրոսները ակտիվորեն հակադարձում են. «ի՞նչ գիտեք, գուցե ժամանակի ընթացքում անհնարինն էլ դառնա հնարավո՞ր»: Ժամանակին ինքնաթիռ, բջջային հեռախոս, համակարգիչ պատրաստելը, տիեզերք թռչելը համարվել են անհնարին կամ ձևական հնարավորություններ, այսօր դարձել են իրականություն:

դ) **Ձև և բովանդակություն**: **Բովանդակությունն օբյեկտի բոլոր տարրերի կազմն է**, **հատկությունների**, **ներքին պրոցեսների**, **կապերի հարստությունը**: **Ձևը բովանդակության արտաքին դրսևորումն է**: Ձևը և բովանդակությունը միասնական են: Առաջատարը

բովանդակությունն է, բովանդակությունն է իրեն համապատասխան ձև ընտրում: Ձևի և բովանդակության միջև գոյություն ունի ներքին հակասականություն: Հին ձևը խանգարում է նոր բովանդակությանը, արգելում նրա զարգացմանը, ինչի արդյունքում առաջանում է բախում (կոնֆլիկտ), որը հաղթահարվում է՝ նոր բովանդակությանը համապատասխան ձև հաղորդելով: Ձևն ունի հարաբերական ինքնուրույնություն, որն արտահայտվում է բովանդակությունից հետ մնալու, առաջ ընկնելու կամ բովանդակության վրա ազդելու միջոցներով: Միևնույն բովանդակությունը կարող է դրսևորվել տարբեր ձևերով:

ե) Էություն և երևույթ: Իմացության պրոցեսն ընթանում է երևույթից, մակերեսից դեպի խորքայինը, էությունը, մինչդեռ ճշմարտությունը բացահայտվում է խորքայինի, էության ճանաչմամբ: **Էությունն առարկայում**, **պրոցեսում գլխավորն է**, **հիմքը**, **հիմնականը**, **որոշիչը**, **ներքին կապերն ու հարաբերությունները**, **այն**, **ինչը բնութագրում և սահմանում է զարգացման հիմնական ուղղությունը**: Ճանաչել էությունը նշանակում է հասկանալ ուսումնասիրվող օբյեկտի, առարկայի ծագման պատճառը, ներքին հատկություններն ու կառուցվածքը: **Երևույթն էության արտաքին դրսևորումն է**, **նրա արտահայտման ձևը**: **Երևույթը գտնվում է մակերեսին**: Բայց էության և երևույթի միջև անջրպետ գոյություն չունի: Էությունը դրսևորվում է երևույթի մեջ և միջոցով: Երևույթն ավելի հարուստ է, քան էությունը: Այդ պատճառով էլ էությունը ոչ միայն տրվում է, այլև քողարկվում: Էությունը և երևույթը կապված են միմյանց հետ, հակառակ դեպքում առարկայի էությունը ճանաչել հնարավոր չէր լինի: Էությունը ճանաչում ենք երևույթը ճանաչելու միջոցով:

Փիլիսոփայության օրենքներն ու կատեգորիաները մեծ դեր են կատարում ցանկացած գիտության, այդ թվում և տնտեսագիտության մեջ: Առանց դրանք հաշվի առնելու նաև տնտեսագիտությունը չի կարող հիմնարար, հիմնավորված տեսություն ստեղծել, իրականացնել գիտական մտածողություն, որովհետև փիլիսոփայության օրենքներն ու կատեգորիաները միաժամանակ մտածողության օրենքներ ու կատեգորիաներ են, որոնք օգնում, որոշակի հունի և համակարգի մեջ են դնում մտածողության կոնկրետ ձևերն ու ոլորտները: Հանդես գալով որպես աշխարհի յուրացման ընդհանուր կողմնորոշիչներ՝ փի-

լիսոփայության օրենքներն ու կատեգորիաները մեծ դեր են կատարում կոնկրետ գիտական տեսությունների և դրանց մեթոդաբանական կողմնորոշիչների մշակման գործում: Տնտեսագիտությունը նույնպես չի կարող իր ներսում ծագած ընդհանուր տեսական և աշխարհայացքային նշանակության հիմնախնդիրներ լուծել, առանց փիլիսոփայության օրենքների և կատեգորիաների իմացության և օգտագործման: Փիլիսոփայությունը տնտեսագիտությանը զինում է հավաստի գիտելիք ձեռք բերելու ուղիների, իմացության ձևերի, մակարդակների, ելակետային նախադրյալների, ընդհանուր հիմքերի, սոցիալ-պատմական, մշակութային ենթատեքստեր վեր հանելու մեթոդներով: Առանց փիլիսոփայության մեթոդաբանական կողմնորոշիչների, օրենքների և կատեգորիաների իմացության, հնարավոր չէ ձևակերպել տնտեսագիտության օրենքներն ու կատեգորիաները, հաղթահարել տնտեսագիտության ներսում ծագած գիտատեսական ընդհանուր բնույթի դժվարությունները, իմաստավորել սեփական տեսության հիմքերը:

Մեթոդի և մեթոդաբանության խնդիրները կարևորելը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանք են ցանկացած, այդ թվում և տնտեսագիտականը գիտելիքը, դարձնում գիտություն:

Մեթոդաբանության և մեթոդներին վերաբերող վերլուծությունն այսքանով ավարտում ենք, մանրամասներին մագիստրոսները կարող են ծանոթանալ իրենց համար կարդացվող «Գիտական հետազոտության մեթոդաբանություն» դասընթացից:

*3.2. **Տնտեսափիլիսոփայական հիմնարար կատեգորիաները***

Բացի զուտ փիլիսոփայական կատեգորիաներից գոյություն ունեն նաև փիլիսոփայատնտեսագիտական կամ որ նույնն է՝ տնտեսափիլիսոփայական կատեգորիաներ, որոնցից մի քանիսը կներկայացնենք ստորև:

1. ***Աշխատանք***: Աշխատանքը ինչպես տնտեսագիտական, այնպես էլ մշակութային և սոցիալ-փիլիսոփայական կատեգորիա է: ***Աշխատանքը նպատակահարմար գործունեությունն է, որի խնդիրը***

բնական և հասարակական ուժերի յուրացումն ու վերափոխումն է՝ մարդկանց պահանջմունքները բավարարելու համար: Տնտեսագիտական գրականության մեջ հաճախ աշխատանք է համարվում մարդու գործունեությունը արտադրության ոլորտում: Բայց աստիճանաբար տարածում է ստանում այն տեսակետը, որ ***աշխատանք է մարդու ցանկացած սոցիալապես նշանակալից գործունեություն***: Այս դիտանկյունից աշխատանք է ոչ միայն բանվորի և գյուղացու, այլև գիտնականի, դասախոսի, մանկավարժի, հոգեբանի, գրողի, համակարգչի առջև նստածի գործունեությունը:

Աշխատանքը գործընթաց է, որ տեղի է ունենում մարդու և բնության, մարդու և մարդու միջև: Մարդու և բնության փոխհարաբերության մեջ պատմականորեն առանձնացվում է աշխատանքային գործունեության երեք փուլ.

Առաջինը ձեռքի աշխատանքն է (պարզ նյութափոխանակությունը), որը համապատասխանում է ավանդական հասարակությանը:

Երկրորդը մեքենայական աշխատանքն է (էներգետիկ փոխհարաբերությունը), որը համապատասխանում է արդյունաբերական հասարակությանը:

Երրորդը տեղեկատվական փոխհարաբերությունն է, ավտոմատների ժամանակաշրջանը, որը ժամանակակից հասարակությունն է, որին անվանում են «տեղեկատվական», «հետարդյունաբերական»: Այդ փուլերը միաժամանակ նշանակում են անցում աշխատանքի պարզ, էքստենսիվ (քանակական) ձևերից բարդ, որակավորված, ինտենսիվ ձևերին (որակական), տնտեսական աճից տնտեսական զարգացմանը:

Ժամանակի ընթացքում աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը փոխվել է: Անտիկ աշխարհում աշխատանքը ազատ մարդու համար չէր: Ազատ քաղաքացին պետք է ծառայեր բանակում, ամուսնանար, մասնակցեր պոլիսի կառավարման գործերին, զանազան միջոցառումների, ավելի լուրջ հակում ունեցողները՝ զբաղվեին փիլիսոփայությամբ: Աշխատանքը ստրուկի և ազատ արձակվածի գործն էր: Եթե Հին Հունաստանում հողագործական աշխատանքի նկատմամբ հարգանք կար, ապա Հին Հռոմում դա էլ վերացավ:

Միջնադարում աշխատանքի նկատմամբ ձևավորվեց դրական վերաբերմունք, ինչը առաջացրեց հակասություն Աստվածաշնչի և

միջնադարյան պատկերացումների միջև: Աստվածաշնչում աշխատանքը Ադամի և Եվայի գործած մեղքի արդյունք է՝ պատիժ: Աստված ասում է. «Տանջանքով հայթայթես քո սնունդը քո կյանքի բոլոր օրերին... Քո երեսի քրտինքով ուտես հացդ մինչև հող դառնալը» (Աստվածաշունչ, Ծննդոց,Գ, 17, 19), մինչդեռ միջնադարյան քրիստոնեական գաղափարախոսության մեջ աշխատանքը համարվում է աստվածահաճո գործ, որովհետև Աստված մեծ աշխատող է, ինքն է ստեղծել աշխարհը և մարդուն: Քրիստոսի հայրը հյուսն էր, այսինքն՝ սովորական աշխատանքի տեր և այդ աշխատանքով ապրող մարդ, Հիսուսն էլ էր աշխատող և աշխատող մարդկանց պաշտպան: Նա դատապարտում է հարստությունը, հարուստներին, նրանց համար տեղ չի տեսնում երկնքի արքայության մեջ: Վաղ քրիստոնեությունը հալածվում էր հատկապես սոցիալական ուղղվածության համար: Միջնադարում աստիճանաբար իշխող է դառնում վանական կյանքը՝ ունեցվածքի հավասարությամբ, պարտադիր ֆիզիկական աշխատանքով: Աշխատանքը ձեռք է բերում դրական բնութագիր՝ որպես մարդու մեղքերը ներող, մեղմող զբաղմունք: Անգործությունը համարվում է արատ և կործանում:

Աշխատանքի բուն փիլիսոփայությունը սկսում է Նոր ժամանակից, երբ ձևավորվում են շուկայական հարաբերությունները, իսկ աշխատուժը դառնում է ապրանք, թեև ոչ սովորական, որովհետև ապրանքն այն առարկան է, որ արտադրվում է շուկայում վաճառելու համար: Մինչդեռ մարդը, նրա կյանքը վաճառքի ենթակա չեն: Մարդ-ապրանքը շուկայական հարաբերությունների օրենքներից ազատելու համար ստեղծվեցին զանազան հասարակական կազմակերպություններ, մարդասիրական, բարեգործական ընկերություններ: Այսինքն՝ աշխատանքն սկսեց ձեռք բերել արժեքային բնույթ՝ մշակութաբանական իմաստով:

Ավարտենք պատմական էքսկուրսը և նշենք, որ աշխատանքը աշխատանքից տարբեր է լինում: Հոգեմաշ, որևէ ստեղծագործական տարր չպարունակող աշխատանքը հոգևոր-բարոյական, մշակութային արժեք չի պարունակում: Եվ հակառակը՝ ստեղծագործական (անկախ բնույթից՝ ֆիզիկական, մտավոր, հոգևոր) հաճույք, բերկրանք պատճառող, երբեմն կյանքի իմաստի, կոչման հետ նույնացվող աշխատանքը արժեքային բնույթ ունի՝ անկախ նրանից, աշխատողը

դժվարությամբ, թե թեթևությամբ է կատարում այն: Դա պայմանավորված է նաև նրանով, թե ի՞նչ վերաբերմունք ունենք «աշխատանք» կոչվող երևույթի նկատմամբ ընդհանրապես՝ աշխատանքը գոյության, թե՞ ինքնաարտահայտման, ինքնահաստատման միջոց է: Այն հասարակությունում, որում իշխողը գոյատևման արժեքներն են, կենսամակարդակը ցածր է, բնակչությունը ոչ այնքնան առողջ՝ այդ բառի բազմաթիվ իմաստներով: Մինչդեռ աշխատանքը ինքնաարտահայտման, ինքնահաստատման միջոց դիտելու դեպքում հասարակությունում իշխող են դառնում ազատական արժեքները՝ կյանքի լիարժեքության զգացում, ինքնաբավություն, հանդուրժողականություն և այլն: Չմոռանանք, որ աշխատանքը մարդկային ակտիվության, էներգիայի ծախսում է, որն ի վերջո դառնում է կյանք-ժամանակի՝ որպես արժեքի, ծախսում:

2. ***Սեփականություն**: **Սեփականությունը որևէ հանրության մեջ մտնող անհատի իրավունքն է ունենալ բարիքներ, որոնք օրենքով պատկանում են իրեն և օգտվել դրանցից**:* Սեփականությունը առարկան ունենալու իրավունքն է (մեքենան կարող են գողանալ, բայց իրավական տեսակետից այն քոնն է): Սեփականությունը յուրացում է, հետևաբար սեփականության օբյեկտն այն է, ինչը ենթակա է յուրացման: ***Սեփականությունը յուրացման, տիրապետման, տնօրինման և օգտագործման ամբողջությունն է***: Դեռևս հին հռոմեական իրավունքում են առանձնացվել սեփականության երեք հիմնական պարամետրերը՝ տիրել, տնօրինել, օգտագործել: Սեփականության այս ըմբռնումն է տարածում ստացել տնտեսագիտական գրականության մեջ: Օրինակ՝ ըստ Հ. Աղաջանյանի սեփականությունը ռեսուրսների կամ բարիքների «տիրապետման, օգտագործման և տնօրինման հնարավորությունն է» [33] : Իրավատնտեսագիտական առումով սեփականությունը հարաբերությունների համակարգ է «…սուբյեկտների և օբյեկտների միջև դրա հիմնական իրավունքների՝ տնօրինման, տիրապետման և օգտագործման գործնական կիրառման տեսանկյունից…»[34]:

---

[33] ***Հ. Աղաջանյան***, Տնտեսագիտության տեսություն, ուսումնական ձեռնարկ, մաս I, էջ 76:

[34] ***Ս. Դավոյան***, Սեփականության էվոլյուցիան, Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Եր., 2009, էջ 15:

«Սեփականություն» հասկացությունն իր ժամանակակից իմաստով եվրոպական հասարակական քաղաքական մտքում շրջանառության մեջ է դրվել Նոր ժամանակում՝ «բնական իրավունքի» տեսության շրջանակներում: Սեփականության սուբյեկտը առանձին քաղաքացին է, ընտանիքը, կոլեկտիվը, տարբեր կազմակերպություններ, ազգը, պետությունը, եկեղեցին:

Սեփականության նկատմամբ ձևավորված մոտեցումներն են.

ա) Սուբյետ-օբյեկտայինը, երբ առարկան կախվածություն է ձեռք բերում մարդուց: Մարդը սեփականության մեջ է դնում իր ունեցվածքը, կամքը, կայացածության աստիճանը, դառնում տեր, տիրող, բաշխող:

բ) Սուբյեկտ-սուբյեկտայինը, որը ցույց է տալիս մարդու սոցիալական կարգավիճակը: Սեփականատերը իրենից կախման մեջ է դնում մյուս մարդկանց, որոնք կորցնելով իրենց ունեցվածքը, վաճառում են սեփական աշխատուժը:

գ) Օբյեկտ-սուբյեկտայինը, որում մարդն է կախվածության մեջ ընկնում առարկայից, առարկաներն են դառնում իշխող մարդկանց վրա: Ահա թե ինչպես է այդ երևույթը ներկայացնում Կ. Մարքսը. «Մեր ժամանակ ամեն ինչ կարծես հղի է իր հակադրությամբ: Մենք տեսնում ենք, որ մարդկային աշխատանքը կրճատելու և ավելի արդյունավետ դարձնելու հրաշագործ ուժով օժտված մեքենաները մարդկանց բերում են սով և հյուծում: Հարստության նոր, մինչև այժմ անհայտ աղբյուները, շնորհիվ ինչ-որ տարօրինակ, անհասկանալի կախարդանքի, աղքատության աղբյուր են դառնում: Տեխնիկայի հաղթանակները կարծես թե գնված են բարոյական դեգրադացիայի գնով»[35]: Ձևավորվում է մի երևույթ, որին Մարքսն անվանում է «ապրանքային ֆետիշիզմ»:

Դրամաբանկային քարաքականության, ֆինանսական շուկայի զարգացման արդյունքում սեփականատերը շահույթը ստանում է ոչ թե մարդկանց շահագործումից, այլ փողի շրջանառությունից (շրջապտույտից), որն էլ համարվում է բարիք և՛ տնտեսության, և՛ հասարակության համար: Այս մոտեցմամբ «ապրանքային ֆետիշիզմը» փոխարինվում է «դրամական (մոնետար) ֆետիշիզմի»:

---

[35] ***Կ. Մարքս և Ֆ. Էնգելս***, Ընտիր երկեր երեք հատորով, հ. 1, 1972, էջ 685:

Սեփականության իրավունքը սկզբնապես կարգավորվել է ավանդույթով, իսկ հետագայում՝ պետության կողմից սահմանված իրավական նորմերով: Սեփականությունը ձեռք է բերվում ժառանգությամբ, աշխատանքով, բռնությամբ (ավարառությամբ):

Ե՞րբ է առաջացել սեփականությունը, երբ, ըստ խաբեբայության ուսմունքի, առաջին խորամանկը ցանկապատել է ոչ մեկին չպատկանող հողակտորը, հայտարարել, որ դա իրենն է և հանդիպել է առաջին հիմարը, որը հավատացել է նրան: Սոցիալ-փիլիսոփայական և տնտեսագիտական տեսանկյունից սեփականության առաջացման երկու մոտեցում է դիտվում՝ ավանդական-մարքսիստական և ոչ ավանդական-ոչ մարքսիստական: Մարքսիստական մոտեցման տեսանկյունից սեփականությունն առաջացել է նախնադարում և առաջին ձևը եղել է համայնական-կոլեկտիվը, ստրկատիրությունից սկսում է մասնավոր սեփականությունը, որը կայունանում է ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, զարգացման ոսկեդար ապրում կապիտալիզմի օրոք[36]: Այս մոտեցումը վիճարկում են Հ. Աղաջանյանը, Ս. Դավոյանը: Ըստ Հ. Աղաջանյանի «…գոյություն չունի փաստարկված ապացույց, որ (նախնադարում-Ա.Ս.) տիրապետող են եղել արտադրության միջոցների նկատմամբ համայնական սեփականության ձևը և բարիքների հավասարարական բաշխումը: Դա ընդամենը հիմնված է որոշակի ենթադրության վրա»[37]: Ս.Դավոյանի կարծիքով սեփականության անձնական և կոլեկտիվ ձևերը հանդես են գալիս միասնաբար, ավելի ստույգ «…սեփականությունը ծագում է որպես անձնական սեփականություն, իսկ կոլեկտիվ տիրապետումը դառնում է դրա միջավայրը», իսկ «…մասնավոր սեփականությունը դառնում է անձնական սեփականության հատուկ ձև, որն ի հայտ է գալիս աշխատողի՝ աշխատանքի միջոցներից և պայմաններից դրանք օտարման ձևով»[38]: Եթե անձնական սեփականությունը ձևավորվել է

---

[36] Տե՛ս Տնտեսագիտության տեսություն, ուսումնական ձեռնարկ, խմբ.՝ տ.գ.դ., պրոֆ. ***Գ. Ե. Կիրակոսյան***, տ.գ.թ., պրոֆ. ***Ի. Ե. Խլղաթյան***, էջ 87:

[37] ***Հ. Աղաջանյան***, Տնտեսական դետերմինիզմի պարադոքսները. Հասարակական-տնտեսական ֆորմացիաների մարքսյան տեսության քննադատություն, Վեմ, 2019, հոկտեմբեր-նոյեմբեր 4 (68), էջ 94:

[38] ***Ս. Դավոյան***, Սեփականության էվոլյուցիան, Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Եր., 2009, էջ 10:

նախնադարում, իշխել ասիականում, ապա անտիկ հասարակությունում անձնականը և կոլեկտիվը կազմել են ինքնաբավ միասնություն: Մասնավոր սեփականությունը որպես որակական նոր երևույթ ձևավորվում է ֆեոդալիզմի վերջին փուլում, իշխող դառնում կապիտալիզմի ժամանակաշրջանում, վերջնականապես հաղթում բուրժուական հասարակության ծաղկման փուլում[39]:

Առանձնացվում են սեփականության անձնական, մասնավոր, կոլեկտիվ, համայնական, պետական ձևերը:

Սեփականության յուրահատուկ ձև է ***մտավոր սեփականությունը***: «Մտավոր սեփականություն» կոչվածը հավաքական հասկացություն է, որը բնութագրում է մշակութի բազմաթիվ բնագավառների և ստեղծագործական ոլորտների գործունեության նկատմամբ մարդու (մարդկանց, կոլեկտիվների, ստեղծագործական միությունների) իրավունքը: ***Մտավոր սեփականությունը մտավոր աշխատանքի արդյունքներին տիրելու իրավունքն է***: Եթե մարդու ձեռքի աշխատանքի արդյունքը նյութական բարիքն է, ապա մտքինը՝ գիտելիքը: Մտավոր աշխատանքի մեջ են մտնում գիտությունը, տեխնիկան, գրականությունը, արվեստը, ողջ հոգևոր մշակույթը: Ինչպես ցանկացած արդյունք, այնպես էլ գիտելիքը, կարող է դառնալ ապրանք, եթե նախատեսվում է իրացման համար և ունի պահանջարկ:

ՀՀ-ում մտավոր սեփականության հետ կապված առանձնացվում է երեք իրավական ինստիտուտ.

ա) *Հեղինակային* (և դրան հարակից), որը կարգավորում է գիտության, գրականության, արվեստի ստեղծագործությունների ստեղծման և օգտագործման հետ կապված հարաբերությունները: Հարակից իրավունքը տարածվում է բեմադրությունների, ձայնագրությունների, հեռարձակող կազմակերպությունների եթերային և կաբելային հաղորդումների վրա:

բ) *Արտոնագրային*, որը կարգավորում է գյուտի, մոդելի, արտադրական նմուշի և մտավոր գործունեության տեխնիկայի բնագավառի այլ արժեքների վրա:

---

[39] Տե՛ս նույն տեղում, էջ 13-14:

գ) *Քաղաքացիական* շրջանառության մասնակիցների, ծառայությունների, աշխատանքների, ապրանքների անհատականացման միջոցների նկատմամբ իրավունք[40]:

Արվեստում մտավոր սեփականության առարկաներ ստեղծվում են, բայց խիստ և կայուն գնահատման չափանիշներ գոյություն չունեն, դրանց արժեքը երբեմն գնահատվում է տասնամյակներ անց: Գիտատեխնիկական մտավորականության մտավոր ապրանքի արժեքը գնալով նվազում է, որովհետև ժամանակի ընթացքում դառնում է համընհանուր գիտելիք, որն այլևս ապրանք չէ:

3. **Հարստություն**: Տնտեսական իմաստով հարստությունը գնահատվում է նրանով, թե որքան է մարդու կողմից օգտագործվող օգտակար և հաճելի առարկաների քանակը: Այս տեսանկյունից ***հարստությունը այնպիսի պաշարն է, որից կարելի է օգտվել միշտ: Հարստությունը մեծ քանակությամբ տարբեր օգտակար և հաճելի առարկաներից, ապրանքներից օգտվելու հնարավորությունն է, արդեն օգտագործածի և մաշվածի փոխարեն:***

Հարստության նկատմամբ վերաբերմունքը ապրել է էվոլյուցիա: Հետաքրքիր է այդ էվոլյուցիան դիտել քրիստոնեության տարբեր դրսևորումներում: Քրիստոսը, ինչպես արդեն նշել ենք, բացասական վերաբերմունք ուներ հարստության նկատմամբ: Այդ գիծը շարունակվեց միջնադարյան վանական միավորումներում, որոնցում իշխում էին ունեցվածքի հավասարության և պարտադիր ֆիզիկական աշխատանքի պահանջները: Վանականները աշխատում էին, չորացնում ճահիճներ: Ըստ քրիստոնեական պատկերացումների, Քրիստոսը հյուսն էր (հոր մասնագիտությունը), առաքյալները՝ ձկնորս: Դարձյալ, ըստ այդ պատկերացումների, աղքատության պատճառը մի մասի ձեռքին կուտակված հարստությունն է ու սեփականությունը: Առևտուրը միանշանակորեն չի դատապարտվել, բայց և նրա նկատմամբ կասկածամիտ վերաբերմունքն էլ չի հաղթահարվել: Քանի որ Քրիստոսը վաշխառուներին վռնդել էր տաճարից, այդ պատճառով քրիստոնյան վաշխառությամբ զբաղվել չէր կարող:

Քրիստոնեական մեկ այլ թև հարստությունը գնահատելիս դիմեց հինկտակարանային օրենքներին և պատվիրաններին, որոնք, ըստ

---

[40] Այդ մասին մանրամասն տե՛ս ***Լ. Մեհրաբյան***, ***Գ. Սուքիասյան***, Իրավագիտություն, Եր., 2018, էջ 319-320:

այդ թևի ներկայացուցիչների, ամրագրում էին արդարություն և բարեպաշտություն: Վերջինս նշանակում էր մարդու կողմից սեփական պարտականությունների կատարում: Այսինքն՝ օգնություն աղքատներին և հիվանդներին, պարտքը չպահանջել տոկոսով, վարձու աշխատողի վարձը տալ ժամանակին: Յուրաքանչյուր յոթ տարին մեկ ներել պարտքերը, ազատ արձակել պարտքի դիմաց ստրկության հաձնված ստրուկներին:

Բոնիֆացիուց VIII պապը (1295-1303) 1300 թվականը եկեղեցու համար հռչակեց «հոբելյանական», որոշվեց նաև որ նման հոբելյաններ նշվեն յուրաքանչյուր հարյուր տարին մեկ: Բայց 1343 թվականից այն դարձվեց 50, 1389 թվականից՝ 33 (Քրիստոսի տարիքը), իսկ 1470 թվականին որոշվեց «հոբելյանական տարին» նշել 25 տարին մեկ, որպեսզի յուրաքանչյուր սերունդ այդ տարում իրականացվող միջոցառումներին մասնակցելու հնարավորություն ունենա: Երբեմն հռչակվում են նաև արտահերթ «հոբելյանական տարիներ»: Այդ տարիներին բոլորը կարող էին հետ գնել պարտքի դիմաց տրված տունը, հողը, ունեցվածքը (ի դեպ այդ «հոբելյանական» տարիներին իրականացված առևտրից ծագեց «մեղքերի թողության թղթերի»՝ ինդուլգենցիաների վաճառքը, որը, ըստ էության, կաթոլիկ եկեղեցու չքողարկված բիզնեսն էր): Օրենքի առջև հավասար էին տերն ու ծառան: Բոլոր նման պատվիրաններ պահպանողը, եթե հարստանում էր, ապա այն դիտվում էր աստվածավախություն և աստվածահաճություն, հարստությունը դառնում էր բարիք: Այս մոտեցումը և այն, որ մարդը առաջնորդվելով աստվածաշնչյան օրենքներով ծառայում է Աստծուն, իշխող դարձավ բողոքականության մեջ, որի մասին նշել և դեռ նշելու ենք: Կալվինը մասնագիտությունների մեջ խտրականություն չէր դնում: Ի՞նչ ուզում ես դարձիր՝ վաշխառու, արհեստավոր, գյուղացի, կարևորն այն է, որ գործիդ մեջ լինես պարտաճանաչ, նվիրված, ազնիվ և դա կդիտվի որպես ծառայություն Աստծուն: Եթե նախկինում վաշխառուն ասում էր. «չխաբես, չես վաճառի», ապա բողոքական վաշխառուն պնդում էր՝ «խաբեբայությունը դժվարացնում է առևտուրը», «ազնվությունը լավագույն քաղաքականությունն է», «աստվածավախությունը հարըստության հասնելու ամենահավաստի ուղին է»: Այս ուղիով (բողոքականության տնտեսական նշանակության մասին դեռ խոսվելու է) ձեռք բերված հարստությունը ոչ միայն չէր

դատապարտվում, այլև դիտվում էր Աստծո կողմից ընտրյալ լինելու վկայություն:

Ավանդական քրիստոնեական եկեղեցիները առանց սեթևեթանքների ընտրեցին տնտեսական հզորացման ուղին և նրանցից յուրաքանչյուրը ոչ միայն հոգևոր, այլև ֆինանսա-տնտեսական հզոր հաստատություն է[41]:

Ավանդական հասարակություններում հարստությունը աշխատանքի հետ կապված չէր: Այն ստանում էին ժառանգությամբ կամ ձեռք բերում ավարառությամբ, կողոպուտով, շահագործմամբ: Այդ պատճառով հարստությունը արժեք չէր և նրա նկատմամբ գոյություն ուներ վերապահ, նույնիսկ բացասական վերաբերմունք, հարուստներին չէին հարգում, նրանց նախանձում էին, արհամարհում, վախենում, աշխատում հեռու մնալ նրանցից: Այդպիսին էր վերաբերմունքը նաև խորհրդային իշխանության տարիներին: ԽՍՀՄ-ում կարող էիր համեմատաբար լավ ապրել (եթե բարձր աշխատավարձ էիր ստանում), բայց հարստություն չէիր դիզի, հարուստ չէիր դառնա: Հարըստության ձեռք բերումը կապվում էր գողության, գաղտնի առևտրի, խարդախության, կաշառակերության, կոռուպցիայի և այլ հակարժեքների հետ:

Փոխվեց հասարակությունը, վերարժևորվեց վերաբերմունքը հարստության նկատմամբ: Ամեն հարստություն չէ, որ դատապարտելի է: Հարստությունը որպես կենսական և մասնագիտական հաջողությունների չափանիշ՝ կարողությունների, հմտությունների, գիտելիքի իրացում, աշխատասիրության, ձեռներեցության, խնայողության ներդրում՝ դարձավ գնահատելի: Փողի առկայությունն այստեղ և այս դեպքում բացասական բնութագիր չունի, ընդհակառակը, բարերար ազդեցություն է ունենում մարդու և նրա ընտանիքի նկարագրի վրա: Անհատն իրեն ոչ միան տնտեսապես, այլև բարոյապես կայացած մարդ կարող է համարել, ունենալ կյանքի լիարժեքության զգացում: Նման մարդու նկատմամբ վերաբերմունքը դրական է նաև շրջապատում, որովհետև գնահատվում է սեփական խելքով ու աշխատասիրությամբ ստեղծվածը (փողի հոգևոր-բարոյական, աշխարհայացքային կողմերի մասին դեռ շատ է խոսվելու): Մերժելի է այն հարստությունը, որի մեջ արյուն կա, ունեզրկվածների անեծք:

---

[41] Այդ մասին տե՛ս ***Ա. Սարգսյան***, Գործարարության բարոյագիտություն, էջ 54-57:

Խոսելով հարստության մասին, տուրք տվեցինք նյութական-տնտեսական կողմին՝ փող, նյութական բարիքների առատություն և կարծես անտեսվեց հոգևոր-մշակութայինը, որտեղ կարևորվում է հոգու հարստությունը, որովհետև ու՞մ է պետք սեղանի առատությունը, երբ շուրջբոլորդ հոգու սով է: Հոգու հարստությամբ (մշակույթ, հոգևոր-բարոյական, աշխարհայացքային-արժեքային արժեքներ) պետք է դատել և գնահատել հասարակություններն ու անհատներին: Իսկ դա կլինի ճոխ սեղանների շուրջ, թե առանց դրա՝ էական չէ:

4. ***Ազատություն:*** Ազատությունը փիլիսոփայական կատեգորիա է, որը սերտորեն կապվում է տնտեսագիտության հետ և արտահայտում է մարդու անօտարելի իրավունքը՝ վարվել իր կամքին համապատասխան: Առանձնացվում է ազատության չորս հիմնարար կողմ՝ *ապրելու, մտածելու, վճիռ կայացնելու* և *գործելու*: Վճիռ կայացնելու և գործելու ոլորտներում ազատությունը դառնում է նաև տնտեսագիտական կատեգորիա: Ազատության բազմաթիվ ընբռնումներից առանձնացնենք երկուսը.

ա) ***Ազատությունը գիտակցված անհրաժեշտությունն է:*** Տեսակետը ներկայացրել է հոլանդացի փիլիսոփա ***Բ. Սպինոզան*** (1632-1677), գաղափարը զարգացրել են Հեգելը, Մարքսը և Էնգելսը: Էնգելսը այս սահմանումը մեկնաբանում է հետևյալ կերպ. ազատությունը ոչ թե երևակայական անկախությունն է բնության և հասարակության օրենքներից, իմացական գործընթացից, այլ այդ օրենքների ճանաչողության հիման վրա ծավալած գործունեությունը: Այս ըմբռնմամբ ազատությունը լիովին աշխատում է տնտեսության և տնտեսագիտության մեջ, ըստ որի ճանաչելով տվյալ ժամանակաշրջանի շուկաներում տիրող իրավիճակը գործարարը, կորպորացիան կարող են համապատասխան գործունեություն ծավալել, հենվելով սեփական ֆինանսական, մտավոր և բարոյաարժեքային կարողություններ-ի վրա: Իսկ Մարքսն այն կարծիքին էր, որ ազատության թագավորությունը սկսում է տնտեսական անհրաժեշտությունից այն կողմ, որովհետև տնտեսական կյանքը նույնական չէ հասարակական և պարզապես մարդկային կյանքի հետ:

բ) ***Ազատությունը սեփական կամքով և գիտակցությամբ կատարած ընտրությունն է և այդ ընտրության համար պատասխա-***

նպատվությունն իր վրա վերցնելու վճռականությունը: Տնտեսագիտության մեջ այս խնդրի դրսևորման ձևերից մեկը դառնում է տնտեսական ազատության և գոյության ապահովության երկընտրանքի լուծումը: Այսինքն՝ կարո՞ղ ենք ազատ համարել այն մարդուն, ում հոգսը ոչ թե լավ ապրելն է, այլ պարզապես ապրելու խնդիր լուծելը: Ի դեպ այս տեսանկյունից երկընտրանքային է դառնում նաև կյանքի իմաստի հիմնախնդիրը, որը հանդես է գալիս «ունենալ, թե՝ լինել» հարցադրմամբ: Նրանք, ովքեր կյանքի իմաստը համարում են «ունենալը», ծավալում են ցանկացած գործունեություն, իսկ «լինելու» կողմնակիցները ապրում են ազնիվ, հպարտ աղքատությունը գերադասում ոսկյա ապարանքից:

Տնտեսության (տնտեսագիտության) մեջ ազատությունը կարող է դիտվել որպես մարդու կողմից.

ա) տնտեսական որոշումներ կայացնելու հնարավորություն,

բ) սեփական բարեկեցությունը բարձրացնելու միջոցների ընտրության ունակություն (ընտրությունը գործողությունների ամբողջությունն է, որն իրականացվում է նպատակին հասնելու համար՝ սահմանափակ ռեսուրսների պայմաններում, որոնք թույլ են տալիս այլընտրանքային տարբերակների օգտագործում),

գ) սեփական գոյության շարունակականության իրականացման կարողություն:

5. ***Բարի և չար***: Զուտ բարոյագիտական կատեգորիաներ են, որոնք աշխատում են նաև տնտեսագիտության մեջ: Համարվում է բարոյականության առաջին զույգային կատեգորիան, որովհետև դրանցով են տարբերվում վարքագծի բարոյական և անբարոյական, պատասխանատու և անպատասխանատու կողմերը, խիղճն ու անխղճությունը, ամոթն ու անամոթությունը: Բարին ու չարը ազատ վարքի, արարքի գնահատականներ են իդեալի հետ ունեցած համեմատության մեջ: Իդեալը արժեքային (նորմատիվ) բնույթ ունեցող իդեալականացված պատկերն է, որը սահմանում է անհատի (սոցիալական խմբի, ազգի, հասարակության) գործունեության բնույթը, ուղղվածությունը, կենսակերպը: Իդեալը պատկերացումն է կատարյալ և ցանկալի ապագայի, լավագույն հեռանկարի մասին, մարդու ուղե-

ցույց աստղը (Լ. Տոլստոյ): Իդեալը վերջնական նպատակն է, կատարելության այն կերպը, որին ուղղված է մարդու հայացքը և որին հասնելու ձգտումն էլ իմաստ է տալիս նրա կյանքին:

Բարին այն արարքը, գործողությունն է, վարքագիծը, որը միտված է իդեալին, մոտեցնում է իդեալին, համապատասխանաբար՝ չարն այն արարքն է, վարքագիծը, գործողությունը, գործունեությունը, որը հեռացնում է իդեալից: Բարու երկու ըմբռնում գոյություն ունի՝ ***հարաբերական և բացարձակ***: Հարաբերական բարին այն է, ինչը մարդու համար լավ է, հաճելի, դրական, արժեքավոր: Բացարձակ բարին այն է, ինչը տվյալ ժամանակաշրջանում դրական է, կարևոր ու նշանակալից, արժեքավոր բոլորի համար: Բարին նաև անշահախնդիր արարքն է, արարքների համախմբությունը, որոնք մարդկանց միավորում են մեկ ընդհանուր գաղափարի շուրջ: Բարին նաև անշահախնդիր օգնությունն է, «ողորմությունը գաղտնաբար», արարքի կատարումն առանց որևիցե շահախնդրության:

Չարը, բնականաբար, այս ամենի բացակայությունն է կամ բարուն հակառակ կանգնելը: Վաղուց է հաստատվել այն իրողությունը, որ բարին օգտակար է, չարը՝ վնասակար:

Մասնավոր սեփականության առաջացմամբ բարին նույնացվել է բարիքի, ունեցվածքի, հարստության հետ: Սեփականությունը պահպանելը, ավելացնելը բարիք է համարվել, կորցնելը, մսխելը՝ չարիք, առանձին երկրներում մսխողներին ենթարկել են պատասխանատվության: Բայց բարին սեփականության, ունեցվածքի և օգտակարության հետ նույնացնելը մի շարք հարցեր է առաջացնում.

ա) ի՞նչ ճանապարհով է ձեռք բերվել կամ ստեղծվել սեփականությունը,

բ) ո՞ւմ և ինչի՞ն է օգտակար:

Այստեղից էլ խնդիրը, ո՞ր սեփականությունն է բարու մակարդակին բարձրացված բարիք: Անշու՛շտ, սեփական աշխատանքի, մտքի, ստեղծագործության, ինչու չէ նաև հմտության արդյունքում ստեղծածը, որը ծառայում է ի՛ր և ընտանիքի բարեկեցությանը, իսկ սեփականատերն օրինակելի քաղաքացի է, վճարում է հարկերը, զբաղվում է բարեգործությամբ՝ առանց աղմուկի և գովազդի, ստեղծում է աշխատատեղեր, վճարում աշխատավարձ, արտադրած ապրանքը

որակյալ է, համեմատաբար էժան, սպառողները գերադասում են նրա արտադրանքը մյուսների արտադրանքից, ներմուծվածից:

Հաճախ բարի է համարվում այն, ինչն օգտակար է, ինչը ծառայում է մարդու պահանջմունքների բավարարմանը: Այս մոտեցումը վիճարկելի է, որովհետև վերանում են բարու և չարի գնահատման չափանիշները, որովհետև անպատասխան է մնում «ո՞ւմ և ինչի՞ համար է օգտակար» հարցադրումը: Պահանջարկված, սպասելի ու մարդկայնորեն ցանկալի օգտակարն է բարին:

6. ***Երջանկություն: Երջանկությունը հաճույքի ուժեղ զգացումն է, ուրախության բացարձակ վիճակը, նպատակին հասած լինելու բավարարվածության զգացումը,*** կատարածի, ձեռքբերածի գիտակցումն ու ապրումը կամ տվյալ պահի դրական ապրումների ամբողջությունը:

Երջանկությունն ապրումների համախմբությունն է, որը կապվում է սեփական կյանքի իմաստի դրական գնահատականի հետ: Բովանդակային առումով երջանկության ըմբռնման մեջ առանձնացվում է երկու կողմ.

- այն, ինչը պայմանավորված է մարդով, անձով,
- այն, ինչը պայմանավորված չէ մարդով, նրա գործունեությամբ:

Առանձին անհատի վերաբերմամբ երջանկությունը բարոյական առաքինությունն է: Այդ երկուսի փոխհարաբերության հետ կապված առանձնացվում են երջանկության հետևյալ ըմբռնումները.

1. Էվդեմոնիստական (երջանկապաշտական), որում երջանկությունը հանգեցվում է.

ա) հաճույքին, որին անվանում են հաճոյապաշտական (հեդոնիզմ),

բ) օգուտին, հաջողությանը, օգտակարությանը, որին անվանում են օգտապաշտական (ուտիլիտարիզմ),

գ) տառապանքի բացակայությանը մարմնի և անվրդովությունը հոգու համար, որին հույները անվանում էին ատարաքսիա:

2. Ստոիկյան, ըստ որի՝ երջանկությունը ո՛չ անհատական ճակատագրով է պայմանավորված, ո՛չ էլ կյանքի կոնկրետ հանգամանքներով, այլ ապրելակերպի բնույթով, որտեղ նույնական են երջանկությունը և առաքինությունը: Երջանկությունը հոգու հանգստավետության և անխռովության, բարոյական ինքնակատարելագործման

մեջ է: Հարստությունը, աղքատությունը ունեցվածքի մեջ չէ, այլ հոգու: Հարուստ է նա, ով ուրախ է իր ունեցածով:

3. Սկեպտիկյան, ըստ որի՝ պետք է ազատվել բոլոր սուբյեկտիվ պատկերացումներից, որևէ հստակ դատողությունից, մնալ «անդեր» և ամենի ինչի մասին դատել՝ «Սա այդպես չէ, բայց այնպես էլ չէ» կամ «Սա ոչ այդպես է, ոչ այդպես չէ»: Նման մոտեցման դեպքում առաջանում է աֆազիա (վիճակ, երբ առարկաների մասին ոչինչ ասել հնարավոր չէ), հետո՝ ատարաքսիա (անխռով, անդորր վիճակ), այնուհետև ապատիա՝ (խաղաղություն, անկրքություն), որը հոգուն ապահովում է երջանկություն:

4. Արիստոտելյան, ըստ որի՝ բարոյական առաքինությունը և՛ կյանքի ուղի է, և՛ արդյունք, հետևաբար՝ երջանկության կարևորագույն տարբերակ:

Փողը, նյութական ապահովվածությունը մարդուն երջանիկ դարձնո՞ւմ են: Պատասխանը միանշանակ չէ: Փողը կարևոր գործոն է: Սիրով, նվիրվածությամբ բոլոր հարցերը չես լուծի, մասնավորապես՝ երեխաների ապրուստի, բուժման, եթե չափահաս են ու սովորող՝ ուսման վարձի և այլն: Փողով թվարկված բոլոր հարցերը կլուծես, դեռ մի բան էլ ավելի: Բայց, այնուամենայնիվ, բոլոր հարցերը չես լուծի, հակառակ դեպքում, փող ունեցող բոլոր ընտանիքները երջանիկ կլինեին (հաստատ այդպես չէ): Երջանկությունը փողի՞ մեջ է, հավանաբար՝ ոչ:

Անշուշտ, փողը ապահովվածություն է, անկախություն, հոգսազուրկ կյանք՝ նյութական իմաստով, աշխարհ տեսնել, ուզածիդ պես կենցաղդ ու հանգիստդ կազմակերպել և այլն: Բայց դարձյալ հարցը կրկնենք. փողի մե՞ջ է երջանկությունը, ո՛չ և դարձյալ ո՛չ: Հարցրե՛ք մեր գործարարներին՝ բոլո՞րն են երջանիկ. դժվար: Հետևաբար՝ դարձյալ հարցնենք՝ ի՞նչ է փողը. «ձեռքի կե՞ղտ», ինչպես ասում էին իմ սերնդակիցների ծնողները, իհարկե ո՛չ, երջանկություն ապահովող միջո՞ց, դարձյալ ո՛չ, պարզապես բազմաթիվ շատ ավելի կարևոր բաղադրիչների կողքին (սեր, նվիրվածություն, հավատարմություն, ազնվություն, գնահատվածություն, կյանքի լիարժեքության ըմբռնում, բարոյական վեհ արժեքներով ապրելու ձգտում) ևս մեկ բաղադրիչ (փողի մասին մեր զրուցը դրանով չի ավարտվում):

7. ***Արդարություն, ազնվություն, հավասարություն:*** Տնտեսության մեջ և տնտեսական հարաբերություններում, իսկ տեսականորեն նաև բիզնեսում կարևոր բարոյական արժեքներ են դառնում ազնվությունը, արդարությունը, հավասարությունը, փոխադարձ վստահությունը, որովհետև շուկայական հարաբերություններում առանց թվարկված որակների շատ առաջ չես գնա, հաջողության չես հասնի (ժամանակավոր՝ գուցե): Եվրոպական և արևելյան մի քանի երկրներում նման հարցերը գրեթե լուծված են: Դրանց որոշ ձեռնարկություններում, գործարաններում արտադրանքի ինքնարժեքը ցածր է, որովհետև թանկ նստող դատական քաշքշուկների մեջ չեն մտնում, այդ ոլորտին պատկանող մասնագետներ չեն պահում:

Ազնվությունը սերտորեն կապվում է անաչառության (օբյեկտիվության) հետ: Ազնիվ մարդը ճշմարտախոսն է, պարտքի, պատասխանատվության գիտակցողն ու կատարողը: Ազնվությունը հավատարմությունն է, հուսալիությունը, բարեխղճությունը: Ազնիվ մարդը արժանապատիվ ու հպարտ մարդն է: Ազնվությունը նաև իր նկատմամբ շիտակ, անկեղծ լինելն է: Ազնիվը վստահելի մարդն է, որի հետ կարելի է ճանապարհ գնալ, աշխատել, կնքել գործարքներ, լինել գործընկեր, ով երբեք չի խաբի, դժվարության պահին չի լքի:

Ազնվությունը հենվում է փոխադարձ ***վստահության*** վրա: Տնտեսական գործունեության մեջ, բիզնեսում վստահության գործոնը էական է: Բազմաթիվ գործարքներ կատարվում են փոխադարձ վստահության հիմքի վրա, մինչդեռ վստահությունը կորցրած գործարարի հետ գործարքներ չեն կատարվում, «սեղան չեն նստում», «մի կտոր հաց չեն կիսում»:

Արդարությունը արարքի բովանդակության և հասարակական կարծիքի կողմից դրան տրված գնահատականի համապատասխանության չափն է: Լինելով բարոյական կատեգորիա, արդարությունը միաժամանակ սերտորեն կապվում է հասարակության սոցիալ-տնտեսական ոլորտի, գաղափարախոսության, իրավունքի հետ:

Արդարությունը ներառում է.

ա) իրավունքի հավասարություն: Մարդիկ պետք է հավասար լինեն օրենքի առջև, և այդ հավասարությունը պետք է ամրագրվի օրենքով,

բ) պարտականությունների հավասարություն,

գ) արդար պատիժ հասարակական կարգը խախտողներին:

Շատ հաճախ արդարության պահանջը դառնում է հավասարության պահպանման պահանջ, այստեղից էլ. «Վարվի՛ր դիմացինիդ հետ այնպես, ինչպես նա է քեզ հետ վարվում»: Այս մոտեցումը Համմուրաբիի և Մովսեսի օրենքներում հանդես է եկել արդար հատուցման ձևով, որը հնչում է հետևյալ կերպ. «Ական ընդ ական, ատամն ընդ ատաման», այսինքն՝ կոտրել են ատամդ, պետք է կոտրես կոտրողի ատամը, հանել են աչքդ, պետք է հանես հանողի աչքը: Եթե սպանել են հորը, ապա որդին պետք է սպանի սպանողին կամ նրա հորը, իսկ եթե հայրը չկա, ապա ազգակցությամբ ամենամերձավորին: Սա կոչվում է հավասարության սկզբունք, որը հանգում է վրիժառությանը՝ մեկին մեկ մոտեցմամբ: Այս մոտեցումը երբեմն համարում են արդար հատուցման սկզբունք և անվանում «թալիոնի օրենք», որովհետև ծագում է լատինական «թալիոնա» բառից, որը նշանակում է «հատուցում»: Արդար հատուցման սկզբունքը գործել է նաև տնտեսական հարաբերություններում՝ պարտքի և վերադարձի հավասարության սկզբունքով (պարտք ես տվել տաս կիլոգրամ ցորեն՝ ետ ես վերցնելու տաս կիլոգրամ):

Հինկտակարանային թալիոնի օրենքին փոխարինեցին նոր կտակարանային «չարին հակառակ մի՛ կանգնիր», «մի՛ դատիր», «սիրի՛ր մերձավորիդ...», «սիրի՛ր թշնամուդ» պատվիրանները:

Ժամանակակից աշխարհում արդարությունը՝ որպես բարոյական զգացում, հանդես է գալիս մի դեպքում անարդարության դեմ պայքարի, իսկ մյուս դեպքում՝ արդարության հաստատման ձգտման ձևերով: ***Արդար է համարվում այն արարքը, որը բավարարում է հիմնավորված սպասելիքները:***

Արդար է համարվում օրենքի պահպանումը, յուրաքանչյուրին ըստ արժանիքի հատուցումը, պարտականությունների կատարումը, օբյեկտիվ գնահատական տալը և որոշում կայացնելը: Արդարությունը ենթադրում է կանոնների առկայություն և արդար է համարվում այն արարքը, գործարքը, որն իրականացվում է կանոնների շրջանակում:

Արդարության սկզբունքի բովանդակային գնահատման մեջ ամենակարևորը դառնում է հավասարության սկզբունքի պահպանումը, որը ժամանակ առ ժամանակ ձեռք է բերում նոր իմաստ և արտահայտվում իրավաբարոյական պահանջներում և պատվիրաններում:

Արդարությունը սոցիալ-բարոյական և իրավական այն արժեքներից է, որը պետական իշխանությունների միջոցով կարգավորում է մարդկանց փոխհարաբերությունը բաշխման և վերաբաշխման ոլորտում:

Տնտեսական հարաբերությունների ոլորտում առանձնացվում է արդարության չորս հայեցակարգ.

1. Էգալիտար (ֆրանս.՝ egalite-հավասարություն), ըստ որի՝ մարդկանց միջև գոյություն չունի այնպիսի տարբերություն, որը կարդարացնի անարդար, անհավասար մոտեցումը: Յուրաքանչյուր մարդ պետք է հավասար չափաբաժնով բարիք և բեռ ստանա:
2. «Կապիտալիստական (շուկայական) արդարություն», ըստ որի՝ բարիքների բաշխումը պետք է տեղի ունենա անհատական ներդրման չափով:
3. «Կոմունիստական արդարություն», որը ձևակերպված է «Աշխատանքը ըստ կարողությունների, բարիքը՝ ըստ պահանջմունքների» կարգախոսով:
4. ***Ջ. Ռոուլզի*** (1921-2002) հայեցակարգ, որում նա առաջադրում է նաև հետևյալ գաղափարները.

Սոցիալ-տնտեսական անհավասարությունը պետք է այնպիսի համակարգի մեջ դնել, որ կարողանա բավարարել երկու պայման.

- ծառայի յուրաքանչյուրի օգուտի համար,
- վերաբերի այնպիսի մասնագիտությունների և պաշտոնների, որոնք բաց են բոլորի համար:

Ռոուլզի մոտ արդարությունը հանդես է գալիս որպես հավասարության և անհավասարության չափ: Մարդիկ պետք է հավասար լինեն սոցիալական բարիքների բաշխման ոլորտում, թեև արդար է նաև այնպիսի անհավասար բաշխումը, որում շահում են բոլորը:

Հարցեր կրկնության համար

1. Բացատրեք «տեսություն», «գիտության արտացոլման օբյեկտ», «գիտության ուսումնասիրության առարկա», «մեթոդ», «մեթոդաբանություն» հասկացությունները:
2. Բացատրեք «օրենք» և «կատեգորիա» հասկացությունները:
3. Թվարկեք փիլիսոփայության օրենքները և կատեգորիաները:
4. Մեթոդաբանական ի՞նչ դեր են կատարում փիլիսոփայության օրենքներն ու կատեգորիաները տնտեսագիտության մեջ:
5. Ի՞նչ է սեփականությունը, ի՞նչ մոտեցումներ գոյություն ունեն սեփականության նկատմամբ, որո՞նք են մտավոր սեփականության առանձնահատկությունները:
6. Ի՞նչ է հարստությունը, որո՞նք են հարստության նկատմամբ մոտեցումները:
7. Ի՞նչ է աշխատանքը, ժամանակի ընթացքում ինչպե՞ս է փոխվել վերաբերմունքը աշխատանքի նկատմամբ:
8. Ի՞նչ է ազատությունը, որո՞նք են ազատության փիլիսոփայական և տնտեսագիտական մոտեցումների առանձնահատկությունները:
9. Ի՞նչ են բարին և չարը, ինչպե՞ս են դրանք աշխատում տնտեսագիտության մեջ:
10. Ի՞նչ է երջանկությունը: Փողը մարդուն երջանիկ դարձնում է, թե՝ ոչ:
11. Որո՞նք են «արդարություն», «ազնվություն», «հավասարություն» կատեգորիաների ազդեցության փիրույթները տնտեսագիտության մեջ:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՑՈՒԹՅԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ: ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

*4.1. «**Տնտեսական կեցություն**» հասկացությունը*

Մինչև բուն թեմային անցնելը կատարեմ մի քանի նախնական նկատառումներ.

1. Այս (գլուխ IV) և վերջին (գլուխ VIII) բաժիններում հաճախ են հիշատակվելու մարքսյան (մարքսիստական) տնտեսագիտական-փիլիսոփայական հայեցակարգի առանձին դրույթներ, մտքեր, հասկացություններ, ձևակերպումներ: Համեմատելով այլ տնտեսագիտական-փիլիսոփայական, մշակութաքաղաքակրթական հայեցակարգերի հետ, երբեմն նախապատվությունը տրվելու է մարքսիզմին: Այդ ամենը բոլորովին չի նշանակում կամ դրանցից չի բխում, որ տողերիս հեղինակը մարքսիստ փիլիսոփա է կամ ներկայացնում է մարքսիզմը (թեև մարքսիստ լինելը ո՛չ արատ է, ո՛չ մեղք): Մնում եմ այն համոզմանը, որ մարքսիզմում աղանդավորական ոչինչ չկա (ինչպես Լենինն էր ժամանակին բնութագրում), այլ բխում է փիլիսոփայության պատմության ընդհանուր տրամաբանությունից և փորձ է պատասխանել դարերի ընթացքում փիլիսոփայության ներսում ձևավորված և սպառիչ պատասխան չստացած մի շարք առանցքային հիմնահարցերի: Ավել՛ին, համոզված եմ, որ սոցիալական փիլիսոփայության, նրա բաժին հանդիսացող տնտեսագիտության փիլիսոփայության մեջ Մարքսի որոշ պնդումներ, ձևակերպումներ (որոնց մասին խոսք կլինի համապատասխան բաժիններում) ներդրում են և իրենց ուժը պահպանել են նաև մեր օրերում:

2. Տնտեսական կեցությամբ տնտեսական գիտակցության պայմանավորվածության հարցը, այսինքն այն, որ տնտեսական կյանքի

պայմանները ազդում են մարդկանց գիտակցության վրա, կամ որ նույնն է՝ մադկանց ապրելակերպը շատ դեպքերում պայմանավորում է նրանց գիտակցությունը, մտածողությունը և աշխարհայացքը հայտնի էր մինչև Մարքսը և անկախ Մարքսից: Նման մտքերի կարող ենք հանդիպել Ժ.-Ժ. Ռուսոյի, Դ.Դիդրոյի, Պ. Հոլբախի, XIX դարի հայ մտածողներ Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Ռաֆֆու, Ռ. Պատկանյանի, Մ. Մամուրյանի և այլոց գործերում: Նույնիսկ ամենօրյա-առօրյա ընկալման մակարդակում էլ է պարզ, որ թոշակառուն, իր օրվա հացը մի կերպ վաստակողը և մեծահարուստ-օլիգարխը բոլորովին այլ կերպ են մտածում, բոլորովին այլ պատկերացում ունեն արդարության ու անարդարության, լավի ու վատի մասին: Մարքսի ծառայությունն այս հարցում այն էր, որ տնտեսական կեցության և տնտեսական գիտակցության փոխհարաբերության հարցը բարձրացրեց հայեցակարգային-մեթոդաբանական մակարդակի և ձևակերպեց պատմության մատերիալիստական ըմբռնումը, որի մասին խոսելու ենք:

3. 2005 թ. «Вопросы экономики» հանդեսի խմբագրությունը կազմակերպեց լայն քննարկում Մարքսի տեսական ժառանգության գնահատման շուրջ: 2018 թ. լրացավ Մարքսի ծննդյան 200-ամյակը: Երկու դեպքում էլ բազմաթիվ հայտնի տնտեսագետներ, փիլիսոփաներ իրենց ելույթներում և հոդվածներում բարձր գնահատեցին Մարքսի տեսական, տնտեսագիտական, փիլիսոփայական ժառանգությունը, ինչը ցույց է տալիս, որ Մարքսի տեսական զինանոցը չի սպառվել, ավելին՝ շատ միջոցներ աշխատող և արդիական են նաև արդի աշխարհի համար: Օրինակ՝ հեղինակներից մեկը վերլուծելով համաշխարհային և ռուսական տնտեսության մեջ դիտվող ճգնաժամային երևույթները, դրանց առաջացման պատճառները որոնում է արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև գոյություն ունեցող հակասություններով, հակասություններ, որոնք ձևավորվել են ուշ կապիտալիզմի (վերջին 20-30 տարիներ.-Ա. Ս.) ժամանակաշրջանում: Նրա կարծիքով ուշ կապիտալիզմի ընդհանուր օրինաչափությունն այն է, որ «...***շուկայի անտեսանելի ձեռքը քանի գնում, այնքան ավելի շատ է ցույց տալիս ոչ այն կողմը***» [42]:

---

[42] ***Бузгалин А. В.,*** Закат неолиберализма (к 200- летию со дня рождения Карла Маркса), Вопросы экономики. М., 2018, № 2, С. 32.

Նույն հեղինակի կարծիքով մարքսիզմի տեսությունն ու մեթոդաբանությունն աշխատում է նաև այսօր, իսկ Մարքսի «Կապիտալ» աշխատությունը ժամանակակից պայմաններում կրթագիտական գործընթացների մաս դառնալու մեծ հնարավորություն ունի[43]:

4. Ուսումնական ձեռնարկում մարքսիզմ հիշեցնող հասկացությունների օգտագործումը (օրինակ՝«արտադրողական ուժեր», «արտադրական հարաբերություններ», «հասարակական տնտեսական ֆորմացիա», «արտադրության եղանակ» և այլն) պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանք բովանդակային առումով ավելի ծանոթ են ընթերցողին, հասկանալի, կողմնորոշիչ: Դրանց փոխարինող համարժեք հասկացություններ դեռ չեն ստեղծվել, իսկ ստեղծվածները ծանոթ չեն հանրության լայն շրջանակներին:

Այժմ բուն թեմայի մասին:

Փիլիսոփայության մեջ ***կեցության***՝ որպես բացարձակ իրականության, ըմբռնումը մտցրել է ***Պարմենիդեսը*** (մ.թ.ա. 540-480), ըստ որի կեցությունը չի առաջանում, չի ոչնչանում, միասնական է, ամբողջական, անշարժ, գտնվում է տարածությունից և ժամանակից դուրս, գնդաձև է, փակ է, իր մեջ պարուրում, նույնիսկ բարուրում է երկիրը և հեռու պահում ցնցումներից, չի զգում որևէ մեկի և ոչնչի կարիք: Կեցությունը Կատարելությունն է, Արդարը, Բարին, Գեղեցիկը: Այն հնարավոր է ճանաչել միայն ինտելեկտուալ ինտուիցիայի միջոցով: Կեցության որոնումը մարդու կողմից դիտվուն է որպես սեփական բնակարանի որոնում, անտունության և անտերության հաղթահարում: Կեցության պարմենիդեսյան ըմբռնումը հետագայում զարգացրեցին Դեկարտը, Սպինոզան, XX դարում՝ էքզիստենցիալիզմը, հետմոդեռնիզմը:

Գոյություն ունի նաև կեցության առօրեական ըմբռնում, որը ***լինելն է***, գոյություն ունենալը: Փորձենք այս երկու ըմբռնումները համատեղել և տալ համեմատաբար մատչելի սահմանում, ըստ որի ***այն ամենը, ինչը գոյություն ունի ինքնին և իր գոյությունը ոչ մեկով և ոչնչով պայմանավորված չէ, կոչվում է կեցություն,*** որը ըստ Բ.

[43] Տե՛ս ***Бузгалин А. В.***, «Капитал» как ключ к решению современных экономических проблем, Вопросы экономики. М., 2019, № 6, էջ 142-148:

Սպինոզայի (1632-1677) ինքնապատճառ է (cauza sui): Եթե կեցություն ասելով հասկանում ենք ողջ գոյավորը, ապա կարող ենք առանձնացնել հետևյալ ձևերը.

1. ***Բնության կեցություն***, որը հանդես և գալիս առաջին բնության (մարդուց առաջ, մարդուց դուրս ու մարդուց անկախ գոյություն ունեցող ողջ աշխարհը) և երկրորդ բնության՝ մարդու ստեղծած արհեստական առարկաների (artefact-երի) ձևերով:
2. ***Մարդու կեցություն***, որը դրսևորվում է մարմնի և հոգու (հոգեկան, ներաշխարհ) կեցության ձևերով:
3. ***Հասարակության կեցություն***, որը ողջ սոցիումն է՝ իր բազմազան ոլորտներով, որոնց մեջ առանձնանում են տնտեսական, սոցիալական, քաղաքական, հոգևոր ձևերը:
4. ***Ազգային կեցություն***, որը ազգային կյանքի բոլոր ոլորտների ամբողջությունն է:

«***Տնտեսական կեցությունը***» ***հասարակական կյանքի տնտեսական ոլորտի ողջ համալիրն է***:

Տնտեսությունը բարիքների արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման ընթացքում տնտեսական միավորների միջև ձևավորված կապերի և հարաբերությունների արդյունքում առաջացած համակարգի ընդհանրական անվանումն է: Տնտեսությունը հասարակության տնտեսական գործունեությունն է՝ արտադրության, բաշխման, փոխանակման, սպառման հարաբերությունների ամբողջությունը: Արտադրությունը մարդկանց համատեղ նպատակաուղղված գործունեությունն է, որն իրականացնում է.

ա) գոյության նյութական պայմանների,

բ) մշակույթի,

գ) մարդկանց որպես սոցիալական էակների,

դ) սոցիալական կապերի և հարաբերությունների արտադրություն և վերարտադրություն (քանի որ արտադրությունը անընդհատ կրկնվող և նորացվող գործընթաց է, այդ պատճառով կոչվում է նաև «վերարտադրություն»):

Հասարակության զարգացման ընթացքում տեղի են ունենում աշխատանքի հասարակական բաժանումներ, որոնց արդյունքում մարդկանց մի մասը մասնագիտանում է **նյութական բարիքների**

արտադրության (բանվոր, գյուղացի, սպասարկման որոշակի ոլորտների աշխատող), մյուսը՝ **գիտելիքի**, **արժեքների**, **իդեալների**, **ամբողջության մեջ՝ ողջ հոգևոր մշակույթի** (մտավորական, հոգևորական), երրորդը՝ **մարդկանց սոցիալականացման** (դաստիարակ, մանկավարժ, ուսուցիչ, դասախոս) արտադրության և վերարտադրության մեջ:

Տնտեսական իմաստով արտադրությունը ապրանքների ստեղծման, բնության հետ փոխազդեցության, բնական ռեսուրսների (միջոցների) վերափոխման որոշակի գործընթաց է՝ մարդկանց նյութական պայմանները բարելավելու համար: Ավելի պարզ՝ արտադրությունը տնտեսության այնպիսի կազմակերպում է, երբ ապրանքները արտադրվում են փոխանակության, սպառման, վաճառքի համար: Հաջորդ փուլը բաշխումն է, որի անհրաժեշտությունը բխում է աշխատանքի հասարակական բաժանումներից (ով ինչով է զբաղվում, ինչ մասնագիտացում ունի): Բաշխումն իրականացվում է փոխանակության միջոցով, երբ ապրանքը մի տիրոջից անցնում է մյուսին: Սպառումը ապրանքների օգտագործումն է՝ պահանջները բավարարելու համար: Տնտեսական փուլերի իրականացման ընթացքում են ձևավորվում տնտեսական հարաբերությունները: Ըստ սոցիալական հատկանիշների առանձնանում են.

- սոցիալ-տնտեսական,
- տեխնիկա-տնտեսական,
- կազմակերպա-տնտեսական հարաբերություններ[44]:

Տնտեսության ոլորտում են ձևավորվում հետևյալ գործոնները.

1. Արտադրողական ուժեր կամ արտադրության տնտեսական գործոններ:
2. Արտադրական հարաբերություններ, որոնց հիմքում ընկած են սեփականատիրական հարաբերությունները: Արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միասնությունը ձևավորում է արտադրության եղանակը: Ըստ Կ. Մարքսի արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև գոյություն ունի հակասություն.

   ա) արտադրողական ուժերն ավելի արագ են զարգանում, իսկ արտադրական հարաբերությունները՝ ոչ,

[44] Տե՛ս ***Тяпин И. Н.***, Философия экономики, էջ 175:

բ) մինչև կոմունիստական հարաբերությունների հաստատումը, արտադրությունն ունի հասարակական, իսկ յուրացումը՝ մասնավոր բնույթ: Ըստ Մարքսի՝ այդ հակասությունների սրման արդյունքում են տեղի ունենում սոցիալական հեղափոխություններ, որոնց արդյունքում իրենց սպառած հասարակական տնտեսական ֆորմացիաները (արտադրության եղանակները) փոխարինվում են նորերով:

Հասարակության գլխավոր արտադրող ուժը ***մարդն*** է: Առանձնացվում է մարդու տնտեսական գործունեության երկու ձև՝ արտադրողական և ձեռնարկատիրական: Արտադրության մյուս գործոնների մեջ մտնում են ***աշխատանքի առարկան*** (այն ինչին ուղղված է աշխատանքը)՝ բնության մի մասը, որը ներառված է տնտեսական գործունեության ոլորտ և ***աշխատանքի միջոցները*** (գործիքներ), որոնցով ազդում են աշխատանքի առարկայի վրա:

Աշխատանքի միջոցների հավաքական անվանումը «տեխնիկա» է: Մեզ հետաքրքրող տեսանկյունից ***տեխնիկան գործիք է, միջոց, որը ստեղծում և օգտագործում է մարդը՝ բնությունը վերափոխելու և իր պահանջները բավարարելու համար***: Տեխնիկայի զարգացումն անցնում է երեք փուլ՝ ***ձեռքի աշխատանքի գործիքներ, մեքենաներ, ավտոմատներ***: Առաջին փուլն սկսում է նախնադարից և հասնում XVII դար, երբ աշխատող հիմնական ուժը մարդն էր, իսկ գործիքը՝ նրա ֆիզիկակական հատկությունները լրացնող միջոցները: Մեքենաների իշխանությունը սկսում է XVII դարից և հասնում XX դարի երկրորդ կես, որից հետո անցում է կատարվում ավտոմատների իշխանության ժամանակաշրջան: Տեղեկատվական տեխնոլոգիաների ժամանակակից աշխարհում գլոբալ հիմնախնդիր է դառնում մարդ-տեխնիկա փոխհարաբերությունը: Պատմական փորձը ցույց է տալիս, որ ժամանակի ընթացքում տեխնիկան կարծես կտրվում է իր ստեղծողից, ձեռք բերում զարգացման սեփական տրամաբանություն և պայքարում մարդու դեմ (արարվածը ըմբոստանում է արարչի դեմ և սպառնում ոչնչացնել նրան): Այսօրվա տեխնիկան դարձել է այն, ինչը որևէ մեկի ցանկացածը չէ (սրտովը չէ): Տեխնիկայի ստեղծումը մշակութային և քաղաքակրթական երևույթ է, բայց տեխնիկայի լիակատար հաղթանակը նշանակում է մշակութի և քաղաքակրթության ոչնչացում:

Արտադրության հասարակական բնույթի պատճառով կարևորվում է արտադրության եղանակի սոցիալական տիպը, որը որոշվում է արտադրության միջոցների նկատմամբ ունեցած սեփականության ձևով: Տնտեսական ոլորտի զարգացումը ենթադրում է որոշակի օրենքների հետ հաշվի նստել, որոնցից են արժեքի, գնագոյացման, ժամանակի խնայողության և այլն:

Հայտնի տնտեսագետ ***Յոզեֆ Շումպետերը*** (1883-1950) գտնում է, որ տնտեսական աճ և տնտեսական զարգացում հասկացությունները նույնը չեն: Ինչքան ուզում եք իրար կողքի շարեք փոստային կառքերը, միևնույն է, դրանց գումարից գնացք չեք ստանա: Տնտեսական աճը քանակական բնութագիր է, արտադրության մեծացում, նույն ապրանքների և ծառայությունների օգտագործում ժամանակի մեջ: Տնտեսական զարգացումը դրական որակական փոփոխությունն է՝ նորարարություն արտադրության մեջ, արդյունքներում, ծառայություններում, կառավարման մեջ, ողջ տնտեսությունում, այսինքն նորամուծություն (ինովացիա):

Տնտեսության զարգացման գրավական են համարվում.

- ժողովրդավարության հաստատումը,
- կոռուպցիայի կրճատումը կամ վերացումը,
- տնտեսության կայուն աճը,
- աշխատավարձի բարձրացման պարբերականությունը,
- բնակչության գնողունակության աճը,
- գործազրկության, տնտեսական ճգնաժամերի, ինֆլյացիայի նվազումը,
- նորագույն տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրումը,
- գիտելիքահենք տնտեսության ստեղծումը,
- բնակչության կյանքի որակի և մակարդակի բարելավումը և բարձրացումը,
- տնտեսության մրցունակության բարձրացումը,
- բնակչության մեկ շնչի հաշվով մարդկային կապիտալի արժեքի, դրա որակի արտադրողականության բարելավումը,
- համաշխարհային տնտեսության մեջ ներառվածության բարձրացումը,
- համաշխարհային ռեյտինգներում առաջընթացի ապահովումը,

- բնակչության յուրաքանչյուր շնչի համար ապրանքների հիմնական տեսակների արտադրության ավելացումը,
- մարդու ազատ ժամանակի ավելացումը,
- տնտեսության, բարոյականության, ազատական արժեքների կապի ապահովումը,
- էկոլոգիապես առողջ տնտեսության ապահովման աստիճանը և այլն:

Առանց տնտեսության արդիականացման, հասարակության ինստիտուցիոնալ կառուցվածքի ստեղծման, կատարելագործման և զարգացման, տնտեսությունը դեպի մարդը կողմնորոշելու (հումանիզմի) քաղաքականության՝ առողջ և առաջադիմող տնտեսություն ապահովել հնարավոր չէ:

*4.2. «**Տնտեսական գիտակցություն**» հասկացությունը*

Տնտեսական գիտակցությունը պատկերացումների, հասկացությունների, գնահատումների, տրամադրությունների համակարգ է, որի միջոցով իրականացվում է տնտեսական կեցության հոգևոր-պրակտիկ յուրացումը:

Տնտեսական գիտակցության առանձնահատկություններն են.

ա) նրա արտացոլման օբյեկտը տնտեսական կեցությունն է,

բ) գիտակցության հնագույն և տարածված ձևերից է,

գ) ունի հարաբերական ինքնուրույնություն, որը դրսևորվում է
- տնտեսական կեցությունից առաջ ընկնելու,
- տնտեսական կեցությունից հետ մնալու,
- տնտեսական կեցության վրա ազդելու ձևերով,

դ) ունի սեփական հիմնարար հասկացություններ, որոնցից են պահանջարկը, շահը, օգուտը, բարիքը, սեփականությունը և այլն,

ե) տնտեսական գիտակցության սուբյեկտը աշխատողն է, սպառողը, հարկատուն, սեփականատերը, գործարարը, մենեջերը, այլ կերպ՝ բոլոր նրանք, ովքեր ներառված են տնտեսական հարաբերությունների շրջագծի մեջ:

Տնտեսական գիտակցության միջուկը *տնտեսական մտածողությունն* է, որն իրականացնում է տնտեսական կեցության վերլուծություն և ուսումնասիրություն, հանդես է գալիս որպես ռեֆլեքսիա տնտեսական կեցության նկատմամբ:

Անհատի տնտեսական գիտակցության պարամետրերն են.

ա) վերաբերմունքը տնտեսական իրականության նկատմամբ,

բ) վերաբերմունքը սեփականության նկատմամբ,

գ) վերաբերմունքը տնտեսական գործերի կառավարման մեջ ունեցած սեփական մասնակցության նկատմամբ:

Տնտեսական գիտակցությունը շարժման մեջ դնողը պահանջմունքներն են: ***Պահանջմունքը ինչ-որ բանի նկատմամբ մարդու ունեցած կարիքն է***: Պահաջմունքները դասակարգվում են բնականի և սոցիալականի: Սոցիալականի մեջ մտնում են.

ա) տնտեսական պահանջմունքներ, որոնք ծնում են նյութական բարիքներ արտադրելու գիտակցման անհրաժեշտությունը,

բ) սոցիալ-քաղաքական պահանջմունքներ, որոնք բխում են վերնաշենքի (պետություն, հասարակական-քաղաքական կազմակերպություններ, ինստիտուտներ, գաղափարներ և այլն) նորմալ գործունեության գիտակցման անհրաժեշտությունից,

գ) հոգևոր պահանջմունքներ, որոնք պայմանավորված են մարդկանց արժեքային համակագը ձևավորելու գիտակցման անհրաժեշտությունից: Պահանջմունքների այս դասակարգումը, որին հանդիպում ենք խորհրդային գրականության մեջ, ավելի ամբողջական է, քան ժամանակին Մասլոուի այդքան թմբկահարված հոգեբանական բրգաձև դասակարգումը՝ ներքևից վերև սկզբունքով, ըստ որի պահանջմունքների սադղակի ներքևից առաջին աստիճանում գտնվում է սնունդը, այնուհետև՝ անվտանգությունը, ներգրավվածությունը խմբում, շրջապատի կողմից հանրային ճանաչումը և վերջին սանդղակում՝ ինքնիրացումը:

Պահանջմունքները շարժման մեջ դնողը շահերն են, որոնք միայն սոցիալական են և սուբյեկտիվ, որովհետև ունեն որոշակի կրողներ (անհատներ, խմբեր, դասակարգեր, հասարակություն, ազգ), թեև

բնույթով օբյեկտիվ են, որովհետև դրանք անտեսել կամ կամայականորեն փոխել չի կարելի[45]:

Տնտեսական գիտակցության մակարդակներն են.

1. ***Ամենօրյա-առօրյա***, որը հանդես է գալիս հասարակության ամենալայն շերտերի կենսական պայմանները արտացոլելու ձևով, որը բոլորից վաղ է առաջացել, ամենասերտ կապի մեջ է տնտեսական կեցության հետ և ամենազգայունն է: Այս ոլորտում է ձևավորվում *հասարակական կարծիքը*, որն արտացոլում է մարդկանց վերաբերմունքը տնտեսական կյանքում իրականացվող քաղաքականության նկատմամբ, ինչպես նաև տնտեսության ու մարդկանց կյանքի իրական վիճակի մասին եղած ընթացիկ պատկերացումներն ու տրամադրությունները:
2. ***Տեսական-կոնցեպտուալ (հայեցակարգային)***, որում հանդես են գալիս տնտեսագիտական տեսությունները, տնտեսությունը վերափոխելու ծրագրերը, հայեցակարգերը: Այս մակարդակը ներկայացնում են տնտեսագետ մասնագետները:

Այս երկու մակարդակները միմյանց կապող օղակը *փնտրեական փաստերն* են, որոնք տնտեսական սուբյեկտի կողմից արձանագրած տնտեսական կյանքի երևութներն ու իրադարձություններն են: Տնտեսական փաստին վերագրվող պահանջներն են ամբողջականությունը, համեմատելիությունը, հավաստիությունը և այլն: Այստեղ են մտնում նաև տնտեսագիտական վարկածները, որոնք դառնում են տնտեսական կյանքի ընդհանուր մոդելներ[46]:

Առանձնացվում են նաև տնտեսական գիտակցության ***հոգեբանական և գաղափարախոսական*** մակարդակները: Այս մակարդակներում են առանձնացում տնտեսական հոգեբանությունը և տնտեսական գաղափարախոսությունը: Տնտեսական հոգեբանության տարրեր են.

- տնտեսական հույզերը, տրամադրությունները,
- սպառողների ճաշակը, նախասիրությունները,

---

[45] Տնտեսական պահանջմունքների և շահերի մասին տե՛ս Տնտեսագիտության տեսություն, ուսումնական ձեռնարկ, խմբ. տ.գ.դ., պրոֆ. ***Գ. Ե. Կիրակոսյան***, տ.գ.թ., պրոֆ. ***Ի. Ե. Խլղաթյան***, էջ 61-81, ***Самсин А. И.***, Основы философии экономики, էջ 220-239:

[46] Տնտեսական փաստերի մասին տե՛ս ***Орехов А. М.***, Методы экономических исследований. Учебное пособие, էջ 29-32:

- տնտեսական հարաբերությունների կարգավորման ոլորտում ձևավորված և հասարակական հոգեբանության մակարդակ բարձրացած ավանդույթները, սովորույթները, վարքագծի ամրակայված ձևերը, առասպելները, պատրանքները, խորհրդանիշները,
- կամքը, ցանկությունները և այլն, որոնք կարող են լինել գիտակցված կամ ոչ:

Տնտեսական հոգեբանությունը նաև գիտություն է, որն ուսումնասիրում է մարդու գիտակցության, հոգեբանության մեջ և վարքագծում տնտեսական հարաբերությունների և պրակտիկայի արտացոլման առանձնահատկությունները:

Գաղափարախոսությունը հասարակական գաղափարների, տեսությունների, հայացքների ամբողջությունն է, որը սոցիալական իրականությունը արտացոլում և արտահայտում է որոշակի դասակարգի, սոցիալական, էթնիկական խմբի, հասարակության, ազգի վերաբերմունքը՝ հասարակական կյանքում իշխող հարաբերությունների նկատմամբ: Գաղափարախոսությունը մշակվում է մտավորականների, կուսակցական, քաղաքական գործիչների կողմից, իսկ նպատակը գոյություն ունեցող հարաբերությունների, պետական-քաղաքական հաստատությունների իմաստավորումն է, ամրապնդումը կամ փոփոխությունը:

Տնտեսական գաղափարախոսությունը համոզմունքների, պնդումների, գաղափարների ամբողջություն է, որում արտացոլվում է մարդկանց վերաբերմունքը տնտեսական կյանքի տարբեր ոլորտների և երևույթների նկատմամբ: ***Տնտեսական գաղափարախոսությունը հայացքների, պատկերացումների, գաղափարների որոշակի համակարգ է տնտեսության, նրա բնույթի, զարգացման հեռանկարների, իդեալների մասին:***

4.3. Տնտեսական կեցության և տնտեսական գիտակցության փոխհարաբերությունը: Տնտեսություն, քաղաքականություն և գաղափարախոսություն

Երբեմն այն անվերապահ պնդումն է կատարվում, թե՝ «Տնտեսությունը երբեք, ըստ էության, չի եղել բացարձակ առաջնային, որոշիչ՝ հասարակական կյանքի մյուս ոլորտների նկատմամբ»[47]: Երբեք չի կարելի ասել «երբեք»: Իհարկե լինում է: Վառ օրինակը XX դարի 90-ական թվականներին տնտեսական փլուզման հետևանք հանդիսացող զանգվածային գործազրկությունը, բնակչության սոցիալական թշվառացումը, արտագաղթն ու բարոյական անկումն էին մեր հանրապետությունում, որից դեռ այսօր էլ դուրս չենք եկել: Շատ դեպքերում տնտեսական կեցությունն է ծնում տնտեսական գիտակցությունը: Այս առիթով էլ խիստ հպանցիկ ներկայացնեմ տնտեսության և կրոնի փոխհարաբերության խնդիրը: Որպես կանոն կրոնական ուղղությունները, ենթաուղղությունները հանդես են գալիս որպես սոցիալական թշվառության, բողոքի պատրանքային լրացումներ, երբեմն նաև զինված պայքար սոցիալ-տնտեսական թշվառության դեմ: Կրոն ծնող և սնող կարևորագույն գործոններից է տնտեսականը: Աստվածորոնողականությունը նաև տնտեսական ճգնաժամերի ժամանակաշրջանում է ուժգնանում: Մեկ այլ կողմ էլ է դիտվել: Շատ կրոնական ուղղություններ, կազմակերպություններ այլ երկրներ իրենց քարոզչությունը լրացրել են նյութական, ֆինանսական օգնությամբ: Երբեմն մարդիկ ճարահատյալ ընդունել են այդ օգնությունը և դարձել տվյալ դավանության հետևորդ, անդամ: Մի զգալի մասի հավատը տևել է այնքան, որքան այդ օգնությունը: Այսպես է եղել մեզանում: Ահա թե ինչու XIX դարի Թուրքիայի հայության միջավայրում այդպիսի հումորատիպ, բայց իրերի իրական վիճակն արտահատող, թևավոր միտք էր շրջանառվում. «Այուրը վերջացավ, հավատն էլ հետը» (թրքերեն. «Ուն փիթտի, դին փիթտի»): Անշուշտ, հակառակ երևութն էլ է դիտվում, երբ ինքնագիտակցության մակարդակի բարձրացած հասարակական գիտակցությունը ուրվագծում, ուղղորդում,

---

[47] ***Тяпин И. Н.***, Философия экономики. С. 199.

պարտադրում է համապատասխան տնտեսական կեցություն ստեղծելու պահանջը, որը տեսության մեջ հանդես է գալիս նորմատիվ տնտեսագիտության ձևով, որը գիտելիք է ոչ թե այն մասին, թե ինչպիսին է տնտեսությունը, այլ թէ՝ ինչպիսին պետք է լինի:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ տնտեսության իշխող ձևերի փոփոխությունը հանգեցնում է տնտեսագիտական գիտելիքի փոփոխությանը: Ինչպիսին Անտիկ, միջնադարյան, Նոր ժամանակի տնտեսություններն էիր, այնպիսին էլ նշված ժամանակաշրջանների տնտեսական գիտակցությունն էր ու տնտեսագիտական միտքը: Բայց դա դարձյալ չի նշանակում, թե տնտեսագիտական միտքը միշտ հադիսացել է տնտեսական կյանքի հայելային արտացոլումը: Ոչ մի միտք միայն իր ժամանակաշրջանի իրողություններին կառչած չէ, այլ, ինչպես քիչ առաջ նշեցինք, առաջադրած նոր գաղափարներով, լուծումներով ազդել է տնտեսական կեցության վրա, ստիպել նրան առաջ շարժվել:

Սերտ կապ գոյություն ունի տնտեսության, տնտեսավարման եղանակի և հասարակական կյանքի մյուս ոլորտների միջև: Տնտեսավարման ձևերի փոփոխությունը փոփոխություն են առաջացնում սոցիալական, քաղաքական, հոգևոր ոլորտներում:

Ժամանակակից մարդն իր գործունեությունը սկսել է տնտեսավարման քոչվոր եղանակից, որի հիմնական ձևերն էին հավաքչությունը, որսորդությունը, ձկնորսությունը: Տնտեսավարման այդ ձևը պայմանավորել է հասարակության մինչնեոլիթյան ժամանակաշրջանի հավատալիքների համակարգը, որում կարևոր դեր է կատարել տոտեմիզմը: Այն ոչ միայն կենդանու պաշտամունք էր, այլև նախամարդու ցեղային ինքնագիտակցության արտահայտման ձև, աշխարհճանաչողություն, հասարակական հարաբերությունների սոցիալականացման (տաբուների համակարգի միջոցով), ինքնակազմակերպման պատմականորեն ձևավորված առաջին արտահայտություն: Կենդանուն չսպանելու արգելքը (տաբուն) տեղափոխվել է ցեղակցի, նրա ունեցվածքի, ամուսնացած կնոջ վրա: Տաբուները հետագայում դարձել են քաղաքակիրթ հասարակությունների համակեցության նորմեր, թափանցել տնտեսության ոլորտ:

Ի՞նչը ստիպեց մարդկանց հրաժարվել ազատ տեղաշարժի հնարավորությունից և ամուր կապվել հողի հետ. գոյության անապահովությունը: Ձևավորվեց տնտեսավարման նստակյաց ձևը (եղանակը), որի հիմքում ընկած էր ֆիզիկական աշխատանքը, մկանային էներգիայի օգտագործումը: Այս փուլում հիմնական տնտեսական արժեքներ են դառնում հողը և ջուրը: Պատահական չէ, որ Արևելքում առաջացած առաջին քաղաքակրթություններն իրենց բնույթով «ջրային» կամ «գետային» էին: Ջրի օգտագործումը ծնեց ոռոգման համակարգը, որի շինարարությունը պահանջում էր մարդկանց մեծ զանգվածների համատեղ աշխատանք: Աշխատանքի կազմակերպումը, մարդկանց մեծ խմբերի վրա հսկողության իրականացումը, ոռոգման համակարգի, հողի, տարածքի, նյութական ռեսուրսների, ապրանքների պաշտպանությունը դարձան պետության ստեղծման դրդապատճառներ: Հողի համար թափված արյունը, տարածքի վրա նույն էթնոսի՝ դարեր տևող համատեղ պատմական պրակտիկան, բնակության վայրը դարձրեցին հայրենիք:

Փոփոխություններ կատարվեցին ամուսնաընտանեկան հարաբերություններում (մայրիշխանություն՝ զանազան դրսևորումներով, հայրիշխանություն՝ նահապետական ընտանիքի կազմավորմամբ), աշխատանքի բաժանման և կազմակերպման ոլորտում (սեռատարիքային հատկանիշների հիմքի վրա), հավատալիքների համակարգում (ազգային-պետական կրոնների ձևավորում):

Քոչվոր և նստակյաց տնտեսավարման եղանակների պատմական ջրբաժանը նեոլիթյան հեղափոխությունն է (մ.թ.ա. VIII-VI հազարամյակներ, երբ մարդն անցում կատարեց նստակյաց կյանքին, զբաղվեց հողագործությամբ, անասնապահությամբ, կենդանիների ընտելացմամբ, հատիկաբույսերի մշակմամբ, որոնք հեղափոխական նշանակություն ունեցան քաղաքակրթության ստեղծման համար): Տնտեսավարման նստակյաց ձևի առաջացմամբ քոչվորությունը չվերացավ, այլ շարունակեց իր գոյությունը, որի առանձին տարրեր պահպանվել են նաև այսօր: Տնտեսավարման այդ երկու եղանակները ծնեցին ապրելակերպի և մտածողության համապատասխան ձևեր, որոնք ունեն արմատական տարբերություններ: Քոչվորի միտքը մակերեսային է, մտածողությունը՝ հատվածական, կողմնորոշված է դեպի երևույթը, բնակավայրը՝ իր անմիջական օգտակարության

տեսանկյունից: Նստակյացի միտքը հիմնարար է, խորքային: Քոչվորի կյանքը շարժուն է, որոշումներն ընդունում է արագ, որովհետև սխալը ճակատագրական հետևանքներ չի ունենում (եթե բնակության վայրը, արոտավայրը ճիշտ չի ընտրված, հոգ չէ, կարելի է տեղափոխվել այլ վայր): Նստակյացները որոշումները դանդաղ ու երկար ժամանակի համար են ընդունում (որովհետև ազգովի վայրից վայր տեղափոխվել չեն կարող): Հայրենիքի գաղափարը նստակյացներն են ստեղծում, քոչվորի հայրենիքը ողջ երկիրն է:

Քոչվորի պատկերացմամբ նստակյացը օտար է, թշնամի, որին կարելի է սպանել: Նստակյացի կարծիքով քոչվորը բարբարոս է, տարերային աղետ (հենց այդպես էին ներկայացնում մեր պատմիչները սելջուկ-թուրքերի, թաթար-մոնղոլների արշավանքները Հայաստան: Զարգացած միջնադարի հայ պատմիչների պատկերավոր արտահայտությամբ, այդ ցեղախմբերն ինչպես մորեխներ տարածվեցին երկրով մեկ և արմատից ոչնչացրին ամեն ինչ), որից պետք է պաշտպանվել, որոնցից ինչքան հեռու, այնքան լավ: Տեսնենք, թե այդ միտքն ինչպես է աշխատում հայ ժողովրդի պատմության հետ կապված:

Ըստ ***Գ. Ահարոնյանի*** (1916-1981), XI դարում 6 միլիոն հայ կար աշխարհում, մինչդեռ նույն դարում Անգլիական թագավորությունում բնակչության թիվը 2 միլիոն էր: Մեր հայրենիքի տարածքը հասնում էր 300.000 կմ^2, որտեղ իշխում էին հայ թագավորներ-իշխանները, բնակչության բացարձակ մեծամասնությունը հայ էր: Հայաստան աշխարհը ամենից զարգացած քաղաքակիրթ երկրներից էր, ուներ ամենաբարգավաճ տնտեսություններից մեկը: Քրիստոնյա Եվրոպայում չկար մի երկիր կամ ժողովուրդ, որ համեմատվեր հայերի հետ: Երբ Փարիզը և Լոնդոնը ունեին ընդամենը 10 հազար բնակիչ, իսկ Հռոմը՝ 50-60 հազար, հայկական մի քանի քաղաքների (Անի, Արծն) բնակչությունը հարյուր հազարի էր հասնում: Աշխարհի մեջ հազիվ «... քանի մը ժողովուրդներ մշակութապէս և տնտեսապես կրնային բաղդատուիլ իրեն (հայերին - Ա. Ս.)... Հայ ժողովուրդը իրավունք ուներ հպարտանալու իր յաջողութիւններով ու նուաճումներով, իր

դպրութեամբ և մշակոյթով: Եւ անշուշտ ապագային կը նայէր լաւատեսութեամբ, ինքնավստահութեամբ»[48]:

XI դարից սկսած իրադարձությունները այլ ընթացք ստացան: Բյուզանդիայի հայ կայսրերի հայադավ քաղաքականության արդյունքում վերացավ հայկական պետականությունը մայր հայրենիքում, սելջուկները առանց լուրջ դիմադրության գրավեցին երկրի մեծ մասը: Անին, Արծնը, Վանը, Դվինը և այլ քաղաքներ ու վայրեր թալանվեցին, հսկայական հարստություն հանվեց երկրից: Այնուամենայնիվ այդ հարվածից կարողացանք ուշքի գալ, դեռ որոշ ժամանակ ունենալ պետություն (հանձինս Զաքարյանների իշխանապետության), տեղային իշխանություններ, իսկ Կիլիկիայում սկզբում ստեղծել իշխանություն, իսկ հետո՝ թագավորություն:

Հայ ժողովուրդը կարողացավ շտկել մեջքը, շունչ քաշել, վերականգնել տնտեսությունը, մշակույթը, նորից չափվեց Եվրոպայի հետ: Բայց իրար հաջորդեցին մեծագույն արհավիրքները՝ մոնղոլական, թաթարական, Աղ և Կարա Կոյունլու ցեղերի և ցեղախմբերի արշավանքները: Անգլիացի պատմաբան ***Է. Գիբոնի*** (1737-1794) կարծիքով եթե սելջուկները պոկեցին Արևելքի ժողովուրդների քաղաքակրթության ծառի ծաղիկները, ապա մոնղոլները պոկեցին նաև նրա տերևները, մենք էլ ավելացնենք, որ արմատախիլ արեցին նույնիսկ արմատները: Մի քանի դար շարունակ Հայաստանը դարձավ թուրք-պարսկական պատերազմական գործողությունների թատերաբեմ, թուրք-պարսկական զորքերի ոտքի կոխան:

Արդյունքում՝

1. Դատարկվեցին, կործանվեցին, դադարեցին գոյություն ունենալ մեր բազմաթիվ շեն ու լի քաղաքները, ավանները:
2. Փոխվեց ժողովրդագրական իրավիճակը, բնակչության աճի փոխարեն ունեցանք հետաճ, նվազում: XI դարում 6 միլիոն ունեցած ժողովուրդը XIX դար մտավ 3 միլիոնով:
3. Տնտեսական հարաբերությունները, առևտրական հաղորդակցությունը, շինարարական աշխատանքները գրեթե դադարեցին, եղածն էլ դարձան թալանի և ավարառության առարկա, վերածվեցին ավերակների:

---

[48] ***Գ. Ահարոնեան***, Մեծ երազի ճամբուն վրայ, Ակնարկ հայկական հարցի պատմութեան վրայ, Գ տպագրություն, Լոս Անժելըս, 1986, էջ 10:

4. Սկիզբ դրվեց զանգվածային արտագաղթին, երկիրը սկսեց դատարկվել, փոխարենը Հայաստան ներխուժեցին քրդերը, թուրքերը, լեզգիները, ազգը դադարեց մոնոէթնիկ, միաձույլ լինելուց, որի արդյունքում «…խաթարուեցավ մեր երկրին գէրազանցապէս հավաքական դիմագիծը»[49]:
5. Թվարկածների ընդհանուր տրամաբանությունն այն է, որ քոչվոր ցեղերը կարող են մշակույթի առանձին տարրեր ստեղծել (վրան պատրաստել, կենդանի պահել, ընտելացնել, կաթ մշակել, պանիր, յուղ ստանալ և այլն), բայց քաղաքակրթություն ստեղծում են նստակյաց ժողովուրդները:

Արդեն թևավոր է դարձել **«Քաղաքականությունը տնտեսության խտացված արտահայտությունն է»** ձևակերպումը: Ինչպիսին երկրի տնտեսությունն է, այնպիսին էլ պետության վարած քաղաքականությունն է ու ներկայացրած գաղափարախոսությունը: Տնտեսությունն է թելադրում քաղաքականություն և գաղափարախոսություն, բայց քաղաքականությունն ու գաղափարախոսությունն էլ իրենց հերթին են ազդում տնտեսության վրա: Սոցիալական հեղափոխությունների, քաղաքական բարեփոխումների, ընտրությունների միջոցով իշխանություն ձեռք բերած վարչախումբն իր քաղաքականությունն ու գաղափարախոսությունն է պարտադրում տնտեսությանը: Եթե դրանք միտված են տնտեսության զարգացմանը, ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը, ապա տնտեսությունը զարգանում է, իսկ եթե տնտեսությունը դառնում է քաղաքականության և գաղափարախոսության պատանդը, անտեսվում են տնտեսության զարգացման ընդհանուր օրինաչափություններն ու ազգային առանձնահատկությունները, ապա վրա է հասնում տնտեսության ակտիվ կործանման ժամանակաշրջանը, որի հետևանքներն են դառնում տնտեսական ճգնաժամերը, զանգվածների սոցիալական թշվառության մեծացումը:

Բայց ճիշտ չէ տնտեսություն-քաղաքականություն-գաղափարախոսություն փոխազդեցությունը միայն մեխանիկական դետերմինիզմի դիրքերից դիտարկելը, այսինքն՝ միայն տնտեսության ազդեցությամբ բացատրել քաղաքականության ու գաղափարախոսության

[49] ***Գ. Ահարոնեան***, Մեծ երազի ճամբուն վրայ, Ակնարկ հայկական հարցի պատմութեան վրայ, Գ տպագրություն, էջ 13:

բնույթը և հակառակը՝ քաղաքականության ու գաղափարախոսության բնույթով՝ տնտեսությունը (իդեալի մեջ դրանք պետք է լինեն ներդաշնակ՝ հասարակության ընդհանուր բարեկեցությանը միտված): Շատ հաճախ այդ երեքի գոյության կերպը, ակտիվությունը, բնույթը, ուղղվածությունը պայմանավորվում են հասարակության, ազգի հոգևոր-բարոյական վիճակով, նկարագրով, արժեհամակարգով, այն գաղափարներով, որոնք համախմբում են հասարակությունը կամ դրանց բացակայությամբ: Պետք է հաշվի առնել նաև այն, որ նյութական բարիքների առատությունը դեռ հասարակության հոգևոր հարստության չափանիշ չէ. հասարակությունը կարող է հոգեպես հարուստ լինել տնտեսապես ոչ այնքան բարենպաստ պայմաններում և հակառակը՝ հոգով աղքատ՝ նյութական առատության մեջ: Ճիշտը հոգևոր-արժեքայինի և տնտեսականի փոխլրացումն է, ներդաշնակության ապահովումը:

*4.4. **Պետություն և տնտեսություն***

Սերտ կապ գոյություն ունի նաև տնտեսության և պետության վարած քաղաքականության միջև, որն արտահայտվում է ինչպես պատմական (ուղղահայաց), այնպես էլ արդիական (հորիզոնական) կտրվածքներով:

Պատմական առումով, Նոր ժամանակից սկսած, Եվրոպան պետության և տնտեսության փոխհարաբերության երեք փուլ է անցել.

Առաջինը դասական կապիտալիզմի զարգացման փուլն է, որը տևել է մինչև 1929-1932 թթ. մեծ ճգնաժամը: Այդ ժամանակաշրջանն անվանում են ազատ գործարարության (ձեռներեցության) շրջան, երբ տնտեսական հարաբերությունները կարգավորում էր շուկան, իսկ պետությունը կատարում էր «գիշերային պահակի» գործառույթ՝ ապահովելով մարդկանց անվտանգությունը: Այս շրջանի տեսաբանների մի մասի կարծիքով (Ա. Սմիթ, Դ. Ռիկարդո, Ժ. Սեյ, Ս. Սիսմոնդի) պետությունը չպետք է զբաղվի տնտեսության կառավարման գործերով, չպետք է միջամտի տնտեսության գործերին, այլ առաջնորդվի Վենսան դը Գուրների ձևակերպած «Laisser faire, laisser passe» («թույլ տվեք մարդկանց իրենք իրենց գործերն անեն, թույլ

տվեք, որ գործերն իրենց հունով ընթանան») կարգախոսով: Տնտեսության կարգավորումը շուկայի գործն է: Շուկան կարող է կարգավորել առաջարկի և պահանջարկի միջև առաջացած անհամապատասխանությունը: Պետությունը պետք է զբաղվի բնակչության անվտանգության և սոցիալական պաշտպանվածության խնդիրներով, ինչի համար բնակչությունը պետությանը պարտավոր է հարկեր վճարել:

Երկրորդը հասարակության տնտեսական կյանքի կարգավորման և բնակչության սոցիալական խնդիրների լուծման փուլն է, որը տևում է մինչև XX դարի 70-90-ական թթ.: Այդ ժամանակահատվածի պետությանը երբեմն անվանում են համընդհանուր բարօրության, իսկ տնտեսությանը՝ ազատական (լիբերալ), երբեմն այդ երկուսը միավորելով՝ անվանում են ազատական (լիբերալ) տնտեսության և պետության փոխհարաբերության ժամանակաշրջան: Նման պետության և տնտեսության փոխհարաբերության տեսաբանը Ջ. Քեյնսն է՝ 1936 թ. հրատարակած «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն» աշխատությամբ:

Այդ ժամանակաշրջանի պետության գործունեության հիմքում դրված էր աշխատանքի ու կապիտալի փոխզիջողական տարբերակը, որը ենթադրում էր կորպորատիվ պայմանագիր պետության, գործարարության և արհեստակցական միությունների միջև, որով ձգտում էին ապահովել մարդկանց լրիվ զբաղվածությունը, եկամուտների, բարեկեցության և կրթության աճը, որոնք մարդկանց ներշնչելու էին վստահություն ապագայի նկատմամբ:

Ազատական տնտեսությունը առաջնորդվում էր պետական կառավարման քեյնսյան տեսությամբ, որի հիմնական մեթոդաբանական սկզբունքներն են.

«**ա**) շուկայական տնտեսությունը չի կարող ինքնակարգավորվել, այդ իսկ պատճառով պետության միջամտությունը անխուսափելի է, **բ**) հավասարակշռության հիմնախնդիրն անհրաժեշտ է լուծել «արդյունավետ պահանջարկի» տեսանկյունից, **գ**) որպես տնտեսության

կարգավորման հիմնական գործիք ընդունվում է բյուջետային քաղաքականությունը, որի միջոցով խելամիտ է լուծել նաև զբաղվածության հիմնախնդիրը»[50]:

Ազատական տնտեսության մեջ ֆինանսական համակարգը նստած էր ձեռնարկությունների բանկային վարկերի (կրեդիտների) վրա, որոնք տրվում էին ցածր տոկոսներով, ինչը նպաստավոր պայմաններ էր ստեղծում արդյունաբերական կապիտալի կուտակման համար: Իսկ պետությունը զբաղվում էր սոցիալական պաշտպանվածության համակարգի ապահովմամբ, որն իրականացնում էր հարստության վերաբաշխում և սոցիալական խմբերի համաձայնություն: Պետության և տնտեսության փոխհարաբերության այս մոդելը (սոցիալական պետության) սկսեց ճեղքվածքներ տալ XX դարի 60-ական թթ. վերջերին դիտված ճգնաժամերի, 1973 թ. Համաշխարհային տնտեսական ճգնաժամի, ֆինանսատնտեսական քաղաքականության մեջ թույլ տված սխալների պատճառով: Այդ պետությունների հետագա ճակատագրում մեծ դեր կատարեցին իշխանության եկած Մ. Թեթչերը, (1979 թ. ընտրվեց Անգլիայի վարչապետ), Ռ. Ռեյգանը (1980 թ. ընտրվեց ԱՄՆ նախագահ): Նրանց իրականացրած քաղաքականության հետևանքով ձևավորվեց հասարակության նոր տիպ, որին անվանում են «նորազատական», «ուլտրա-լիբերալիզմ», «շուկայական արմատականություն (ֆունդամենտալիզմ)», որի բաղադրիչներն են դառնում արհմիությունների ճնշումը, համընդհանուր բարօրության պետության կազմաքանդումը, շուկայի լիակատար ազատությունը՝ պետության նվազագույն միջամտությամբ:

Երրորդը նորազատական պետության ժամանակաշրջանն է, որն սկսվում է XX դարի 70-ական թթ. և հասնում մինչև 2008 թ.: Այդ ժամանակաշրջանում իրականացվում է պետական տնտեսության համընդհանուր սեփականաշնորհում: Պետության ձեռքում մնում են էներգետիկան, տրանսպորտը և հաղորդակցության միջոցները: Թուլանում է պետության տնտեսական կշիռը, պետությունը զրկվում է կառավարման կարևորագույն լծակներից: Բանկային ոլորտի սեփականաշնորհումը մեծացնում է ֆինանսական շուկայի դերը, փո-

---

[50] ***Ջ. Մ. Քեյնս***, Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն, Եր., 2006, էջ 3-4:

խարենը՝ թուլացնում պետության հսկողությունը ֆինանսական քաղաքականության վրա: Պետության տնտեսական դերի նվազումը նպաստում է միջազգային տնտեսական կապերի մեծացմանը, գլոբալացման գործընթացներին, ֆինանսական շուկայի ինտեգրացմանը, կառավարման վերազգային հաստատությունների ձևավորմանը: Առաջին պլան է մղվում ֆինանսական շուկան: Պետությունը ստանում է «իրական հնարավորությունների պետություն» անվանումը ըստ որի պետությունը պետք է մարդուն ստիպի որոնել աշխատանք և ոչ թե իրենից սպասի երկնային մանանա: Պետության խնդիրը դառնում է հասարակական կարգի պահպանումը, էկոլոգիական խնդիրներով զբաղվելը (երբեմն ասում են՝ «Պետությունը սկսում է կանաչել»), իսկ գլոբալացման գործընթացների առնչությամբ՝ ազգային տնտեսության շահերի պաշտպանությունը: Տնտեսության մեջ պահպանվում են պետության որոշ գործառույթներ՝ հսկողություն, կանխատեսում, բացասական երևույթների մեղմում և այլն:

2008-2009 թթ. աշխարհը նորից ընկղմվեց ֆինանսական խորը ճգնաժամի մեջ: Նորազատական տնտեսությունը, որի հիմքում ընկած է ֆինանսական շուկան, ճեղքվածքներ է տալիս: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամից տաս տարի անց, վերլուծելով իրավիճակն աշխարհում և Ռուսաստանում, Մ. Երշովն այն տեսակետն է հայտնում, որ տնտեսության մեջ գլոբալ ռիսկերը չեն նվազել, հակառակը՝ ավելացել են, որը նոր ձախողումների վտանգ է ստեղծում[51]:

«Կորոնավիրուս» (COVID-19) կոչվող համավարակը սպառնում է համաշխարհային տնտեսական նոր ճգնաժամի պատճառ դառնալ: Երկրներն ու պետությունները ինչպես կհաղթահարեն այն, արդյունքում ինչ աշխարհակարգ կունենանք, ժամանակը ցույց կտա:

Արդիական (հորիզոնական) կտրվածքով երկրի ներսում ազատ տնտեսական գործունեություն ծավալելու համար պետությունը պետք է իրականացնի հետևյալ հիմնական գործառույթները.

ա) պաշտպանի իր սահմանների անձեռնմխելիությունը,

բ) ստեղծի արդարադատության համակարգ, որպեսզի հասարակության մեջ գործեն համակեցության նորմերը, ապահովի օրենքի առջև բոլորի հավասարության պահանջը,

---

[51] Տե՛ս ***Ершов М. В.,*** Десять лет после глобалного кризиса: риски и перспективи. Вопросы экономики. М., 2019, № 1, էջ 37:

գ) ստեղծի այնպիսի հաստատություններ, որոնք կպաշտպանեն ոչ թե հասարակության առանձին շերտերի, այլ բոլորի շահերը,
դ) վարի ճկուն հարկային և վարկային քաղաքականություն,
ե) իրականացնի ընդգծված սոցիալական քաղաքականություն,
զ) պայքարի մոնոպոլիաների դեմ՝ հակամենաշնորհային օրենքներ ընդունելով,
է) հաղթահարի տնտեսական պարբերաշրջանների թողած ազդեցությունը,
ը) խթանի գիտության և տեխնիկայի զարգացումը,
թ) էկոլոգիական ճգնաժամը մեղմելու նպատակով ակտիվորեն համագործակցի այլ պետությունների, համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ և այլն:

Տեսության մեջ պետության և տնտեսության փոխհարաբերության մասին դեռ խոսելու ենք, այժմ նշենք հետևյալը. ցանկալի է, որ տնտեսական քաղաքականությունն իրականացվի բարոյական միջոցներով, ենթարկվի բարոյականությանը, մեր տնտեսվարողները, գործարարները առաջնորդվեն «նպատակը ոչ թե արդարացնում, այլ սահմանմում է միջոցները» (որի մասին կնշվի հաջորդ երկու թեմաներում) կարգախոսով:

Հարցեր կրկնության համար

1. *Ի՞նչ է կեցությունը:*
2. *Ի՞նչ է տնտեսական կեցությունը:*
3. *Որո՞նք են տնտեսական կեցության բաղադրիչները:*
4. *Ի՞նչ է տնտեսական գիտակցությունը:*
5. *Ներկայացրեք տնտեսական գիտակցության կառուցվածքը:*
6. *Որո՞նք են տնտեսավարման նստակյաց և քոչվոր ձևերի առանձնահատկությունները:*
7. *Ի՞նչ տարբերություններ եք տեսնում նստակյաց և քոչվոր մտածողության ձևերի միջև:*

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՓՈՂԸ ԵՎ ՇՈՒԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ

*5.1. **Փողի արժեքաբանական վերլուծություն***

Համառոտ անդրադառնանք մշակութաբանական և տնտեսական արժեքների փոխհարաբերությանը որպես գնահատման չափանիշ ընդունելով փողի նկատմամբ ունեցած վերաբերմունքը: Ողջ թեման նվիրում ենք արժեքների վերլուծությանը, որովհետև ինչպիսին արժեքներն են, այնպիսին էլ հասարակությունն է, նրանում գործող հարաբերությունները (այդ թվում և տնտեսական) ու մարդը: Մերժելով հին արժեքները, մերժում ենք կյանքի ամրակայված ձևերը, իսկ եթե այդ ընթացքում չենք հասցնում մարդկանց առաջարկել նոր արժեքներ, ապա հասարակության ներսում և առանձին անհատի ոգում առաջացնում ենք արժեքային դատարկություն, որը ճգնաժամերից վատագույնն է:

Առանձնացվում են ***արժեքի լայն և նեղ ըմբռնումներ***: Լայն ըմբռնմամբ՝ արժեքը մեզանից յուրաքանչյուրի կողմից աշխարհի անհատականորեն գունավորված ընկալումն է: Արժեքը մարդկային վերաբերմունքն ու գնահատականն է ցանկացած երևույթի, առարկայի, օբյեկտի, արարքի, գործողության, գործունեության, հարաբերության նկատմամբ:

Նեղ ըմբռնմամբ՝ ***արժեքը կենսականորեն կարևորն է, նշանակալիցը, որը հոգեմտավոր իմաստավորման է ենթարկվում մշակութային սուբյեկտի*** (անհատ, խումբ, հասարակություն, ազգ) ***կողմից և ուղղորդում նրա վարքագիծը որոշակի չափորոշիչների*** (իդեալ, նպատակ) ***տեսանկյունից***:

Արժեքն իրի, առարկայի, երևույթի, արարքի, գործողության, գործունեության, հարաբերության դրական նշանակությունն է մարդու համար: Այս իմաստով ըմբռնված արժեք են բարին, գեղեցիկը, արդարը, սերը: Արժեք չեն չարը, տգեղը, անարդարը, ատելությունը և

այլն: Դրանք հակարժեք են: Եթե արժեքն այն ամենն է, ինչը դրական նշանակություն ունի մարդու համար, ապա հակարժեքը բացասական նշանակություն ունեցողն է:

Արժեքը ոչ թե ինչ-որ բանի (առարկա, գործողություն, արարք) բնական հատկությունն է, այլ դրա նկատմամբ մարդու (կոլեկտիվի, հասարակության, ազգի) վերաբերմունքը, գնահատականը: Արժեքային մոտեցման դեպքում այնքան էլ չի հետաքրքրում այն հարցը, թե ինչպիսին են առարկաներն ինքնին, այլ այն, թե ինչ նշանակություն ունեն դրանք մեզ համար, ինչպիսի իմաստավորումների, գնահատումների և կերպափոխումների են ենթարկվում մարդկանց պատկերացումներում: Այսինքն՝ առարկաները, երևույթներն իրենց բնական վիճակում ո՛չ լավն են, ո՛չ վատը, դրանք արժեք չեն, այդպիսին են դառնում միայն որոշակի հարաբերություններում, որոնց անվանում ենք արժեքային: Արժեքային հարաբերության հոգեբանական դրսևորումն ***ապրումն է***:

Արժեքային հարաբերություններում են ձևավորվում որոշակի չափանմուշներ, որոնցով արժեքավորվում, գնահատվում են երևույթները, արարքները, վարքագիծը, իսկ գնահատման չափանիշն ***իդեալն*** է: Իդեալն ու արժեքը նեղ իմաստով հարաբերակից են. ինչպիսին անհատի, ազգի, հասարակության իդեալներն են, այնպիսին էլ նրանց արժեքներն են: Իդեալն է դառնում արժեքի գնահատման ցուցիչը: Իդեալի միջոցով արժեքը դառնում է ցանկալիի մոդել: Գնահատումը պարունակում է երեք տարր՝ գնահատման առարկա (ի՞նչը կամ ո՞ւմ ենք գնահատում), գնահատման հիմք (գնահատելիս ի՞նչն ենք հաշվի առնում) և գնահատման սուբյեկտ (ո՞վ է գնահատողը):

Արժեքները դասակարգելիս հիմքում դրվում են տարբեր չափանիշներ: Այն դեպքում, երբ չափանիշը մարդկանց պահանջմունքների բավարարումն է, արժեքները դասակարգվում են ***նյութականի*** և ***հոգևորի***: Այս առանձնացումն այնքան էլ ստույգ չէ, որովհետև գոյություն չունի արժեք, որը հոգևոր հիմք, սկիզբ չունենա: Արժեքն իր էությամբ, բնույթով միշտ հոգևոր է, իսկ նյութականը վերաբերում է հոգևորի առարկայացմանը, նյութականացմանը: Այս դասակարգումը պարզապես ընթերցողին կողմնորոշելու, հայացքը որոշակի ուղղությամբ ուղղելու խնդիր է հետապնդում:

Ըստ դրսևորման ձևերի առանձացվում արժեքների հետևյալ խմբերը.

1. Կենսիմաստային (բարի, գեղեցիկ, երջանկություն, սեր, կյանքի իմաստ):
2. Համընհանուր (առողջություն, ապահովություն):
3. Հանրայնորեն ընդունելի (աշխատասիրություն, սոցիալական բարօրություն):
4. Միջանձնային հաղորդակցման (ազնվություն, անձնազոհություն):
5. Ժողովրդավարական (խղճի, խոսքի, ընտրության ազատություն):

Դասակարգման հիմքում դնելով առանձին անհատին՝ առանձնացվում են ***անձնային*** և ***վերանձնային*** արժեքներ:

Հանրույթի ներսում ընդհանրության աստիճանը հաշվի առնելով՝ կարելի առանձնացնել արժեքների.

- անհատական,
- խմբային,
- համազգային,
- հասարակական ձևերը:

Եթե անհատական և խմբային արժեքները չեն համապատասխանում համազգայինին և համահասարակականին, ապա նեղանում են արժեքների ազդեցության ոլորտները և հանգեցնում ազգի պառակտմանը: Ազգի առաձին հատվածներին միավորում, միասնություն ու հոգևոր ընդհանրություն են ապահովում համազգային արժեքները: Ընդհանուր գծերով այսպիսին է արժեքի մշակութաբանական ըմբռնումը:

Հասարակության մեջ, անհատի ներաշխարհում և վարքագծում արժեքների առկայությամբ կամ բացակայությամբ, հարստությամբ կամ աղքատությամբ են պայմանավորում հասարակության և անհատի հոգեղեն կամ հոգեզուրկ լինելը, հոգու հարստությունը կամ աղքատությունը:

Արժեհամակարգը անհատի կամ հանրույթի արժեքների այն ընդհանրական գումարն է, որը դառնում է նրանց հոգեկերտվածքի բնութագիրը և գործունեության կերպը, բնույթը պայմանավորողը, սահմանողը:

Արժեքը կատեգորիա է նաև տնտեսագիտության մեջ, որը մարդկանց պահանջմունքները բավարարող ապրանքների (բարիքների) գինն է, ձևավորվում է փոխանակության ընթացքում, ստանում դրամական արտահայտություն և ամրագրվում փողով: Փողը (որոշակի գինը) դառնում է արժեքի չափման միավոր: Գնի մեջ արտահայտվում է ապրանքի (բարիքի) օգտակարության հատկանիշը: Հետևաբար, արժեք են համարվում այն ապրանքներն ու առարկաները, որոնք ունեն օգտակարության հատկանիշ և նպաստում են մարդկանց պահանջմունքների բավարարմանը[52]: Այսպես չէ մշակույթում: Այստեղ արժեք կարող են դառնալ այնպիսի առարկաներ, որոնք օգտակարության որևէ հատկանիշ չունեն (ապուպապերից մնացած հագուստ, կենցաղային իրեր): Մշակույթում արժեքի գնահատման միավորը ոչ թե օգտակարությունն է, այլ թանկն ու հարազատը: Հոգևոր-բարոյական արժեքները գին չունեն: Սերը հայրենիքի, սիրած աղջկա, հարգանքը մեծի նկատմամբ, նվիրվածությունը ազգային ու համամարդկային գաղափարներին գին չունեն, դրանք դրամական արտահայտման ենթակա չեն: Գին կարող է ունենալ միայն արժեքի նյութական կրողը (արվեստի կոնկրետ ստեղծագործությունը, օրինակ՝ որևէ կտավ, քանդակ), բայց ոչ արժեքը: Իսկ արժեքները ոչ թե փողով արտահայտված գնի, այլ՝ վերաբերմունքի, գնահատման և արժևորման են ենթակա:

Տնտեսագիտության մեջ փողը համընդհանուր ճանաչման արժանացած փոխանակման միջոց է: Փողը ապրանքների (բարիքների) արժեքները համադրող և դրանց փոխանակումն իրականացնող չափման միավոր է, որը ձեռք է բերում իրացվելիության մակարդակ, նպաստում սուբյեկտների միջև գործարքների արագացմանը: Փողը հանդես է գալիս որպես.

ա) արժեքի չափ,

բ) շրջանառության միջոց,

գ) վճարման միջոց,

դ) կուտակման միջոց,

ե) համաշխարհային դրամական միջոց:

---

[52] Արժեքի տնտեսագիտական ըմբռնման մասին տե՛ս Տնտեսագիտության տեսություն, ուսումնական ձեռնարկ, խմբ. տ.գ.դ., պրոֆ. ***Գ. Ե. Կիրակոսյան***, տ.գ. թ., պրոֆ. ***Ի. Ե. Խլղաթյան***, էջ 148-152.

Փողի տնտեսագիտական հետագա վերլուծությունը թողնելով համապատասխան մասնագետներին, ուշադրություն դարձնենք դրա փիլիսոփայական, սոցիալ-հոգեբանական, մշակութային և աշխարհայացքային կողմերին:

Բայց մինչ այդ նշեմ, որ փողի տեսությունը տարբերվում է փողի փիլիսոփայությունից: Փողի տեսությունը տնտեսագիտական ուսմունք է տնտեսության ոլորտում փողի կատարած դերի մասին, իսկ փողի փիլիսոփայությունը փիլիսոփայական-տնտեսագիտական ուսմունք է, որն ուսումնասիրում է փողի ազդեցությունը ողջ անհատական, հասարակական, հոգևոր կյանքի վրա: Խոսելով փողի փիլիսոփայության մասին նկատի ունենք նաև այն աշխարհայացքային ու հոգեբանական ազդեցությունը, որն ունենում է փողը մարդկանց կենսակերպի վրա: Մարդը շարունակում է մնալ երկակի, հետևաբար և երկփեղկված էակ: Որպես ոգեղեն էություն մարդը ձգտում է արժեքների, իմաստավորված կյանքի, բայց որպեսզի կարողանա դա իրականացնել, պետք է ապրի, որն առանց փողի չի լինում: Եթե փողը շատ լինի, ավելի լավ, որովետև հնարավոր կլինի լուծել ավելի մեծ նշանակության հարցեր՝ առողջության, ապահովության, բարեկեցության, իշխանության, ազատության և այլն: Դա է պատճառը, որ կապիտալի իշխանության հաստատումից հետո փողը ձևավորում է ամենօրյա գիտակցությունը, հոգեբանությունը, աշխարհայացքը, փիլիսոփայությունը, ձգտում է դառնալ մշակույթի և քաղաքակրթության զարգացման գործոն: Այսինքն՝ փողը դառնում է ոչ միայն նոր հասարակության կառուցման հիմքը, այլև նրա գաղափարախոսությունը: Այդ հիմքի վրա կառուցված քաղաքակրթությունը ընդունում է տնտեսական-տեխնոլոգիական բնույթ և աստիճանաբար հասարակության ներսից դուրս մղում հոգևոր-բարոյականը, արժեքայինը, ինչը նկատելի է հատկապես մեր օրերում, հայ հասարակությունում: Փողն այսօր ավելի մեծ ազդեցություն է թողնում մարդու, հասարակության հոգեբանության և աշխարհայացքի վրա՝ քան երբևե (հավանաբար մեկ էլ կապիտալիզմի Անդրկովկաս թափանցելու ժամանակահատվածում, որի թողած ազդեցության մասին հրաշալի են ներկայացրել մեր գրողները): Տեղի է ունենում փողի էության փոխակերպում, «ձեռքի կեղտ» համարվողը (այդպես էին գնահատում փողը իմ սերնդակիցների ծնողները, գրականության մեջ երբեմն օգտագործվում է

«արհամարհելի մետաղ» բառակապակցությունը) դառնում է կյանքը կազմակերպելու ձև, ազատության, առողջության, բարեկեցության, երջանկության, իշխանության խորհրդանիշ:

Համաշխարհային և հայ գեղարվեստական գրականության մեջ վաղուց է բացահայտվել այն երևույթը, որ փողի մեջ առկա է ոչ միայն տնտեսական, այլև հզոր բարոյահոգեբանական, արժեքային-աշխարհայացքային գործոն, նույնիսկ դիվային ուժ: Կապիտալի կուտակման, շուկայական հարաբերությունների հաստատման ժամանակաշրջանում մարդու վարքը, ունակությունը, Ես-ը դիտվում է փող ունենալու կամ չունենալու մեջ: Հանուն փողի մարդը գործարքի մեջ է մտնում սատանայի, սեփական խղճի հետ, անցնում դիերի վրայով: Փող աշխատելու ձգտումը հրապուրիչ է դարձնում ցանկացած աշխատանք՝ անկախ դրա նկատմամբ հասարակության ունեցած վերաբերմունքից, առուծախի առարկա է դառնում ամեն ինչ: Որպես փորձություն և գայթակղություն՝ փողը դառնում է մարդկանց բարոյականության փորձաքարը և, մեծամասամբ, փողն է անբարոյականացնում, այլասերում, բարոյազրկում մարդկանց, եթե ազնիվ ճանապարհով չես ձեռք բերում և ճիշտ չես օգտագործում:

Բարոյահոգեբանական առումով խեղված հասարակական շերտերում փողի որոշակի քանակության առկայությունը դառնում է հասարակական դիրքի, ապահով կյանքի, առողջության, վայելքի գրավական: Շատ փող աշխատողը (վաստակողը) համարվում է կարող, ունակ, խելոք, հնարամիտ, սեփական արժեքը գիտեցող, ինքնաբավ: Փող չունեցողը կամ աշխատել չկարողացողը հակառակը՝ անկարող, անընդունակ, ոչ այնքան խելոք և հնարամիտ, բարդույթավորված (բարդույթավորվում է, որովհետև չի կարողանում փող աշխատել):

Փող աշխատելը կամ չաշխատելը դառնում է անձի արժեքի գնահատման չափանիշ. ինչքան շատ ես աշխատում, այնքան մեծ է արժեքդ: Այստեղից էլ այն սոցիալական, հոգեբանական և բարոյական ազդեցությունը, որ ունենում է փողը մարդկանց աշխարհայացքի և վարքագծի վրա: Այս ամենով փողը դառնում է ոչ միայն տնտեսագիտական, այլև աշխարհայացքային կատեգորիա:

Ցանկացած հասարակությունում էլ մարդկանց մի մասի համար փողը դառնում է նպատակ, երջանկության ապահովման գրավա-

կան: Այստեղ է, որ սերը, նվիրվածությունը, պատիվը, խիղճը, արժանապատվությունը դառնում են ոչինչ չնշանակող հասկացություններ: Դրանք փող աշխատելու համար ամեն միջոց գործադրողի համար չեն: Սպառողական հասարակություններում մարդու արժեքը գնահատվում է նրա վճարունակության և գնողունակության չափով: Այսինքն՝ մարդու արժեքն այնքան է, որքան կարողանում է գնել կամ սպառել: Մարդ-աշխարհ փոխհարաբերությունը փոխարինվում է գնորդ-ապրանք փոխհարաբերությամբ: Մարդու ամենակարողությունը գնողունակության մեջ է: Օրենքը, բարոյականությունը, արվեստը, հասարակական կարծիքը, արդարությունը, կյանքը դառնում են ապրանք: Փողը սերտաճում է ուժի (իշխանության) հետ, որը փողատիրոջը դարձնում է լկտի, ծնվում է ամենաթողությունը, զոռբայությունը որպես սոցիալ-քաղաքական երևույթ:

Փողի նման ըմբռնումը արժեքի մշակութաբանական ըմբռնման հետ ոչ մի կապ չունի: Փողի տնտեսագիտական ըմբռնումը մշակութաբանականի հակոտնյան է: Եթե շատերի համար բարեկեցությունն առաջանում է փողի միջոցով, բոլորովին չի նշանակում, թե փողն է բարեկեցության և երջանկության միակ աղբյուրը: Փող քիչ ունեցող մարդն էլ կարող է իրեն լավ զգալ, լինել արժանապատիվ, ինքնաբավ ու երջանիկ:

Կարծում եմ, որ թշվառության, իրավազրկության աղբյուրը փողի պակասը չէ, այլ քաղքենիական այն դիրքորոշումը, որը երջանկությունը, ազատությունը, առողջությունը պայմանավորում է մարդու վճարունակությամբ: Փողը բարիք է դառնում այն միջավայրում, որում աղքատությունն են դարձնում կյանքի գնահատման պայման: Իսկ եթե հոգևոր-բարոյական լիարժեքությունն է համարում ճշմարիտ կյանքի պայման, փողի բարիք լինելը դառնում է կասկածելի: Ահա թե ինչու շատ բան պայմանավորվում է ոչ թե փողով, այլ դրա նկատմամբ ունեցած վերաբերմունքով:

Ասվածը հաշվի առնելով և հիմք ընդունելով փողի նկատմամբ ունեցած վերաբերմունքը՝ կարելի է առանձնացնել մարդկանց երեք խումբ.

1. Խումբ, որը կողմնորոշված է ***փիրելուն***, ***ձեռք բերելուն***: Նրանց համար կարևորը փող ստեղծելն է առանց միջոցների առաջ խտրականություն դնելու. լավ ու արդարացված են փող բերող բոլոր

միջոցները և փողի միջոցով բոլոր կենսական հարցերը լուծելու փիլիսոփայությունը: Այս խմբի համար փողը նպատակ է (օրինակներ, ինչքան ուզենք, հայ գեղարվեստական գրականության մեջ):

2. Խումբ, որը կողմնորոշված է դեպի ***կյանքը, ստեղծագործությունը***: Այս խումբը մշակութայինն է: Մարդկանց առաջին խումբը կողմնորոշված է մարմինը, նյութը, երկրորդը՝ ոգին, ոգեղենը: Երկրորդ խմբի մեջ մտնողներն անպայմանորեն արվեստագետ, մշակութաբան ու փիլիսոփա չեն, այլ նաև պարզ, հասարակ աշխատանքի տեր մարդիկ, որոնք հարուստ են իրենց ունեցածով և արժանապատիվ: Այս խմբում գտնվող մարդիկ գիտեն, որ փողով շատ բան կարող են գնել, բայց ոչ երբեք պատիվ ու արժանապատվություն: Արժանապատվությունը ստեղծում են բարոյական հունի մեջ դրված կենսագրությամբ: Այս խմբին պատկանող մարդկանց համար փողը միջոց է:

3. Խումբ, որը գտնվում է ***վերը նշվածների միջև և փարուբերվում է այս ու այն կողմ***: Մի մասը ձգտում է տեղափոխվել առաջին խումբ, իրենց կենցաղով նմանվել նրանց, նախանձով է նայում այդ դասին պատկանողների վարքուբարքին: Դեպի առաջին խումբ ձգտող զանգվածի համար փողը դարձյալ նպատակ է: Եվ խումբ, որը գործազուրկ է, աշխատանք որոնող, որը ձգտում է երկրորդ խմբին. այսինքն՝ ունենալ աշխատանք, վաստակել այնքան, որ հնարավոր լինի ապահովել իր և ընտանիքի եթե ոչ արժանապատիվ կյանքը, ապա գոնե նվազագույն կենսամակարդակը: Նրանց համար առաջին խմբին պատկանող մարդու տեսակն ընդունելի չէ: Փողը պարզապես միջոց է:

Փողը մշակութաբանական առումով արժեք է միայն երկրորդ խմբին պատկանող մարդկանց համար այն էլ այնքանով, որքանով հնարավորություն է տալիս ազնիվ աշխատանքի միջոցով վաստակած գումարով որոշակի նյութական պայմաններ ապահովել՝ ապրելու, ստեղծելու, ստեղծագործելու համար:

Բայց եթե մշակութային, արժեքային-աշխահայացքային առումներով փող շատ դեպքերում հակարժեք է, ապա նույնը չի կարելի պնդել տնտեսական հարաբերություններում, գործունեության մեջ աստիճանաբար ձևավորվող տնտեսական որոշ արժեքների մասին: Մաս-

նավորապես՝ աշխատել և մրցակցել ազնիվ խաղի կանոններով, սեփական շահը համատեղել հանրայինին, չաշխատել ստվերում, ազատական արժեքների արմատավորում, տնտեսական հարաբերություններում և գործարարության մեջ առաջնորդվել բարոյական սկզբունքներով, տնտեսական ծրագրեր իրականացնելիս երբեք չանտեսել հոգսը և հոգատարությունը մարդու նկատմամ, տնտեսությանը հաղորդել սոցիալական ուղղվածություն և այլն: Արժեքները և մշակութը մեծ դեր ունեն տնտեսության մեջ: Պետք չէ հասարակակության ներսում դիտվող ճգնաժամային երևույթները միայն տնտեսական գործոնով բացատրել:

Հոգևոր-բարոյական, մշակութային արժեքները կարող են բարերար ազդեցություն ունենալ տնտեսության, բիզնեսի վրա, նպաստել վերջիններիս առողջացմանը, աշխուժացմանը, զարգացմանը, հասարակության բարգավաճմանն ու առաջընթացին: Որպեսզի դա իրականանա պետք է տնտեսությունը, տնտեսավարումը, բիզնեսը սերտորեն կապել բարոյականությանը, հոգևոր-բարոյական, մշակութային արժեքներին, տնտեսությունը լրացնել ոգեղենությամբ: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև տնտեսության վարման ազգային-մշակութային-բարոյական առանձնահատկությունները: Պետք է տնտեսությունը, բիզնեսը տանել ***ազգայնորեն կողմնորոշված հոգևոր-բարոյական տնտեսության և բիզնեսի դաշտ***: Նման տնտեսության ու բիզնեսի ոլորտում մարդն իր առջև դնում է ոչ միայն նյութական-տնտեսական (աշխատանք, աշխատավարձ և այլն), այլև հոգևոր-բարոյական խնդիրներ և առաջնորդվում բարոյական սկզբունքներով, նորմերով՝ պատիվ, պարտք, խղճմտանք, մարդասիրություն նաև կոռուպցիայի, ստվերային տնտեսության հաղթահարում և այլն: Նման տնտեսություն ստեղծելու համար անհրաժեշտ է որոշ աշխարհայացքային-արժեքային հիմնարար դրույթների ամրակայում տնտեսության մեջ և բիզնեսում, մասնավորապես լավատեսություն, իրատեսություն, կոլեկտիվիզմ, համագործակցություն, ոգեղենություն, աշխատանքը որպես ստեղծագործական ունակությունների իրացում, անշահախնդրություն, արդարություն, աշխատասիրություն, կրթվածություն և այլն:

Դարեր շարունակ տնտեսագիտության մեջ անվերապահ պահանջ է հնչել այն տեսակետը, որ տնտեսական գործունեության

գլխավոր նպատակը սեփական պահանջմունքների բավարարումն է: Բայց դեռ Սմիթն էր նկատել, որ մարդն ազատ է գործել այն ուղղությամբ, ինչ ուղղությամբ թելադրում է շահը, թեև եթե այն իրականացվում է ի հաշիվ մյուսների, ապա նման նպատակը զուրկ է ոչ միայն բարոյական, այլև բանական տնտեսական հիմքից, որովհետև հետապնդելով զուտ անհատական նյութական բարեկեցությունն ապահովող խնդիրներ, մարդը չի մտածում կյանքի իմաստի, նպատակի և դրանց հետ կապված արժեքների մասին: Այսինքն՝ ցանկացած տնտեսական գործունեություն պետք է լրացվի բարոյականությամբ, ունենա արժեքային հիմնավորում:

*5.2. **Շուկայի տնտեսագիտական և մշակութափիլիսոփայական վերլուծություն***

Այժմ շուկայի մասին: Շուկան քաղաքակրթական այնպիսի նվաճումներից է, ինչպիսին գութանն է, բրուտի դուրգը, շոգեքարշը, ավտոմեքենան, ինքնաթիռը և այլն: Լայն իմաստով ***շուկան բարիքների և ծառայությունների շարժումն է ապրանքների և փողի տեսքով՝ հասարակական ողջ վերարտադրության շրջանակներում, տվյալ հասարակության տնտեսական համակարգի բոլոր մակարդակներում***: Նեղ (տնտեսական-տնտեսագիտական) իմաստով ***շուկան մրցակցությունը կարգավորող համակարգ է, որը հենված է առաջարկի և պահանջարկի տնտեսական օրենքի վրա***: Շուկան առաջանում է ապրանքային արտադրության ձևավորման հետ: Երեք հիմնական գործոններ են նպաստում շուկայի ձևավորմանը.

- մասնավոր սեփականության առաջացումը և պահպանումը,
- աշխատանքի հասարակական բաժանումները,
- ազատ մրցակցությունը:

Շուկայական տնտեսության երեք գլխավոր սկզբունքներն են.

1. Հավասար մեկնարկային հնարավորությունների ընձեռում:
2. Ազատ մրցակցության պայմանների ստեղծում:
3. Սեփականության անձեռնմխելիության ապահովում:

Շուկայի հիմնական սկզբունքներն են (թվարկում ենք միայն մի քանիսը).

- ընտրության ազատությունը,
- գործարարությունը,
- սեփականության և տնտեսավարման ձևերի բազմազանությունը,
- մրցակցությունը,
- անձնական շահը,
- ազատ գնագոյացումը և այլն (շուկայի զուտ տնտեսական բաղադրիչներին մագիստրոսները ծանոթ են ընդհանուր և մասնագիտական դասընթացներից):

Շուկայում գործող գլխավոր անձերն են *արտադրողը և գնողը* (սպառողը): Շուկայական և ոչշուկայական բաղադրիչներ հանդիսացող սեփականությունը և իշխանությունը, բիզնեսը և պետությունը սերտորեն կապվել են միմյանց հետ, դարձել են ժամանակակից հասարակության կարևորագույն ինստիտուտները, որոնց փոխհարաբերության մասին շատ հետաքրքիր տեսակետների ենք հանդիպում տարբեր տնտեսագիտական դպրոցներում:

Եվրոպայում (ոչ միայն), կապիտալիզմի ժամանակաշրջանի շուկայական հարաբերությունների էվոլյուցիան անցել է երկու փուլով՝ «վայրի» (երբեմն անվանում են «վայրի կապիտալիզմ») և «քաղաքակիրթ»: Կապրտալիզմը (շուկայական հարաբերությունները) սկսում է «վայրի» փուլով, երբ շահույթը ձեռք է բերվում ոչ թե արտադրության գործընթացում, այլ բաշխման և վերաբաշխման միջոցով, որովհետև այդ փուլում է տեղի ունենում անցում մի հասարակությունից մյուսին, երբ դիտվում է զանգվածների սոցիալական թշվառացում, գնողունակության կտրուկ անկում, ճգնաժամ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: «Քաղաքակիրթ» շուկան հաջորդ փուլն է, երբ աշխատում է արտադրությունը, բարձրանում բնակչության գնողունակությունը, հետևաբար՝ կենսամակարդակը: Պետությունը իր օրենքներով, տնտեսական քաղաքականությամբ հավասար պայմաններ է ստեղծում շուկայում գործող բոլոր տնտեսական սուբյեկտների համար: «Վայրի կապիտալիզմի» (շուկայի) փուլում իշխողը առևտրի և ֆինանսական ոլորտն է, կապ է հաստատվում բիզնեսի և քրեական կառույցների միջև, որի նպատակը առավել շահույթ (գերշահույթ)

ստանալն է: «Քաղաքակիրթ» փուլում գործարարությունը կողմնորոշվում է բանական շահերը, գործում է հիմնականում ապրանքների ու ծառայությունների ոլորտում[53]:

Մեր հանրապետության շուկայական տնտեսության անցման ոչ այնքան երկար պատմությունը ցույց է տալիս, որ մենք դեռ դուրս չենք եկել «վայրի կապիտալիզմի» փուլից, որում իշխում է Գաբրիել Սունդուկյանի հայտնի հերոսի «Դիփ խաբում ենք ու խաբված ենք» կարգախոսը:

Համառոտ անդրադառնանք շուկայի և պետության փոխհարաբերության խնդիրների քննությանը՝ ըստ համապատասխան տնտեսագիտական դպրոցների: Թե պետության և բիզնեսի փոխհարաբերությունը ինչ փուլերով է անցել գործնականում, մենք արդեն գիտենք, այժմ ծանոթանանք գաղափարների էվոլյուցիային: Սկսենք դասական դպրոցից, որի ներկայացուցիչներ Վ. Պետտին, Ա. Սմիթը, Դ. Ռիկարդոն գտնում էին, որ շուկայում պետք է իշխի լիակատար տնտեսական ազատություն, պետությունը չպետք է միջամտի իր ենթակաների տնտեսական գործունեությանը, այլ, ինչպես արդեն նշել ենք, առաջնորդվի Վինսենթ Գուրնեի «Laisser faire, laisser passe» («թույլ տվեք մարդկանց իրենց գործերն անեն, թույլ տվեք...») կարգախոսով: Սա XVIII դարի ֆրանսիական բուրժուազիայի տնտեսական ազատության պահանջն էր, որը ֆրանսիական Մեծ հեղափոխությունից հետո աստիճանաբար իրականացվեց: Պարզապես գործարարները պետությանը պետք է վճարեն հարկեր, իսկ պետությունը՝ պաշտպաներ նրանց կյանքը, ունեցվածքը, իրավունքներն ու ազատությունը (իրականացնի «հսկող աչքի» քաղաքականություն): Կապիտալ ներդրումների մեջ, ճոխության նկատմամբ ոչ մի սահմանափակում, ոչ մի արգելք: Գործազրկությունը շուկայական տնտեսության պայմաններում հնարավոր չէ, որովհետև ավելորդ բնակչությունը մահանում է (Մալթուս): Գերարտադրություն նույնպես հնարավոր չէ, որովհետև շուկան ճկուն է, անմիջապես արձագանքում է առաջարկի և պահանջարկի անհամապատասխանությանը ու կարգավորում այն (***Ժ. Բ. Սեյի*** (1767-1832) ձևակերպած այս օրենքը կոչվեց իր անունով):

---

[53] Տե՛ս ***Степин В. С.***, Цивилизация и культура. Санкт-Петербург, 2011, էջ 316-318:

Լիակատար շուկայական ազատության դասական տնտեսագիտության գիծը շարունակեցին նորդասական և նորազատական ուղղությունները: Նրանք նույնպես պնդում էին, որ ոչ ոք իրավունք չունի միջամտել ուրիշի ազատությանը, այդ թվում՝ պետությունը: Տնտեսության մեջ և շուկայում պետության դերը պետք է հասցնել նվազագույնի: Պետությունը պետք է ստեղծի պայմաններ, որոնք կխթանեն ազատ մրցակցությունը, ինչը նշանակում է հավասար պայմանների ապահովում բոլորի համար: ***Ֆ. Հայեկի*** (1899-1992) կարծիքով շուկան իրականացնում է «բացահայտող արարողակարգ» (պրոցեդուրա)՝ որպես նոր աղբյուրների և տեխնոլոգիաների բացահայտման միջոց: Ըստ Հայեկի, շուկան համատեղում է միլիոնների տնտեսական գործունեությունը և դառնում «ցրիվ գիտելիքի» հավաքման և օգտագործման վայր: Հետևելով Շումպետերին, Հայեկը նույնպես այն կարծիքն է հայտնում, որ մրցակցությունն է ստիպում գործարարներին ստեղծել նոր ապրանքներ, որոնել նոր շուկաներ: Հայեկի համոզմամբ շուկան սոցիալական արդարության և բարոյականության նկատմամբ չեզոք է, արդարությունը պետք է որոնել վարքագծի մեջ և ընթացքում, և՛ ոչ թե վերջնական արդյունքում: Արդարությունը, նրա կարծիքով, օրենքի առջև բոլորի հավասարությունն է, որը պետք է կրի համընդհանուր և պարտադիր բնույթ:

Տնտեսագիտական դպրոցներից մոնետարիզմի (փողի քանակական տեսություն) ամենահետևողական և հայտնի ներկայացուցիչը Մ. Ֆրիդմենն է (ռուսական գրականության մեջ հանդիպում է նաև Ֆրիդման գրության ձևը): Նրա կածիքով շուկան է հանդես գալիս որպես ընտրության ազատության երաշխավոր, բայց ազատության շուկայական մոդելը չպետք է իշխի հասարակության վրա: Շուկան ինքնակարգավորման հնարավորություն ունի (հակադրվում է Քեյնսի այն տեսակետին, թե շուկայական տնտեսությունը պետական կարգավորման կարիք ունի):

Շուկայի պետական կարգավորման կողմնակիցների մեջ ամենահայտնին Ջ. Քեյնսն է: Նրա «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն» գիրքը հեղափոխական դեր կատարեց տնտեսագիտության մեջ: Եթե դասականները քննարկում էին չորս շուկաները (աշխատանքի, ապրանքների, փողի և արժեթղթերի, ծառայությունների) առանձին, ապա Քեյնսը այդ չորսը դիտեց որպես մեկ

ընդհանրական միասնական շուկա: Նա գտնում էր, որ զբաղվածության աստիճանը, սպառման պահանջը, արտադրության մեջ ապրանքների արտադրության և ներդրումների ծավալը միմյանց հետ կապված են: Եթե սպառումը անկում է ապրում և մեծանում է գործազուրկների թիվը, ապա կրճատվում են նաև արտադրության ու արժեզրկման (ինֆլյացիայի) ծավալները: Տնտեսական համակարգը ընկնում է արատավոր շրջանի մեջ: Մարդիկ դառնում են խնայող, ապրանքները չեն սպառվում, արտադրությունը կանգնում է, անիմաստ է դառնում նոր միջոցների ներդրումը: Նման պայմաններում պետությունը պետք է բացի փակ շրջանը, նույնիսկ արհեստականորեն խթանի արտադրությունը, ներդրումներ կատարի, մարդիկ պետք է փող ծախսեն, ապրանք գնեն, պահանջարկը կբերի աշխատատեղերի և ներդրումների ավելացմանը, ինչն իր հերթին կնպաստի սպառմանը և արտադրությանը: 1960-70-թթ Քեյնսի տնտեսագիտական հայացքները համարվեցին վիճարկելի: Տնտեսական ճգնաժամերի ընդհանուր ֆոնին տնտեսության (շուկայի) պետական կարգավորման հայեցակարգը համարվեց այլևս չաշխատող:

Շուկայի առավելություններ են համարվում.

- շուկայում բոլոր մասնակիցների նյութական շահագրգռվածությունը,
- ԳՏՀ նվաճումների օգտագործման խթանումը,
- բավարարում է մարդու պահանջմունքները, բարելավում կյանքի որակը,
- թույլ չի տալիս, որ ապրաքների պակասուրդ առաջանա,
- ճկուն է, շուտ է հարմարվում փոփոխված իրավիճակին:

Թերություններից է.

- պայմաններ է ստեղծում մոնոպոլիաների գերիշխող դիրքի ձևավորման համար,
- տանում է հասարակության սոցիալական շերտավորմանը,
- շահագրգռված չէ հիմնարար գիտությունների (բնագիտական առարկաների) զարգացմամբ,
- ծնում է շահամոլություն, բնազդներ, հոգեզրկություն:

Շուկայի այս համառոտ մշակութափիլիսոփայական և տնտեսագիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ.

1. Այնտեղ բացահայտ (կամ ոչ) գործում են փիլիսոփայության հիմնական օրենքներն ու կատեգորիաները, մասնավորապես հակադրությունների միասնության և պայքարի (օրինակ՝ արտադրող-գնորդ, առք-վաճառք, առաջարկ-պահանջարկ և այլն), քանակական փոփոխություններից որակականի (օրինակ՝ տնտեսական աճից տնտեսական զարգացում, լճացումից աշխուժացում, տնտեսական էվոլյուցիայից տնտեսական հեղափոխություն և այլն), բացասման բացասումի (անցումը հին տեխնոլոգիայից նորի, շուկայական հարաբերությունների նախնական փուլից ավելի կատարյալի և այլն):

2. Շուկայական գործունեության մեխանիզմների հիմքերը, ներքին շերտերը, դրանց էությունը, դրսևորման առանձնահատկությունները, շարժման մեջ դնող գործոնները, մեխանիզմները կարծես աշխատում են փիլիսոփայական կատեգորիաների ամրագրած սկզբունքներով: Հետևաբար դրանց իմացումը կարևոր դեր կարող է կատարել շուկայական հարաբերությունները ճիշտ հասկանալու, դրանցում կողմնորոշվելու, շուկայից հաղթանակած դուրս գալու համար: Այս իմաստով անգնահատելի են պատճառ և հետևանք, անհրաժեշտություն և պատահականություն, հնարավորություն և իրականություն, էություն և երևույթ կատեգորիաների հիմնարար սկզբունքների և մեթոդաբանական կողմնորոշիչների գործնական կիրառումը շուկայական հարաբերություններում:

3. Շուկան այն վայրն է, որտեղ, կարծես, աշխատում են սոցիալ-դարվինիզմի հիմնական սկզբունքները: Զուտ տնտեսականից բացի շուկայում գործում են նաև սոցիալ-հոգեբանական, մշակութային-աշխարհայացքային գործոններ, ռացիոնալի և իռացիոնալի փիլիսոփայական մոտեցումները և այլն:

4. Շուկայում գործող գլխավոր անձը եղել և մնում է մարդը, նրա գործունեության շարժառիթները: Արիստոտելը շարժառիթների մեջ մտցնում էր բանական պահանջմունքների բավարարումը: Այլոց կարծիքով՝ հաճույքը, սեփական շահը, առավելագույն շահույթը (եկամուտը)՝ նվազագույն ծախսերով: Անշուշտ՝ մարդու գործունեության շարժառիթները կարելի է ընդլայնել և կապել նաև կենսադիրքորոշման, կյանքի իմաստի, աշխարհում իր տեղի ու դերի, իր գործի կարևորության գիտակցման և այլ գործոնների հետ: Նման դեպքերում մարդը կարող է աշխատել նաև հանուն ինչ-որ նշանակալից, վեհ

բանի՝ գաղափարի (ընդհանրական շահի, ինչպես նշում էր Ջ. Միլը): Ցավն էլ այն է, որ նման դեպքերը շուկայական հարաբերություններում ավելի շուտ բացառություն են, քան օրինաչափություն: Սոցիալական շերտավորումը, գործազրկությունը, գների աճը մարդուն բարոյազրկում են, հոգեզրկում: Շուկան մնում է անհաղորդ բարոյականության նկատմամբ: Շուկան գործ չունի բարու, գեղեցիկի, արդարության, հայրենասիրության, հոգևոր արժեքների հետ, դրանք դուրս են մնում շուկայից, որի արդյունքում հասարակության ներսում ի հայտ են գալիս հոգևոր-բարոյական բնույթի բազմաթիվ արատներ՝ դեֆորմացված աշխարհայացք, գլխիվայր շրջված անձնային-արժեքային պատկերացումներ, որոնց մասին արդեն նշել ու դեռ նշելու ենք:

Շուկայում նույնպես, ինչպես և մարդկային գործունեության այլ ոլորտներում, գործում են արժեքներ և հակարժեքներ: Արժեք են ազնիվ մրցակցությունը, առևտրում ազնիվ լինելը («Առևտրում չափը լեցուն, իսկ կշեռքը՝ արդար» պահանջում էր Մուհամմեդը), բոլոր դեպքերում բարոյական նկարագիրը պահպանելը: Հակարժեք են թվարկածներին հակառակ գործելը՝ հանցագործությունը, կեղծիքը, խաբեբայությունը, կոռուպցիան, ստվերում գործելը, անորակ արտադրությունը, սպառողին խաբելու, մոլորեցնելու ձգտումը և այլն: Հետևաբար՝ սոցիալ-փիլիսոփայական, մշակութային-արժեքային գործոնների ներմուծմամբ միայն շուկան կարող է դառնալ քաղաքակիրթ, ոչ միայն տնտեսական ու տնտեսագիտական, այլ շատ ավելի լայն՝ մարդկային (հումանիստական) չափումների տեսանկյունից:

Հարցեր կրկնության համար

1. *Ի՞նչ է մշակութաբանական արժեքը:*
2. *Ի՞նչ են տնտեսական, տնտեսագիտական արժեքները:*
3. *Որքանո՞վ է փողը համապատասխանում մշակութային արժեքների պահանջներին:*
4. *Մարդկանց ի՞նչ խմբեր կարելի է առանձնացնել հաշվի առնելով փողի նկատմամբ ունեցած վերաբերմունքը:*
5. *Ի՞նչ է շուկան:*
6. *Տեսության մեջ պետության և շուկայի փոխհարաբերության ի՞նչ դպրոցներ կառանձնացնեք:*
7. *Որո՞նք են շուկայի առավելություններն ու թերությունները:*

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Տնտեսության և բարոյականության փոխհարաբերությունն ունի մոտ երեք հազար տարվա պատմություն, որը մասնագետները բաժանում են հետևյալ փուլերի.

1. Անտիկ աշխարհ:
2. Նախամոդեռն, որը ներառում է միջնադարը:
3. Մոդեռնի ժամանակաշրջան, որն ընդգրկում է XVII-ից մինչև XX դարի կեսերը:
4. Հետմոդեռն, որը ժամանակակից փուլն է[54]:

Փուլերի նման բաժանումը ճշգրտման կարիք ունի: Դասակարգումը ըստ բովանդակության կատարելու դեպքում, կարծում եմ, պետք է առանձնացնել երեք փուլ, հետևյալ հաջորդականությամբ.

1. Անտիկ աշխարհ և միջնադար,
2. Կապիտալիզմի (շուկայական հարաբերություններ) ձևավորման, կայացման և զարգացման փուլ (XVII-ից մինչև XX դարի քսանական թվականներ),
3. Ժամանակակից փուլ (վերջին հարյուր տարին):

Ինչպես առաջին գլխում փորձեցինք ցույց տալ, մինչև Նոր ժամանակի տնտեսությունը և տնտեսագիտական միտքը սերտորեն կապված էր բարոյականության հետ: Տնտեսությունը վարելու կերպը, տնտեսության առանձին ոլորտների փոխհարաբերությունը (բնատնտեսություն, շուկա, առևտուր, վերաբերմունքը աշխատանքի, հարստության նկատմամբ և այլն) ձգտում էին կարգավորել բարոյական կարգավորիչներով: Արիստոտելը տնտեսության շուկայական ձևը, առևտրի գոյությունն ընդունեց, բայց չխրախուսեց, համարելով այն խրեմատիստիկա: Արիստոտելի մոտ տնտեսությունը և բարոյականությունը սերտորեն կապվում են: Շուկան, առևտուրը մնացին տնտեսական գործունեության ծայրամասում, ունեին երկրորդական նշանակություն: Մարդու տնտեսական գործունեությունը դիտվեց

---

[54] Տե՛ս Философия и методология экономики. Учебное пособие. Под ред. ***Л. А. Тутова***, էջ 367-369:

սոցիալական բարեկեցության և բարոյական արժեքների տեսանկյունից: Միջնադարում խրեմատիստիկան նույնպես դատապարտվում է: Մարդկանց գործունեության բարոյական կողմն ավելի է գնահատվում, քան նույնիսկ տնտեսականը: Իշխող է դառնում կաթոլիկ բարոյականությունը: Այդ ամենը փոխվեց, երբ եվրոպական հասարակությունը թևակոխեց շուկայական հարաբերությունների ժամանակաշրջան, որում տնտեսական գործունեության թատերաբեմ դարձավ շուկան, տնտեսավարման ձևը՝ բիզնեսը, գործող անձը՝ գործարար-բիզնեսմենը (տնտեսական գործակալը), վերջինիս գործունեության մղող հիմնական դրդապատճառը, շարժառիթը (մոտիվը)՝ առավելագույն շահույթը, եկամուտը: Այն, ինչը Արիստոտելի օրոք գտնվում էր տնտեսական գործունեության ծայրամասում և դատապարտվում էր, Նոր ժամանակում տեղափոխվեց կենտրոն, իրեն ենթարկեց ողջ սոցիալական կյանքը, հասարակությունը դարձավ շուկայի հավելուկը: Ոչ թե՛ տնտեսությունն է կառուցվում սոցիալական կյանքին համապատասխան, այլ հակառակը՝ սոցիալական իրականությունն է կառուցվում տնտեսությանը համապատասխան:

Կապիտալիզմի և բարոյականության փոխհարաբերության հետ կապված խիստ տարօրինակ իրավիճակ դիտվեց: Մ. Վեբերն ամեն կերպ ձգտում է հիմնավորել, որ բողոքական բարոյականությունը մեծ ազդակ (խթան) հանդիսացավ կապիտալիզմ ձևավորման համար (քիչ հետը այդ մասին մանրամասն կխոսվի), բայց ձևավորվելուց և կայանալուց հետո շուկայական գործարարությունն ըստ էության դարձավ բարոյականության հակոտնյան: Գործնական հարաբերություններում, գործարար աշխարհում բարոյականությունը համարվեց բիզնեսին խոչընդոտող, խանգարող գործոն: Բայց շուկայական հարաբերությունների մոտ չորսհարյուրամյա պատմությունը ցույց տվեց նաև, որ բարոյազուկ տնտեսությունը, շուկան նման է հույների Քրոնոս աստծուն, որը նույնիսկ իր զավակներին է կուլ տալիս, հանուն շահի պատրաստ է գործարքի մեջ մտնել սատանայի հետ:

Վերջին հարյուրամյակում վիճակն ավելի բարդացավ: Արևմուտքի պատմությունը, արևմտյան քաղաքակրթության զարգացման վեկտորը ցույց է տալիս, որ քրիստոնեական քաղաքակրթությունը փոխարինվում է դրամական, ֆինանսական քաղաքակրթությամբ, Եվ-

րոպան կարծես ամբողջությամբ կտրվում է իր ակունքներից: Կապիտալիզմի ոգին դառնում է փողը: Այդ ընթացքում, հումանիտար մտածողության շրջանակներում, աստիճանաբար բարձրացավ տնտեսությունը, բիզնեսը բարոյականության հետ կապելու պահանջը: XX դարի 70-ական թթ ԱՄՆ-ում ձևավորվեց, հետո այլ երկրներ տարածվեց Գործարարության բարոյագիտությունը՝ որպես հումանիտար հետազոտությունների և գիտելիքի որոշակի բնագավառ[55]: XX դարի 50-ական թվականներից շրջանառության մեջ դրվեց բիզնեսի սոցիալական պատասխանատվության հարցը: Թվարկած հիմնախնդիրները պայմանավորեցին հարցերի այն շրջանակը, որոնք քննարկվելու են այս բաժնում: Դրանք են բիզնեսի հետ կապված հիմնարար հասկացությունների ճշգրտումը, բիզնեսի (ընթացքում կկատարվեն հասկացությունների հստակեցումներ) առաջացման նախադրյալների վերհանումը, բիզնեսի և բարոյականության փոխհարաբերության վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետների վերլուծությունը:

*6.1. **Հիմնային հասկացությունների հստակեցում***

Մինչև բուն վերլուծությանն անցնելը փորձենք ճշգրտել հիմնային (բազիսային) հասկացությունները:

Հայկական մասնագիտական գրականության մեջ օգտագործվում են «բիզնես», «ձեռնարկատիրական գործունեություն», «ձեռներեցություն», առավել պակաս՝«գործարարություն» հասկացությունները, որոնք անգլերեն «enterprise» (ձեռնարկատիրություն, ձեռներեցություն, համարձակություն, նախաձեռնողություն), «business», ռուսերեն՝ «предпринимательство», «бизнес» հասկացությունների հոմանիշները կամ թարգմանություններն են:

Հայերենում «բիզնես»- եզրը շատ հաճախ օգտագործվում է նույնությամբ, առանց թարգմանության և որպես դրան համարժեք հասկացություններ օգտագործում են «ձեռնարկատիրական գործունեու-

[55] Այդ մասին մանրամասն տե՛ս ***Ա. Սարգսյան***, Գործարարության բարոյագիտություն, ուսումնական ձեռնարկ, էջ 8-12: «Գործարարության բարոյագիտություն» դասընթացը դասավանդվում է ՀՊՏՀ-ի հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետում:

թյուն», «ձեռներեցություն», «գործարարություն» հասկացությունները: Այժմ փորձենք պարզաբանել, թե որքանով են հարաբերակից նշված հասկացությունները:

Արևմտյան գրականության մեջ «business»-ը համարվում է գործունեության տեսակ, որի միջոցով սեփական ռիսկով ու պատասխանատվությամբ իրականացվում են համարձակ ծրագրեր՝ եկամուտ (շահ) ստանալու նպատակով: Ըստ այս խնդրով զբաղվող մասնագետների՝ հասկացությունն առաջին անգամ օգտագործել է ***Ռ. Կանտիլիոնը*** (1680-1734) հետմահու (1755) հրատարակված «Փորձ առևտրի բնույթի մասին» գրքում, որում նա «գործարար» («բիզնեսմեն») է համարում այն մարդուն, ով շուկայում էժան գնում, թանկ վաճառում է, որը գործում է անորոշության մեջ, և նրա եկամուտը հասույթն է ռիսկի դիմաց: «Business man»–ը այն մարդն է, ով բոլորից շատ ու շուտ է ռիսկի դիմում, գործի մեջ դնում իր դրամական միջոցները, ունեցվածքը, ապագան, ով շահույթ է տեսնում այնտեղ, որտեղ մյուսները չեն տեսնում, չի անում այն, ինչ մյուսներն են անում, չի անում այնպես, ինչպես մյուսներն են անում: Նման մարդկանց վարքագծի դրդիչ մոտիվներն են ազդեցության ոլորտներին տիրելու ձգտումը, հաղթելու վճռականությունը, անկախության և ազատության զգացումները, ընդգծված կամքը, ստեղծագործական մոտեցումը, որոշումներ կայացնելու վճռականությունը, կառավարելու հմտությունը, տիրելու հոգեբանությունը և այլն[56]:

Ըստ հայտնի տնտեսագետ Յոզեֆ Շումպետերի գործարարի տնտեսական կերպարի հիմնական հատկանիշ է նորարարությունը, որն արտահայտվում է նրա գործունեության հետևյալ գործառույթներում.

- նոր, սպառողի համար դեռևս անծանոթ նյութական բարիքների կամ նախկին բարիքների նոր որակով արտադրությունը,
- արտադրության նոր միջոցների ներդրումը,
- սպառման նոր շուկաների նվաճումը կամ եղածի արդյունավետ օգտագործումը,
- հումքի նոր աղբյուրների յուրացումը,
- արտադրության և վաճառքի կազմակերպման նոր ձևերի և եղանակների կիրառումը,

[56] Մանրամասն տե՛ս ***Лапуста. М. Г.,*** Предпринимательство. Учебник. М., 2009, էջ 5-27:

- շուկայում ֆիրմայի մրցակցային կամ գերիշխող դիրքի ապահովումը:

Ցանկացած գործարարի գործունեության նպատակը հասարակության համար անհրաժեշտ բարիքների և ծառայությունների արտադրությունն ու բաշխումն է, որով նա, մեծ հաշվով, իրականացնում է հանրայնորեն օգտակար սոցիալական գործառույթ՝ արտադրում է բարիքներ, ստեղծում է աշխատատեղեր, կատարում ներդրումներ: Ռուսական մասնագիտական գրականության մեջ предпринимательство-ն սպառողների համար արժեք ունեցող նոր ապրանքների, աշխատանքի, ծառայությունների ստեղծման գործընթաց է, որն իրականացվում է արտադրության, եղած ռեսուրսների արդյունավետ օգտագործման միջոցով՝ ցանկալի արդյունքներ ստեղծելու համար[57]: Այն նախաձեռնողական ստեղծագործական գործունեություն է, որի նպատակը քիչ ծախսերի միջոցով առավելագույն շահույթ կամ եկամուտ ստանալն է: «Предпринимательство»-ն քաղաքացիների, նրանց միավորումների տնտեսական գործունեության, մասնավորապես բիզնեսի կազմակերպման ինքնատիպ ձև է, որի նպատակը եկամտի (շահույթի) կամ անձնական օգուտի ստացումն է, որն իրականացվում է ֆիզիկական կամ իրավաբանական անձանց ռիսկին և պատասխանատվությանը համապատասխան[58]:

Հայկական մասնագիտական գրականությունից ստացած ընդհանուր տպավորությունն այն է, որ թվարկած հասկացությունների («ձեռնարկատիրական գործունեություն», «ձեռներեցություն», «գործարարություն», «բիզնես») բովանդակությունը նույնն է, որը մեզ ուղղորդում է տնտեսական գործունեության նույն ոլորտը, այսինքն՝ սեփական ռիսկով և պատասխանատվությամբ «գործ դնելն է»՝ քիչ ծախսերի, սահմանափակ ռեսուրսների ներդրմամբ լավ արդյունք ու շահ ստանալու նպատակով: Այս խնդիրը դրված է և՛ ձեռնարկատիրոջ, և՛ ձեռներեցի, և՛ գործարարի, և՛ բիզնեսմենի առջև: Օրինակ՝ ըստ Հ. Աղաջանյանի, ձեռնարկատիրությամբ զբաղվողը ձեռներեցն է[59]: Ըստ հեղինակների այլ խմբի ձեռներեցեություն կամ ձեռնարկատիրական գործունեությունը «...ինքնաբուխ նախաձեռնողական

---

[57] Տե՛ս նույն տեղում, էջ 10:

[58] Տե՛ս ***Шамхалов Ф.***, Философия бизнеса. М., 2010, էջ 59:

[59] Տե՛ս ***Հ. Աղաջանյան***, Տնտեսագիտության տեսություն, մաս 1, էջ 387:

գործունեությունն է, որը շահույթ ստանալու և ընդհանրապես հաջողության հասնելու նպատակ է հետապնդում՝ ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման ուղիների որոնման միջոցով» [60] : Հետևաբար՝ գործունեության որոշակի շրջանակներում վերը նշված հասկացությունները նույնիմաստ են: Այդ մասին ուղղակի նշվում է «Տնտեսագիտության տեսություն» ուսումնական ձեռնարկում, որտեղ ըստ տվյալ գլխի հեղինակի, եթե ձեռնարկատիրական գործունեության անմիջական նպատակը նյութական շահն է, որն արտահայտվում է առավելագույն շահույթ ստանալու ձգտմամբ, ապա տնտեսավարման պրակտիկայում ձեռնարկատիրությունը նույնանում է «բիզնես» հասկացության հետ[61]: Իսկ բիզնեսը կամ գործարարությունը ցանկացած գործունեությունն է, որի նպատակը օգուտ, շահ ստանալն է[62]: Դա նշանակում է, որ օգտագործելով այս հասկացություններից որևէ մեկը՝ կարող ենք միաժամանակ նկատի ունենալ մյուսները: Բայց, մյուս կողմից, այս հասկացությունների բացարձակ նույնացումը միշտ չէ, որ արդարացված է: Օրինակ՝ ըստ «Տնտեսագիտության տեսության» ձեռնարկի՝ ձեռնարկատիրական գործունեությունը արտադրատնտեսական գործունեություն է, տնտեսավարման որոշակի եղանակ, մինչդեռ բիզնեսը կարող է դուրս գալ արտադրատնտեսական գործունեության շրջանակներից: Գործարարությունը (այս դեպքում՝բիզնեսը) ցանկացած շահավետ զբաղմունքը կամ գործունեությունն է, մինչդեռ ձեռնարկատիրական գործունեության նպատակը երբեմն կարող է լինել ոչ թե շահույթի, այլ որևէ «օգտակար արդյունքի ստացումը»: Օրինակ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որի խնդիրը ուսանողներին գիտելիք տալն է և մարդմասնագետի պատրաստումը:

«Բիզնեսի ներածություն» ուսումնական ձեռնարկում «business»-ը թարգմանելով «գործ» ընդհանրապես՝ հեղինակները գտնում են, որ

---

[60] Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում, ուսումնական ձեռնարկ, ընդ. ղեկ. և խմբ. ***Մ. Մելքումյան***, Եր., 2014, էջ 29:

[61] Տե՛ս Տնտեսագիտության տեսություն, ուսումնական ձեռնարկ, խմբ. տ. գ. դ., պրոֆ. **Գ. Ե. Կիրակոսյան**, տ.գ.թ., պրոֆ. **Ի. Ե. Խլղաթյան**, էջ 411, ինչպես նաև ***Հ. Աղաջանյան***, Տնտեսագիտության տեսություն, մաս 1, ուսումնական ձեռնարկ, 297-298;

[62] Տե՛ս Տնտեսագիտության տեսություն, ուսումնական ձեռնարկ, խմբ. տ.գ. դ., պրոֆ. ***Գ. Ե. Կիրակոսյան***, տ.գ. թ., պրոֆ ***Ի. Ե. Խլղաթյան***, էջ 411:

մարդկային հասարակության ողջ պատմությունը, ներառյալ նաև մեր ժամանակները, կապված է բիզնեսի հետ: Անասնապահությունը և գեղանկարչությունը, հողագործությունը և տիեզերական հետազոտությունները և այլն ունեն մեկ ընդհանուր հատկանիշ, որն անվանում են բիզնես (գործ)63: Կարծում եմ, բիզնեսի նման ըմբռնումը չափազանց ընդլայնված է, որով տնտեսական գործունեության այս ձևը կորցնում է իր յուրահատկությունը և մարդկային ցանկացած գործունեություն դարձնում բիզնես: Հետագա շարադրանքում կարծես հասկացությունը որոշակիացվում է և բիզնեսը սահմանվում է որպես մարդկանց գործարար գործունեություն, գործարար հարաբերություն՝ շահագրգիռ կողմերի փոխշահավետության ապահովման միջոցով, որի նպատակը շահույթ ստանալն է:

Անցնելով բիզնեսի և ձեռնարկատիրության փոխհարաբերությանը հեղինակներն այդ երկու հասկացությունները մի դեպքում կարծես նույնացնում են, և ձեռնարկատիրությունը սահմանում ռիսկով իրականացվող գործունեություն, որի նպատակը շահույթ ստանալն է, իսկ մեկ այլ հատվածում ուղղակի նշվում է, որ «բիզնես» և «ձեռնարկատիրություն» եզրույթները հոմանիշներ չեն[64]:

Կարծում եմ թվարկած հասկացությունների մեջ ամենատարողունակը գործարարությունն է (բիզնեսը), ***որը ակտիվ, նպատակաուղղված, ստեղծագործական-նորամուծական, առաջանցիկ, ռիսկով* ուղեկցվող գործունեությունն է, որի նպատակը շահ ձեռք բերելն է***

---

[63] Տե՛ս ***Կ. Լ. Աթոյան, Մ.Ա. Մարդումյան, Պ. Ա. Քալանթարյան***, Բիզնեսի ներածություն, էջ 10:

[64] Տե՛ս նույն տեղում, էջ 85: Հայ հեղինակների հայացքների մանմամասն քննությունը տե՛ս ***Ա, Սարգսյան***, Գործարարության բարոյագիտություն, էջ 14-18:

* Ռիսկը ցանկացած գործունեության մեջ նախատեսվածի, սպասելիքի համեմատությամբ կորստի հավանականությունն է: Վարքագծի այս ձևը դրսևորվում է հավանական իրավիճակներում, անորոշության մեջ և ապահովված չէ սխալներից: Ռիսկը գործունեության այն ձևն է, որը կատարվում է հնարավոր վտանգները, կորուստները, սպառնալիքները և հետևանքները հաշվի առնելուց հետո:
Առանձնացվում են ռիսկի ***ներքին*** և ***արտաքին*** ձևերը: Ներքին տեսակներն են արտադրական, կառավարչական, ֆինանսավարկային, քաղաքական: Արտաքինի մեջ մտնում են ընդհանուր իրավիճակի վատացումը ազգային և համաշխարհային տնտեսության մեջ, զանազան տնտեսական ճգնաժամերը, տարերային աղետները, մրցակցային պայմանները, որոնք ազդում են շուկայի վրա և կանխատեսելի չեն (տե՛ս ***Пирогов К. М.***, ***Темнова Н. К.***, ***Гуцкова И. В.***, Основы организации бизнеса. Учебник, 2-е изд. М., 2001, էջ 4-5, ***Шамхалов Ф.***, Философия бизнеса, էջ 311-313):

*(**շահույթ ստանալը**)*: Այս իմաստով ըմբռնված գործարարությունը իր պատմությունը սկսում է կապիտալիզմի ձևավորման ժամանակաշրջանից, որի կարևորագույն բաղադրիչներն են (նաև նախադրյալները) ***մասնավոր սեփականությունը***, ***ազատ տնտեսական գործունեությունը***, ***շուկան*** և ***մրցակցությունը***: Հետևաբար՝ դասընթացում օգտագործվող «գործարարություն» հասկացությունը բիզնեսն է իր ժամանակակից կամ շուկայական հարաբերությունների իմաստով:

6.2. ***Գործարարության առաջացման նախադրյալները***

Գործարարությունը (բիզնեսը)՝ որպես գործունեության և տնտեսավարման եղանակ (որը ծնում է բազմաթիվ արժեքային-աշխարհայացքային, հոգևոր-բարոյական խնդիրներ) ձևավորվել է կապիտալիզմի (շուկայական հարաբերությունների) առաջացման հետ միաժամանակ, երբ իշխող են դառնում անհատի ազատության, ստեղծագործական ակտիվության, նրա ինքնօրինության, ինքնաբավության գաղափարները, որոնք պահանջում են հասարակական-քաղաքական կյանքի վերափոխում, անհատի մասին նոր հայեցակարգերի մշակում, որոնք դառնում են բիզնեսի առաջացման սոցիալ-քաղաքական և գաղափարական նախադրյալներ:

Դրանցից ***առաջինը*** մարդու նոր հայեցակարգի մշակումն է, որը կատարեց ***Վերածնության*** դարաշրջանի հումանիզմը, շարունակեց և ավարտին հասցրեց ***Լուսավորականության գաղափարախոսությունը***:

Վերածնության փիլիսոփայության և մշակույթի հիմքում ընկած էր ***հումանիզմը***, որի կենտրոնում դրված էր ***Մարդ-Անհատը*** , որի գործունեության դրդիչ մոտիվներն էին համարվում օգուտը, հաճույքը, անհատական ու հասարակական շահը: Նորից գնահատելի է դառնում հասարակական-քաղաքական ակտիվ կյանքով ու գործունեությամբ ապրող մարդը: Մարդը գնահատվում է ոչ թե սոցիալական ծագմամբ, դասային, դասակարգային պատկանելությամբ, այլ գործունեությամբ, սոցիալ-մշակութային ներդրմամբ: Եթե միջնադարյան պատկերացումներում մարդն իր մեղավոր բնույթի պատճառով աշխարհ էր գալիս ապաշխարելու, փրկության համար, իսկ հաճույքը

հոգևոր հաղորդակցումն է Աստծո հետ, ապա Վերածնության ժամանակաշրջանում ձևավորվում է հաճույքի նոր ըմբռնում, ըստ որի՝ մարդը պետք է հաճույք ստանա ոչ միայն հոգով, այլև մարմնով:

Եթե միջնադարում դրական հերոսը սուրբն էր, ճգնավորը, աստվածաշնչյան կերպարը, որը հաջողությամբ պայքարում էր մարմնական գայթակղությունների դեմ, ապա Վերածնության գրականության դրական հերոս է դառնում սովորական աշխարհիկ մարդը՝ բնավորության ամբողջականությամբ, նպատակի և գործի գիտակցության միասնությամբ, անձնազոհությամբ, տիրող պայմանները փոխելու ձգտմամբ, մարմնական գայթակղություններին տուրք տալու ցանկությամբ:

Ազատ է համարվում սեփական բանականությամբ առաջնորդվող մարդը, որը կատարում է գիտակցված, ազատ ընտրություն և պատրաստ է պատասխան տալ իր ընտրության համար:

Լավ է այն հասարակությունը, որը նպաստում է մարդու բնական հակումների զարգացմանն ու կատարելագործմանը, հասարակական ու անհատաան շահերի համատեղմանը: Եթե մարդն այդ ընդունակությունները դրսևորելու հնարավորություն չի ունենում, ապա հասարակությունը վատն է, և այն պետք է փոխել:

Մարդն է իր ճակատագրի տերը, նա ինքնուրույն արժեք է և հասարակական հարաբերությունների չափանիշի կրողը:

Լուսավորականությունը XVII-XVIII դարերի Եվրոպայի հասարակական կյանքի, գաղափարախոսության և մշակույթի ռացիոնալիստական շարժում է, որը, Հեգելի բնութագրմամբ, ժխտում էր գոյություն ունեցող կառավարման եղանակը, պետական կառուցվածքը, դատաիրավական համակարգը, կրոնը, արվեստը, բարոյականությունը:

Շարունակելով Վերածնության հումանիզմի ավանդույթները XVIII դարի լուսավորիչները համոզված էին, որ լավ է այն հասարակությունը, որը լավագույնս է համապատասխանում մարդու բնական, բանական և ազատ էությանը: Այդ հասարակության մեջ գործելու է բանական էգոիզմը, ըստ որի՝ ճիշտ հասկացված անձնական շահը համապատասխանելու է ընդհանրական հասարակական շահին:

Վերածնության, նրա հիմքի վրա բարձրացած Լուսավորականության գաղափարախոսությունը տեսականորեն նախապատրաստեցին և հիմնավորեցին XVII-XVIII դարերի սոցիալական և քաղաքական հեղափոխությունները, ներթափանցեցին տնտեսական կյանքի ոլորտ: Պատահական չէ, որ քաղաքական կարգախոսների կողքին տեղ գտան նաև տնտեսականը, ազատության և հավասարության հետ՝ նաև սեփականությունն ու ապահովությունը:

Երկրորդ նախադրյալը Նոր ժամանակից սկսված ապակրոնականացման, աշխարհիկացման (սեկուլյարիզացիայի) գործընթացներն էին: Ապակրոնականացումն ունի ***նեղ*** և ***լայն*** ըմբռնումներ: Նեղ կամ նախնական իմաստով ապակրոնացումը վերաբերել է եկեղեցական ունեցվածքի, կալվածքների, տիրույթների բռնագրավմանը: Այդ գործընթացը սկսվել է XVI դարում, երբ պետությունները բռնագրավեցին եկեղեցական կալվածքները, որի արդյունքում Եվրոպայում կաթոլիկ եկեղեցին զրկվեց բազմաթիվ հողային տիրույթներից: Հեղափոխությունները Անգլիայում և Ֆրանսիայում, պատերազմը ԱՄՆ-ի անկախության համար առաջ քաշեցին ժողովուրդների ինքնավարության (սուվերենության) գաղափարը: XVII-XVIII դարերի ազատագրական և ազգային պայքարի ընթացքում եվրոպական բազմաթիվ երկրներ ու պետություններ դուրս եկան կաթոլիկ եկեղեցու հսկողությունից և դարձան ինքնուրույն, անկախ և աշխարհիկ: Տնտեսական և քաղաքական ոլորտներում եկեղեցու իշխանությունը սահմանափակվեց:

Լայն իմաստով ըմբռնված ապակրոնացումը սկսում է Վերածնության դարաշրջանից, երբ սկիզբ է առնում և Նոր ժամանակում լայն տարածում ստանում մշակույթի, հասարակական-քաղաքական ինստիտուտների ապակրոնացումը, դրանց ազատագրմանը եկեղեցու հսկողությունից:

Երրորդ նախադրյալը բողոքական բարոյականության ձևավորումն էր: Եվս մեկ, գուցեև վերջին անգամ, քիչ ավելի մանրամասն անդրադառնանք բողոքական գաղափարախոսությանը և բարոյականությանը: Բողոքականությունն առաջացել է XVI դարում Կենտրոնական և Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում՝ ռեֆորմացիոն շարժման ընթացքում և արդյունքում: Ռեֆորմացիայի սկզբնական

նպատակը քրիստոնեական եկեղեցին, դավանաբանությունը, ծիսակարգը, եկեղեցականների վարքուբարքը ավետարանական ոգուն համապատասխանեցնելն էր կամ եկեղեցում ավետարանական ոգու վերականգնումը: Բայց արդյունքում դարձավ հակակաթոլիկ ու հակաֆեոդալական շարժում, որովհետև.

1. Եվրոպայում իշխում էր կաթոլիկ եկեղեցին, որը դեմ էր ցանկացած փոփոխությանը, արդյունքում՝ իր միահեծան իշխանության թուլացմանը:
2. Կաթոլիկ եկեղեցին սերտաճել էր ավատատիրությանը և դարձել նրա տնտեսական ու գաղափարական հենարանը: Այդ պատճառով պայքարը կաթոլիկ եկեղեցու դեմ միաժամանակ դառնում է պայքար այն հասարակության դեմ, որը սրբագործում էր պապական իշխանությունը:

Սոցիալական կազմով ռեֆորմացիան բաժանվում էր երեք շերտի: Հիմքում նոր ձևավորվող բուժուազիան էր՝ գործարարների խավը, աջում ազնվականներն էին, ձախում՝ գյուղացիական-պլեբեյական շերտը: Այդ պատճառով Ռեֆորմացիան ունեցավ չափավոր և արմատական թևեր: Չափավորը ձևավորեց բողոքականությունը՝ քրիստոնեության երրորդ խոշոր ուղղությունը:

Եվրոպայում հակակաթոլիկ, հակաֆեոդալական շարժումը, հասարակական հարաբերությունների փոփոխության անհրաժեշտության գիտակցումը ընթացավ երկու ուղղությամբ՝ վերածնական հումանիզմի և բողոքական ռեֆորմացիայի: Այդ պատճառով նրանք ունեին նաև որոշ ընդհանրություններ.

ա) ֆեոդալիզմի ընդերքում նոր հասարակական հարաբերությունների ձևավորում,

բ) աշխարհի և մարդու մասին նոր հայեցակարգի մշակում,

գ) ազատության, անհատի ակտիվության, նախաձեռնողականության խրախուսում և այլն:

Բայց այս խնդիրների իրականացման ուղիների ընտրության հարցում վերածնական հումանիզմն ու բողոքականությունը կանգնած էին հակադիր դիրքերում[65]: Բողոքականության հիմնադիր Մարտին

---

[65] Բողոքական եկեղեցիների դավանաբանական, պաշտամունքային առանձնահատկությունների մանրամասն վերլուծությունը տե՛ս ***Ա. Սարգսյան***, Կրոնի տեսություն և պատմություն, Եր., 2014, էջ 247-256:

Լյութերը գտնում էր, որ մեղքից փրկվելու միակ միջոցը անձնական հավատն է, որովհետև միայն հավատն է արդարացնում մարդուն: Քրիստոնեությանը պետք է ծառայել ոչ միայն աղոթքներով, այլև աշխարհիկ գործունեությամբ: Փրկությունը հնարավոր է նաև արարելով, ամենօրյա գործունեությամբ: Այդ պատճառով մերժում է ճգնավորականության ցանկացած դրսևորում: Աշխարհիկ գործերում Աստված գնահատում է աշխատասիրությունը, բարեխղճությունը, ազնվությունը, հաջողությունը: Առաջնորդվելով անձնական հավատով փրկվելու ակզբունքով՝ Լյութերը գտնում էր, որ հավատը պետք է ծառայի մարդկանց: Լյութերը «Սիրի՛ր մերձավորիդ» քրիստոնեական պատվիրանը դարձնում է «Ծառայի՛ր մերձավորիդ»: Մարդը պետք է հասարակայնորեն օգտակար աշխատանք կատարի մեծ ջանասիրությամբ: Այսպես է ձևավորվում աշխարհիկ ճգնավորականության սկզբունքը, ըստ որի մեկը ջանասիրաբար հող է մշակում, մյուսը՝ ջուլհակություն, երրորդը՝ ուսուցչություն: Ծառայությունը յուրաքանչյուրի կողմից սեփական խաչի կրումն է: Ճշմարիտ և նվիրված ծառայությունը, համբերությունն ու համառությունը Աստծո մոտ հավատի ամրության վկայություններ են, որոնք կարելի է դիտել փրկության արտաքին նախանշաններ: Աստված գնահատում է ազնիվ աշխատանքով ստեղծված հարստությունը:

Լյութերի գաղափարները շարունակում է բողոքականության հաջորդ նշանավոր գործիչ Ժան Կալվինը իր նախասահմանության մասին ուսմունքով: Կալվինի կարծիքով՝ Աստված մեզանից յուրաքանչյուրի ծննդից շատ ու շատ առաջ սահմանել է մեր ճակատագիրը. մի մասին՝ դրախտ, մյուսներին՝ դժոխք: Մարդը փրկվում է ոչ թե գործերով, այլ որովհետև Աստված նրան է ընտրել փրկության համար: Մարդուց ոչինչ կախված չէ, նա պարտավոր է ենթարկվել Աստծո կամքին, հավատալ նրա դատաստանին: Այդ պատճառով էլ մարդը պետք է աշխատի, իր վարքով արժանի դառնա ընտրյալ լինելուն: Մարդու մասնագիտական գործունեությունը ծառայություն է Աստծուն, այսինքն՝ կրոնական պարտականություն: Հաջողությունը աշխատանքում, ձեռնարկատիրական գործունեության մեջ, կարող են դիտվել ընտրյալ լինելու նախանշաններ: Մարդը պետք է հրաժարվի հաճույքից, չարդարացված շռայլությունից, վարի չափավոր ու պարզ

կյանք: Այստեղից են բխում մարդու «աշխարհիկ կոչման», «աշխարհիկ ճգնավորականության», «կրոնական հիգիենայի» ըմբռնումները: Ըստ Կալվինի՝ մարդը ցանկացած վայրում և յուրաքանչյուր պահի գտնվում է Աստծո մոտ ծառայության մեջ և պատասխանատվություն է կրում Աստծո բաշխած բարիքների՝ ժամանակի, առողջության, սեփականության համար: Մարդու մասնագիտական գործունեությունը կրոնական պարտականություն է, ծուլությունն ու անարդյունք գործունեությունը՝ մեղքի, Աստծո նկատմամբ անտարբերության, մերժված լինելու վկայություն:

Այս ամենով Լյութերը և Կալվինը ստեղծեցին կապիտալիզմի կրոնաբարոյական նախադրյալները, որոնք համապատասխանում էին XVI-XVII դարերի կապիտալիզմի զարգացման պահանջներին: Բողոքական բարոյականությունը նպաստեց կապիտալիզմի homo economicus-ի, բողոքական մշակույթի ձևավորմանը և զարգացմանը:

Լյութերի և Կալվինի կարծիքով՝ հավատացյալները աշխատանքին, աշխարհիկ գործունեությանը պետք է մոտենան նույն բարոյական նորմերով ու էներգիայով, ինչպես Աստծուն ծառայելուն են վերաբերում: Շահույթի ստացումը աստվածահաճո գործ է, եթե օգտակար է մերձավորին և ձեռք է բերում տնտեսության և գործարարության մեջ ընդունված վարքի բարոյական նորմերի պահպանմամբ: Հավատն առ Աստված և շահույթի ձգտումը դառնում են ոչ միայն համատեղելի, այլև փոխադարձաբար պայմանավորված:

Բողոքական բարոյականության և կապիտալիզմի ձևավորման փոխհարաբերությանն է նվիրված գերմանացի նշանավոր սոցիոլոգ Մաքս Վեբերի «Բողոքականության բարոյականությունը և կապիտալիզմի ոգին» աշխատությունը: Մինչև այդ աշխատության բովանդակության խիստ համառոտ վերլուծություն կատարելը, տնտեսության և կրոնի փոխհարաբերության վերաբերյալ վեբերյան տեսակետն ավելի հասկանալի դարձնելու նպատակով նշեմ, որ Վեբերի համոզմամբ, սերտ կապ գոյություն ունի կրոնի և տնտեսության միջև: Տնտեսության ձևավորման գործոններից (ըստ Վեբերի՝ դետերմինանտներից) մեկը կենսագործունեության կրոնական բնույթն է, իսկ վերջինս իր հերթին պայմանավորված է որոշակի աշխարհագրական, քաղաքական, սոցիալական տարածքում ծավալված տնտեսական գործունեության բնույթով: Այս տեսանկյունից է նա դիտարկում

այն տարածքների տնտեսական գործունեության ձևերը, որոնցում իշխել են բուդդայականությունը, իսլամը, հուդդայականությունը, քրիստոնեությունը, վերջինիս տարատեսակ՝ կալվինականությունը: Ավելին, Վեբերը համոզված է, որ շատ բան պայմանավորված էր թվարկած ուղղությունների ներկայացուցիչների քարոզչությամբ[66]:

Խոսելով «կապիտալիզմի ոգու» ձևավորման գործոնների մասին, Վեբերը հիշատակում է ամերիկյան նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ, մտածող ***Բ. Ֆրանկլինի*** (1706-1790) հետևյալ պատվիրանները, որոնք, նրա կարծիքով, էական դեր կատարեցին այդ գործում.

1. Հի՛շիր, որ ժամանակը փող է:
2. Հի՛շիր, որ վարկը փող է:
3. Հի՛շիր, որ փողն իր բնույթով արգասաբեր է և նոր փող ստեղծելու ունակություն ունի:
4. Ո՛վ ժամանակին վճարում է, նրա համար մյուսների դրամապանակը բաց է, որովհետև վկայում է այդ մարդու պարտաճանաչության և ազնվության մասին[67]: «Կապիտալիզմի ոգի» ասելով Վեբերը հասկանում է մշակութային այն կարգը, որին բնորոշ են օրինական շահի պարբերաբար և ռացիոնալ ձգտումը՝ սեփական մասնագիտության շրջանակներում: Այդ ոգու ձևավորման գործում, Վեբերի կարծիքով, հատկապես էական է բողոքականության հիմնադիր բարեփոխիչներ Լյութերի, Կալվինի, իսկ ուղղություններից (բացի լյութերականությունից և կալվինականությունից) նաև բողոքական ծագում ունեցող պիետիստական (XVII-XVIII դարերում Գերմանիայում ծագած ուղղափառ բողոքականությանը հակադրվող շարժում), մեթոդիստականության (Անգլիայում առաջացած բողոքական շարժում), անաբապտիստական (Ռեֆորմացիայի արմատական ուղղություն, որը ճնշվեց զենքի միջոցով) աղանդների քարոզչությունը: Նա գրում է. «Բողոքականության պատմական նշանակությունը կարելի է հանգեցնել նրան, որ նրա դերը նշանակալի է որպես զուտ ռացիոնալ աշխարհայացքի «նախակարապետի»[68]: Փորձելով հիմնավորել այն

---

[66] Տե՛ս ***Вебер М.***, Хозяйственная этика мировых религии, Атеист, 1928, № 25, էջ 35-37:

[67] Տե՛ս ***Вебер М.***, Избранные произведения. М., 1990, էջ 72:

[68] Նույն տեղում, էջ 94:

միտքը, որ եվրոպական կապիտալիզմի ձևավորման գործում էական դեր են կատարել բողոքականության կրոնաբարոյական սկզբունքները, որոնք ապահովել են այնպիսի գծերի դաստիարակումը, ինչպիսիք են ***աշխատասիրությունը***, ***ազնվությունը***, ***հաշվենկատությունը***, միաժամանակ, իր հասցեին հնչող քննադատությունը մեղմելու նպատակով գրում է, որ ինքը չի պաշտպանում այն տեսակետը, թե «…*կապիտալիզմը* որպես տնտեսական համակարգ Ռեֆորմացիայի արդյունք է[69]», այլ փորձում է պարզել, թե կրոնական գործոնը ինչպե՞ս է ազդել և ի՞նչքանով է նպաստել կապիտալիզմի առաջացմանը: Ի դեպ, Վեբերը պնդում է, որ Ռեֆորմացիայի մշակութային հետևանքները ոչ միայն նախատեսված, այլև *ցանկալի* չէին հենց բարեփոխիչների (Մ. Լյութերի և Ժ. Կալվինի-Ա. Ս.) համար, ավելին, այն ինչ ստացվեց իրականում, նրանց իրական մտադրությունների հակառակն էր[70]: Անշուշտ, Վեբերն իրավացի էր կարծելով, որ բողոքական քարոզչությունը բարերար ազդեցություն է ունեցել կապիտալիզմի ձևավորման ժամանակաշրջանի գործարարի բարոյական կերպարի ձևավորման վրա, բայց ծայրահեղության մեջ էր ընկնում պնդելով, որ.

ա) Ռեֆորմացիայի ազդակը, խթանը մեծ էր կապիտալիզմի ձևավորման և զարգացման գործում,

բ) տնտեսական առավել մեծ հաջողությունների հասան բողոքական երկրները:

Վեբերի օրոք և նրանից հետո քիչ չէին նրա հայացքների քննադատները, ովքեր փորձում էին հիմնավորել.

1. Սոցիալ-տնտեսական ու քաղաքական փոփոխությունները կամ դրանց պահանջը ծնեցին բողոքականությունը, մասնավորապես կալվինականությունը:
2. Պնդումը, թե տնտեսական առավել զարգացման հասան բողոքական երկրները, վիճելի է: Եվրոպայի քաղաքական և քաղաքակրթական դեմքը ներկայացնող երկրներն են Գերմանիան, որը կիսաբողոքական երկիր է, իսկ Ֆրանսիան, Իսպանիան, Պորտուգալիան, Իտալիան կաթոլիկ են, Անգլիան բողոքական

[69] Նույն տեղում, էջ 106:
[70] Տե՛ս նույն տեղում, էջ 105:

երկիր է՝ կաթոլիկության բազմաթիվ մնացորդներով: Միայն Հոլանդիան (Նիդեռլանդներ) է որպես բողոքական երկիր որոշ ժամանակ երևացել քաղաքական ասպարեզում ու մարել, Սկանդինավյան երկրների դեպքում դա էլ չի դիտվել, իսկ ԱՄՆ-ը հիշյալ ժամանակաշրջանում գաղութ էր:

Կարծում եմ՝ Կալվինի ուսմունքի գնահատման հաջողված փորձ է կատարում ***Ֆ. Էնգելսը*** (1820-1895), որի կարծիքով՝ Կալվինի հայացքները համապատասխանում էին այն ժամանակաշրջանի բուրժուազիայի ամենահամարձակ մասի պահանջներին: Կանխորոշման մասին Կալվինի ուսմունքը այն փաստի կրոնական արտահայտությունն է, որ առևտրի ու մրցակցության աշխարհում հաջողությունը կամ անհաջողությունը պայմանավորված են ոչ թե առանձին անհատների գործունեությամբ կամ հնարավորությամբ, այլ նրանցից անկախ հանգամանքներով: Որոշում է ոչ թե առանձին մարդու կամքը կամ գործունեությունը, այլ հզորագույն, բայց անիմանալի տնտեսական ուժերի ողորմածությունը[71]: Թեև պետք է ընդունել նաև այն, որ Վեբերն իրավացի էր պնդելով, որ բողոքականության ոգով դաստիարակված բուրժուան ավելի չափավոր էր իր կենցաղում, ծախսերում և համեմատաբար ազնիվ բիզնեսում ու պետության նկատմամբ ունեցած իր պարտականություններում (այդ մասին՝ քիչ հետո):

Մարդու նոր հայեցակարգի մշակման, ապակրոնացման գործընթացների և բողոքական բարոյականության տարածման արդյունքում տնտեսության վրա թուլացավ քաղաքական իշխանության ազդեցությունը: Իշխանության ապակենտրոնացումը ենթադրում է սեփականության իրավունք արտադրության միջոցների նկատմամբ: Մասնավոր սեփականության առաջին պլան մղվելու հետ միաժամանակ բիզնես գործունեությունը դարձավ տնտեսական գործունեության հիմնական ձևը, իսկ կապիտալի նախասկզբնական կուտակման և ծնվող նոր պետության գաղափարախոսությունը դարձավ մերկանտիլիզմը, որի ներկայացուցիչները շրջանառության մեջ դրեցին «կապիտալ», «ապրանք», «գին», «արտահանում», «ներմուծում» և այլ տնտեսագիտական հասկացություններ: Այդ ուղղության հիմնադիրն ***Անտուան դը Մոնկրետիենը*** (1575-1621) 1615 թ. հրատարակած

[71]Տե՛ս ***Ֆ. Էնգելս***, Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն, ***Կ. Մարքս*** և ***Ֆ. Էնգելս***, Ընտիր երկեր երեք հատորով, հ. 3, Եր., 1978, էջ 130:

«Քաղաքատնտեսության տրակտատ» գրքում շրջանառության մեջ դրեց «քաղաքատնտեսություն» հասկացությունը որպես տնտեսական գիտելիքների որոշակի բնագավառի ընդհանուր բնութագիր:

Կապիտալի նախասկզբնական կուտակման փուլի ավարտին մերկանտիլիզմին փոխարինելու եկավ տնտեսական ազատականացումը (լիբերալիզմը), որի արտահայտած գաղափարներն էին.

ա) տնտեսական գործունեության ազատականացում,

բ) տնտեսության ազատագրում պետական հսկողությունից,

գ) ազատ մրցակցության ապահովում:

XVII-XIX դարերի ընթացքում աստիճանաբար լուծարվեցին խավային, ժառանգական և այլ արտոնությունները, բոլորն՝ անկախ ունեցվածքից, սոցիալական վիճակից, ազգային ու կրոնական պատկանելությունից ստացան հավասար իրավունքներ: Ազատ շուկան և ազատ մրցակցությունն առաջին պլան մղեցին անհատին, նրան դարձրեցին տնտեսական գործունեության գլխավոր սուբյեկտ: Ազատ տնտեսական գործունեությունը, ազատ մրցակցությունը դարձան շուկայական տնտեսության կամ կապիտալիզմի հիմնաքարերը

*6.3. **Գործարարություն և բարոյականություն***

Այժմ գործարարության և բարոյականության առնչություններին վերաբերող տեսակետների մասին:

Տեսակետներից մեկը ***ժխտողական*** է, ըստ որի՝ գործարարությունն ու բարոյականությունը միմյանց հետ շփման եզրեր չունեն, որովհետև զբաղվում են տարբեր հարցերով, ընդգրկում գործունեության հակադիր ոլորտներ: Բիզնեսը տնտեսական բնույթ ունի, նպատակը շահ ձեռք բերելն է, բարոյականությունը՝ մշակութային-հոգևոր, նպատակը մարդու վարքը և միջմարդկային հարաբերությունները որոշակի հունի մեջ դնելն է, իդեալին մոտեցնելը:

Տնտեսագիտության մեջ ժխտողական տեսակետը ներկայացնում են ավստրոգերմանական նորազատական (նեոլիբերալ) դպրոցի ներկայացուցիչներ Լյուդվիգ Ֆոն Միզեսը, Ֆրիդրիխ Ֆոն Հայեկը, ամերիկյան տնտեսագիտական մտքի ներկայացուցիչ Միլտոն Ֆրիդմենը և բիզնես աշխարհի բազմաթիվ ներկայացուցիչներ ամենատարբեր երկրներում:

Նրանց կարծիքով բիզնեսի և բիզնեսմենի խնդիրը առավելագույն շահույթ ստանալն է, ցանկացած այլ գործառույթ, այդ թվում նաև բարոյական, շեղում է բիզնեսն իր հունից, հետապնդած նպատակից: Բիզնեսի վրա սոցիալական, բարոյական բնույթի սահմանափակումներ դնելը կարող է կործանել ոչ միայն բիզնեսը, այլև ողջ համակարգը: Բարոյականությունը գործի մարդուց պահանջվում է պարտք, պատասխանատվություն, խղճմտանք, ամոթ, արժանապատվություն, որոնք կարող են խլել նրա էներգիան, առաջացնել հոգեկան ցնցումներ: Մինչդեռ բիզնեսի գլխավոր նպատակը եղել ու մնում է շահը և դարձյալ շահը: Բարոյականության մեջ նպատակը սահմանում է միջոցը, ինչպիսին նպատակն է, այնպիսին էլ միջոցը, բարոյական նպատակին հասնելու միակ միջոցը բարոյականն է: Մինչդեռ բիզնեսում բոլոր միջոցները պետք է ուղղվեն մեկ նպատակի՝ առավելագույն շահույթի, հաջողությունը արդարացնում է միջոցը՝ գտնում էր Մ. Ֆրիդմենը: Գործարար աշխարի շատ ներկայացուցիչներ բիզնեսը համեմատում են շախմատի հետ: Շախմատն ունի իր կանոնները, որոնց տիրապետողները՝ կանոնների շրջանակում, ավելացնելով իրենց հնարավորությունները՝ (ստեղծագործական մտածողություն, հեռուն տեսնելու, հաշվարկներն ավելի արագ կատարելու ունակություն, հակառակորդին մոլորեցնելու կարողություն և այլն) հաղթում են: Նույն երևույթն է նաև բիզնեսում: Բայց ոչ ոք շախմատիստի խաղը չի գնահատում բարոյական չափանիշների տեսանկյունից, ինչու՞, որովհետև շախմատի կանոնները համարվում են բարոյականությունից դուրս, բարոյապես չեզոք, ապաբարոյական, մինչդեռ գործարարի ողջ գործունեությունը գնահատվում է հատկապես բարոյական նշանակության ու ազդեցության տեսանկյունից, ինչը նրանց կարծիքով, արդար չէ և ճիշտ էլ չէ, որովհետև բարոյական պահանջները կապանք են դնում գործարարի ձեռքերին, մտքին, սահմանափակում նրա գործողությունների շրջանակը, հնարավորությունները, ստիպում նրան մտածել իր արարքների բարոյական հետևանքների մասին, ապրել խղճի խայթ, ամոթի զգացում, որոնք որևէ օգուտ բիզնեսին չեն տալիս: Հետևաբար՝ «արդարություն», «հավասարություն», «բարոյականություն» և այլ բարոյական բնույթի պահանջներ բիզնեսի ոլորտից պետք է դուրս բերել, դրանք

միայն վնասում են բիզնեսին, վերջին հաշվով, հասարակությանը: Դրանց պահպանումը և լուծումը պետության խնդիրն է:

Գործարարության և բարոյականության փոխհարաբերությանը վերաբերող մյուս տեսակետը ***հասարականն է, դրականը***: Այս տեսակետի կողմնակիցների (որոնց մեջ է նաև տողերիս հեղինակը) փաստարկները հետևյալն են.

1. Տնտեսական գործունեության գլխավոր սուբյեկտը մարդն է, իսկ որտեղ մարդ, այնտեղ արժեքներ: Ապրելով հասարակության մեջ, մարդը չի կարող իր ամենօրյա հարաբերությունները կառուցել առանց փողի, իրավական և բարոյական նորմերի: Այդ պատճառով, ինչպես մարդկային գործունեության ցանկացած ձև, այնպես էլ տնտեսականը, պետք է գնահատել բարոյական տեսանկյունից:

2. Ցանկացած բիզնես չէ, որ օգտակար է հասարակությանը, հակառակը՝ բերում է չարիք, հիվանդություն (ծխախոտի, օղու, թմրանյութերի բիզնես և այլն), որոնց դեմ միայն իրավապահ մարմինների պայքարը քիչ է, պետք է բարոյական հարցեր բարձրացնել, շահի մոլուցքին հակադրել հումանիզմը, ազգային-բարոյական նկարագիրը: Այսինքն՝ բարձրացնել հասարակության, հետևաբար և բիզնեսի բարոյականության և բարոյական պատասխանատվության ընդհանուր մակարդակը: Բիզնեսին պետք է ***հումանիստական*** ուղղվածություն տալ, որովհետև տնտեսական գործունեության ***օբյեկտը, սուբյեկտը, միջոցը, նպատակը, հիմնական ռեսուրսը եղել ու մնում է մարդը:***

3. Բիզնեսը ծավալում է սոցիալապես անպատասխանատու վարքագիծ: Մինչդեռ բիզնեսը գործում է հասարակական և ազգային միջավայրում, ուստի բիզնեսմենը պարտավոր է գնահատել իր վարքագծի ազգային-հասարակական-բարոյական նշանակությունն ու հետևանքները:

4. Բիզնեսի վրա բարոյականությունը կարող է բարերար ազդեցություն ունենալ: Ազնիվ և օրինակելի բիզնեսը երկարատև ռազմավարական արդյունավետություն կարող է ապահովել, մինչդեռ անբարոյական բիզնեսը վնասակար է անհատի, հասարակության, նաև ձեռնարկության համար:

5. Տնտեսությունը միշտ էլ կապված է հասարակության բարոյական արժեքների հետ: Մարդը տնտեսական կյանքից դուրս մնալ չի

կարող: Զարգացող տնտեսությունը նաև անհատի ու հասարակության բարեկեցությունն է ապահովում: Հակառակ դեպքում գտնվում են աղետալի վիճակում: Այս ամենով տնտեսությունը դառնում է հասարակակամ կյանքի հիմնարար արժեքներից մեկը: Իհարկե, բարոյականությունն անմիջականորեն չի բխում տնտեսությունից, բայց ապրանքը, ունեցվածքը բարոյապես չեզոք են մինչև այն պահը, երբ դառնում են ինչ-որ մեկի սեփականությունը:

6. Տնտեսությունը պետք է սոցիալական կողմնորոշում ունենա: Տնտեսության ազատականացման և սոցիալական արդարության արժեքները միասնության մեջ դիտելու դեպքում է հնարավոր դառնում սոցիալապես պաշտպանել աշխատողին և ազատություն տալ ակտիվ և ունակ մարդկանց:

7. Աղքատության և շվայտության բևեռները երբեմն միավորվում են բարոյական անկմամբ, ձևախեղմամբ (դեգրադացիայով): Մարդուն ստորացնող ամենամեծ գործոններից մեկը աղքատությունն է: Գործազրկությունը, զանգվածների սոցիալական թշվառությունը նպաստում են հանցագործությունների աճին, հասարակության բարոյական անկմանը, անհատի հոգևոր հաշմանդամությանը, թերարժեքության բարդույթի ձևավորմանը: Բայց բարոյական քայքայում, անկում է դիտվում նաև հարստությունից, փողից շփացած մարդկանց, շվայտ կյանքով ապրող նրանց ընտանիքների, հարազատների միջավայրում: Հռոմը համատարած բարոյական անկումից կործանվեց: Այս ամենը սերտ կապով են կապում բիզնեսն ու բարոյականությունը:

Գործարարության սոցիալական պատասխանատվության հայեցակարգի հիմքերը դրվել են XIX դարի վերջին և XX-ի սկզբներին ԱՄՆ-ում՝ ինժեներների միջավայրում, որոնք «սոցիալական պատասխանատվության զգացումի» մեջ էին տեսնում իրենց մասնագիտության հեղինակության բարձրացումը: Որոշ ժամանակ անց այս հայեցակարգը կապվեց բիզնեսի հետ, բայց տարածում չստացավ: XX դարի 20-ական թթ. ամերիկյան գործարար միջավայրում լայն տարածում ստացավ «ծառայելու» հայեցակարգը, ըստ որի բիզնես կազմակերպությունները պետք է ունենան նաև այլ նպատակներ, բացի փող ստեղծելուց, իսկ շահույթի հետ կապ չունեցող գործունեու-

թյունը անվանեցին «ծառայություն», որը դարձյալ երկար կյանք չունեցավ՝ մշակված չլինելու և 1928-1932 թթ. տնտեսական ճգնաժամի պատճառով: Հաջորդ երկու տասնամյակներում «ծառայելուն» փոխարինելու եկավ «սոցիալական պատասխանատվության» հայեցակարգը, որը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տարածվեց գործարար միջավայրում, իսկ հիմքերը դրվեցին 1953 թ. ամերիկացի գործարար ***Գ. Բոուենի*** հրատարակած «Բիզնեսի սոցիալական պատասխանատվություն» գրքով, որում հեղինակը խորհուրդ է տալիս բիզնեսմեններին վարել այնպիսի քաղաքականություն, ընդունել այնպիսի որոշումներ, ծավալել այնպիսի գործունեություն, որոնք ցանկալի են հասարակության նպատակների, արժեքների և հետաքրքրությունների առումներով:

Բիզնեսի սոցիալական պատասխանատվության հայեցակարգի հիմնական հարցադրումը հետևյալն է. ձեռնարկությունը, բիզնես կազմակերպությունը, բիզնեսն ընդհանրապես պատասխանատու է հասարակության առջև, թե՞ ոչ: Բիզնես կազմակերպությունը իր ռեսուրսների մի մասը պե՞տք է ուղղի հասարակական խնդիրներ լուծելուն (օգնություն կարիքավորներին, առողջապահության ոլորտին, շրջակա միջավայրի պահպանությանը, սպառողների շահերի պաշտպանություն և այլն), թե՞ ո՛չ: Ձևավորվեց երկու իրարամերժ տեսակետ՝ կողմ և դեմ:

Կողմնակիցների կարծիքով՝ բիզնես կազմակերպությունը պարտավոր է առաջնորդվել սոցիալական պատասխանատվության սկզբունքով, որովհետև.

ա) բիզնեսի համար ապահովում է հասարակության բարեհաճ վերաբերմունքը, ստեղծում է դրական կերպար (իմիջ),

բ) պետք է ձեռք բերած գումարի մի մասը ծախսել սոցիալական խնդիրների լուծման համար,

գ) գործելով հասարակության մեջ բիզնեսը պարտավոր է արձագանքել հասարակության հոգսերին:

Հակառակորդների կարծիքով բիզնեսը չպետք է զբաղվի սոցիալական պատասխանատվության հարցերով, որովհետև.

ա) խախտում է առավել շահույթ ստանալու շուկայական սկզբունքը,

բ) սոցիալական ծրագրերի իրականացումը, որը ենթադրում է դրամական ծախսեր, բարձրացնում է ապրանքների և ծառայությունների գինը,

գ) բիզնես-կազմակերպությունները հասարակության կառավարման փորձ չունեն, դա պետության, մասնագետների գործն է: Թեման ավարտենք «բիզնեսի սոցիալական պատասխանատվություն» հասկացությունը սահմանելով և մակարդակները նշելով: ***Սոցիալական պատասխանատվությունը բիզնես կազմակերպության կողմից չգրված, չստորագրված, բայց ինքնին հասկանալի և ցանկալի համաձայնություն է բիզնեսի և այն հասարակության միջև, որում նա գործում է:***

Առանձնացվում են բիզնես կազմակերպության սոցիալական պատասխանատվության երեք մակարդակ: Առաջինը ներառում է հարկերի և աշխատավարձերի ժամանակին վճարումը, նոր աշխատատեղերի ստեղծումը: Երկրորդ մակարդակը վերաբերում է աշխատողների աշխատանքային, կենցաղային, բժշկական, սոցիալական և նման այլ ոլորտների բարելավման պայմաններին: Երրորդ մակարդակը բարեգործությունն է[72]:

Հարցեր կրկնության համար

1. *Որո՞նք են ժամանակակից գործարարության առաջացման աշխարհիկ նախադրյալները:*
2. *Որո՞նք են ժամանակակից գործարարության առաջացման կրոնական նախադրյալները:*
3. *Որո՞նք են գործարարության և բարոյականության փոխհարաբերության ժխտողական տեսակետի ներկայացուցիչների փաստարկները:*
4. *Որո՞նք են գործարարության և բարոյականության փոխհարաբերության դրական տեսակետի կողմնակիցների փաստարկները:*
5. *Ի՞նչ է բիզնեսի սոցիալական պատասխանատվությունը, ի՞նչ տեսակետներ գոյություն ունեն:*

[72] Այդ մասին տե՛ս ***Ա. Սարգսյան***, Գործարարության բարոյագիտություն, էջ 122-134:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ՏՆՏԵՍԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

*7.1. **Ժամանակակից էկոլոգիական հիմնախնդիրները***

Պատմականորեն մարդ-բնություն փոխհարաբերությունը և փոխազդեցությունը ընթացել է երկու փուլով:

Առաջինը հարմարման փուլն է, երբ մինչև նեոլիթյան հեղափոխությունը մարդը բնությանը հարմարվում էր գործիքները կատարելագործելով, որի ընթացքում շարունակելով մնալ ֆիզիոլոգիական, դառնում է նաև սոցիալական և մշակութային (մշակութաստեղծ) էակ: Մենք արդեն նշել ենք, որ մինչև Նոր քարի դարը մարդը վարել է յուրացնող կամ որ նույնն է՝ սպառող տնտեսություն, որի արդյունքում, այդ ժամանակահատվածում ապրող մարդու համար հասանելի տարածքում, սպառվեց կամ գրեթե կանգնեց սպառման եզրին այն ամենը, ինչով սնվում էր մարդը: Որոշ մասնագետների կարծիքով տեղի ունեցավ առաջին էկոլոգիական մեծ աղետը, որը ստիպեց մարդուն իրեն զրկել ազատությունից, ամուր խրվել հողի մեջ, դառնալ նստակյաց և վարել արտադրող տնտեսություն: Տեղի ունեցավ նեոլիթյան հեղափոխությունը (VIII-VI հազարամյակներ մ. թ.ա.), որից հետո մարդ-բնություն փոխհարաբերության մեջ տեղի ունեցավ անցում ***երկրորդ՝ ակտիվ-վերափոխիչ*** փուլին, որի ընթացքում մարդու ներկայությունը և ազդեցությունը բնության վրա սկզբնապես դարձավ ***նկատելի***, իսկ աստիճանաբար՝ ***ուժգնացող***: Նկատելիի փուլը համապատասխանում է ավանդական հասարակությանը (քաղաքակրթությանը՝ IV հազարամյակից մինչև XVII դարը): Այդ ժամանակաշրջանում այն տարածքներում, երկրներում, որոնցում հաշվի են առել բնության հետ վարվելու առանձնահատկությունները, ապրել են առանց էկոլոգիական լուրջ ցնցումների (օրինակ՝ հայ գյուղացին օգտվել է հողամշակության եռադաշտային ձևից, երբ դաշտերից

երկուսը մշակել է, իսկ երրորդը թողել անմշակ՝ որպեսզի այն չսպառի իրեն և շարունակի մնալ օգտագործման համար պիտանի): Ուժգնացող՝ տեխնածին ազդեցությունը, սկսում է XVII դարից և հասնում մինչև մեր օրեր: Այդ փուլը համապատասխանում է կապիտալիստական հարաբերությունների հաստատմանը Եվրոպայում, որի ընթացքում բիզնեսի կողմից բնության նպատակաուղղված, գիտակցված յուրացումը, բուն նշանակությամբ՝ շահագործումը գնալով ուժգնացավ և կործանարար ազդեցություն ունեցավ XX դարի կեսերից, երբ Արևմուտքը (մեր օրերում՝ նաև զարգացման արևմտյան ուղին ընտրած երկրները) մուտք գործեց սպառողական հասարակություն: Ձևավորվեցին մի շարք հիմնախնդիրներ, որոնց ժամանակակից գրականության մեջ անվանում են բնապահպանական (էկոլոգիական) և որոնց անտեսումը հղի է ամենավտանգավոր և անկանխատեսելի հետևանքներով:

Խիստ համառոտ անդրադառնանք բնապահպանական առանձին ոլորտների քննությանը:

Անտառների, բուսականության ոչնչացման հետևանքով անապատացվել է ցամաքի 40%-ը: Անապատացման վտանգի մեջ է ևս 30 մլն քմ տարածք՝ ցամաքի 1/5 մասը: Անապատացման արդյունքում կործանվում են քաղաքներ, քաղաքակրթություններ (մասնագետների կարծիքով, տարածքի անապատացումը քիչ դեր չի կատարել շումերական քաղաքակրթության կործանման գործում): Անապատից բնակչությունը հեռանում է, ձևավորվում է «էկոլոգիական փախստական» կոչվող երևույթը

Վերջին 100 տարվա ընթացքում մարդը բնությունից վերցնում է 100 միավոր նյութ (ենթադրենք՝ 100 կգ), օգտագործում է 3-4 միավորը (3-4 կգ), մնացածը վերադարձնում է բնությանը՝ արտադրական թափոնների տեսքով: Զարգացած երկրներում ամեն տարի բնությունից վերցվում է 30 տոննա, որից օգտագործվում է 1-1.5%-ը: Արդյունքում հողը զրկվում է ինքնամաքրման հնարավորությունից, թունավորվում է մարդու գոյության անմիջական բնական միջավայրը:

Թերսնման, աղքատության հաղթահարման խնդիրը լուծելու համար նորանոր տարածքներ են յուրացվում: Տևական շահագործման արդյունքում դիտվում է հողի քայքայում, ջրի պակաս, կլիմայի փոփոխություն: Մինչդեռ երկրագնդի տարածքի միայն 13%-ն է պիտանի

տնտեսական գործունեության համար: Այդ ամենի արդյունքում են մարդիկ հեռանում իրենց նախկին, բայց այլևս մշակության համար ոչ պիտանի հողերից:

Այն պահից, երբ հասարակությունը թևակոխեց զարգացման արդյունաբերական փուլ, զարկ տրվեց օդի աղտոտմանը՝ հազարավոր գործարանների, արդյունաբերական համալիրների օդ նետած թունավոր գազերի, նյութերի միջոցով և ձևերով: XX դարում գործարաններին ավելացան ինքնաթիռները, ավտոմեքենաները՝ օդը թունավորելու իրենց բաժնեմասով: Օդի թունավորման պատճառով օզոնային շերտի էկրանը 50% մեծացել է, որի արդյունքում 10 անգամ մեծացել է երկիր հասնող ուլտրամանուշակագույն ճառագայթների ռադիոակտիվությունը, որի հետ են կապվում ուռուցքային, աչքի հիվանդությունները, գենային փոփոխությունները, որովհետև այդ ճառագայթները քայքայում են ԴՆԹ-ի մոլեկուլները (որն արդեն գենետիկական փոփոխություն է), բացասական ազդեցություն ունենում տարատեսակ բույսերի աճի պայմանների վրա, պակասեցնում ծովերում, ջրերում ապրող օրգանիզմների սննդի արդյունավետությունը: Առաջանում են հիվանդություններ, որոնց անվանում են էկոլոգիական:

Ջրի ընդհանուր ծավալի միայն 0.6%-ն է բաժին հասնում խմելու ջրին: Յուրաքանչյուր տարի սպառվում է 3500 կմ^3 ջուր: Երկրի տարածքի 60%-ն այն գոտիներն են, որոնցում բավարար քանակությամբ խմելու ջուր չկա: 500 մլն մարդ տառապում է խմելու որակյալ ջրի պակասից:

7.2. Տնտեսություն և բնապահպանություն

Ինչպես արդեն նշել ենք տնտեսությունը ձևավորվում է մարդ-բնություն փոխազդեցության և փոխհարաբերության ընթացքում: Եվ թե՛ ինչպիսին կլինի բնությունը (առողջ, թե՛ հիվանդ), ինչպիսին կլինի տնտեսությունը (առաջադիմող, հարուստ, թե՛ ծայրը-ծայրին հասցնող, աղքատ), պայմանավորված է տնտեսությունը վարելու կերպով, տնտեսավարման ձևով: Բնության հետ ունեցած հասարակության փոխհարաբերության առկա վիճակը ցույց է տալիս, որ.

Եթե արդյունաբերական զարգացած երկրներում էկոլոգիական խնդիրներն ունեն տեխնածին բնույթ, ապա զարգացող և չզարգացած երկրներում դրանք մարդածին են:

Եթե զարգացած երկրներում բնությանը հասցրած վնասը գալիս է հարստությունից, ապա մյուսներում՝ աղքատությունից:

Հետազոտողները նշում են, որ ներկայիս եվրոպական և նրան նմանվելու ձգտող հասարակությունները իրենց բնույթով սպառողական են, որոնց կարգախոսն է՝ «ինչքան շատ սպառենք (օգտագործենք), այնքան լավ տնտեսության համար», որովհետև սպառումը ծնում է պահանջարկ, ինչն էլ խթանում է տնտեսության զարգացմանը, որը հնարավոր է իրականացնել ավելի շատ ռեսուրսներ օգտագործելով: Բայց տնտեսական այս քաղաքականությունը, ի վերջո տանում է շրջակա միջավայրի աղտոտմանը, վերջին հաշվով՝ էկոլոգիական աղետի:

Սպառումը դարձել է նաև հոգեբանություն, որն անվանում են «սպառողականություն» («կոնսյումերիզմ»): Սպառողականությունը ոչ միայն հոգեբանություն է, այլև աշխարհայացք, գաղափարախոսություն, որը բարեկեցության դրսևորման ձևը համարում է սպառումը: Սպառողական հասարակությունում մարդու արժեքը գնահատվում է նրա վճարունակության և գնողունակության չափով: Այսինքն՝ մարդու արժեքն այնքան է, որքան կարողանում է գնել կամ սպառել: Մարդ-աշխարհ փոխհարաբերությունը փոխարինվում է «գնորդ-ապրանք» կամ «ապրանք-սպառող» փոխհարաբերությամբ: Կոնսյումերիզմը դառնում է նաև մշակույթի նորմ, որի արդյունքում մարդիկ իրենց կյանքի իմաստը տեսնում են բավարարվածության և կայացածության, ապրանքների և ծառայությունների սպառման մեջ: Սպառման բարձր մակարդակը համարվում է հաջողության արդյունք:

Մոլորակի վրա էկոլոգիական իրավիճակի փոփոխության մեջ բիզնեսի դերը հակասական է: Մի կողմից լայն ասպարեզ է բացվում տնտեսական գործունեության, կապիտալ ներդրումների համար: Մասնավորապես.

- թափոնների մշակման արտադրությունների և տեխնոլոգիաների ստեղծում,
- անթափոն տեխնոլոգիաների մշակում, տարբեր ոլորտներում մաքրման սարքերի արտադրություն,

- էկոլոգիապես մաքուր սննդի և խմելու ջրի արտադրություն,
- բնակարանների կառուցում էկոլոգիապես մաքուր տարածքներում,
- բնապահպանական միջոցառումների իրականացում և այլն:

Բայց, մյուս կողմից, բիզնես կազմակերպությունները պարտավոր են.

- խոշոր գումարներ վճարել որպես տուգանք շրջակա միջավայրի աղտոտման և բնությանը էկոլոգիական վնաս պատճառելու համար,
- էկոլոգիական ստանդարտներին համապատասխանեցնել արտադրության տեխոլոգիան, արդիականացնել դրանք,
- բիզնեսի համար ստեղծել էկոլոգիապես հրապուրիչ կերպար (իմիջ),
- համագործակցել պետական և հասարակական կազմակերպությունների հետ շրջակա միջավայրի պահպանման համար:

Այժմ էկոլոգիական ճգնաժամից դուրս գալու ուղիների մասին:

Մարդ-բնություն փոխհարաբերության երեք տարատեսակ է առանձնացվում.

1. Մարդակենտրոն, երբ փոխհարաբերության մեջ առաջատարը համարվում է մարդը, իսկ բնությունը դիտարկվում է մարդու բարեկեցության տեսանկյունից, մարդը համարվում է բնության տերն ու տիրակալը:

2. Բնությունակենտրոն, ըստ որի՝ մարդը բնության մի մասն է, որով տիեզերակառույցը դառնում է ամբողջական (այդ գաղափարը հայ իրականության մեջ ներկայացնում է Դավիթ Անհաղթը):

3. Էկոկենտրոն, ըստ որի մարդ-բնություն փոխհարաբերության մեջ կարևորվում է դրանց ներդաշնակությունը: Այս աշխարհայացքի ներկայացուցիչները փորձում են մշակել նոր բարոյականություն՝ բնության գիտակցված, բարոյաարժեքային յուրացում, ըստ որի՝ մարդուն պետք է բնության հետ անբաժան կեցության մեջ տեսնել, բնությունը դարձնել մարդկայնացված: Նման մոտեցմամբ մարդու և բնության փոխհարաբերությունը միջնորդվում է հումանիզմով, որի

դեպքում փոխվում է ոչ թե մեր պատկերացումը բնության մասին, այլ մեր վերաբերմունքը բնության նկատմամբ[73]:

Էկոկենտրոն աշխարհայացքում բնությունը դառնում է արժեք, և մեզանից յուրաքանչյուրի դերը գնահատվում է այդ արժեքի գիտակցման տեսանկյունից:

Էկոկենտրոն դաստիարակության և բարոյականության արդյունքում ձևավորվում է էկոլոգիական գիտակցությունը, որը դառնում է գիտելիք բնության մասին և վերաբերմունք նրա նկատմամբ:

Էկոկենտրոն դաստիարակությունը պետք է դիտարկել ավելի լայն տեսանկյունից՝ որպես ազգային-հայրենասիրական դաստիարակության բաղադրիչ, որովհետև բնության այն հատվածը, աշխարհագրական տարածքը որում ապրում ենք և անխնա շահագործում՝ մեր հայրենիքն է, ապուպապերից ստացած անօտարելի ժառանգություն, որի նկատմամբ ոչ թե պետք է անխնա վարվենք, այլ ունենաք *սրբազան երկյուղածություն, գորովանք* (այս խոսքերը գրելու օրը՝ 1.03.2020 թ., հողին են հանձնում մեր օրերի ամենամեծ ***հող-հայրենին*** սիրող ու գնահատող պատմաբան, հուշարձանագետ ***Սամվել Կարապետյանին***): Էկոլոգիական դաստիարակության կարևորագույն պայմաններից է բնության ճանաչողությունը, իսկ մեր դեպքում՝ հայրենաճանաչողությունը:

Էկոլոգիական գիտակցությունն ունի սոցիալական բնույթ և պայմանավորված է կոնկրետ հասարակության մեջ ընդունված և գործող նորմերով, ավանդույթներով, արժեքներով, բնության նկատմամբ ունեցած աշխարհայացքային պատկերացումներով, մարդ-աշխարհ փոխհարաբերության հարացույցով և այլն:

---

[73] Տե՛ս ***Ситаров А. В.***, ***Пустовойтов В. В.,*** Социальная экологиа. М., 2000, էջ 124-126: Էկոկենտրոն մտածողության հիմքում ընկած է «էկոհամակարգ» հասկացությունը, որն առաջին անգամ օգտագործել է անգլիացի էկոլոգ Ա. Թենսլին 1935 թ., իսկ էությունը լավագույնս արտահայտել է Վ. Վերնանդսկին, ըստ որի խորը միասնություն գոյություն ունի որոշակի պայմաններում ապրող բուսական և կենդանական տեսակների և նրանց շրջապատող գործոնների, ինչպես նաև մարդու և բնության միջև (տե՛ս ***Լ. Մելքումյան***, Էկոլոգիայի հիմունքներ, էջ 149-167): Ուստի, կարծում եմ, էկոկենտրոն է այն մտածողությունը, աշխարհայացքը, որը էկոլոգիական հիմնախնդիրները քննարկում է մարդ-բնություն միասնության տեսանկյունից:

Բնապահպանական կամ էկոլոգիական բարոյականությունը սերտորեն կապվում է շուկայական հարաբերությունների, բիզնես գործունեության հետ, որովհետև բնությանը ամենաշատ վնաս հասցվել է շուկայական հարաբերությունների ձևավորման և զարգացման փուլերում, որոնցում վճռորոշ դերը կատարել է բիզնեսը: Բնության անխնա շահագործումը նաև բիզնես գործունեության արդյունք է: Դեռևս Մարքսն էր իր ժամանակին նկատել, որ հոգևոր ու էկոլոգիական ճգնաժամերի պատճառը այդ ոլորտներ կապիտալի ներթափանցումն է: Բիզնեսի իրական պրակտիկան այնպիսին է, որ շատ ձեռնարկատերեր, բիզնեսմեններ բնությանը, շրջակա միջավայրին վնաս պատճառելու համար խուսափում են իրավական և բարոյական պատասխանատվությունից, թաքցնում իրերի իրական վիճակը, արտադրության վնասաբերությունը ցույց չեն տալիս, կաշառում են պաշտոնյաներին: Նրանք հաշվի չեն առնում այն կարևոր հանգամանքը, որ խաբելով պետությանն ու հասարակությանը՝ խաբում են նաև իրենց զավակներին, սերունդներին, որովհետև բոլորն են նույն մոլորակի վրա ապրում, նույն օդը շնչում, նույն ջուրը խմում, նույն ձևով թունավորվում: Խաբելով ժողովրդին, իշխանություններին՝ նրանք չեն կարող խաբել բնությանը, իսկ վերջինս պատժում է բոլորին անխտիր:

Արդեն երկրորդ տարին է (2018-2019), որ Սևանա լիճը «կանաչում» է ու բոլորն են այն համոզմանը, որ դրա մեղավորը այդ տարածաշրջանում մեր վարած տնտեսական քաղաքականության է, ծավալած բիզնես գործունեությունը: 2019 թ. ամռանը ականատես եղանք ուշագրավ երևույթի՝ Արարատյան դաշտավայրի արագիլները զրկվել էին թռչելու հնարավորությունից, թևերը կպել էին մարմնիններին: Բնապահպանները արդեն որերորդ ամիսն է փակել են Ամուլսար տանող ճանապարը, թույլ չեն տալիս իրականացնել տարածքի տեխնիկական շահագործումը, որովհետև այն կարող է էկոլոգիական առումով մեծ վնաս պատճառել շրջապատին (ցավոք Հայաստան աշխարհը շատ փոքր տարածք է զբաղեցնում), Ջերմուկ առողջարանային քաղաքին: Շարունակվում են անխնա թալանվել Սևանի պաշարները, անօրինական անտառահատումները, որսագո-

ղությունը: 2019 թ. ՀՀ տարբեր վայրերում և Երևան քաղաքում բազմաթիվ հրդեհներ բռնկվեցին, որոնք իրենց քանակով և բարդության աստիճանով ռեկորդային էին Հայաստանի պատմության մեջ:

2019 թվականին այրվեցին Ամազոնի և Սիբիրի անտառները: 2019 թ. հոկտեմբերից (դեռ վերջը չի երևում, հիմա 2020 թ. հունվարի 30-ն է) այրվում են Ավստրալիայի անտառները: Ոչնչացել է 6 մլն հեկտար (այլ տվյալներով՝ 100 միլիոն) անտառ, 500 մլն կենդանի, կան մարդկային զոհեր: Մասնագետների կարծիքով հրդեհները մոլորակի գլոբալ տաքացման արդյունք են: Արդեն որերորդ ամիսն է մարդկությունը դիմակայում է նոր՝ «Կորոնավիրուս» կոչվող համաճարակին՝ «COVID-19» անվամբ: Վիրուսը ծագեց Չինաստանում, տարածվեց ողջ աշխարհում: Մահացածների թիվը անցնում է երեք հարյուր հազարից, վարակվածների քանակը հատել է հինգ միլիոնի սահմանագիծը: Երկուսի թվերն էլ աճելու միտում ունեն: Մահացածությունների բարձր տոկոս է դիտվում Իրանում, Իտալիայում, Իսպանիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Ռուսաստանում: Այս փորձությունից ազատված չենք նաև մենք՝ հայերս: Օրեցօր աճում է վարակակիրների, ցավոք՝ նաև մահացածների քանակը (շատ կուզեի, որ ընթերցողը այս տողերը կարդալիս ժպտար ու որպես տհաճ հուշ հիշեր այդ ամենը): Բոլոր պետություններն էլ առավել կամ պակաս հաջողությամբ պայքարում են վիրուսի դեմ: Այսպես է բնությունը պատժում մարդկանց՝ նրանց անխոհեմ արարքների համար:

Բայց համաճարակ կոչվածը ցույց տվեց նաև, որ ստեղծվել է բոլորովին նոր իրողություն, ստեղծվում է նոր աշխարհակարգ՝ այժմ կորոնավիրուսյան, այնուհետև՝ հետկորոնավիրուսյան: Նոր աշխարհակարգը ենթադրում է ինչպես տնտեսական, այնպես էլ արժեքային-աշխարհայացքային բոլորովին նոր մոտեցումներ և հարաբերություններ: Ամբողջությամբ փոխվելու է մարդ-բնության փոխհարաբերության համակարգը: Բնության նկատմամբ յուրաքանչյուր հաղթանակ մեզ հիշեցնելու է Պյուռոսին: Այս հանգամանքը հաշվի առնելով էր ***Ֆ. Էնգելսը*** XIX դարի երկրորդ կեսին գրում. «...շատ էլ չիպարտանանք բնության նկատմամբ տարած մեր հաղթանակներով: Յուրաքանչյուր այդպիսի հաղթանակի համար նա մեզանից վրեժխնդիր է լինում»[74]: Այն մարդիկ, ովքեր Միջագետքում, Հունաստանում,

[74] ***Ֆ. Էնգելս***, Բնության դիալեկտիկա, Եր., 1957, էջ 181:

Փոքր Ասիայում և այլ տեղերում արմատախիլ էին անում անտառները, որպեսզի վարելահող ձեռք բերեն. «Մտքով անգամ չէին կարող անցկացնել, որ դրանով իրենք այդ երկրների այժմյան անապատացման սկիզբը դրեցին»[75]: Այս ամենի դառը /գուցեև դաժան/ հետևությունը հետևյալն է. ***այն, որ բնությունը մեզ պետք է, մենք առանց բնության գոյատևել չենք կարող՝ աներկբա է (կասկածի ենթակա չէ), բայց մենք պե՞տք ենք բնությանը, բնությունը մեզ նման անառակ զավակիների կարիք ունի՞, մեծ հարց է:***

Ինչպես անառակ զավակը վերադարձավ հայրական տուն, մենք էլ պետք է վերադառնանք հարազատ բնություն, սրբազան երկյուղածությամբ վերաբերվենք նրան, որպեսզի քավենք նրա նկատմամբ ունեցած մեր մեղքերը: Այստեղ կարևոր է նաև մեր կողմից տնտեսությունը վարելու կերպը: Անմիջապես ավելացնեմ, որ թեև բնապահպանական խնդիրները լուծելու գործում տնտեսության հնարավորությունները մեծ են, բայց ամբողջը չեն: Տնտեսության ու բիզնեսի դաշնակիցը, այս ոլորտում, մարդու ստեղծած ողջ հոգևոր մշակույթն է՝ իր հումանիստական կողմնորոշվածությամբ: Բնության, հետևաբար և մարդու փրկությունը պետք է որոնել բանականության, բնության, տնտեսության և մարդասիրության ներդաշնակ զարգացման մեջ:

Հարցեր կրկնության համար

1. *Ի՞նչ փուլերով է անցել մարդ-բնություն փոխհարաբերությունը:*
2. *Ի՞նչ ոլորտներ է ներառում էկոլոգիական ճգնաժամը:*
3. *Ինչպե՞ս է սպառողական հոգեբանությունն ազդում էկոլոգիական ճգնաժամի խորացման վրա:*
4. *Ո՞րն է բիզնեսի դերը ժամանակակից էկոլոգիական ճգնաժամում:*
5. *Որո՞նք են էկոլոգիական ճգնաժամից դուրս գալու ուղիները:*

[75] Նույն տեղում, էջ 181:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՊԱՏՄԱԲԱՂԱԲԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ: ԳԼՈԲԱԼԱՑՎՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ

*8.1. **Պատմության, հասարակության և տնտեսության պարբերացման հայեցակարգերը***

Պատմական գործընթացների բնույթի վերաբերյալ մի քանի ընդհանրական տեսակետ կարելի է առանձնացնել: Առաջինը հին աշխարհի դիցաբանական, կրոնափիլիսոփայական պատկերացումներում իշխող ***շրջափուլային*** (պարբերաշրջանային, ցիկլային) ըմբռնումն է, ըստ որի՝ տիեզերքը, հասարակությունն անցնում են այն փուլերով, որոնցով անցնում է առանձին անհատի կյանքը՝ մանկություն, պատանեկություն, երիտասարդություն, հասունություն, ծերություն և մահ: Ոչնչանալուց հետո որոշ ժամանակ անց նորից է առաջանում, և բոլոր փուլերը կրկնվում են նույնությամբ, նոր ոչինչ չի առաջանում («Այն, ինչ եղել է, նոյնն էլ պիտի լինի, եւ այն, ինչ կատարուել է, նոյնն էլ պիտի կատարուի: Եվ ոչ մի նոր բան չկայ արեգակի ներքո…», Ժողովող, 1, 9-10): Ինչը որ առաջանալու էր, արդեն առաջացել է: Անընդհատ նույնն է կրկնվում: Փոփոխությունները քանակական բնույթ ունեն. արդեն մեկ անգամ եղածն է կրկնվում: Այս պատկերացումները պայմանավորված էին նրանով, որ հազարամյակներ շարունակ մարդը նույն ձևով ու տեխնիկայով է մշակել հողը, նույն նյութով ու տեխնիկայով կառուցել տունը, նույն փոխադրամիջոցներից է օգտվել, այսինքն իշխել է տնտեսավարման նույն ձևը: Տիեզերքի, հասարակության պատմության շրջափուլային ըմբռնումն իշխել է Հին և Անտիկ աշխարհներում, իր կողմնակիցներն ունեցել Վերածնության և Նոր ժամանակի սոցիալ-փիլիսոփայական մտքում, առանձին

տարրեր պահպանվել են լոկալ քաղաքակրթությունների հայեցակարգերում:

Տնտեսության մեջ ընթացող փուլերը նույնպես պարբերաշրջանային (ցիկլային) բնույթ ունեն, իսկ փուլերը միմյանց հաջորդող ճգնաժամը, լճացումը, աշխուժացումը և վերելքն են, որից հետո նույն փուլերը հերթականությամբ կրկնվում են, բայց բովանդակային առումով այլ մակարդակի (աստիճանի) վրա: Այստեղ բացասման բացասումի օրենքի եռաստիճանականության սկզբունքը փոխարկվում քառաստիճանականության: ***Ճգնաժամից (կամ վերելքից) մինչև հաջորդ ճգնաժամ (կամ մինչև հաջորդ վերելք) ընկած փուլերի հաջորդականությունը կոչվում է պարբերաշրջան:***

Ճգնաժամի փուլում ապրանքները չեն վաճառվում, տեղի է ունենում գների անկում, գործազրկության աճ, բնակչության կենսամակարդակի վատթարացում, շուկայում պահանջարկի և առաջարկի անհամապատասխանություն, բնակչության շրջանում իշխող են դառնում հոռետեսական տրամադրությունները, քննադատական վերաբերմունքը իշխանությունների վարած տնտեսական, սոցիալական քաղաքականության նկատմամաբ:

Լճացման փուլում գործազրկությունը, տնտեսական անկումը, առանձին տնտեսվարողների սնանկացումը շարունակվում է, հզոր ձեռնարկությունները կլանում են թույլերին և սնանկացածներին: Հասարակության ներսում շարունակվում են իշխել անկումային տրամադրությունները, դիտվում են սոցիալական բողոքի դրսևորումներ: Լճացումը անցումային փուլ է ճգնաժամի և աշխուժացման միջև:

Աշխուժացման փուլում տնտեսությունը աստիճանաբար ուշքի է գալիս, կենսունակության նշաններ ցույց տալիս (ինչպես փոթորիկից հետո մարդիկ դուրս են գալիս իրենց թաքստոցներից, ծանոթանում թողած հետևանքներին և կամաց-կամաց փորձում վերադառնալ նախկին բնականոն կյանքին): Աստիճանաբար ակտիվանում է տնտեսությունը, գործազրկությունը կրճատվում է: Հասարակությունը դուրս է գալիս հոգեբանական ճնշվածությունից, հոռետեսական աշխարհայացքից ու տրամադրություններից:

Վերելքի փուլում արտադրության աճի տեմպերը հասնում են բարձրակետին, գործազրկությունը հասնում է նվազագույնի, ձեռնարկատերերը ձգտում են առավելագույն շահույթի: Հասարակության

ներսում իշխող է դառնում լավատեսական աշխարհայացքը, կյանքի կենսախինդ ըմբռնումը: Մարդիկ լուծում են ոչ թե գոյատևման, այլ լիարժեք կյանքով ապրելու խնդիր: Բայց շուկայում խոշոր խաղացողների վարած քաղաքականության արդյունքում առաջանում է ճեղքվածք արտադրության և մարդկանց գնողունակության միջև, որը նախադրյալներ է ստեղծում նոր ճգնաժամի համար և այդպես շարունակ: Պարբերաշրջանների մեխանիզմի, փուլերի հաջորդափոխման շարժընթացի մեկնաբանման ոլորտերում, կարծում եմ, ամբողջությամբ աշխատում են քանակական փոփոխություններից որակականի և հակադարձն անցման, ինչպես նաև բացասման բացասումի փիլիսոփայական օրենքները: Պարզապես եռաստիճանականության սկզբունքն աստեղ դառնում է քառաստիճանականություն:

Տնտեսական պարբերաշրջանների առաջացման պատճառների բացատրության երեք ընդհանրական մոտեցում է դիտվել՝ էկզոգեն, էնդոգեն և համադրական: ***Էկզոգենը*** (արտա, դուրս) տնտեսական պարբերաշրջանների գոյությունը բացատրում է տնտեսությունից դուրս գործող գործոններով, մասնավորապես՝ բնական օրինաչափություններով, աստղերի շարժումով, հասարակության ներսում տեղի ունեցող ցնցումներով և այլն: Նման մոտեցումը հատուկ էր հին աշխարհի տիեզերակենտրոն հարացույցին և կարծում եմ, որ այն XIX-XX դարերի համար պետք է տարաշխարհիկ (էկզոտիկ) նշանակություն ունենար: Օրինակ՝ հին քաղդեական, չինական պատկերացումներում բնական օրինաչափությունները (ենթադրենք՝ աստղերի շարժումը) կապվում են պետության ու մարդկանց ճակատագրերի, բարոյական պատվիրանների հետ: Ըստ հին չինացիների, բնության կարգավորվածությունը և պետության կազմակերպվածությունը համընկնում են և բնության արհավիրքները (երկրաշարժ, ջրհեղեղ) վկայում են պետական կառավարման մեջ տեղ գտած վրիպումների, սխալների, բացթողումների մասին:

Էնդոգեն (փակ, ներփակ, ներսում գտնվող) մոտեցումները տնտեսական շրջափուլերի առաջացման պատճառները փորձում են բացատրել տնտեսության մեջ գործող գործոններով, իսկ ***համադրական*** մոտեցումը համատեղում է նախորդ երկու մոտեցումները: Այժմ խիստ համառոտ նման մի քանի տեսակետների մասին:

XVII-XVIII դարերի տնտեսագիտական միտքը այն համոզմանն էր, որ շուկայում տնտեսական հարաբերությունները կարգավորվում են «անտեսանելի ձեռքի» միջոցով, որովհետև տնտեսական զարգացման մեխանիզմը հենվում է ինքնակարգավորման, հավասարակշռության պահպանման սկզբունքի վրա՝ Սեյի օրենքի համաձայն (ըստ որի շուկայում առաջարկն ու պահանջարկը միմյանց փոխպայմանավորում և փոխապահովում են): Հետևաբար՝ շուկայական տնտեսության պայմաններում միմյանց հաջորդող, ժամանակ առ ժամանակ կրկնվող տնտեսական պարբերաշրջաններ լինել չեն կարող, իսկ երբեմն դիտվող ճգնաժամերը կրում են պատահական բնույթ: Տեսակետն ընդունում էին Սմիթը, Ռիկարդոն, Սեյը, Սիսմոնդին, Մալթուսը և ուրիշներ: Բայց XIX դարի կապիտալիզմի զարգացումը դասականների նախանշած ուղիով չգնաց, դարի կեսերից (ըստ տեսակետներից մեկի Եվրոպայում տնտեսական ճգնաժամերն սկսում են 1835 թ.-ից) արևմտաեվրոպական տարբեր երկրների տնտեսական ճգնաժամերի առանձնահատկությունները հաշվի առնելով ***Կ. Մարքսը*** (1818-1883), ըստ էության առաջինը բարձրաձայնեց կապիտալիզմի տնտեսությանը բնորոշ պարբերաշրջանների մասին: Նրա կարծիքով շուկայական տնտեսության պայմաններում պարբերաբար կրկնվող ճգնաժամերը, լճացումը, աշխուժացումն ու վերելքը պայմանավորված են կապիտալիստական հասարակության ներքին հակասություններով, մասնավորապես՝ աշխատանքի հասարակական, իսկ յուրացման մասնավոր բնույթի հակասությամբ: Մարքսից հետո տնտեսության զարգացման պարբերաշրջանային բնույթն ընդունեցին գրեթե բոլոր նշանավոր տնտեսագետները՝ առաջացման պատճառների սեփական մեկնաբանություններով: Դրացից ամենահայտնին Ջ. Քեյնսն է, որը ստեղծելով մակրոտնտեսագիտությունը փորձեց բացատրել 1929-1932 թթ. մեծ ճգնաժամի, և դրանով իսկ, տնտեսական պարբերաշրջանների առաջացման պատճառները:

Քեյնսի առաջադրած նոր գաղափարները հետևյալն են.

1. Շուկայական տնտեսությունը միշտ չէ, որ գտնվում է մրցակցային հավասարակշռվածության մեջ և գործում են «անտեսանելի ձեռքն» ու Սեյի օրենքը: Առաջանում է անհավասարություն, որի պատճառը, ըստ Քեյնսի, ամրագրված (ֆիքսված) գների և աշխատավարձերի պահպանումն է երկարատև ժամանակաշրջանի համար:

2. Տնտեսության զարգացման մակարդակը որոշվում է ամբողջական (ընդհանրական) պահանջարկով, որն իր հերթին պայմանավորված է անբացատրելի գործոններով, որոնց Քեյնսն անվանում էր «ներդրողների բնազդ»: Ըստ մակրոտնտեսագիտական գնահատումների երկրի ՀՆԱ-ի մեծության վրա ազդում են սպառողների, ներդրողների և պետության ծախսերը՝ ապրանքներ ձեռք բերելու և ծառայություններ իրականացնելու համար: Հետևաբար՝ տնտեսական պարբերաշրջանների առաջացման պատճառները պահանջարկի տատանումներն են և ոչ թե երկրի ռեսուրսային հնարավորությունները[76]:

Քեյնսի պարբերաշրջանների տեսությունը դարձավ հիմնական և պահպանվեց մինչև 1970-ական թթ., որից հետո լուրջ տեղաշարժեր դիտվեցին մակրոտնտեսական քաղաքականության մեջ, որոնց արդյունքում վերանայվեց տնտեսական ցիկլերի քեյնսյան տեսությունը: 2004 թ. նոբելյան մրցանակներ ստացած Ֆ. Կուդլանդը և Է. Պրեսկոտը առաջադրեցին տնտեսական պարբերաշրջանների իրենց տեսությունը, ըստ որի տնտեսական քաղաքականություն իրականացնելու համար փորձնական ծագում ունեցող (էմպիրիկ) օրինաչափությունների վրա հենվելի ճիշտ չէ, որովհետև իրար հաջորդող փոփոխությունները դեռ պատճառահետևանքային կապերի մասին չեն վկայում (մենք այդ մասին արդեն գիտենք): Նրանք փորձեցին տնտեսության մեջ բոլոր տատանումները դիտել որպես տնտեսական երևույթների հավասարակշռության ձգտում, այսինքն այն, ինչը ժամանակին պնդում էին դասականները: Նրանց առաջադրած տեսության հիմնական սկզբունքները հետևյալն են.

1. Ձեռնարկությունները (Ֆիրմաները) առավելագույնի են հասցնում իրենց շահույթները և որոշում կայացնում ներդրումների (ինվեստիցիաների) մասին՝ հաշվի առնելով իրենց ապրանքների նկատմամբ ապագա պահանջարկը և տեխնոլոգիաների զարգացումը:

2. Տատանումների պատճառը արտադրության (շատ են արտադրում) և սպառման (քիչ են սպառում) միջև եղած անհամապատաս-

---

[76] Այդ մասին տե՛ս ***Замулин О.***, Концепция реальных экономических циклов и ее роль в эволюции макроэкономической теорий, Вопросы экономики, 2005, № 1, էջ 145-146:

խանությունն է և ներդրումների (ինվեստիցիաների) քանակի մեծությունը: Նրանց ստեղծածը կոչվեց «իրական տնտեսական շրջափուլերի» տեսություն, որովհետև տնտեսական տատանումների հիմնական պատճառները ըստ Կուտլանդի և Պրեսկոտի, պետք է որոնել արտադրության կամ այլ գործոնների (օրինակ՝ նավթի գնի) մեջ տեղի ունեցող փոփոխություններում: Մնացած դեպքերում տնտեսությունը գտնվում է կայուն հավասարակշռվածության մեջ և ցանկացած շեղում շուկան կարողանում է կարգավորել (կրկնում են դասականներին, այդ պատճառով կոչվեցին «նոր դասականներ»):

Նրանց ստեղծած նոր տեսությունը այնուամենայնիվ չհաղթահարեց քեյնսականությունը, նորքեյնսականները շարունակում են պաշտպանել Քեյնսի հիմնական գաղափարը, ըստ որի տնտեսությունը շարժման մեջ դնողը ոչ թե աշխատանքի արտադրողականությունն է, այլ պահանջարկը: Այս երկու տեսությունների (քեյնսականության և նորդասականների) բանավեճը շարունակվում է: Բանն այն է, որ ըստ մասնագետների, կարճաժամկետ տատանումների դեպքում նորդասականների տեսությունն է աշխատում, երկարաժամկետի դեպքում՝ Քեյնսի:

Տնտեսական պարբերաշրջանների բացատրության փորձ կարելի է դիտել տեխնոլոգիական մոտեցումը, ըստ որի պարբերաշրջանները պայմանավորված են տեխնոլոգիական հայտնագործությունների ներդրման փուլերով՝ ուշացման դեպքում՝ լճացում և անկում, ներդրումներից հետո՝ աշխուժացում և վերելք:

Կարծում եմ, պարբերաշրջանների առաջացման բացատրություն կարելի է գտնել նաև սիներգետիկայում (որի առանձին տարրեր կարծես դիտվում են «իրական տնտեսական շրջափուլերի» տեսության մեջ): Սիներգետիկան (հունարեն-սիներգիա, բառացի՝ օգնել, համագործակցել) XX դարի 60-ական թվականներին ձևավորված գիտություն է (ստեղծել են Հ.Հակենը և Ի.Պրիգոժինը), որը զբաղվում է ինքնակազմակերպման սկզբունքներով: Նյութական համակարգերում ընթացող պրոցեսները բաժանվում են երկու խմբի՝

1. Պրոցեսներ, որոնք ընթանում են փակ համակարգում և գտնվում են հանգիստ ու հավասարակշռված վիճակում, որոշակի պայմաններում ձգտում են առավել անկազմակերպվածության ու քաոսի:

2. Պրոցեսներ, որոնք ընթանում են բաց համակարգում, որտեղ քաոսից ինքնակամորեն կարող են ձևավորվել կարգավորված համակարգեր: Առաջինին բնորոշ են հավասարակշռությունը և գծայնությունը, երկրորդին՝ անհավասարակշռությունն ու ոչ գծայնությունը: Բնական պրոցեսները անհավասարակշիռ և անգիծ են: Սիներգետիկան ուսումնասիրում է բաց, ինքնակառավարվող համակարգերը:

Սիներգետիկի համար համակարգի բաց լինելը նշանակում է նրանում մուտքի և ելքի առկայություն, շրջադարձի, նյութափոխանակության հնարավորություն, զարգացման բազմազանություն, ինքնակարգավորման հնարավորություն:

Համակարգի ոչ գծայնությունը նշանակում է նրա էվոլյուցիոն ուղիների բազմազանություն, այսինքն՝ երբ համակարգի պարամետրերը հասնում են գերծայրահեղ վիճակի, համակարգի կառուցման կերպը փոխվում է: Փոփոխական վիճակը կոչվում է բիֆուրկացիա: Բիֆուրկացիան նաև զարգացման ոչ միագիծ ուղին է, ժառանգորդման քայքայումը և իրադարձությունների զարգացման հետագծի երկփեղկումը: Կարգավորող պարամետրերի ներմուծմամբ համակարգը հասնում է կայունության սահմանագծին, կետին, որին անվանում են բիֆուրկացիոն կետ, որից հետո համակարգը նվազագույնը զարգացման երկու հնարավորություն է ձեռք բերում: Այսինքն՝ եթե համակարգը անցնում է հավասարակշռության վերին (ծայրագույն) աստիճանին, նրա շարժման ռեժիմը արմատապես փոխվում է և ընկնում ինքնակազմակերպման բոլորովին այլ համակարգ (ատտրակտոր): Ձեռք բերելով նոր վիճակ՝ մինչև սահմանային որոշակի պահը համակարգն անցնում է զարգացման պրոցես, երբ տեղի են ունենում նոր փոփոխություններ՝ ֆլուկտուացիաներ (պատահական շեղումներ), որոնք կարող են էական դեր կատարել համակարգի կյանքում հատկապես բիֆուրկացիոն կետերի մոտակայքում: Այստեղ պատահական գործոնը կարող է վճռական դեր կատարել: Միևնույն համակարգում ստեղծվում են զանազան կառույցներ, որոնք հանդես են գալիս որպես նրա էվոլյուցիայի տարբեր ուղիներ (ատտրակտորներ):

Սիներգետիկայի տեսանկյունից տնտեսությունը կարելի է դիտել որպես անհավասարաչափ, ոչգծային ինքնակազմակերպվող համակարգ, որում գործում են այդ գիտության վերը նշած բոլոր հիմնական

սկզբունքները: Մասնավորապես, տնտեսությունն անցնելով ինքնակարգավորման փուլով՝ հասնում է կայունության որոշակի սահմանի (բիֆուրկացիոն կետի), որից հետո փոխվում է նրա զարգացման ռեժիմը, և այն ընկնում է այլ համակարգ (ատտրակտոր), որտեղ տեղի են ունենում նոր փոփոխություններ (ֆլուկտուացիաներ), որոնք էական դեր են կատարում հատկապես բիֆուրկացիոն կետերի շրջակայքում, որտեղ գործող գործոնները կարող են նոր շեղումներ առաջացնել: Նոր ատտրակտորում տնտեսության վիճակի վրա ազդում են ոչ միայն պատահական գործոնները, նրա անցած ուղին կամ առկա բնույթը, այլև ուրվագծվող տնտեսության ապագա կերպը, որովհետև ըստ սիներգետիկայի՝ համակարգի ապագա կերպն է փոխում, ձևավորում, կազմակերպում նրա առկա վիճակը:

Այսպիսով, ըստ սիներգետիկական մոտեցման, տնտեսական փուլերը պայմանավորված են բիֆուրկացիոն կետերում դիտված շեղումներով, ապագա վիճակի վրա ունեցած ազդեցությամբ, նրանում ընթացող կարգի և քաոսի փոխազդեցությամբ (մանրամասն և մասնագիտացված վերլուծությունը թողնում ենք տնտեսագետներին):

Հասարակության պատմության պարբերացման հաջորդ հայեցակարգը ***զարգացման հայեցակարգն է***, որը մշակվել է Նոր ժամանակի փիլիսոփայության մեջ, վերջնականապ հաստատվել է XIX դարում՝ շնորհիվ Գ. Հեգելի, Կ. Մարքսի, Չ. Դարվինի: Հեգելը ներկայացնում է զարգացման փիլիսոփայական հայեցակարգը, Մարքսը՝ տնտեսագիտական-փիլիսոփայականը, Դարվինը՝ բնագիտականը:

Հեգելի կարծիքով համաշխարհային պատմության էությունը առաջընթացն է ազատության գիտակցման մեջ, իսկ նպատակը համաշխարհային ոգու ինքնաճանաչումը: Այդ ընթացքում ոգին անցնում է մի քանի փուլերով, մարմնավորվում առանձին, բայց տարբեր ժողովուրդների ոգու մեջ: Հեգելը գտնում էր, որ համաշխարհային պատմության պարբերացման հստակ չափանիշը ազատության գիտակցման աստիճանն է: Այս դիտանկյունից մոտենալու դեպքում համաշխարհային պատմության առաջին աստիճանը (փուլը) դառնում է Հին Արևելքը, որտեղ ազատության գիտակցում չի եղել, մարդը չի գիտակցել, որ ինքն իր ներսում ազատ է, որի պատճառով իշխել է ստրկությունը, ազատ է եղել միայն միապետը: Հին Արևելքը մարդ-

կության մանկությունն է: Երկրորդ փուլը հունահռոմեական աշխարհն է, Հին Հունաստանը ներկայացնում է մարդկության պատանեկությունը, որը թեև հոյակապ էր, բայց, այնուամենայնիվ՝ անցողիկ: Հռոմի կայսրական շրջանը մարդկության երիտասարդության փուլն է: Անտիկ աշխարհում դիտվել է ազատության մասնակի գիտակցում, այդ պատճառով ստրկությունը պահպանվեց: Հասարակությունը լիակատար հասունության հասնում է Նոր ժամանակի Գերմանիայում, որտեղ համաշխարհային ոգին հասնում է լիակատար ինքնաճանաչողության: Հետևաբար, ըստ Հեգելի, պատմությունը ազատության մարմնավորումն է ժողովուրդների իրական կյանքում, որը դառնում է համաշխարհային ոգու մեծ երթ պատմական գործընթացների մեջ:

Զարգացման հայեցակարգը ամբողջությամբ աշխատում է նաև տնտեսության մեջ: Տնտեսական զանազան համակարգեր՝ պատմական և արդիական կտրվածքներով համեմատելով, հեշտությամբ կարելի է ցույց տալ, թե դրանցից յուրաքանչյուրը զարգացման ի՞նչ մակարդակում և հասարակության պատմության ո՞ր փուլում է գտնվում:

Զարգացման հայեցակարգի տարատեսակ է հասարակության պատմության պարբերացումը **ավանդականի**, **արդյունաբերականի** և **հետարդյունաբերականի**, որում մշակութապատմաքաղաքակրթական և տնտեսական-տնտեսագիտական կողմերը հանդես են գալիս միասնաբար *(պատմական կամ ուղղահայաց մոտեցում)*: Համառոտ ծանոթանանք այդ փուլերին (գրականության մեջ ժամանակակից կտրվածքով (հորիզոնական) «ավանդական հասարակություն» ասելով՝ երբեմն նկատի են ունենում արևելյան հասարակությունները՝ Հնդկաչին թերակղզու ժողովուրդները, աֆրիկյան, ասիական հասարակությունները և այլն):

Ավանդական հասարակությունը սկսում է նեոլիթից և հասնում մինչև XVII-XVIII դարեր: Ավանդական է այն հասարակությունը, որը վերարտադրվում է ավանդույթի հիմքի վրա: Նման հասարակություններում հարաբերություններն անձնավորվում են: Անձնավորվում են Աստված, պետությունը, ասպետի զենքը: Գնահատվում է ոչ թե անձը, անհատականությունը, նրա ներդրումը, այլ ծագումը, համապատասխանությունը սոցիալական դերին, որը դիտվում է որպես Աստծո և ճակատագրի կողմից սահմանված: Ձևավորվում է փակ

տարածություն (իր տունը, հողամասը, գյուղը, համայնքի տարածքը) որտեղ փոփոխությունները շատ դանդաղ են ընթանում: Տնտեսության մեջ իշխողը գյուղատնտեսությունն է, հիմնական արտադրողը մարդն է, նրա մկանային ուժը: Հասարակության հիմնական հաստատություններն են դառնում պետությունն իր ինստիտուտներով (բանակ, արդարադատության համակարգ) և եկեղեցին:

Արդյունաբերական հասարակությունն սկսում է XVII-XVIII դարերից և հասնում մինչև 1970-ական թթ., որը հենվում է մեքենայական արտադրության, աշխատանքի ֆաբրիկային կազմակերպման, տնտեսության միասնական ազգային համակարգի, առևտրի ազատականության վրա:

Արդյունաբերական հասարակության մարդը բուրժուան է՝ գործարարը, իշխողը «Ժամանակը փող է» կարգախոսը: Հարստության աղբյուր են դառնում ոչ թե պատերազմը, ավարառությունն ու հողը, այլ՝ գործարարությունը: Փոխվում է ժամանակի ըմբռնումը: Ավանդական հասարակությունում իշխողը ժամանակի կետային ըմբռնումն է: Երկաթուղային ցանցի ստեղծմամբ ձևավորվում է միասնական ժամանակի ըմբռնումը:

Արդյունաբերական հասարակության և անհատի կյանքի բնորոշ գծեր են դառնում ապակրոնացումը, աշխարհիկացումը (սեկուլյարիզացիան):

Հաջորդ բնորոշ գիծը մարդու ազատության զգացումն է: Մարդն ազատ է. գոյություն չունի սոցիալական պատկանելությամբ պայմանավորված, նախասահմանված դեր: Յուրաքանչյուրն ազատ է իր մասնագիտության և ազատության ընտրության հարցում: Ազատության ու ընտրության հնարավորությունը ձևավորում է սոցիալական անհատականությունը, սոցիալական «Ես»-ը: Շուկան ձեռներեցության համար լայն հնարավորություններ է ստեղծում անհատական նախաձեռնողական գործունեության, գործարարության, ստեղծագործական ինքնադրսևորման համար:

XX դարի 70-ական թթ. սկսած տեղի ունեցան մի շարք փոփոխություններ, որոնք ի վերջո փոխեցին հասարակության բնույթը, ձևավորեցին նոր հասարակություն, որն անվանում են «հետարդյունաբերական», «ինֆորմացիոն (տեղեկատվական)», «հետմոդեռնի», «գիտելիքի» հասարակություն, «գիտելիքի» տնտեսություն և այլն:

Եթե ավանդական հասարակության հիմնական ռեսուրսը մկանային ուժն էր, իսկ արդյունաբերականինը՝ էներգիան և մեքենաների վրա հենված աշխատանքն ու կապիտալը, ապա հետարդյունաբերական հասարակության հիմքը ինտելեկտուալ տեխնոլոգիան է, իսկ գլխավոր ռեսուրսը՝ գիտելիքը և տեղեկատվությունը: «Ապրանքային տնտեսությունից» անցում է կատարվում «ինֆորմացիոն (տեղեկատվական) տնտեսությանը»:

Փոխվում է վերաբերմունքը աշխատանքի նկատմամբ: Նախկինում կարևորը աշխատանքի պայմաններն ու աշխատավարձն էին, այժմ՝ պրոֆեսիոնալ հետաքրքրություններն ու կոչումը, աշխատանքի ստեղծագործական կողմը: Մեծանում է պահանջարկը կրթության նկատմամբ: Բայց կրթության ոլորտ շուկայի ներթափանցման արդյունքում շատ պատկերացումներ փոխվեցին: Դարեր շարունակ կրթությունն ընդհանրապես, բուհական կրթությունը մասնավորապես, համարվել են սուրբ գործ: Ժողովրդական լայն զանգվածները ակնածանք են ունեցել մանկավարժի, գիտնականի նկատմամբ (իմ սերնդակիցները դեռ հավատում էին, որ ուսուցիչը հաց չի ուտում): Այսօր փոխվել է վերաբերմունքը, հետևաբար՝ պահանջները: Բուհի խնդիրը դարձել է կիրառելի, լավ վճարվող, վաճառվող ու արագ սպառվող գիտելիք տալը: Բուհը շուկայի և շահառուների համար պետք է «արտադրի» գիտելիք, ծառայություններ և վաճառի դրանք (այս տողերը գրելու օրը ՀՊՏՀ բակում գործում էր աշխատանքի տոնավաճառը): Բուհը կարծես դառնում է գիտելիքի վաճառքի մեծ խանութ (սուպերմարկետ), ուսանողն ու նրա ծնողները՝ հաճախորդ (կլիենտ): Ուսանողի (նրա ծնողների) վերաբերմունքը դառնում է սպառողական, առաջատար է դառնում «գին-որակ» հարաբերակցությունը: «Գնորդը միշտ իրավացի է» կարգախոսը թափանցում է բուհ: Կրթությունը կարծես դառնում է զվարճանքի (շոու) տարատեսակ:

XX դարի վերջին և XXI դարի սկզբներին մեծանում է տնտեսությունը բարոյականության հետ կապելու միտումը, տնտեսական ճգնաժամերից խուսափելու համար առաջարկվում է տնտեսական զարգացումը բարոյականությամբ լրացնելու պահանջը:

XX դարում զարգացմանը հակադրվում է **լոկալ քաղաքակրթությունների** հայեցակարգը (Շպենգլեր, Թոյնբի, Հանթինգտոն և

ուրիշներ: Հպանցիկ նշեմ, որ այս հայեցակարգի կրողները ամբողջությամբ չազատվեցին զարգացման հայեցակարգի ազդեցությունից և քաղաքակրթությունների դասակարգման նրանց մոտեցումներում հստակ երևում է զարգացման հայեցակարգի տարրերի օգտագործման հանգամանքը), որի մասին կխոսեենք Մարքսի տնտեսագիտական-փիլիսոփայական հայեցակարգը վերլուծելիս:

Բայց մինչև Մարքսի տնտեսագիտական-փիլիսոփայական ուսմունքը ներկայացնելը հակիրճ անդրադառնանք նրա տեսական ժառանգության գնահատման խնդրին: Արևմտյան և ռուսական հասարակագիտական մտքում մարքսյան տեսության դրական գնահատումների մեջ Մարքսը համարվում է.

1. Եզակի մտածող՝ մարդկության ինտելեկտուալ պատմության մեջ:
2. Տնտեսագիտության մեջ երեք նշանավոր դեմքերից մեկը՝ Ադամ Սմիթ, Կարլ Մարքս, Ջոն Քեյնս:
3. Սոցիոլոգիայում Կոնտին հավասար:
4. Փիլիսոփայության մեջ՝ էական ներդրում կատարած մտածող:
5. Իրավացի՝ իր ժամանակաշրջանի կապիտալիզմի քննադատության մեջ:
6. Մարքսի տեսական-մեթոդաբանական ժառանգությունը աշխատում է նաև ուշ կապիտալիզմը (վերջին 20-30 տարիների) բնութագրելու հարցում: Ըստ վերջին տեսակետի կողմնակիցների, ուշ կապիտալիզմի էությունը վերլուծելիս աշխատում են բոլոր այն հիմնական հասկացությունները, որոնք օգտագործել է Մարքսը դասական կապիտալիզմը քննադատելիս (արտադրողական ուժեր, արտադրական հարաբերություններ, հակասությունը դրանց միջև, արտադրության եղանակ), իր ժամանակաշրջանի հասարակական հարաբերությունները բնութագրելիս:

Մարքսի տեսության վերաշարադրանքը և յուրովի խմբագրումը, կարծում եմ, սկսում է իրենից հետո, հատկապես ԽՍՀՄ-ում, երբ դառնում է մարքսիզմ (ներառելով Էնգելսի և Լենինի հայացքները), փոխակերպվում պետական գաղափարախոսության՝ սոցիալ-հումանիտար գիտություն և աշխարհիկ կրոն միաժամանակ: Մարքսի շատ դրույթներ դարձան դոգմա, որոնք պարզապես պետք էր սերտել:

Սկսեցին ողջ հասակակական-քաղաքական մտքի պատմության մեջ մարքսիզմ որոնել: Մարքսիզմից ցանկացած շեղում դառնում է վտանգավոր՝ նույնիսկ կյանքի համար: Դրանց մեղավորը Մարքսը չէ (նորից հիշեցնեմ, որ ես որևէ փիլիսոփայական ուղղության չեմ հարում, յուրաքանչյուրից վերցնում եմ այն, ինչը համապատասխանում է իմ մոտոցումներին, հայացքներին):

Այժմ ըստ էության: Մարքսի ներդրումը սոցիալական, ինչու չէ՝ նաև տնտեսագիտության փիլիսոփայության մեջ պատմության մատերիալիստական ըմբռնումն է և ֆորմացիաների տեսության մշակումը (Մարքսի զուտ տնտեսագիտական ժառանգության գնահատումը թողնում եմ տնտեսագետներին):

Հասարակական կյանքի և պատմության պարբերացման խնդիրները քննարկելիս Կ. Մարքսը հասարակական կյանքի բոլոր ոլորտներից առանձնացրեց նյութականը, իսկ հասարակական հարաբերությունների համախմբությունից՝ արտադրականը որպես հիմնարար, առաջնային, որոշիչ և դրանք մտցրեց «հասարակական կեցություն», իսկ հոգևոր, գաղափարական հարաբերությունները՝ «հասարակական գիտակցություն» հասկացությունների մեջ և ձևակերպեց պատմության մատերիալիստական ըմբռնումը, ըստ որի «Նյութական կյանքի արտադրության եղանակը պայմանավորում է կյանքի սոցիալական, քաղաքական ու հոգեկան պրոցեսներն ընդհանրապես: Ոչ թե մարդկանց գիտակցությունն է որոշում նրանց կեցությունը, այլ ընդհակառակը, հասարակական կեցությունն է որոշում նրանց գիտակցությունը»: Ինչպիսին մարդկանց ապրելակերպն է, այնպիսին էլ նրանց մտածելակերպն է. մարդիկ մինչև արվեստով, գիտությամբ, փիլիսոփայությամբ զբաղվելը պետք է իրենց նյութական կյանքի հոգսերը հոգան, կարծում էր Մարքսը: Եթե «հասարակական կեցություն» հասկացության մեջ Մարքսը ներառում է նյութական արտադրությունը, ապա «հասարակական գիտակցություն» հասկացության մեջ՝ հասարակության ողջ հոգևոր կյանքը:

Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը հասարակական կեցության և հասարակական գիտակցության փոխհարաբերության մեջ առանձնացնում են գոյաբանական, իմացաբանական և սոցիոլոգիական կողմերը: Եթե գոյաբանական և իմացաբանական առումներով ընդգծում են հա-

սարակական գիտակցության կախվածությունը հասարակական կեցությունից, ապա սոցիոլոգիական առումով ընդունում են հասարակական գիտակցության հարաբերական ինքնուրույնությունը և դրա ակտիվ դերը մարդկանց գործնական կյանքում: Հասարակական գիտակցության ինքնուրույնությունը դրսևորվում է կեցության վրա հակառակ ազդեցության, կեցությունից ետ կամ առաջ ընկնելու ձևերով:

Պատմության մատերիալիստական ըմբռնումը Մարքսի համար մեթոդաբանական հիմք դարձավ «հասարակական-տնտեսական ֆորմացիա» կատեգորիայի ձևակերպման համար:

Ըստ Մարքսի՝ հասարակական կյանքի հիմքը արտադրության եղանակն է, որի մեջ առաջատարը արտադրողական ուժերն են, որոնց ազդեցությունը հասարակական կյանքի մյուս ոլորտների վրա միջնորդվում է արտադրական հարաբերություններով: Արտադրական հարաբերությունների համախմբությունը կամ հասարակության տնտեսական կառուցվածքը ֆորմացիան է: Յուրաքանչյուր ֆորմացիա բաղկացած է բազիսից և վերնաշենքից: Բազիսը հասարակության տնտեսական հարաբերություններն են, իսկ վերնաշենքը՝ հասարակության քաղաքական ինստիտուտները, գաղափարները, հասարակության հոգևոր կյանքը: Հասարակության զարգացման աղբյուրը արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև առաջացած հակասությունն է, որը լուծվում է սոցիալական հեղափոխությամբ, որի հետևանքով անցում է կատարվում իրեն սպառած հասարակական-տնտեսական ֆորմացիայից դեպի նորը: «Ֆորմացիա» հասկացությունը Մարքսը բարձրացնում է տնտեսագիտական-փիլիսոփայական կատեգորիայի մակարդակի, որովհետև բնութագրում է ոչ թե կոնկրետ հասարակությունը (օրինակ՝ հայ հասարակությունը), այլ զարգացման որոշակի աստիճանում գտնվող հասարակության ընդհանրական տիպը՝ իրեն բնորոշ առանձնահատկություններով: Խիստ համառոտ այսպիսին է Մարքսի տնտեսագիտական-փիլիսոփայական հայեցակարգը պատմական պրոցեսի վերաբերյալ: Վերջին 20-30 տարիների ընթացքում պատմության մատերիալիստական ըմբռնման և ֆորմացիոն տեսության հակառակորդները (ընդդիմախոսները) դրանցից ազատվելու համար նշում են մի շարք փաստարկներ: Թվարկենք մի քանիսը.

1. Ֆորմացիոն տեսությունը մշակվել է Արևմուտքի պատմական փորձի հիման վրա և գործում է Արևմուտքում, բայց առանց բավարար հիմքի տարածվում է Արևելքի վրա, որտեղ պատմական զարգացման առանձնահատկությունները չեն տեղավորվում ֆորմացիոն ըմբռնման շրջանակներում:

2. Պատմության մատերիալիստական և ֆորմացիոն ըմբռնումները պատմական գործընթացի հիմքում դնելով սոցիալ-տնտեսական գործոնը, անտեսում են հոգևոր-մշակութայինը, որն ունի ծագման և զարգացման ուրույն օրինաչափություններ: Հոգևոր կյանքը հանգեցնելով տնտեսականին՝ Մարքսը և Էնգելսը դրանով իսկ, քննադատների կարծիքով, հոգևորի դերը դարձնում են երկրորդական, ենթակայական, ինչը հնարավորություն չի տալիս իրականացնել հոգևոր կյանքի օբյեկտիվ վերլուծություն և որոնել հոգևոր գործոնների ծագումը տվյալ ֆորմացիայից դուրս: Մարքսը և Էնգելսը նշելով, որ հասարակական գիտակցությունը փոխվում է հասարակական կեցության փոփոխությամբ, անտեսում են այն հանգամանքը, որ հասարակական կեցությունն էլ փոխվում է հասարակական գիտակցության ազդեցության տակ: Բացի այդ, հասարակական կյանքի հոգևոր ողջ հարստությունը հանգեցվում է դասակարգայնության սկզբունքին: Մինչդեռ գոյություն ունեն համամարդկային գաղափարներ, բարոյական արժեքներ, որոնք, ձևավորվելով առանձին ժողովուրդների պատմության ընթացքում, հեռու են դասակարգային ծագում ու պայմանավորվածություն ունենալուց:

3. Ֆորմացիոն տեսությունն ընդունում է «միակացութաձևությունը», մինչդեռ ժողովուրդների պատմական փորձը ցույց է տալիս, որ իշխող ձևը եղել է բազմակացութաձևությունը:

4. Ֆորմացիոն տեսության միջոցով հնարավոր է բացատրել մակրոտնտեսական հարաբերությունները, իսկ միկրոտնտեսականը՝ ոչ:

5. Ֆորմացիոն մոտեցման դեպքում հասարակության սոցիալական կառուցվածքը աղքատանում է. բացի հիմնական դասակարգերից, մնացածը դառնում են լուսանցքային (մարգինալ) տարրեր: Սոցիալական բարդ ու բազմազան կառուցվածքը ենթարկվում է դասակարգային-հակամարտ հարաբերությունների:

6. Ֆորմացիոն տեսության մեջ պետությունը (վերնաշենքի ամենակարևոր տարրը) դիտվում է իշխող դասակարգի քաղաքական գերիշխանության գործիք, որն ամբողջությամբ ծառայում է բազիսին: Մինչդեռ պետությունն ունի նաև ոչ ֆորմացիոն հատկանիշներ (երկրի սահմանների պաշտպանություն, արդարադատության համակարգի ստեղծում, քաղաքացիների իրավունքների ապահովում, հասարակական արժեքների հսկողություն և այլն)[77]:

Որպես պատմության մատերիալիստական ըմբռնման և ֆորմացիոն տեսության այլընտրանք՝ առաջադրվում է պատմության պարբերացման քաղաքակրթական հայեցակարգը: Բայց եթե ֆորմացիոն տեսությունը համեմատաբար հեշտ է ներկայացնել, որովհետև ամբողջական և հետևողական ուսմունք է (անկախ այն բանից թե որքանով է ընդունելի), ապա այդպիսին չէ քաղաքակրթականը: Մեկ ամբողջական, բոլորի կողմից ընդունելի քաղաքակրթական հայեցակարգ գոյություն չունի: Գոյություն ունեն մեկ տասնյակի հասնող հայեցակարգեր և երկու տասնյակի հասնող սահմանումներ[78]:

Ներկայացնենք դրանցից առավել հայտնիները: Շպենգլերը առանձնացնում է ութ մեծ մշակույթ (քաղաքակրթություն)՝ եգիպտականը, անտիկը, հնդկականը, բաբելականը, չինականը, արաբականը, ասմտյանը և մեքսիկականը:

Ըստ Թոյնբիի՝ մարդկության պատմությունը զուգահեռաբար և հաջորդաբար զարգացող փակ տեղային (լոկալ) քաղաքակրթությունների գումար է, որոնցից յուրաքանչյուրն անցնում է ծագման, աճի, բեկման և քայքայման փուլեր: Նա առանձնացնում է քաղաքակրթության երեք տիպ.

ա) զարգացած,

բ) չզարգացած,

գ) քարացած:

Բոլորը միասին 37 քաղաքակրթություն, որոնցից Թոյնբին առանձնացնում է 21-ը, ուսումնասիրում 13-ը, որոնցից առայսօր նրա կարծիքով պահպանվել են.

---

[77] Մանրամասն տե՛ս Философия истории. Учебное пособие, под. ред. проф. ***А. С. Панарина***. М., 1999, էջ 379–386:

[78] Այդ մասին տե՛ս ***Ա. Սարգսյան***, Մշակույթի տեսություն, էջ 55–70:

- Արևմտյան հասարակությունը՝ միացած արևմտյան քրիստոնեությանը:
- Բյուզանդական հասարակությունը՝ միացած ուղղափառ քրիստոնեությանը՝ Հարավարևելյան Եվրոպայում և Ռուսաստանում:
- Իսլամական հասարակությունը՝ Հյուսիսային Աֆրիկայից Միջին Արևելք, մինչև Չինական մեծ պարիսպ:
- Հնդկական մշակույթը Հնդկաստանում:
- Հեռավորարևելյան հասարակություն Հարավարևելյան Ասիայում:

Մեկ այլ դեպքում նա նշում է, որ ներկայումս գոյություն ունեցող քաղաքակրթությունները յոթն են՝ արևմտյան, ուղղափառ, հնդկական, չինական, հեռավորարևելյան, իրանական, արաբական:

Մեկ միասնական քաղաքակրթություն, համաշխարհային միասնական գործընթաց գոյություն չունի:

Սեմյուել Հանթինգտոնը «Քաղաքակրթությունների բախում» աշխատության մեջ առանձնացնում է 9 քաղաքակրթություն՝ արևմտյան, լատինամերիկյան, աֆրիկյան, իսլամական, չինական, հինդուիստական, ուղղափառ, բուդդայական, ճապոնական:

Փորձենք համեմատել ֆորմացիոն և քաղաքակրթական հայեցակարգերը:

1. Ֆորմացիոն մոտեցումը պատմությունն ուսումնասիրում է ուղղահայաց կտրվածքով, մարդկության համաշխարհային երթը դիտելով պարզից դեպի բարդը գնացող վերընթաց ուղի: Քաղաքա-կրթականը պատմության հորիզոնական ուսումնասիրությունն է: Եթե քաղաքակրթական մոտեցման դեպքում հնարավոր է բացահայտել, թե այսօրվա հայ հասարակությունը ինչով է տարբերվում այսօրվա ֆրանսիական հասարակությունից, ապա ֆորմացիոնի դեպքում բացահայտվում է, թե այսօրվա հայ հասարակությունը ինչով է տարբերվում միջնադարի հայ հասարակությունից:

2. Ֆորմացիոն տեսությունը պատմության առավելապես սոցիալ-տնտեսական վերլուծությունն է: Ելակետային կատեգորիան արտադրության եղանակն է, որով փորձ է արվում բացահայտել հասարա-

կության ողջ մեխանիզմը և պատմության ընթացքը: Քաղաքակրթականն առավելությունը տալիս է մշակութային գործոնին: Նրա ելակետը մշակույթն է:

3. Ֆորմացիոն տեսությունը փորձում է հասարակությունը հասկանալ «ներքևից»՝ արտադրության ոլորտից, մինչդեռ քաղաքակրթականը փորձում է հասարակությունը հասկանալ «վերևից»՝ մշակույթից [79]:

Պատմության մատերիալիստական ըմբռնումը և ֆորմացիոն տեսությունը մշակվել են XIX դարի կեսերին: Հասկանալի է, որ դրանց կոնկրետ գիտական ապարատի առանձին կողմեր գուցեև հնացել են, բայց որպես ընդհանուր մեթոդաբանական մոտեցումներ, համոզված եմ, իրենց դեռ չեն սպառել և կարող են բացատրել հասարակական կյանքի որոշ ընդհանրական երևույթներ: Իսկ եթե դա այդպես է, ապա ինչո՞ւ պատմության մատերիալիստական ըմբռնումը և ֆորմացիոն տեսությունը հակադրել քաղաքակրթականին, ինչո՞ւ ֆորմացիոնը մերժել ի հաշիվ քաղաքակրթականի (երբ ակնհայտ է, որ այդ մոտեցումն էլ անթերի չէ), գուցե ճիշտը այդ երկու մոտեցումների մեթոդաբանական և հայեցակարգային մերձեցո՞ւմն է, հնարավորության դեպքում միավորո՞ւմը, և դրա միջոցով համաշխարհային պատմական պրոցեսի, առանձին աշխարհաքաղաքական իրողությունների, երկրների պատմական ամբողջական պատկերի բացահայտումը[80]:

Երբեմն քաղաքակրթությունները դասակարգում են արևմտյանի և արևելյանի, որոնցում մշակութաքաղաքակրթականից բացի մասնագետները տեսնում են նաև տնտեսական, տնտեսավարման առանձնահատկություններ:

Արևմտյան քաղաքակրթության ձևավորման գործում նկատելի է հունական ռացիոնալիզմի, հռոմեական աշխահակալական ոգու, քրիստոնեության և Մաքս Վեբերի կածիքով, բողոքականության ազդեցությունը, հատկապես գործարար խավի ու կապիտալիզմի ձևավորման գործում (որի մասին մենք տարբեր առիթներով արդեն խոսել ենք): Արևմտյան քաղաքակրթությունը ներկայացնում են Եվրոպան, ԱՄՆ-ը և Կանադան:

---

[79] Տե՛ս Философия истории. Учебное пособие, под. ред. проф. ***А. С. Панарина.***

[80] Մանրամասն տե՛ս ***Ա. Սարգսյան***, Փիլիսոփայության դասընթաց, էջ 202-212:

Քաղաքակրթության արևելյան տիպի մեջ մտնում են այն երկրներն ու աշխարհամասերը, որոնք ներառված են հնդկաբուդդայական, չինակոնֆուցիոսական, արաբամուսուլմանական ավանդույթների շրջագծի մեջ:

Արևելքում իշխում է ավանդական հասարակությունը և զարգացման ավանդական ուղին, կրոնական բնութը, մտածողության անհակասականությունը, աշխարհի նկատմամբ ամբողջական հայացքը, մարդու հայեցողական վերաբերմունքը աշխարհի նկատմամբ, պատկերային մտածողությունը, ընտանիքի, հասարակության, պետական, տնտեսության կառավարման հարցերում որոշակի վարքանոնային պահանջների, ավանդույթների, սովորույթների, ծիսակարգի, նախնիների նկատմամբ հարգանքի և հեղինակության պահպանումը և այլն: Դիտվում է բարդ սոցիալական կառուցվածքի վերարտադրություն, ապրելակերպի կայունություն, ցիկլայնություն:

Արևմտյան քաղաքակրթությունը մարմնավորում է «կամք առ պայքարը», չինականը՝ հանդուժողականությունը, հնդկականը՝ ձգտումը դեպի ճգնավորականությունը: Եվրոպական քաղաքակրթությունը շեշտը դնում է նյութական պահանջմունքների բավարարման վրա, չինականը՝ սոցիալական, հնդկականը՝ հոգևոր-կրոնական: Արաբամուսուլմանական աշխարհում տնտեսավարումը հենվում է Ղուրանի օրենքների և Մուհամմեդի պատվիրանների վրա, որոնք հասարակական և անհատական կյանքի բոլոր ոլորտներում պահանջում են պահպանել իսլամի բարոյահոգեբանական մթնոլորտն ու ազդեցությունը:

Արևմուտքում իշխող է ակտիվ ճանաչողական և վերափոխիչ վերաբերմունքը աշխարհի նկատմամբ, բանական-տրամաբանական (ռացիոնալ) մտածողության գերակայությունը, անհատականությունն ու անհատապաշտությունը, ձգտումը դեպի նորը, նորարարությունը, քննադատական վերաբերմունքը հնի, իրեն սպառածի նկատմամբ, ռացիոնալիզմն ու սկեպտիցիզմը, որոշ դեպքերում՝ ագնոստիցիզմը, տնտեսության մեջ նորագույն տեխնոլոգիաների ներմուծումը, նորամուծական և գիտելիքահենք տնտեսության խթանումը և այլն[81]:

---

[81] Արևելքի և Արևմուտքի մշակութային և տնտեսական առանձնահատկությունների մասին տե՛ս ***Ա. Սարգսյան,*** Մշակութի տեսություն, էջ 82-84, ***նույնի***, Գործարարության բարոյագիտություն, էջ 160-165:

Այդ երկու քաղաքակրթությունները միմյանցից չինական պարսպով բաժանված չեն, մշակութային շփումներ, փոխազդեցություն եղել է միշտ, վերջին մի քանի դարերում՝ ավելի ակտիվ: Եվրոպացիներին հրապուրել է Արևելքի տարաշխարհիկությունը (էկզոտիկան), բուդդայականությունն այսօր Եվրոպայում դարձել է մոդա, Արևելքին ձգել է Արևմուտքի տեխնիկան ու տեխնոլոգիան: Տնտեսությունը արդիականացնելու, արտադրությունը Արևմուտքի տեխնոլոգիայով զինելու առաջին նախաձեռնությունը ճապոնացիներին է, որոնք քաղաքակրթությամբ դարձան եվրոպացի, հոգով ու մշակույթով մնացին իրենց երկրի անցյալում, ստեղծեցին Արևելքի ամենահզոր երկիրը մինչև պարտությունը երկրորդ համաշխարհային պատերազմում[82]:

Սոցիալ-փիլիսոփայական գրականության մեջ տնտեսական համակարգերը երբեմն դասակարգում են ***ավանդականի***, ***շուկայականի***, ***պլանայինի*** (վարչա-հրամայականի) և ***խառը*** ձևերի:

Ավանդական տնտեսությունում, ինչպես արդեն նշել ենք.

- սոցիալ-տնտեսական հարաբերությունները կարգավորվում են ավանդույթով, ավանդույթն է որոշում ինչ արտադրել, ինչքան և ում համար արտադրել,
- անհատի տնտեսական դերը սահմանափակվում է ժառանգությամբ, սոցիալական պատկանելությամբ,
- ապրանքափողային հարաբերությունիները զարգացած չեն, իշխողը փակ բնատնտեսությունն է,
- տնտեսության մեջ առաջընթացը մուտք է գործում դանդաղ և վախվորած, որովհետև ավանդույթներով և սովորույթներով ապրող հասարակությունները նորի, նորարարության մեջ իրենց ապագայի նկատմամբ վտանգ են տեսնում,
- արտադրության աճի տեմպերի համեմատությամբ բնակչությունն ավելի արագ է աճում,
- պետությունը ակտիվ դեր է կատարում տնտեսական և հասարակական կյանքի բոլոր ոլորտների հսկողության և կագավորման գործում:

Շուկայական տնտեսությունում.

---

[82] Արևմուտք-Արևելք առնչությունների մասին տե՛ս նաև ***Тойнби А.***, Цивилизация перед судом истории. М., 2002:

- սեփականության կառուցվածքում իշխող է արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը,
- իշխում են տնտեսության կառավարման շուկայական մեխանիզմները,
- տնտեսության զարգացման ազդակ է դառնում անձնական շահը,
- գործում է ազատ գործունեությունը, գործարարությունը և ընտրության ազատությունը,
- տնտեսության մեջ պետության դերը սահմանափակվում է և դառնում մասնավոր սեփականության պահպանությունն ու իրավական կառուցների ստեղծումը:

Բայց.

- շուկան խորացնում է անհավասարությունը հասարակության մեջ,
- շուկայական տնտեսությունը կայուն չէ, հաճախակի են դիտվում անկում, ճգնաժամ, դրանց հետ կապված գործազրկություն, զանգվածների սոցիալական թշվառություն,
- շուկային չի հետաքրքրում անշահույթաբեր արտադրությունը,
- շուկան անտարբեր է արտադրության սոցիալական հետևանքների նկատմամբ:

Պլանային (վարչահրամայական) տնտեսությունում.

- պետական սեփականությունը, տնտեսական ռեսուրսները գտնվում են իշխանական կազմակերպությունների, պետական չինովնիկների հսկողության ներքո,
- բացակայում է մրցակցությունը և հետևաբար տնտեսության մոնոպոլացումը,
- կենտրոնացված տնտեսական պլանավորումը դառնում է տնտեսական մեխանիզմերի հիմք,
- տնտեսական գործունեությունը և քաղաքականությունը մշակում և ղեկավարում է պետական ապարատը:

Խառը տնտեսություններ, որտեղ համատեղվում են շուկան և պետական կառավարումը: Առանձնացվում են խառը տնտեսության **ամերիկան**, **արևմտաեվրոպական** և **ճապոնական** մոդելները: Խիստ համառոտ յուրաքանչյուրի մասին առանձին:

Ամերիկյան մոդելը.

- պետական սեփականության փոքր մասնաբաժին, պետության շատ քիչ մասնակցություն անմիջական արտադրությանը,
- համակողմանի աջակցություն գործարարությանը,
- մրցակցության պաշտպանություն, մոնոպոլիաների սահմանափակում,
- սոցիալական հավասարության խնդրի բացակայություն:

Արևմտաեվրոպական մոդելը.

- պետության ակտիվ մասնակցությունը ազգային շուկայական տնտեսությանը,
- մրցակցության պաշտպանություն, մանր և միջին բիզնեսի խրախուսում,
- սոցիալական ապահովության ուժեղ համակարգ:

Ճապոնական մոդելը.

- պետության և մասնավոր հատվածների գործունեության համակարգում,
- աշխատանքի, կապիտալի, պետության համագործակցություն՝ ազգային նպատակների իրականացման համար,
- ուշադրությունը մարդկային գործոնին,
- գործազրկության ցածր մակարդակ,
- աղքատության ցածր մակարդակ (եթե ԱՄՆ-ում և Եվրոպայում 15 տոկոս է, ապա Ճապոնիայում՝ 1 տոկոս)[83]:

*8.2. **Գլոբալացվող տնտեսության արդի հիմնախնդիրները***

Վերջում համառոտ գլոբալացման, մասնավորապես տնտեսական գլոբալացման մասին: «***Գլոբալացում***» հասկացությունն առաջին անգամ օգտագործել է անգլիացի սոցիոլոգ Ռ. Ռոբերտսոնը 1983 թ.[84]: Այդ հասկացությամբ բնութագրվում են սոցիալական այն գործընթացները և մարդ-բնություն փոխհարաբերության արդյունքում առաջացած էկոլոգիական հիմնախնդիրները, որոնք ընդունել են համամոլորակային բնույթ: Գլոբալացումը ներառում է բոլոր

[83] Տնտեսաձևերի մասին տե՛ս ***Тяпин И. Н.***, Философия экономики, էջ 185-189:
[84] Տե՛ս ***Чумаков А. Н.***, Глобализация. Контуры целостного мира. М., 2017, էջ 74:

երկրներն ու տարածաշրջանները՝ անկախ զարգացման մակարդակից և քաղաքակրթության բնույթից: Առանձին վերցրած որևէ երկիր միայնակ ոչ մի գլոբալ հիմնախնդիր լուծել չի կարող: Դրանք կարող են հաղթահարվել միայն համաշխարհային հանրության միասնական ջանքերով: Եթե մինչև 1990-ական թթ. խոսվել է գլոբալ հիմնախնդիրների, ապա XXI դարասկզբից՝ բուն իմաստով գլոբալացման մասին: Հաշվի առնելով գլոբալացման համընդհանուր և համընդգրկուն բնույթը, երբեմն մասնագետները տալիս են այնպիսի սահմանումներ, որոնցում վերանում է այդ երևույթի յուրահատկությունը: Օրինակ՝ ըստ սահմանումներից մեկի «Գլոբալացումը մոլորակային ընդգրկունության ամբողջական կառուցների և կապերի լինելիության բազմակողմ բնապատմական գործընթաց է, որը ներքնապես բնորոշ է մարդկանց համաշխարհային հանրությանը, ներառում է նրա բոլոր հիմնական ոլորտները և ավելի ուժեղ է դրսևորվում, բոլոր այն դեպքերում, երբ մարդն ավելի հեռու է գնում գիտատեխնիկական առաջընթացի և սոցիալ-տնտեսական զարգացման ուղիով»[85]: Կարծում եմ, որ գլոբալացման էությունը ավելի ստույգ բացահայտած կլինենք, եթե այն դիտենք որպես ***տնտեսական***, ***քաղաքական***, ***տեղեկատվական***, ***սոցիալ-մշակութային տարածության ձևավորման գործընթաց՝ համաշխարհային տիրապետություն հաստատելու նկրտումներով***:

Գլոբալացման հիմնական գործոններն (հատկանիշներն) են.

ա) գիտության և տեխնիկայի առաջընթացը,

բ) տնտեսության մեջ շուկայական հարաբերությունների զարգացումը,

գ) համաշխարհային և ազգային մշակույթները և քաղաքակրթությունները տարալուծելու միտումները,

դ) հասարակությունների անցումը ավանդական, արդյունաբերական, հետարդյունաբերական կամ որ նույնն է՝ ավանդական-տեխնածին փուլերով:

Գլոբալացման երեք փուլ կամ ալիք է առանձնացվում.

1. XIX դարի վերջից մինչև XX դարի սկիզբ, երբ կապիտալ ներդրումները տարածվում են աշխարհի մեծ մասում: Այս փուլն

[85] Նույն տեղում, էջ 375:

ընդհատվեց երկու համաշխարհային պատերազմների պատճառով:

2. XX դարի 70-90-ական թթ., որի նախադրյալ դարձավ հեղափոխությունը տեղեկատվական ոլորտներում:
3. Ժամանակակից փուլ, որն սկսել է նախորդ դարի 90-ական թվականներից, ընթացքի մեջ է, որի նախադրյալներն են.
   - ԽՍՀՄ և սոցիալիստական ճամբարի կործանումը, շուկայական տնտեսության հաղթանակը պլանայինի նկատմամբ,
   - էլեկտրոնային հեղափոխության ծավալումը, որը ստեղծեց էլեկտրոնային տնտեսությունը, փողը, ֆինանսները,
   - Մոդեռնի նախագծի և Լուսավորականության իդեալների կործանումը:

Գլոբալացման չորս ուղղություն է առանձնացվում.

- տնտեսական,
- տեղեկատվական,
- քաղաքական-գաղափարախոսական,
- սոցիալ-մշակութային:

Տնտեսական առումով գլոբալացումը կապիտալիզմի վերածումն է համաշխարհային տնտեսության: Ընդլայնվում է ֆինանսական շուկան: Ձևավորվում է նեոտնտեսությունը, որը հենվում է գլոբալ ֆինանսական կապիտալի վրա: Կարևոր դեր են կատարում համընդգրկուն տեղեկատվական ցանցերը: Ստեղծվում է ցանցային տնտեսություն, որի հիմքը համացանցն է (իտերնետը): Նոր իրողություն է դառնում ցանցային հասարակությունը:

Գլոբալացումը փոխում է իշխանության բնութը, վերջինս ենթարկում գլոբալ ֆինանսական կապիտալին: Ձևավորվում է վերազգային վերնախավ (էլիտա)՝ իր ապազգային գաղափարախոսությամբ: Համաշխարհային գլոբալ կապիտալիզմը դառնում է այնպիսի կայսրություն, որի հետ չի կարելի համեմատել նախկինում գոյություն ունեցած պետական որևէ կառուցվածք:

Շուկայական կապիտալիզմից ներկայիս գլոբալ կապիտալիզմը տարբերվում է ոչ այնքան օբյեկտով, որքան ընդգրկմամբ և նպատակով: Սա յուրահատուկ շուկա է (հակաշուկա), որտեղ չեն գործում փոխանակության և մրցակրության օրենքները: Դասական տնտեսագիտության «փող-ապրանք-փող» սկզբունքը փոխարինվում է «փող-

փող» սկզբունքով: Փողը դառնում է ոչ թե հարստության ստեղծման միջոց կամ վճարամիջոց, այլ աշխարհը կառավարելու գործիք:

Ներկա ժամանակաշրջանի տնտեսական հարաբերություններում ֆինանսական գերիշխանությունը հաշվի առնելով որոշ հեղինակներ այն տեսակետն են հայտնում, որ այդ գերիշխանությունը (հեգեմոնիան) ձևախեղում է սոցիալ-տնտեսական շարժընթացը (դինամիկան), փակուղի մտցնում արտադրողական ուժերի զարգացումը և մարդկային որակների առաջընթացը[86]:

Գլոբալացվող տնտեսության մեջ առաջին պլան է մղվում գիտելիքը, որը բոլորովին նոր որակ է ոչ միայն շուկայական տնտեսության, այլև ժամանակակից քաղաքակրթության մեջ: Բայց գիտելիքահենք տնտեսությունը չթուլացրեց կախվածությունը ռեսուրսներից, հակառակը՝ ավելի սրեց պայքարը դրանց ձեռքբերման համար:

Մյուս կողմից «Նոր տնտեսությունը» բնութագրվում է նաև աշխատանքի արտադրողականության արագ աճով, բնակչության եկամուտների ավելացումով, գործազրկության ցածր մակարդակով և դրամական միջոցների չափավոր արժեզրկմամբ, որոնք պայմանավորված են գիտատեխնիկական առաջընթացով, բիզնեսի վարման տեխնիկայով, տնտեսական քաղաքականության կատարելագործմամբ:

Տնտեսության գլոբալացման այս համառոտ վերլուծությունը ցույց է տալիս, որ.

1. Գլոբալացումը բարդ ու հակասական երևույթ է, իսկ ժամանակակից մոդելը՝ դաժան: Դա է պատճառը, որ ողջ աշխարհում գնալով ավելի լայն շրջանակներ է ընդգրկում ու թափ հավաքում հակագլոբալիստական շարժումը:
2. Շուկայական հարաբերությունների հաստատմամբ շուկայում սկսեցին գործել սոցիալ-դարվինիզմի սկզբունքները, որոնք ավելի կենսունակ ու դաժան դարձան նոր արդյունաբերական հասարակությունում:
3. Սոցիալ-տնտեսական գլոբալացումը թեև բարձր տեխնոլոգիական բնույթ ունի, այնուամենայնիվ անկայուն է, ազատված չէ

[86] Տե՛ս ***Бузгалин А. В.***, Закат неолиберализма (к 200-летию со дня рождения Карла Маркса), Вопросы экономики. М., 2018, № 2, էջ 134:

ցնցումներից, որոնց թողած ազդեցությունն ավելի խորն ու ընդգրկուն է:

4. Նման տնտեսությունը կարգավորելու համար պետք է վերադառնալ մարդկային գործոնին և ավելի մեծ ուշադրություն դարձնել մարդուն: Պետք է բոլորի համար պարզ դառնա, որ առանց մարդու հիմնախնդրի համակողմանի լուծման, որևէ այլ հիմնարար խնդիր չի լուծվի:
5. Գլոբալացման այս (արևմտյան) մոդելը փակուղային է, պետք է փոխել նրա կառուցվածքը, զարգացման վեկտորը, գաղափարախոսությունը, ողջ հարացույցը, երկխոսության մեջ մտնել այլ քաղաքակրթությունների հետ, սոցիալական արդարության սկզբունքը պետք է հաղթի նորազատական գաղափարախոսությանը: Կայուն տնտեսական զարգացման հեռանկարը իրականություն չի դառնա առանց արժեքային, բարոյական, հումանիստական սկզբունքների հետ դաշնության:
6. Պարզ է դառնում, որ առանց որոշ ավանդույթների պահպանման, բարձր հոգևոր մշակութի, մարդասիրության (հումանիզմի) ինչ էլ ստեղծվի, չարիք է դառնալու մարդկության համար կամ զրկվելու է զարգացման հեռանկարից[87]:

Հարցեր կրկնության համար

1. *Պատմական գործընթացները դասակարգող ի՞նչ հայեցակարգեր կառանձնացնեք:*
2. *Ի՞նչ շրջափուլերով է անցնում տնտեսությունը:*
3. *Ինչո՞վ են միմյանցից տարբերվում հասարակության պատմության ավանդական, արդյունաբերական և հետարդյունաբերական փուլերը:*
4. *Որո՞նք են հասարակության պատմության ֆորմացիոն տեսության հիմնական մոտեցումները:*
5. *Որո՞նք են արևելյան և արևմտյան քաղաքակևթությունների առանձնահատկությունները:*
6. *Թվարկեք գլոբալացվող տնտեսության առանձնահատկությունները:*

---

[87] Գլոբալացման դրական և բացասական կողմերի մասին տե՛ս նաև ***Ա. Սարգսյան***, Արդիականության գլոբալ հիմնախնդիրները, էջ 18-29:

ՎԵՐՋԱԲԱՆ

Այսպիսով, հարգելի ընթերցող, սիրելի ուսանող, մենք միասին անցանք բավականին երկար (գրեթե երեքհազարամյա պատմություն ունեցող), բարդ, բայց հետաքրքիր ճանապարհ՝ Անտիկ աշխարհից մինչև մեր օրեր, մուտք գործեցինք բազմաթիվ տնտեսագիտական, փիլիսոփայական դպրոցներ, ծանոթացանք առանձին նշանավոր տնտեսագետների, փիլիսոփաների հայացքներին, տնտեսագիտության փիլիսոփայության առարկային, կառուցվածքին, գործառույթներին, «Homo economicus»-ի մոդելներին, տնտեսագիտության մեջ փիլիսոփայության օրենքների ու կատեգորիաների մեթոդաբանական նշանակությանը, վերլուծեցինք տնտեսագիտական-փիլիսոփայական հիմնական կատեգորիաները, տնտեսական կեցության և տնտեսական գիտակցության, տնտեսության և բարոյականության փոխհարաբերությունը, բացահայտեցինք փողի և շուկայի հակասական էությունը, տնտեսավարման և բնապահպանության կապը, գնահատեցինք պատմության ֆորմացիոն և քաղաքակրթական ըմբռնումները, գլոբալացվող տնտեսության դրական և բացասական կողմերը: Այդ ճանապարհորդության (դասախոսությունների) ընթացքում համոզվեցինք, որ մեր յուրացրածը ո՛չ զուտ տնտեսագիտություն է և ո՛չ էլ զուտ փիլիսոփայություն, այլ տնտեսագիտության փիլիսոփայություն, որը քննարկում և բարձրացնում է հարցեր, որոնք տնտեսագիտությունը և փիլիսոփայությունը չէին կարողանա կատարել մեկուսի: Մենք եկանք այն ընդհանուր եզրահանգմանը, որ տնտեսագիտության փիլիսոփայությունը միակ դասընթացն է, որը փիլիսոփային հնարավորություն է տալիս խորանալ տնտեսագիտության տեսական հարցերի մեջ, հասկանալ տնտեսական քաղաքականության խորքային շերտերը, փիլիսոփայությունն ավելի մոտեցնել տնտեսագիտությանը, իսկ տնտեսագետներին՝ փիլիսոփայությանը և իմաստավորել տնտեսագիտության շատ հարցերի խորքային և ընդհանրական հիմքերը, մշակութային, արժեքային-աշխարհայացքային նշանակությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ***Աթոյան Կ. Լ.***, ***Մարդումյան Մ. Ս.***, ***Քալանթարյան Պ. Ա.***, Բիզնեսի ներածություն, Եր., 2017:
2. ***Աղաջանյան Հ.***, Տնտեսագիտության տեսություն: Ուսումնական ձեռնարկ, մաս 1, Եր., 2008, մաս II, Եր., 2015:
3. ***Աղաջանյան Հ.***, Պետություն և տնտեսություն, Եր., 2006:
4. ***Աղաջանյան Հ.***, Տնտեսական դետերմինիզմի պարադոքսները. Հասարակական-տնտեսական ֆորմացիաների մարքսյան տեսության քննադատություն, Վեմ, 2019, հոկտեմբեր-դեկտեմբեր 4 (68):
5. ***Դավոյան Ս.***, Սեփականության էվոլյուցիան, Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Եր., 2009, № 2:
6. ***Էնգելս Ֆ.***, Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն, ***Կ. Մարքս***, ***Ֆ***, ***Էնգելս***, Ընտիր երկեր երեք հատորով, հ. 3, Եր., 1978:
7. ***Էնգելս Ֆ.***, Բնության դիալեկտիկա, Եր., 1957:
8. ***Կիրակոսյան Գ.***, ***Թավադյան Մ.***, ***Գրիգորյան Ս.***, Տնտեսագիտական ուսմունքների պատմություն, Եր., 2004:
9. ***Հայրապետյան Ս.***, Գործարարության բարոյականություն և վարվելակարգ (դասախոսության տեքստ), Եր., 2003:
10. Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում, ուսումնական ձեռնարկ, ընդ. ղեկ. և խմբ. ***Մ. Մելքումյան***, Եր., 2014:
11. ***Հովհաննիսյան Յու.***, Գիտության և տեխնիկայի փիլիսոփայություն և պատմություն, Եր., 2017:
12. ***Մարկոսյան Ա.***, Տնտեսագիտություն բոլորի համար, Եր., 2006:
13. ***Մարկոսյան Ա.***, Արժեքային համակարգի հիմքերը, Եր., 2011:
14. ***Մելքումյան Լ.***, Էկոլոգիայի հիմունքներ, Եր., 2008:
15. ***Մեհրաբյան Լ.***, ***Սուքիասյան Գ.***, Իրավագիտություն, Եր., 2018:
16. ***Սարգսյան Ա.***, Տնտեսության փիլիսոփայության մի քանի հարցեր, Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի, Եր., 2004, թիվ 1:
17. ***Սարգսյան Ա.***, Մշակույթի տեսություն, Եր., 2003:
18. ***Սարգսյան Ա.***, Կրոնի տեսություն և պատմություն, Եր., 2014:
19. ***Սարգսյան Ա.***,Փիլիսոփայության դասընթաց, Եր., 2016:
20. ***Սարգսյան Ա.***, Արդիականության գլոբալ հիմնախնդիրներ, Եր., 2018:
21. ***Սարգսյան Ա.***, Գործարարության բարոյագիտություն, Եր., 2019:
22. Տնտեսագիտության տեսություն, ուսումնական ձեռնարկ, խմբ.՝ տ.գ.դ., պրոֆ. ***Գ. Ե. Կիրակոսյան***, տ.գ.թ., պրոֆ. ***Ի. Ե. Խլղաթյան***, Եր., 2009:
23. ***Քեյնս Ջ. Մ.***, Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն, Եր., 2006:

24. ***Автономов В. С.***, Модель человека в экономической наукв. Санкт-Петербург, 1998.
25. ***Агапова И. И.,*** История экономических учений. М., 2005.
26. ***Аристотель.*** Политика. Соч.: в 4 т., т. 4. М., 1984.
27. ***Балашова Е.***, Финн Кюдланд и Эдвард Прескотт: Движущие силы экономических циклов, Нобелевские премия 2004 г. по экономике, Вопросы экономики. М., 2005, № 1.
28. ***Бузгалин А. Б.***, Закат неолиберализма (к 200-летию со дня рождения Карла Маркса), Вопросы экономики. М., 2018, № 2.
29. ***Бузгалин А. Б.***, «Капитал» как ключ к решению современных экономических проблем, Вопросы экономики. М., 2019, № 6.
30. ***Булгаков С.***, Философия хозяйства. М., 2009.
31. ***Баскаков А.Я.***, ***Туленков Н. В.***, Методология научного исследования, 2-е изд., учебное пособие. Киев, 2004.
32. ***Вебер М.***, Протестантская этика и дух капитализма, Избранное прозведение. М., 1990.
33. ***Вебер М.***, Хозяйственная этика и дух капитализма, Атеист, 1928, № 25.
34. ***Девид Тросб***, Экономика и культура. М., 2013.
35. ***Ершов М. В.***, Десять лет после глобального кризиса: риски и перспективи, Вопросы экономики, М., 2019, № 1.
36. ***Замулин О.***, Концепция реальных экономических циклов и ее роль в эволюции макроэкономической теории, Вопросы экономики, 2005, № 5.
37. ***Капелюшников Р. И.***, О современном состоянии экономической науки: полусоциологические наблюдения, Вопросы экономики. М., 2018, № 5.
38. ***Калинин Э.***, ***Чирков Е.***, Концепция постклассической экономической рациональности, Вопросы экономики. 1998, № 5.
39. История и философая экономики, пособие для аспирантов. Под общей редакцией ***М. В. Конотопова***. М., 2014.
40. ***Канке В. А.,*** Философия экономической науки, учебное пособие, М., 2009.
41. Культура имеет значение, под ред. ***Л. Харрисона*** и ***С. Хантингтона***. М., 2002.
42. ***Лапуста М. Г.***, Предпринимательство, учебник. М., 2009.
43. ***Майбург Е. М.***, Введение в историю экономической мысли, М., 1996.
44. Марксого наследие и современная экономическая наука («Круглый стол» журнала «Вопросы экономики»), Вопросы экономики. М., 2005, № 1.
45. ***Новиков А. М.***, ***Новиков Д.А.***, Методология научного исследования. М., 2010.
46. ***Орехов А. М.***, Методы экономических исследований, учебное пособие. М., 2009.

47. ***Орехов А. М.***, Философия экономики в России: рождение традиций. М., 2019.
48. ***Осипов Ю. М.***, Курс философии хозяйства. М., 2005.
49. ***Петрунин Ю. Ю.***, ***Борисев В. К.***, Этика бизнеса. М., 2004.
50. ***Ричард Т. Де Джордж***. Деловая этика. М., 2003.
51. ***Роулз Дж***. Теория справедливости. Новосибирск, 1995.
52. ***Савка А. В.***, Основы философии экономики. М., 2010.
53. ***Самсин А. И.,*** Основы философии экономики, учеб. пособие для вузов. М., 2003.
54. ***Ситаров А, В.***, ***Пустовойтов В. В.***, Социальная экология. М., 2000.
55. ***Смит А.***, Исследование природе и причинах богатства народа. М., 2007.
56. ***Спиркин А. Г.***, Философия. М., 2005.
57. ***Степин Б. С.***, Цивилизация и культура. Санкт-Петербург, 2011.
58. Философия, учебник, под ред. ***В. Д. Губина***, ***Т. Ю. Сидориной***, ***В. П. Филатова***.
59. Философия, учебник, под ред. ***В. Д. Губина***, ***Т. Ю. Сидориной***, ***Б. П. Филатова***. М., 1996.
60. Философия, учебник, под ред. ***В. Д. Губина***, ***Т. Ю. Сидориной***. -3-е изд. М., 2005.
61. Философия и методология экономики, учебное пособие. Под ред. ***Л. А. Тутова***. М., 2019.
62. Философия истории, учебное пособие, под ред. ***А. Ц. Панарина***. М., 1999.
63. Философия экономики, Анталогия. Под ред. ***Дэнниела Хаусмана***. М., 2012.
64. ***Тойнби А. Дж.***, Постижение истории. М., 2002.
65. ***Тойнба А. Дж.***, Цивилизация перед судом истории. М., 2002.
66. ***Тяпин И. Н.***, Философия экономики, учебное пособие. М., 2015.
67. ***Хайек Ф. А.***, Пагубная самонадеянность: ошибки социализма. М., 1992.
68. ***Хантингтон С.***, Столкновение цивилизации. М., 2016.
69. ***Шамхалов Ф.***, Философия бизнеса. М., 2010.
70. ***Шаститко А.***, Модели рационального экономического поведения человека, Вопросы экономики. 1998, № 5.
71. ***Шпенглер О.***, Закат Европы: Очерк морфологии мировой историй. Т. 1. Образ и действительност. Минск, 1997, Т. 2. Всемирно-исторические перспективы. Минск, 1999.
72. ***Чумаков А. Н.***, Глобализация. Контуры целостного мира. М., 2017.
73. ***Ясин Е.***, Модернизация экономики и система ценностей, Вопросы экономики, 2003, № 4.

ՍԱՐԳՍՅԱՆ Ա. Հ.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական ձեռնարկ

Տեխնիկական խմբագիր և ձևավորող՝
Նաիրա Խչեյան

Էջադրումը և սրբագրումը՝
Սյուզաննա Բոյաջյանի

Չափս՝ 70×108 1/16:
10,5 հրատ. մամուլ:
Տպաքանակ՝ 100:

ՀՊՏՀ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն
Երևան, Նալբանդյան 128